
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՀԱՐՑԵՐ

2

ԵՐԵՎԱՆ 2009



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

ВОПРОСЫ АРМЯНСКОГО ИСКУССТВА

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

2

ПОСВЯЩАЕТСЯ 50-ЛЕТНЕМУ ЮБИЛЕЮ
ОСНОВАНИЯ ИНСТИТУТА ИСКУССТВ НАН РА

ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА
ЕРЕВАН 2009

ՕՐԿՆՕՐԻՆԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա 94539

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՀԱՐՑԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 50-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ

ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ "ԳԻՏՈՒԹՅՈՒՆ" ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2009

ՀՏԴ 7.01/.097(479.25)
ԳՄԴ 85 (2Հ)
Հ 240

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Խմբագրական խորհուրդ՝

ԱՂԱՍՅԱՆ Ա.Վ. (նախագահ) – արվեստագիտության դոկտոր
ԱՍԱՏՐՅԱՆ Ա.Գ. – արվեստագիտության դոկտոր
ՀԱՍՐԱԹՅԱՆ Մ.Մ. – ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հ.Վ. – ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
ՂԱԶԱՐՅԱՆ Վ.Հ. – արվեստագիտության դոկտոր

Հ 240 *ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՀԱՐՑԵՐ: Գիտական հոդվածների ժողովածու. – Գիրք II. – 361 էջ:*

2008 թվականին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը բոլորեց իր հիմնադրման 50-ամյակը: Ինստիտուտի 50-ամյա հոբելյանին է նվիրված ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի «Հայ արվեստի հարցեր» մատենաշարի երկրորդ հատորը, որտեղ զետեղված հոդվածներում լուսաբանված են ճարտարապետության, կերպարվեստի, թատրոնի և կինոյի կարևոր հարցերը, պատմական ու տեսական երաժշտագիտության, նաև երաժշտական ֆոլկլորագիտության հրատապ խնդիրները:

Հասցեագրված է արվեստաբաններին, հայագետներին և ընթերցող լայն շրջաններին:

ԳՄԴ 85 (2Հ)

ISBN 978-5-8080-0773-4
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն

ՀՈՎԱԿԻՄ ՄԻՀԱՆԱՋԱՆԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՈՃԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Բարդ և դրամատիկ ճակատագրի տեր էր Հովակիմ (Ավագիմ) Էմմանուելի Միհանաջյանը: Նա ծնվել է 1883-ին Եկատերինոսլավսկի նահանգի (այժմ՝ Ուկրաինայի Դնեպրոպետրովսկի մարզ) Բախմուտ քաղաքում, մանկության և պատանեկության տարիներն անցկացրել Ռուսաստանի հարավում՝ Նոր Նախիջևանում, որն այդ ժամանակ, ինչպես Մարիետա Շահինյանն է գրում, «...բարեփոս փոքրիկ մի ավան էր..., ուր հայկական կերակուրները էին մատուցում..., անվերջ պատմություններ անում ու բացականչում նախիջևանյան կոկորդալեզու բարբառով..., ուր կյանքը կղզիացած էր ազգային նեղլիկ շրջանակներում և, յուղ ու ջրի պես, չէր տարրալուծվում հարևան Ռոստովի ռուսական կյանքում»[1]: Ապագա նկարչի կենսագրության վաղ շրջանի մասին տեղեկությունները սակավաթիվ են: Հայտնի է միայն, որ մանուկ հասակում նա շատ էր սիրում մենանալ Նոր Նախիջևանը շրջապատող Դոնի տափաստաններում. ժամերով հետևում էր երկնքում սահող ամպերի խաղին կամ էլ զմայլվում արևածագի ու իրիկնամուտի վառ գույներով: Բնության հետ այդ անմիջական շփումներն ու ինքնամոռաց մերձեցումը է՛լ ավելի սրեցին ու զարգացրին Միհանաջյանի տեսողական հիշողությունը, արթնացրին նրա ստեղծագործական երևակայությունը և բացահայտեցին նրան ի վերուստ տրված գեղարվեստական ազատ հանկարծաստեղծման երջանիկ շնորհքը: Այնտեղ, որտեղ «չարքաշին աչքն» ունակ էր նկատել վազող ամպերի լուկ տարածական տեղաշարժերը կամ եղյամապատ ապակու վրա տեսնել սոսկ երկրաչափական պատկերներ, Միհանաջյանի աչքին էին գալիս անսովոր պերճությամբ զարդարված հեքիաթային դղյակներ ու ռոմանտիկական շնչով տոգորված անառիկ ամրոցներ կամ թե օտարոտի բուսյորով և պտուղներով արբեցած, էկզոտիկ կենդանիներով և թռչուններով բնակեցված ծաղկուն պարտեզներ... Միհանաջյան նկարչի ձևավորման վրա իրենց որոշակի ազդեցությունն են թողել նաև նորնախիջևանյան կենցաղի ու կենսակերպի ազգային ոգին և ազգագրական կոլորիտը: Հայկական տարազների, գորգերի ու կարպետների, գործվածքների ու կահ-կարասիի, զատկի ձվե-

[1] Տե՛ս Мариэтта Шагинян. Человек и время. М., 1982, с.14-18.

րի ու խաղալիքների, սրբությամբ պահվող հին ձեռագրերի նկարազարդման պայծառ գույները և օրնամենտալ պաճուճանքները կամա թե ակամա ներծծվում ու տպավորվում էին Միհանաջյանի գիտակցության մեջ որպես նրա ապագա ստեղծագործության հասցեագրված ցպահանջ ուղերձ:

Նկարչի կենսագրության վաղ շրջանին վերաբերող կցկտուր, ցաքուցրիվ վկայություններից հատուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ դեռահաս Միհանաջյանը հոր հետ ճամփորդել է Անդրկովկասում և հասել Թեհրան: Այդ հանգամանքը կարևորվում է երկու պատճառով: Մի կողմից՝ հիմք է տալիս ենթադրելու, որ ապագա նկարիչն արդեն պատանի հասակում հնարավորություն է ունեցել սեփական աչքերով տեսնել և ի մոտո ճանաչել նախնյաց հայրենիքը, իսկ մյուս կողմից՝ մատնանշում պարսկական արվեստի նկատմամբ նկարչի տածած հետաքրքրության ակունքները: Հավելենք, որ այդ տարիներին նա ամբողջությամբ կլանված էր արևելյան հեքիաթների, ինչպես նաև եվրոպացի ուխտավորների՝ դեպի Արևելք կատարած ուղևորությունների ու դրանց հետ կապված բախտախնդրական և արկածաբեր զանազան իրադարձությունների մասին պատմող վեպերի կամ հուշագրությունների ընթերցանությամբ: Գրական այդ յուրատեսակ պահոցից նկարիչը հաճախակի է օգտվել հետագայում ևս՝ այնտեղից լույս աշխարհ հանելով և իր ստեղծագործություն ներմուծելով գեղարվեստորեն վերամշակված ու նորովի իմաստավորված տարբեր կերպարներ:

Միհանաջյանի նկարչական ընդունակությունների վաղ դրսևորման մասին պատկերացում տվող ոչ մի նյութ չունենք, սակայն, ամենայն հավանականությամբ, կարող ենք պնդել, որ դրանք արդեն աչքի են ընկել իրենց գեղարվեստական արժանիքներով, քանի որ շուտով Միհանաջյանը լուրջ քննություն է բռնել և հաջողությամբ ընդունվել Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանը: Նախապես ասենք, որ Միհանաջյանի ուսումնառության շրջանը ևս նկարչի կենսագրության «բաց էջերից» է: Հայտնի չեն ո՛չ ուսումնարանում նրա լինելու ստույգ ժամկետները, ո՛չ էլ նրա անմիջական ուսուցիչներն ու դասընկերները: Տեղեկություններ ունենք միայն այն մասին, որ Մոսկվա տեղափոխվելուց և այնտեղ գեղարվեստական կրթություն ստանալուց առաջ Միհանաջյանը որոշ ժամանակ մնացել է Վորոնեժում և հարկադրված զբաղվել գրասենյակային տաղտկալի ծառայությամբ: Ուսումնարանն ավարտելու պահին նա արդեն գրեթե երեսուն տարեկան էր: Հա-

մենայն դեպս, նկարչի ստեղծագործությունների՝ իր խոկ ձեռքով կազմած կատալոգը բացվում է 1911-1912 թվականների աշխատանքներով, որոնք և ի տես են դրվում մոսկովյան տարբեր նկարահանդեսներում ու դրական արձագանք գտնում ինչպես ռուսական, այնպես էլ հայկական մամուլի էջերում[2]: Այդ աշխատանքներից մի քանիսը ձեռք են բերվում Մոսկվայի, Պետերբուրգի, Դոնի Ռոստովի և նույնիսկ հեռավոր Վենետիկի մասնավոր հավաքողների կողմից: 1916-ին Միհանաջյանը դարձավ XX դարի հայազգի առաջին նկարիչը, որի արվեստն ընթերցողներին ներկայացվեց առանձին գրքույկով[3]:

Ուսումնարանում անցկացրած տարիները Միհանաջյանին չատ բան տվեցին մասնագիտական հմտություն և ակադեմիական վարպետություն ձեռք բերելու առումով, բայց միևնույն ժամանակ նրան վերջնականապես վանեցին արվեստի ավանդական ուսուցման խիստ կանոնակարգված, հնապաշտական սովորություններից: Նկարչի մեջ ի սկզբանե ապրող ազատ արարչագործության ու հանկարծաստեղծման կամակոր ոգին մեծ դժվարությամբ էր համակերպվում ուսանողներին պարտադրվող հանճնարարությունների՝ անատոմիական վարժությունների և ծեփակերտերի ընդօրինակման մեխանիկական եղանակների ու մեթոդների հետ: Սեփական անհատականության հանդեպ ակամայից գործադրվող այդ բռնությունները երբեմն սկսնակ նկարչին հոգեբանորեն ճնշում և կոնֆլիկտային իրավիճակներ էին ստեղծում վտանգելով նույնիսկ ուսումնարանում նրա մնալու հեռանկարը: Բայց և այնպես, Միհանաջյանին հաջողվեց կայանալ թե՛ որպես նկարչի մասնագիտությանը վստահորեն տիրացած վարպետ, թե՛ իբրև իր գեղարվեստական հակումներին ու գեղագիտական դավանանքին հավատարիմ ստեղծագործ անհատ:

Արվեստում իր ինքնուրույն ուղին Միհանաջյանը, ինչպես նշեցինք, սկսում է 1911-1912 թվականներից: Այդ տարիներին նրա ստեղծած աշխատանքները՝ «Դիմակահանդես», «Կարուսել», «Եղյամ», «Ջմռան հեքիաթը», «Ջրավազանի մոտ», «Կրինոլինով տիկինը» են, առայժմ միակա բնույթի են կրում, քանի որ դրանցում նկարիչը դեռ չի հաջողել ամբողջությամբ բացահայտել իր ստեղծագործական կարողությունը, հստակորեն չի ձևակերպել արվես-

---

[2] Տե՛ս, օրինակ. Н.Лаврский. А.Э.Миганаджян - Армянский вестник, 1916, N5, 28 февраля, с. 23-24, Գ.Էդ[իլյան], Նկարիչ Հ.Միհանաջյան - Համբավաբեր, 1916, 22 մայիսի:

[3] Տե՛ս Н.Лаврский. А.Э.Миганаджян. М., 1916.

տում իր սեփական ասելիքը, թեև արդեն ձերբազատվել է դպրոցական երկչոտությունից ու սխեմատիզմից, հրաժարվել կավահողային գորշ երանգներից և հրավառել իր ներկապնակը: Միհանաջյանի այս կտավների թեմատիկ բովանդակությունն ու ձևաոճական կերպավորումը դեռևս հիշեցնում են ժամանակի ռուս նկարչության, հատկապես "Мир искусства" և "Голубая роза" դեղարվեստական խմբավորումների առանձին ներկայացուցիչների աշխատանքները:

1913 թվին Միհանաջյանը ստեղծում է իր իսպանական շարքի առաջին նմուշները՝ «Իսպանուհիներ», «Իսպանական գնչուհիներ», «Պատշգամբում կանգնած իսպանուհիներ», «Իսպանական պանդոկ»՝ յուրահատուկ մեկնաբանություն տալով դարասկզբի ինչպես ռուսական, այնպես էլ հայկական կերպարվեստում տարածված իսպանական մոտիվներին[4]: Միհանաջյանի Իսպանիան իրականության հետ միայն մոտավոր, հաղիվ նշմարվող կապերի մեջ է: Դա ո՛չ Գոյայի և ո՛չ էլ Պիկասոյի հայրենիքն է իր ողբերգական, բայց արժանապատիվ, հպարտ կեցվածքով: Դա, ավելի շուտ, բանաստեղծական-վիպասանական կերպարանք ստացած, կարծես թե հատուկ թատերայնացված մտապատրանք է, տեսլաշահանդես՝ նման Բալմոնտի կամ Մևերլանինի երևակայած, ռոմանտիկական շղարշով պատված, կրքոտ ու տարփոտ «Իսպանիաներին»:

Սկսած 1914 թվից՝ նկարչի արվեստը թեկուզ կարճատև, սակայն սրընթաց վերելք է ապրում: Բնատուր կոլորիստի (գունանկարչի) ու ճարպիկավոր գծանկարիչ-ոճավորողի տաղանդով օժտված Միհանաջյանն այդ տարիներին իրար հետևից ստեղծում է արևելյան թեմաներով տասնյակ գունանկարչական և գրաֆիկական գործեր: Առանձնահատուկ հմայք ունեցող փոքր չափերի այդ կտավները նա բնակեցնում է հարճերով և հուրիներով, հարեմում փակված սուրհանդակներով ու հեզաճկուն պարուհիներով... Դրանք արևելյան կյանքից անմիջականորեն քաղված ճշմարտանման տեսարաններ կամ հետաքրքրասեր օտարերկրացու կենցաղագրական դիտարկումներ չեն, այլ ստեղծագործական ներքնատեսությամբ հրահրված կամ գրքային տպավորություններով սնված օդացոլումներ: Սա Orientalia-ն է՝ կարոտատենչ ու փափագելի այն դրախտավայրը, որի կերպարը նույն տարիներին

[4] Այդ մոտիվները մասնավորապես ոգեշնչել են ռուս նկարիչներ Միխայիլ Վրուբելին, Կոնստանտին Կորովինին, Ալեքսանդր Գոլովինին..., իսկ հայ արվեստագետներից՝ Վարդգես Սուրենյանցին:

գերել է նաև Միհանյանի ավագ ու կրտսեր սերնդակիցները, նորնախիջևանցի հայրենակիցներ Մարտիրոս Սարյանի և Մարիետա Շահինյանի ստեղծագործական երևակայությունը: Սա Շեհերազադայի պատմությունների թովիչ աշխարհն է, մահմեդական պոետիկ արվեստում բազմիցս պատկերված, զգայական վայելքներ խոստացող ծաղկաջերմոցը, Սահադու երգած սիրահարների հանդիպատեղին...

Նկարչի 1910-ականների ստեղծագործությունները («Արևելյան վեներա», «Կանայք Նեղոսի ափին», «Աղջիկն ու վիթը», «Ինտիմ զրույց» ևն) առանձնանում են իրենց անաղարտ, դիտողի «աչքը չոյող» գույներով ու գծի ճապուկ, արաբեսկային խճճանքներով: Միհանյանը զերադասում է աչխատել դեկորատիվ ոճավորության շեշտված մաներով, երբեմն գրեթե տառացիորեն հետևելով արևելյան մանրանկարիչների որդեգրած գեղարվեստական սկզբունքներին: Միևնույն ժամանակ նրա արվեստում զանազանվում են եվրոպական նորագույն նկարչության տարբեր ուղղությունների ու հոսանքների արձագանքները: Խոսքը, մասնավորաբար, գոգենյան այսպես կոչված «սինթետիզմի» ձևերի կտրուկ համահարթեցման, իրար լրացնող հակադիր գույների դաշնավորության, մտածական պատկերացումների բացարձակացման, ինչպես նաև նոր ռոմանտիզմի հետահայաց ղիրքավորման ու «մոդեռնի» իմպրովիզացիոն-ոճավորական ճաշակի մասին է:

Միհանյանի արվեստը բնույթյունը վերարտադրելու, այն նմանակելու խնդիրներ չունի: Ավելին. թեև նկարիչը չի հրաժարվում ֆիգուրատիվ կամ առարկայական կերպավորումից, նրա գործերն ընդհանուր առմամբ և ըստ էության շատ չեն տարբերվում աբստրակտ արվեստի օրինակներից, քանի որ դրանց գույները ու գծերը առավելապես դեկորատիվ-ձևապաշտական բնույթ են կրում: Նուրբ ոճավորված գծանկարի, տափակատարած սիլուետների, հնչեղ գույների համադրության չնորհիվ են բացահայտվում ու երևակվում Միհանյանի ստեղծագործության արևելյան արմատները: Չռգորդումները չափազանց ընդարձակ են. հայկական ժողովրդական արվեստից, պարսկական ու հնդկական նկարչությունից մինչև Մարտիրոս Սարյանի մերձարևելյան ու Հանրի Մատիսի ալժիրյան շարքերը:

Սարյանի և Մատիսի անունները հատուկ ենք նշում, քանի որ Միհանյանի գեղարվեստական նախասիրություններն ու գեղագիտական հայացքները սերտորեն առնչվում և հաճախ ուղղակիորեն համընկնում են վերջիններիս ստեղծագործական սկզբունքների ու տեսակետների հետ: Միհանյանը Մատիսին է

նմանվում առաջին հերթին գունային իր սուր զգացողությամբ և արտակարգ թարմ ընկալումներով, ինչպես նաև արվեստի՝ իբրև հանգիստ ու բավականություն պարգևող հաճույապաշտական ֆենոմենի իր ըմբռնումով:

Ինչ վերաբերում է Մարտիրոս Սարյանին, ապա մինչև Խորհրդային Հայաստանում նրա վերաբնակվելը, այսինքն՝ մինչև 1921 թվականը, այդ երկու արվեստագետների կյանքի և ստեղծագործական կենսագրության մեջ կարող ենք մի շարք ընդհանրություններ տեսնել: Երկուսն էլ իրենց մանկության և պատանեկության տարիներն անցկացրել են Նոր Նախիջևանում, ավարտել տեղի նույն վարժարանը, առժամանակ գրասենյակային ծառայող եղել ու, վերջապես, ընդունվել Մոսկվայի գեղարվեստական ուսումնարանը: Թե՛ Սարյանի, թե՛ Միհանաջյանի ստեղծագործությունն այդ շրջափուլում ընթացել է օրինաչափորեն միևնույն հունով:

Նկարիչները անճամբ ծանոթ էին: Այդ մասին կան փաստացի վկայություններ, թեպետև դրանք վերաբերում են արդեն խորհրդային շրջանին: Այսպես, հայտնի է, որ 1924 թվի մայիսի 10-ին Մոսկվայի Հայկական դրամատիկական ստուդիայի հանդիսասրահում Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանների» եզրափակիչ խաղափորձի ժամանակ բեմադրող-դերասույց Ռուբեն Միմոնովը խորհուրդներ է հարցրել իր մոտ նստած Սարյանից ու Միհանաջյանից[5]: Վերջինս թատերական այդ արվեստանոցի հետ համագործակցել է դրա հիմնադրման օրից[6]: Ժամանակ առ ժամանակ Հայկական դրամատիկական ստուդիայի հետ կապեր է ունեցել նաև Մարտիրոս Սարյանը: Ինչպես տեսնում ենք, նրանց կենսագրական ու ստեղծագործական արահետները հաճախ մոտեցել, իրար են խաչվել: Առավել ևս զարմանալի է, որ Սարյանի հուշագրություններում, հատկապես նրա «Իմ կյանքից» գրքում, նաև նկարչի հարուստ նամականու ու հայ կերպարվեստին նվիրված բազմաթիվ հոդվածների մեջ Միհանաջյանի անունը բնավ չի հիշատակվում:

Մինչդեռ Սարյանի ու Մատիսի ստեղծագործության հետ Միհանաջյանի 1910-ական թվականների արվեստն առնչվում է ևս

---

[5] Տե՛ս Нерсес Каграманов. Дом культуры Советской Армении в Москве. Ереван, 1982, с. 63.

[6] Բ.Հարությունյանի «Սովետահայ թատրոնի տարեգրության» առաջին գրքում (Երևան, 1961, էջ 52) նշված է, որ 1922 թվի մայիսի վերջին այդ նույն ստուդիայի բեմահարթակում ներկայացվել է Մելքայել Մանվելյանի «Հեգքիաթը» Հ.Միհանաջյանի դեղարվեստական ձևավորումով:

մեկ եզրով: Այդ տարիների նրա գործերից չատերը, ինչպես և նշված նկարիչների մոտ, նվիրված են երաժշտության թեմային՝ «Պարուհի Գյուլիզարը», «Արևելյան պար», «Արևելյան հովվերգություն», «Սիրո պար», «Պարուհին», «Ռիթմիկ պար», «Արևելյան մոտիվ», «Թառահարուհի» և այլն:

Մինչխորհրդային այդ տասնամյակում հաղիվ հասնելով իր գագաթնակետին՝ նկարչի արվեստն սկսեց չարժվել վարընթաց ուղիով: Միևնույն թեմաների ու մոտիվների, ինչպես նաև կատարողական առանձին եղանակների ու հնարքների անընդհատ չահագործումը Միհանաջյանի ստեղծագործությունն ի վերջո գցեց նույնաբանության ծուղակների մեջ: Նրա նկարներն աստիճանաբար կորցրին իրենց թարմությունն ու գեղարվեստական ներազդեցության երբեմնի ուժը և հետզհետե գրեթե ամլացան: Թեև Միհանաջյանը հետագայում էլ չարունակում էր երևալ մոսկովյան տարբեր ցուցասրահներում ("Московский салон", "Жар-цвет" և այլն), նույնիսկ անհատական պատկերահանդեսներ բացում արտասահմանում (Տոկիո, Օսակա), գեղարվեստական քննադատները գտնում էին, որ նրա գործերը չեն արտացոլում իրական կյանքը, զուրկ են խորհրդային հասարակությանը հուզող սոցիալական և գաղափարական բովանդակությունից, իսկ խայթալեզու Աբրամ Էֆրոսը Միհանաջյանին անվանում էր ոչ այլ կերպ, քան «ռահատ-լոխումների և արևելյան քաղցրափրփուր գինիների անմիտ նկարիչ»[7]:

Ճիշտ է, եղել են նաև դրական կարծիքներ: Այսպես, օրինակ, հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի դուստր Նվարդ Թումանյանի հուշերում կարդում ենք. «4 մարտի 1923թ.: Երեկոյան Մոսկվայի նկարիչներից մեկը՝ Հովակիմ Միհաջանյանը (այդպես է բնագրում - Ա.Ա.) եկավ, հետն էլ իր նկարներից մի քանիսը բերեց:

Հայրիկս չատ հավանեց և ասաց. «Ափսո՛ս, ուշ եմ հանդիպում իմ նկարչին, ինչքա՛ն բան կարող էինք միասին անել, ափսո՛ս: Եթե Բեռլինում առաղնացա, վերադարձիս կտեսնվենք, կխոսենք»:

Հայրիկին դուր էին եկել Միհաջանյանի նկարների արևելյան վառ գույները: Նրա դնալուց հետո ասում էր. «Սրան կտայի իմ լեգենդներից, հեքիաթներից մի քանիսը. արևելյան լիրիկ, էկ-

[7] А.Эфрос. Мартирос Сарьян - Новый мир, 1934, N3, с. 219.

զոտիկ բաները կարող է լավ տալ»[8]: Ավա՛ղ, Թումանյանն այդպես էլ չապաքինվեց:

Իսկ Միհանաջյանի ստեղծագործությունը չարունակում էր անշեղ վայրէջքը: 1930-ականների կեսերին նրա անունը գրեթե անհետանում է գեղարվեստական մամուլի էջերից, իսկ 1938-ին նա վախճանվում է: Հետագայում հրատարակված XX դարի ռուսական, հայկական և խորհրդային կերպարվեստի պատմությանը վերաբերող ուսումնասիրություններում նկարչի ստեղծագործությունը չի լուսաբանվել: Միայն կենսամատենագիտական հազվագյուտ տեղեկատուներում ու բառարաններում նրան հատկացված մի քանի տող կա: Հայաստանի Ազգային պատկերասրահի պահոցներում է գտնվում Միհանաջյանի «Պարուհին» (1915)[9], նկարչի ևս մեկ բնորոշ աշխատանք՝ «Պարը» (1926), գարդարում է Կարիկ Պասմաճյանի փարիզյան պատկերասրահը[10]:

Ահավասիկ Հովակիմ Միհանաջյանի կյանքին ու գործին վերաբերող առայժմ հայտնի պարագաները:

---

[8] Նվարդ Թումանյան, Հուշեր և զրույցներ, Երևան, 1969, էջ 319, 320:

[9] Նկարն այստեղ է հայտնվել 1925 թվականին, իսկ մինչ այդ եղել է Մոսկվայի՝ Խորհրդային Հայաստանի Մշակութեի տան սեփականությունը:

[10] Այդ կտավի գունավոր վերատպությունը տե՛ս Каталог выставки художественных произведений XVI-XX веков из собрания Г.Басмаджяна. М.-Л., 1988, без пагинации.

ՔՐԻՍՏԱՓՈՐ ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ «ՇՈՒՇԱՆ» ՕՊԵՐԱՆ

ԺԹ դարի երկրորդ կեսին հայկական օպերայի սկզբնավորման ուղղությամբ ստեղծագործական որոնումներ են կատարվում Արևելյան Հայաստանում: 1887-ին Կ.Պոլսում հանդիպելով Տ.Զուխաճյանին ու ծանոթանալով արդեն հռչակավոր «Լեբլեբիջիին»՝ Քրիստափոր Կարա-Մուրզան որոշում է իր ուժերը փորձել երաժշտական թատրոնի ասպարեզում: Եվ դրա համար բոլոր հիմքերն ուներ: Նա արդեն կազմակերպել էր հայ իրականության մեջ առաջին քառաձայն խումբն[1] ու Թիֆլիսում 1885-ի մարտի 15-ին տվել քառաձայն խմբերգային անդրանիկ համերգը[2], իսկ 1887-ին իր ծննդավայր Ղարասու-Բազարում՝ երկսեռ խմբի առաջին համերգը: Դեպի օպերա իր ճանապարհը Կարա-Մուրզան հարթեց «Հայ ժողովրդական երգերի բազմաթիվ նմուշներ հավաքելով, նրանց բնորոշ սինթետիկ սկզբի և «թատերայնության» գծերի առանձնահատկությունների մեջ ներթափանցելով, դրանց հարմոնիզացիայի և իր երգչախմբերի թատերականացված կատարմամբ՝ օգտագործելով տարազներ ու հասարակ դեկորացիաներ»[3]: Կարա-Մուրզան վարպետորեն զուգորդում էր տարաբնույթ երգեր և ստեղծում ժողովրդական երգի վրա հիմնված ծավալուն ձևեր: Կոմպոզիտորը որոշ ժամանակ «Թբիլիսիում հաջողությամբ աշխատում էր Արծրունու թատրոնում դեկավարելով փոքր նվագախումբը»[4]: Հաջորդ քայլը «Հրդեհ» (1885) և «Գաղթականներ» (1885) երաժշտական պատկերներն էին՝ խմբերգային պիեսներ, որոնք «կատարվում էին նկարիչ Գ.Բաշինջաղյանի հատկապես նկարած դեկորների ֆոնի վրա»[5]: Կարա-Մուրզան երաժշտությունն էր գրել Ս.Գալֆայանի «Արշակ Բ» դրամայի համար (1883), որը ներառում էր արիաներ, անսամբլներ, խմբերգեր և գործիքային համարներ: «Արշակից» առանձին համարներ ու գործողություններ տեղ են գտել տարբեր երգչախմբերի համերգային ծրա-

---

[1] Տե՛ս Մ.Մուրադյան, Քրիստափոր Կարա-Մուրզա. կյանքը և երաժշտական հասարակական գործունեությունը, Երևան, 1950, էջ 29:

[2] 15 հոգուց բաղկացած արական երգչախումբը երգել է ազգային տարազով:

[3] Г.Тигранов. Армянский музыкальный театр. Очерки и материалы. Том 1. Ереван, 1956, с. 183.

[4] Ալ.Շահվերդյան, Հայ երաժշտության պատմության ակնարկներ, XIX-XX դդ. (մինչսովետական շրջան), Երևան, 1959, էջ 287:

[5] Նույն տեղում:

գրերում. «1895-ին Կարա-Մուրզան ականավոր դերասան Հովհ. Աբելյանի հետ համատեղ բեմադրում է «Արշակ Բ» ներկայացումը (Կարա-Մուրզայի երաժշտությամբ) Բաքվում և Շուշիում: Կարա-Մուրզայի ստեղծագործական մտահղացումների թվում էր «Արշակ Բ» ողբերգության երաժշտության հիման վրա մեծ պատմական օպերայի ստեղծման մտադրությունը»[6]:

Մեծ էր Կարա-Մուրզայի հետաքրքրությունը երաժշտական թատրոնի նկատմամբ. նա նպատակ է ունեցել հորինել մի քանի օպերա, որոնց ցանկը պահպանվում է արխիվում: Նա չատ բարձր էր գնահատում օպերան և կարևորում դրա դերը. «Օպերան իր մեջ պարունակում է չորս գեղարվեստ՝ բանաստեղծություն, նկարչություն, դրամատիկական արվեստ և երաժշտություն: Եթե այդ բաղադրիչներից որևէ մեկը թույլ կամ պակասավոր լինի, օպերան չատ բան կկորցնի», - գրել է Կարա-Մուրզան 1899-ի հոկտեմբերի 23-ին Թիֆլիսյան «Մշակում»[7]:

«Շուշանը» Կարա-Մուրզայի «երաժշտական ժառանգության գագաթն է: Նրա ամբողջ վոկալ և գործիքային ստեղծագործությունը փաստորեն հանդիսացել է նախապատրաստական աշխատանք այս մեծ երկի ստեղծման համար»[8]:

«Շուշանի» լիբրետոյի[9] հեղինակն է գրող, հասարակական գործիչ Ատրպետը (Սարգիս Մուրայանյան)[10]: Նա ծնվել է 1860-ի հունվարի 31-ին[11] Կարս քաղաքում, հարուստ հոգևորականի ընտանիքում: Տեղի կաթոլիկների վարժարանում նախնական կրթությունը ստանալուց հետո՝ 1874-ին, տեղափոխվում է Կ.Պոլիս և

---

[6] Գ.Տիգրանով, նշվ. աշխ., էջ 185:

[7] Նույն տեղում, էջ 178:

[8] Մ.Մուրադյան, Քրիստափոր Կարա-Մուրզան և բազմաձայնության արմատավորումը հայ երաժշտության մեջ, Երևան, 1956, էջ 185:

[9] Ա.Պատմագրյանի վկայությամբ օպերան գրվել է Ատրպետի «Ալմաստի» հիման վրա. «Ատրպետի Ալմաստ պատմուճածքի հիման վրայ Կարա-Մուրզան գրեթե ամբողջացրել է ՇՈՒՇԱՆ անունով իր օպերան, որից զանազան հատուածներ կատարել է իր համերգներում» (տե՛ս Ա.Պատմագրեան, Հայ երգը Դարերի Մէյջից, Պէյրութ, 1973, էջ 287): Սակայն իրականում Կարա-Մուրզայի «Շուշան» անավարտ օպերան գրված է ըստ Ատրպետի «Շուշանի» և ոչ «Ալմաստ» վեպի (և ոչ թե պատմվածքի), որը հեղինակն ավարտել է 1892-ին, իսկ Կարա-Մուրզան իր օպերայից հատվածներ արդեն կատարում էր 1891-ի համերգներում:

[10] Ատրպետի կյանքի և գործունեության մասին տե՛ս Ատրպետ, Երկեր, Երևան, 1964, էջ 3-14:

[11] Ատրպետի ծննդյան օրվա վերաբերյալ կան տարբեր կարծիքներ. 1964-ին հրատարակված Ատրպետի երկերի ժողովածուի՝ Կ.Դանիելյանի հեղինակած առաջաբանում նրա ծննդյան օր է համարվում փետրվարի 1-ը (տե՛ս Ատրպետ, Երկեր, էջ 4):

ընդունվում Փանկալթիի Վիեննայի Մխիթարյանների դպրոցը, իսկ 1875-77-ին ուսումնառությունը շարունակում օսմանյան լիցեյում: Պոլսում փաստաբանությամբ և առևտրական գործունեությամբ զբաղվող Ատրպետի հայրը որոշում է որդուն ուղարկել Եվրոպա: Յավոք, ռուս-տաճկական պատերազմը ստիպում է Սարգսին հոր հետ վերադառնալ Կարս: 1879-ին Ատրպետը մեկնում է Կարին (Էրզրում) և անդամագրվում Գերեկեյանի և Իդրիսի ղեկավարած հեղափոխականների գաղտնի ընկերությանը: 1880-ականների սկզբներին նա տեղափոխվում է քաղաքից քաղաք՝ Թիֆլիս, Կարս, Ալեքսանդրապոլ, Ախալքալաք և, վերջապես, հաստատվում Կարսում ու զբաղվում ուսուցչությամբ: 1885-ին Ատրպետը վերստին Թիֆլիսում է. այստեղ նա հրատարակում է իր անդրանիկ վեպը՝ «Դև Դանելը», ապա տեղափոխվում Բաքու՝ ստանձնելով նավթագործարանի կառավարչի պաշտոնը: 1889-ին «Մուրճում» հրատարակվում է «Խև Կարապետը», որից հետո իրար հետևից լույս են տեսնում նրա վեպերը, պատմվածքները, վիպակները, դրամաները, հոդվածները: Քանի որ դեռևս Կարսում Ատրպետը զբաղվել էր սոցիալիստական ուսմունքների ուսումնասիրությամբ, մասնակցել Գերեկեյանի սոցիալ-հեղափոխական խմբակի աշխատանքներին, ուստի չուտով անդամագրվում է Ս.Դ.Հնչակյան կազմակերպությանը և 1893-ին Ղ.Աղայանի, Շիրվանզադեի հետ մտնում Թիֆլիսի Ս.Դ.Հնչակյան հեղափոխական նորակազմ կոմիտեի մեջ՝ պաշտպանելով «ղարավերջին մարքսիստական գունավորումով հանդես եկած մանրբուրժուական սոցիալիզմի տարատեսակներից մեկը»[12]:

1893-ին Ատրպետն արդեն Թավրիզում է. «Իմ մանկական յուշերի հետ սերտօրէն կապուած է Ատրպետի կերպարը,- հետագայում կհիշի Ա.Պատմագրյանը, - իր հսկայ հասակով, փարթամ մօրուքով եւ մահկանացուի մեծ ձեռնափայտով: Ատրպետը Թաւրիզում շատ աշխոյժ գործունէութիւն է ունենում. նա նախ կապալով էր վերցրել թեմական տպարանը, ուսուցիչ էր դպրոցում եւ զբաղւում էր փաստաբանութեամբ»[13]: Թավրիզում որպես առևտրական փաստաբան երեք տարի պաշտոնավարելուց հետո Ատրպետը վերադառնում է Թիֆլիս, Ղ.Աղայանի, Շիրվանզադեի և մյուսների հետ բանտարկվում ու աքսորվում Ռոստով: 1899-ին Ատրպետը թույլտվություն է ստանում թողնել աքսորավայրը և մեկնում է Թավրիզ, որտեղ Մուրատյան տպարանում հրատարա-

[12] Ատրպետ, նշվ. աշխ., էջ 4:
[13] Ա.Պատմագրեան, Իմ յուշերից, Պէյրութ, 1978, էջ 16:

կում է իր երկերի 10-հատորյակը: 1905-ին Ատրպետը վերադառնում է Թիֆլիս և մեկնում արտասահման. արտասահմանյան ճանապարհորդություններից վերադառնալով՝ հրատարակում է «Ապագա» լրագիրը (1907), ապա աշխատակցում «Ախուրյանին» և «Սուրհանդակին», Ալեքսանդրապոլում ռուսաց լեզվով հրատարակում իր պատմական հետազոտություններից մի քանիսը՝ «Մահմեդ Ալի Շահ» և «Իմամաթ», նաև առանձին գեղարվեստական երկեր ու պատկերներ: Լ.Ն.Տոլստոյը, կարդալով «Մահմեդ Ալի Շահ» հետազոտությունը, գրություն է ուղարկում Ատրպետին. «Շատ չնորհակալ եմ Ձեր գրքի առաքման առթիվ. ես այնտեղ գտա ինձ համար ծայր աստիճան հետաքրքիր և շատ նոր բան: Իրենց վերնագրերով ինձ նուլնպես հետաքրքրում են և Ձեր ուրիշ գործերը, որոնք հիշված են հայտարարության մեջ. «Շիա հոգևորականությունը», «Բաբիզմ», «Հարկատվության սիստեմը Պարսկաստանում», «Երիտասարդ-թուրքական շարժումը»[14]: Առաջին աշխարհամարտի տարիներին Ատրպետը ռազմական թղթակից էր Արևելյան ճակատում. նրա հոդվածներն ու ակնարկները տպագրվում են «Մշակում» և «Тифлисский листок»-ում: 1915-ից Ատրպետն աշխատում է Ալեքսանդրապոլի գաղթականների հիվանդանոցում, իսկ խորհրդային իշխանության տարիներին Լենինականում (այժմ՝ Գյումրի) զբաղվում գրական-հասարակական գործունեությամբ: Ատրպետը մահացել է 1937-ին:

Ատրպետը թողել է գրական մեծ ժառանգություն՝ «Ալմաստ», «Ջավահիր» և «Քոռ Եղիկ» վեպերը, «Խև կաբապետ», «Շխնոց» և «Ժառանգներ» վիպակները, «Թուլումբաջիներ» վեպիկը, պատմվածքներ ու նովելատիպ գրվածքներ, այդ թվում՝ «Երախտապահանջ կամ ժժժիկ» պատմվածքը, որի հիման վրա 1961-ին ստեղծվել է «Ժժժիկ» ֆիլմը (ռեժիսոր՝ Ա.Մանարյան): Երկերի 10-հատորյակից բացի, նա թողել է առանձին գրքերով հրատարակված բազմաթիվ գեղարվեստական գործեր ու պատմաբանասիրական հետազոտություններ, հրապարակախոսական հոդվածներ:

Հայ երաժշտական թատրոնի համար կարևոր նշանակություն ունեցավ «Շուշան» օպերայի լիբրետոն՝ տպագրված 1890-ին Պետերբուրգում[15]: Հեղինակն այն նվիրել է Կարա-Մուրզային. «Նուէր մեծայարգ պ. Խաչատուր Մարգարեան Կարա-Մուրզային.

---

[14] Ատրպետ, նշվ. աշխ., էջ 5:

[15] Տե՛ս Ս.Ատրպետեան, ՇՈՒՇԱՆ, ողբերգութիւն երեք արարուածով (թուրքահայերի կեանքից), Ս.Պետերբուրգ, տպարան Ի.Ն.Սկորոխոդովի, 1890:

Դո՛ւ, որ պատճառ դարձար և խրախուսեցի՛ր այնքան տարինե-րում մոգուս պատկերացրած սիրտս մաշող տիպերի նկարագրե-լուն, ընդունի՛ր անկեղծ սրտով քեզ մատուցած այս իմ փոքրիկ երկն: Տու՛ր դորան Քու Քնարի լարերի քնքուշիկ դայլայլիկներն, որի ներդաշնակ և քաղցրանուագ եղանակները ծածկեն նորա պա-կասութիւններն: Հեղինակ»[16]:

1891-ի մարտի 28-ի N 35-ում «Մշակը»[17] *տեղեկացնում է. «...մեզ է ուղարկված Ատրպետի «Շուշան» ողբերգութիւնը, տպված Պետերբուրգում: Այդ ողբերգութեան համար Կարա-Մուր-զան գրում է երաժշտութիւն»*[18]*: Հընթացս 1891-ի դեկտեմբերի 8-ին Բաքվի հասարակական ժողովարանի դահլիճում կայացած Կարա-Մուրզայի խմբական համերգի հնչում է «Շուշանի» նա-խերգանքը*[19]*: Կարա-Մուրզան «Շուշանից» հատվածներ է կա-տարում 1892-ի փետրվարի 23-ին Բաքվում, իր խմբական 50-րդ համերգին*[20]*, 1893-ի մայիսի 17-ին Վաղարշապատում կայացած խմբական երգի երկրորդ համերգին*[21]*, 1901-ի մարտի 17-ին Թիֆլի-սի Արտիստական ընկերության թատրոնում կայացած խմբական երգի համերգին, որին մասնակցել է երգիչ Յովսեփեան*[22]*, 1903-ին Ալեքսանդրապոլում՝ Ա.Տիգրանյանի ղեկավարությամբ*[23]*: «Շու-շանը» ժամանակին մեծ ժողովրդականութիւն է վայելել: Նրանից առանձին հատվածներ երկար տարիներ Թավրիզի «Հանդէսներում ներկայացւում էին մշտանորոգ հետաքրքրութեամբ»*[24]*: Ի դեպ, Ատրպետի՝ Թավրիզում եղած տարիներին հեղինակի նախաձեռ-նութիւնը և ջանքերով «Շուշանը» բեմադրվել է Թավրիզում: «Փոլատ Բէկի դերը խաղում էր Ռաֆայէլ Մովսիսեանը, - հետա-գայում կգրի Ա.Պատմագրյանը, - իսկ Շուշանի դերը իմ Նեկտար քոյրը: Փորձերը տեղի էին ունենում մեր տնում. այդ պատճառով էլ եղանակները անգիր գիտէի: Դրանցից մի քանիսը հրատարակել եմ, նօթաներով միասին կահիրէյում իմ խմբագրած ԳԱՆՁԱՐԱՆ*

---

[16] Նույն տեղում, էջ 3:
[17] Բ.Հարությունյան, XIX-XX դարերի հայ թատրոնի տարեգրություն, Հատոր առաջին (1801-1900), Երևան, 1980, էջ 332:
[18] Քրիստափոր Կարա-Մուրզա. Համառոտ բիբլիոգրաֆիա (կազմեց՝ Ն.Թեյմու-րազյան), Երևան, 1956, էջ 44:
[19] Նույն տեղում, էջ 45:
[20] Նույն տեղում, էջ 46:
[21] Նույն տեղում:
[22] Նույն տեղում, էջ 67:
[23] Գ.Տիգրանов, նշվ. աշխ., էջ 186:
[24] Ա.Պատմագրեան, Իմ յուշերից, էջ 17:

Ա 94532

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ վեցհատորեակում»[25]: Խոսելով «Շուշանի» մասին՝ Մ.Մուրադյանը գրում է. «Իբրև բեմական ստեղծագործություն, այս պիեսը որևէ քննադատության դիմանալ չի կարող, որովհետև նա չափազանց ստատիկ է, զուրկ գործողության զարգացման դինամիկայից, լի է բազմաթիվ երկարաբանություններով ու ավելորդություններով, որոնք ոչ միայն չեն նպաստում սյուժետային գծի զարգացմանը, այլև հաճախ մթագնում են այն»[26]: Կամ՝ «Ընդհանուր առմամբ այս պիեսը երաժշտականացման համար շատ քիչ հարմար տեղեր ունի: Հատկապես երկրորդ և երրորդ գործողություններն աչքի են ընկնում իրենց ձգձգվածությամբ և պրոզայիզմներով, որոնք անկարելի են դարձնում նրանց երաժշտականացումը: Դուցե դա էլ հանդիսացել է պատճառներից մեկն այն բանի, որ Կարա-Մուրզան ընդհատի իր աշխատանքը «Շուշան»-ի վրա և որոնի նոր նյութեր՝ օպերայի վերածելու համար»[27]:

Մեր կարծիքով օպերայի անավարտության մեջ լիբրետոյի մեղքի բաժինը խիստ չափազանցված է առնվազն մի քանի պատճառներով: Ինչպես տեսանք, Ատրպետն իր «Շուշանը» հատուկ գրել է որպես օպերայի լիբրետո և նվիրել Կարա-Մուրզային: Հայտնի է նաև, որ կոմպոզիտորն «ամենագործուն մասնակցություն է ունեցել լիբրետոյի վերջնական մշակման մեջ»[28]: Ավելին՝ «Կարա-Մուրզան սերտ համագործակցության մեջ մտնելով Ատրպետի հետ, ցուցումներ էր տալիս դրամայի յուրաքանչյուր տեսիլի, նույնիսկ ոտանավորի վերաբերյալ»[29]: Հետևաբար, գրական տեքստը բավարարել է կոմպոզիտորին, որի բոլոր դիտողությունները, բնականաբար, պիտի հաշվի առներ Ատրպետը և, ամենայն հավանականությամբ, այդպես էլ եղել է: Ավելին՝ Բաքվում 1891-ի աշնանը տեղի ունեցած «Շուշանի» նախերգանքի համերգային կատարումից հետո «Կարա-Մուրզան՝ ոգևորված այդ հաջողություններից, նոր եռանդով շարունակում է աշխատանքը, սակայն «Շուշան» օպերան վերջնվերջո մնում է անավարտ: Երաժշտականացված նախերգանքի և առաջին գործողության պարտասի պարտիտուրան, որ նա վերցրել էր իր հետ Մոսկվա՝ ցանկանալով շարունակել, ավարտել ու բեմադրել, կորչում է աքսորի ճանա-

---

[25] Նույն տեղում:
[26] Մ.Մուրադյան, Քրիստափոր Կարա-Մուրզան և բազմաճայնության արմատավորումը հայ երաժշտության մեջ, էջ 186:
[27] Նույն տեղում, էջ 186, 187:
[28] Նույն տեղում, էջ 186:
[29] Նույն տեղում, էջ 38, 39:

պարհին»[30]: Պետք է ենթադրել, որ լիբրետոն բավարարել է կոմպոզիտորին, ուստի չէր կարող օպերայի անավարտության պատճառ դառնալ:

Ատրպետն իր ստեղծագործության նյութը վերցրել է արևմտահայերի կյանքից: Պիեսի հիմքում իրական կյանքի եղելությունն է, որը «տեղի է ունեցել մշեցի Գյուլիզարի հետ: Այդ դեպքը ժամանակին մեծ աղմուկ հանեց և բազմիցս լուսաբանվեց հայկական մամուլում»[31]: Լիբրետոն բաղկացած է Նախերգանքից[32] և երեք գործողություններից (հինգ պատկեր):

...Յավոք, օպերան մնացել է անավարտ. նախատեսվող 5 պատկերների երաժշտությունից հորինվել են ընդամենը երկուսը՝ Նախերգանքն ու առաջին գործողությունը: Ավելին, հայտնի է, որ աքսորի ճանապարհին կորսվել են Կարա-Մուրզայի անավարտ օպերայի ձեռագրերը, և այսօր մենք կարող ենք ստեղծագործության մասին կարծիք կազմել լոկ Երևանի Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող Քր.Կարա-Մուրզայի դիվանում առկա «Շուշան» օպերայի հետևյալ ձեռագրերից

N 42, «Շուշան» օպերայից մի պատկեր (6 էջ), 3 թերթ[33]:

N 43, «Շուշանից» «Հրդեհ» (քառաձայն երգ), «Հողմը փչեց ի հարավեն» (2 էջ), 1 թերթ:

N 44, «Շուշան» (Ա արարված), (14 էջ), 8 թերթ:

N 45, «Շուշան» օպերայի նախերգանքը (17 էջ), 9 թերթ + 1 թերթ:

«Շուշան» օպերայի Նախերգանքի տիտղոսաթերթին գրված է. «Շուշան, օպերա Քր.Կարա-Մուրզայի, գրի առավ Պողոս Կարա-Մուրզայի ձայնից Անտոն Մախյանը: Նախերգանք, քրդերի խումբը և Փոլադ բեյը. օպերան գրված է 1891 թվին Ատրպետի ներկայությամբ և նրա խորհրդակցությամբ: Քր.Կարա-Մուրզայի կոնցերտային շրջանը. կատարվում էր մեծ հաջողությամբ Թիֆլիսում, Ատրպետում, Բագվում, Յերեվանում և այլ քաղաքնե-

---

[30] Նույն տեղում, էջ 187:

[31] Մ.Մուրադյան, Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, Երևան, 1970, էջ 227:

[32] Ըստ էության Նախերգանքն օպերայի առաջին պատկերն է՝ առնվազն երկու պատճառով. ա) ԳԱՖ Քր.Կարա-Մուրզայի դիվանի N 42 ձեռագրում, որը նախերգանքի բանաստեղծական տեքստն է, այն անվանված է Картина 1, "Гей, Бегъ", բ) Ատրպետի հրատարակած լիբրետոյում Առաջին արարվածը համարվում է Բ պատկեր:

[33] Սա օպերայի նախերգանքի բանաստեղծական տեքստի ձեռագիրն է, որը լիովին համընկնում է Ատրպետի լիբրետոյի նախերգանքի տեքստի հետ:

ռում: Առաջին անգամ Փոլադ բեկի դերը կատարել է հայ արտիստ Մովակը[34] (դերասանական անուն է), որին ուղարկեցին Միլան ձայնը մշակելու, Քր.կարա-Մուրզայի աջակցությամբ»[35]: Նախերգանքի կլավիրի հետ պահպանվող թերթիկի վրա նշված են Պողոս Կարա-Մուրզայի «Մի քանի նկատողություններ «Շուշանի» մասին», որը նա գրել է Բաքվում 1938-ի հունվարի 8-ին: Կոմպոզիտորի եղբայրը նշում է. «Թեև չես նոտաները ստուգեցի, այնուամենայնիվ չես հավատացած չեմ, վոր նոտագրությունը հաջող է և անսխալ: Իմ կարծիքով, օրինակի համար, մի քանի մեղեդիների չափը սխալ է՝ NN 12, 13, 14, 20, 21, 22 և 23: Նույնպես և N 15, որ պետք է լինի 2/4, ինչպես N 3, այլ ոչ 4/4»[36]: «Նախերգանք» անվանված ձեռագրում ամփոփված են նաև առաջին գործողության 1-4 տեսարանները:

Պ.Կարա-Մուրզան իրավացիորեն նշում է, որ «Շուշան» օպերայի մեղեդիները «Քր.Կարա-Մուրզայի ինքնուրույն հեղինակություններից ամենաարժեքավորն են»[37]:

Օպերան չունի նվագախմբային նախերգանք և սկսվում է առաջին պատկերով, որը հեղինակներն անվանել են Նախերգանք: Նախերգանքում տրված է քրդերի երաժշտական բնութագիրը. ակնհայտ է, որ օպերայում պիտի իրար հետ բախվեն քրդերի և հայերի երաժշտական ոլորտները: Կարա-Մուրզան օպերայում մեծ տեղ է տվել խմբերգային տեսարաններին. երգչախումբն է սկսում և ավարտում օպերան: Երկու դեպքում էլ դա քրդերի խումբն է, քանի որ օպերայի հերոսների երջանկությունը ավերում, չուրջը մահ ու ավերածություններ է սփռում հենց քրդերի ավազակախումբը: Նախերգանքում ներկայանում են քրդերն ու Փոլադ բեկը, այստեղ առկա թեմաները, մեր կարծիքով, պիտի միջանցիկ նշանակություն ստանային օպերայում: Այսպես, Նախերգանքն սկսվում է «Հեյ բեկ» խմբերգով, որի թեմատիկ կորիզից է աճում ողջ տեսարանի երաժշտությունը, սրա վրա հիմնած փուգատոյով էլ ավարտվում է Նախերգանքը: Քրդերի թեման՝ իր քայլերգային ռիթմով դառնում է նրանց ու Փոլադի մոտիվը. «Քայլերգը, որով

[34] Ըստ Մ.Մուրադյանի՝ «Կարա-Մուրզան «Շուշան» օպերան գրելիս բեկի դերի համար նկատի ուներ երգիչ Մովակին, նրա ձայնածավալն ու խաղը, և այդ պատճառով էլ վերջինիս կատարմամբ բեկի պարտիան հնչում էր հյութեղ, դեղեցիկ ու շատ բնական» (տե՛ս Մ.Մուրադյան, Քրիստափոր Կարա-Մուրզա, կյանքը և երաժշտական-հասարակական գործունեությունը, էջ 40):

[35] Տե՛ս ԳԱԹ, Քր.կարա-Մուրզայի դիվան, N 45, «Նախերգանք», տիտղոսաթերթ:

[36] Նույն տեղում, «Մի քանի դատողություններ «Շուշանի» մասին»:

[37] Նույն տեղում:

սկսվում և ավարտվում է Նախերգանքը, փաստորեն հանդիսանում է Փոլադ բեկի և իր զինվորների բնութագրի հիմնական միջոցը: Նրա մեջ զգացվում է կոպիտ ուժի առկայությունը, ինքնավստահությունը և ամեն ինչ իրենց ենթարկելու հաստատակամությունը»[38]: Իսկ խմբերգի թեմայի կետագծված ռիթմն էլ դառնալու է քրդերի ու Փոլադի լայթռիթմ: Քրդերի լայթթեման հընթացս Նախերգանքի հնչում է չորս անգամ:

Նախերգանքում տրված է նաև Փոլադի (բարիտոն) էքսպոզիցիան: Նրա առաջին մուտքը բաղկացած է երկու մասից. առաջինը թեմատիկորեն և ձայնակարգային տեսակետից բխում է քրդերի թեմայից, իսկ երկրորդում, երբ նա խոստովանում է Շուշանի հանդեպ իր սերը, երգամասում, մեր կարծիքով, անցնում է նրա սիրո թեման. փոխվում է ինչպես տոնայնությունը, այնպես էլ տեմպը՝ նախորդող Allegretto-ի փոխարեն՝ Moderato, a-moll-ի փոխարեն՝ մեծացրած սեկունդաներով ընդգծված հարմոնիկ d-moll: Այստեղ, կարծես, Շուշանի անուղղակի էքսպոզիցիան է, քանի որ Փոլադի մարտական ու ռազմատենչ երաժշտական լեզվի մեջ ներթափանցում են վարընթաց սեկունդաներով հառաչանքի կերտ ինտոնացիաներ: Փոլադի սիրո թեման, որը պիտի կործաներ թե՛ իրեն, թե՛ իր սիրելիին, Նախերգանքում հնչում է չորս անգամ, այն բոլոր դեպքերում, երբ նա հիշում է Շուշանին:

Առաջին գործողությունը պատկերում է հայերին, և ի տարբերություն նախորդի՝ այստեղ մի կողմ են մղվում քայլերգային ու մարտական, ամենակուլ ու ավերիչ ինտոնացիաները. իր հերոսների երաժշտական կերպարները Կարա-Մուրզան կերտել է ջերմությամբ և հագեցրել ժողովրդական երգի ոգով գրված, ժողովրդական երգին բնորոշ ինտոնացիաներով և լադային ու մետրական առանձնահատկություններից բխող մեղեդիներով. «Այստեղ ժողովրդական երգերի ցիտատային օգտագործման որևէ նմուշ գոյություն չունի, բայց և այնպես երաժշտական հատվածների մի զգալի մասը («Էլի քաղցրիկ օրեր գարնան», «Հանդարտիր, քուլրիկ» և այլն) չի զանազանվում ժողովրդական երգերից»[39]: Ինչպես նկատում է Կ.Խուդաբաշյանը. «Օպերայի երաժշտական լեզուն մոտ էր ժողովրդական երգին, և դրանում է Կարա-Մուրզայի մտահղացման ալրոգրեսիվ, նորարարական նշանակությունը»[40]: Դրա հիմնական գրավականն այն էր, որ Կարա-

---

[38] Մ.Մուրադյան, Քրիստափոր Կարա-Մուրզան և բազմաձայնության արմատավորումը հայ երաժշտության մեջ, էջ 192:

[39] Նույն տեղում, էջ 195, 196:

[40] К.Худабашян. Армянская музыка на пути от монодии к многоголосию. Ереван,

Մուրզան «Շուշանին» հանգեց հայ ժողովրդական երգի բազմաձայնման հարուստ փորձ կուտակելուց և ժողովրդական երգի խոր գաղտնարանները թափանցելուց հետո:

Ցավոք, այսօր մեր ձեռքի տակ են «Շուշանից» պահպանված միայն աղբատիկ նյութեր, հատուկենտ սևագրեր, Պ.Կարա-Մուրզայի երգածից Ա.Մայիլյանի գրառած օրինակները, որոնք «...դժբախտաբար, ունեն ֆրագմենտար բնույթ և լրիվ դաղափար տալ չեն կարող ամբողջության մասին»[41]: Ավելին դրանք, մեր կարծիքով, չեն կարող փոխարինել հեղինակային ձեռագրերին և հարազատորեն մեզ ներկայացնել Կարա-Մուրզայի օպերան:

Ուստի պահպանված նյութերի հիման վրա անհնար է ամբողջական դատողություններ անել օպերայի դրամատուրգիական առանձնահատկությունների, հերոսների երաժշտական կերպարների զարգացման, նվագախմբի նվագամասի դերի ու նշանակության, ինչպես նաև երաժշտական լեզվի առանձնահատկությունների մասին: Սակայն ակնհայտ է, որ օպերան կարևոր նշանակություն ունեցավ հայ երաժշտական թատրոնի պատմության մեջ՝ նրա ձևավորման ու զարգացման առաջին փուլում.

Ա. Կարա-Մուրզան արևելահայ իրականության մեջ առաջինն էր, որ փորձեց ստեղծել օպերա:

Բ. Նա հայ երաժշտական թատրոնի պատմության մեջ առաջինը ձեռնամուխ եղավ ազգային օպերայի ստեղծմանը:

Գ. Առաջին անգամ պիտի բեմ բարձրանային ժամանակակից հայ իրականությունից վերցված հերոսներ, դեղարվեստական մարմնավորում դտնեին հանդիսականների կողքին տեղի ունեցած դեպքեր, պիտի ստեղծվեր ռեալիստական օպերա:

Դ. Օպերայի գաղափարական բովանդակությունը նորություն էր հայ երաժշտական թատրոնում. այստեղ արծարծված հիմնական գաղափարը՝ նահատակության թեման, խիստ արդիական էր ժի դարավերջին:

Ե. «Շուշանը» ազգային, ռեալիստական ժողովրդական երգօպերայի ստեղծման առաջին փորձն էր ու թեև անավարտ՝ այն կանխագործեց հայ օպերային երաժշտության զարգացման ուղիներից մեկը, որն իր լիարժեք դրսևորումը պիտի գտներ ընդամենը մի քանի տարի անց Ա.Տիգրանյանի «Անուշում»:

1977, c. 43.

[41] Մ.Մուրադյան, Քրիստափոր Կարա-Մուրզան և բազմաձայնության արմատավորումը հայ երաժշտության մեջ, էջ 187:

ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑԻ. ԻՐԱԿԱՆ ԱՆՁԸ ԵՎ ՎԱՍՏԱԿԸ
(ՍՅՈՒՆԵՑԻ ՀԱՄԱՆՈՒՆ ԵՐԿՈՒ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ)

Անցյալ դարի 70-ական թթ. սկզբից հայ երաժշտական միջնադարագիտության մեջ ծայր է առել մի տեսակետ կամ ավելի ճիշտ վարկած, որի համաձայն՝ հայ իրականության մեջ գոյություն են ունեցել Ստեփանոս Սյունեցի անունով երկու անձեր՝ Ստեփանոս Սյունեցի Ա, իբր V դարում ապրած և Ստեփանոս Սյունեցի Բ, VIII դարի բոլորին հայտնի փիլիսոփա, թարգմանիչ, քերական, չարականագիր, երաժշտության տեսաբան և պաշտոներգության բարենորոգիչ: Վարկածի հեղինակն էր վաստակաշատ երաժշտագետ Նիկողոս Թահմիզյանը, որն այդ հարցին նվիրված ծավալուն հոդված հրապարակեց[1] հետագայում նույնպես իր բոլոր աշխատություններում[2], Հայկական սովետական հանրագիտարանում[3] և այլուր[4] տարածելով այդ տեսակետը:

Սակայն ի մոտո ծանոթանալով և ուսումնասիրելով վերոնշյալ հարցը՝ մենք հանգել ենք այլ տեսակետի, որը հայագիտության մեջ թեև նոր չէ, բայց, կարծես, մոռացության էր մատնված: Ուստի անհրաժեշտություն ծագեց ներկայացնելու Ստեփանոս Սյունեցու՝ հայ հոգևոր երգարվեստի ու նրա տեսության մեջ կարևոր ներդրումն ու վաստակը՝ ներդրավելով ինչպես հին, արդեն արտահայտված կարծիքներ, այնպես էլ լրացուցիչ նոր տվյալներ:

Մի քնարադարի մեր բոլոր մատենագիրներն ու պատմիչները գրեթե միահամուռ են Ստեփանոս Սյունեցուն՝ իբրև երաժշտի վերաբերող իրենց հաղորդած տեղեկությունների մեջ: Այսպես, եթե հետևենք ժամանակագրական կարգին, ապա Ստեփանոս Սյունեցու մասին վկայող ամենավաղ կարևոր տեղեկություններն առկա են հենց իր իսկ վարքում, որն, ինչպես հայտնի է, ունեցել է երեք

---

[1] Տե՛ս Ն.Թահմիզյան, Սյունեցի երկու համանուն երաժիշտները և Հարության Ավագ Օրհնուբյունները, «Էջմիածին», 1973, N 2, էջ 29-43:

[2] Н.К.Тагмизян, Теория музыки в древней Армении. Ереван, 1977, с. 50, 52, 81-87, 95, 105, 141, 142, 165-167; նույնի՝ Шаракан, Из армянской поэзии V-XVвв. Ереван, 1990, с. 6, 42-46, 205-206; տե՛ս նաև նույն տեղում՝ С.Золян, О поэтике шараканов (заметки переводчика), с. 174.

[3] Հայկական սովետական հանրագիտարան, հ.11, Երևան, 1985, էջ 137, 138:

[4] Ն.Թահմիզյան, Ոսկեփորիկ, Երևան, 1980, նույնի՝ Ոսկեփորիկ, Լոս Անջելես, 1995:

խմբագրությունն և ի մի է բերվել Մխիթար Այրիվանեցու ձեռքով: Ահա թե ինչ ձևով են այդ տեղեկությունները հասել մեզ. «...աբար եւ չարականս աւագ օրհնութիւններն զէ. ձայնին եւ վառին (բարս – Ա.Ա.) մնաց, որ տէր Ներսէս ասաց ի նոյն ոճ բանիցն»[5]:

Տարբեր մատենագրական աղբյուրների հաղորդած տեղեկություններից առանձնանում է Մեսրոպյանի Օրբելյանի հաղորդածը. «Բաժանեաց եւ զուլթն ձայնս եւ կարգեաց շարեաց զՅարութեան օրհնութիւնս, երգեաց եւ կցուրդս քաղցրահամս, յարմարեաց եւ ստոդոգին Յինանց յոյժ խորհրդաւոր, եւ զպահոցն, որ զաղուհացսն երգի»[6]:

Ուշագրավ են նաև միջնադարյան «ձայնից» մեկնություններից մի քանիսի խորագրերը, որտեղ Մեսրոպյանս Սիւնեցու անունը հիշատակվում է տարբեր համառոտբառերում, սակայն առավել հաճախ որպես Բարսեղ Կեսարացուն վերագրվող մի մեկնության երաժիշտ-թարգմանիչ, օրինակ. «Երանելոյն Բարսեղի յաղագս ձայնից թէ ուստի իցեն եւ կամ յումմէ գտան, զոր թարգմանեաց Մեսրոպանոս փիլիսոփայ, զի նա եղեւ երաժիշտ եւ հմուտ ձայնից ամենայն կենդանեաց եւ բաժանեաց զձայնս ի մասունս իդ...» կամ «Քանի՞ ձայնք են գոյիցս. Մեսրոպանոս երաժիշտ ԻԶ բաժանեաց», «Առաջաբան կցորդարանի. Խաւսք տեառն Բարսեղի յաղագս ձայնից երգոց թէ ուստի կամ յումմէ գտաւ, զոր թարգմանեաց Մեսրոպանոս փիլիսոփոս, եղեալ երաժիշտ եւ խելամուտ ամենայն ձայնից կենդանեաց», վերջապես՝ «Բարսղի Կեսարու յաղագս ձայնից, թէ ուստի գտան կամ յումմէ, զոր թարգմանեալ է Մեսրոպանոսի Սիւնեաց եպիսկոպոսի, զի նա եղեւ երաժիշտ եւ հմուտ ամենայն ձայնից եւ բաժանեաց զձայնից մասունս եւ էդ զյարուկայք ձայնից, զոր կարգեցին սուրբք հարքն»[7]:

Ըստ վերը բերված մատենագրական աղբյուրների՝ ակնհայտ է դառնում Մեսրոպանոս Սյունեցու հսկայական դերը, որի հետ է կապված հայկական Ութձայն համակարգի բարեկարգումը՝ «...եղեւ երաժիշտ եւ հմուտ ամենայն ձայնից եւ բաժանեաց զձայնից մասունս, բաժանեաց եւ զուլթն ձայնս...», եկեղեցական տոներին նվիրված բյուզանդական կանոնի ժանրի ներմուծումը՝ «...կարգեաց շարեաց զՅարութեան օրհնութիւնս...», հոգևոր երգարվեստի տարբեր ժանրերում ստեղծագործած երգահանի վաս-

---

[5] Գ.Յովսեփեան, Մխիթար Այրիվանեցի, Երուսաղէմ, 1931, էջ 20:

[6] Մեսրոպանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 138, 139:

[7] Տե՛ս Ա.Արևշատյան, Հայ միջնադարյան «ձայնից» մեկնությունները, «Կոմիտաս» հրատ., Երևան, 2003, Բնագրեր բաժնի էջ 92, 94, 98, 116:

տակը՝ «...երգեաց եւ կցուրդս քաղցրահամս, յարմարեաց եւ ստողոգին Յինանց յոյժ խորհրդաւոր, եւ զպահոցն..., արար եւ երգս հոգեւորս քաղցր եղանականաս, չարականս եւ կցուրդս եւ այլ երգս...», ինչպես նաև՝ խազային նշանների նախնական կիրառությունը՝ «...էդ գլարուկայք ի վերա ձայնից»:

Կանոնի ժանրի ներմուծման նախնական փուլը կապված է Ստ.Սյունեցու կողմից Հարության Ավագ օրհնությունների ութ ձայնեղանականերով երգվող ութ մեծ չարքերի ստեղծման հետ, որոնք երգվում են Նոր կիրակիից մինչև Հոգեգալուստ, հաջորդաբար՝ օրը մեկական կարգ[8]: Տվյալ երգաշարքերը որոշ էական հատկանիշներով սկզբունքորեն տարբերվում են ոչ միայն պարզագույն արխայիկ կցուրդներից, այլև ընդհանրապես չարականների ճնշող մեծամասնությունից: Բյուզանդական պաշտոներգության մեջ դրանց համապատասխանում են αναστασημέναι կոչվող օրհներգերը, որոնք նույնպես ստեղծվել են VII-VIII դարերում:

Հարության Ավագ օրհնությունները կազմող ութ չարքերից յուրաքանչյուրը բաղկացած է Հին կտակարանի 10 մարգարեական օրհնությունների հիման վրա կաղապարված մասերից: Օրհնություններ, որ հնուց ի վեր հայ եկեղեցին ներմուծել էր ժամերգության մեջ: Մարգարեական օրհնությունները ժամանակին կցվել են սաղմոսականոններին և ունեցել վառ արտահայտված ծորերգային զարդոլորուն մեղեդիական նկարագիր, սակայն հետագայում չեն պահպանվել ժամասացության մեջ: Ահա ինչպիսի կառուցվածք ունեն Ստեփանոս Սյունեցու Ավագ օրհնությունները.

1. Օրհնեսցուք զՏէր, զի փառօք է փառաւորեալ (Ել.15)

2. Նայեցարուք, երկինք, եւ խոսեցայց, եւ լուիցէ երկիր զպատգամս բերանոյ իմոյ (Բ Օր. ԼՀ 121)

3. Զի հուր բորբոքեցաւ ի բարկութենէ Իմմէ (Բ Օր. ԼՀ 22-28)

4. Տաներու՛ք եւ տեսեք, զի Ես եմ, եւ ոչ գոյ Աստուած բաց յինէն (Բ Օր. ԼՀ 39-43)

5. Հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր, եւ բարձրացաւ եղջիւր իմ, Աստուած վերկիէ իմ (Ա Թագ. Գ 1-10)

6. Ի գիշերոց կանխէ հոգի իմ առաւօտ առնել առ Քեզ, Աստուա~ծ (Ես. ԻՁ 9)

7. Ես ասացի ի վերանալ յինէն աւուրց իմոց, թէ գնացից ես ի դրունս դժոխոց (Ես. ԼՀ 10-14)

---

[8] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Շարական, հ.Ա, Երևան, 1997, Ա.Ալեւշատյան, Լ.Հակոբյան, Առաջաբան, էջ XIII-XIX:

8. Օրհնեցէ՛ք զԱստուած յօրհնութիւն նոր, զի իշխանութիւն Նորա ի բարձունս փառաւորի (Ես. ԽԲ 10-13)

9. Ի հեղութեան իմում ես առ. Տէր կարդացի, եւ լուաւ Աստուած յանդնդոյ դժոխոց աղաղակի իմում (Յովն. Բ, Իթ)

10. Տէ՛ր, զլուր Քոյ լուայ եւ եկեայ. Տէ՛ր, նայեայ ի գործս Քո եւ զարհուրեցայ (Ամբ. Գ):

Ինչպես տեսնում ենք, սրանք 10-ական մասերից բաղկացած 8 խոշոր չարքեր են՝ նախատեսված 8 եղանակներով երգելու համար: Բնորոշ է այստեղ «խիստ ոճի» Ուլթաձյանին հետևելու սկզբունքը (չորս բուն և չորս կողմ եղանակ՝ առանց դարձվածքների և ստեղների), ինչը հաղորդում է նրան յուրահատուկ փոքրածավալ առանձին հավաքածոյի նշանակություն՝ համեմատելի հունական Ὀκτώηχος երգչական գրքի հետ, որտեղ փաստորեն հաստատվում է Ուլթաձյանի գաղափարը: Սրա հիման վրա բյուրեղացավ Շարակնոցի կանոնի հայկական տարատեսակը, որն ընդգրկում է 8-9 երգ[9]:

Ավագ օրհնություններում ակնհայտ է նաև պոետիկայի ոլորտում հնագույն կցուրդների համեմատությամբ տեղի ունեցած առաջընթացը: Այստեղ արդեն խոսք չկա քրիստոնեական կրոնի գլխավոր դավանաբանական դրույթների թեզիսային, հանրամատչելի չարագրանքի մասին, չարականագիրը ցուցաբերում է բարձր մակարդակի համապարփակ, ասոցիատիվ աստվածաբանական մտածողություն, ամբողջ սրբազան պատմությունը համակարգելու, ի մի բերելու ձգտում: Վերջինս այստեղ ներկայացված է իբրև խորհրդանշական փոխադարձ կապերով ու զուգահեռներով հագեցած ինքնամփոփ, կայուն ամբողջություն:

Ստեփանոս Սյունեցուց հետո ասոցիատիվ բանաստեղծական ոճը լայն ու բազմակողմանի զարգացում է ստանում հետագա դարերի հեղինակների մոտ՝ իր գագաթնակետին հասնելով XII-XIII դդ. չարականագիրների ստեղծագործության մեջ[10]:

Իսկ ի՞նչ աղբյուրների վրա է հիմնվել Ն.Թահմիզյանը երկու համանուն երաժիշտների վարկածն առաջ քաշելիս: Նախևառաջ՝ Կիրակոս Գանձակեցու Պատմության մեջ առկա հիշատակությունների վրա, որտեղ Ստեփանոս Սյունեցու անունը հանդի-

---

[9] Նույն տեղում, էջ XIX, տե՛ս ծանոթագրությունը: Տե՛ս նաև A.S. Arevšatyan, Deux textes arméniens attribués à Basile de Césarée sur l'Inteprétation des modes musicaux, "Revue des Études Arméniennes" (REArm), 26, 1996-1997, pp.339—355.

[10] Տե՛ս Շարական, Առաջաբան, էջ XIX:

պում է երիցս, այսպես.

ա. «Որով վարդապետք եւ ուսուցիչք՝ սուրբն Սահակ եւ Մեսրոպ, եւ գլխաւորք յաշակերտացն՝ սուրբն Յովսեփ, եւ Յովհան, եւ Ղեւոնդ, եւ Սահակ, եւ Մովսէս Քերթողահայր, եւ Մամբրէ Վերծանող, Նորուն եղբայր, Եզնակ եւ Կորիւն, սուրբն Եղիշէ, Դաւիթ փիլիսոփայ եւ Յովհաննէս, տէր Աբրահամ, Արծան, Մուշէ, Խորով, Ղազար, եւ հետոյ Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս...»[11]:

բ. «Եւ հետոյ մեծն Ստեփաննոս Սիւնեցեաց եպիսկոպոս, բազում մեկնութիւնս գրոց սրբոց ելեալ՝ աւետարանացն համառօտ, եւ Յոբայ, եւ Դանիէլի, եւ Եզեկիէլի, եւ պատասխանիս Թղթոյն Գերմանոսի պատրիարքի Կոստանդնուպօլսի»[12]:

գ. «Յայնմ ժամանակի եւ թուականիս Հայոց ՄԻԲ (=773)[13] Ստեփաննոս գրան երեց, որ բանիբուն ճանաչիւը, եհաս ի կատարումն ամենայն իմաստասիրական եւ գրամատիկոս արուեստից՝ հանդերձ հոգեւորական առաքինութեամբ: Էին եւ վարդապետք աշխարհիս Հայոց ընտրեալք եւ լուսաւորք՝ տէր Եփրեմ եւ Անաստաս եւ Խաչիկ եւ Դաւիթ Հոռոմայրեցի, եւ մեծն իմաստասէրն Ստեփաննոս Սիւնեցի, աշակերտ Մովսիսի, զոր ի վերագոյնն յիշատակեցաք, որ թարգմանիչ եղև ի յունականէն ի հայ լեզու, եւ ի վերայ թարգմանութեանն արար եւ երգս հոգեւորս քաղցր եղանակաւ՝ շարականս եւ կցուրդս եւ այլ երգս արար եւ մեկնութիւն համառօտ՝ աւետարանացն, եւ քերականին, եւ Յոբայ, եւ «Տէր, եթէ չրթանց իշեցոյ»[14]:

Անդեն աչքով էլ կարելի է նկատել, որ առաջին իսկ մեջբերված պարբերութեան մեջ, որտեղ առկա է Ստեփաննոս Սյունեցու անունը, ինչ-որ անհամապատասխանություն, հակասություն կա:

Հետագա խառնաչփոթի պատճառը, մեր կարծիքով, «... եւ հետոյ Ստեփաննոս Սյունեցի եպիսկոպոս» արտահայտությունն է, որը հետևում է սուրբ Սահակի և Մեսրոպի աշակերտների փայլուն փաղանգի թվարկությանը: Գուցե պատմիչը այդպիսով ցանկացել է ընդգծել իր վերաբերմունքն ու գնահատականը Ստեփա-

---

[11] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխ. Կ.Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 28:

[12] Նույն տեղում, էջ 29:

[13] Այս թվականը ճշտել է Վ.Դաշյանը, ով, հիմք ընդունելով Ստ.Սյունեցու թարգմանությունների ժամանակը, ապացուցել է, որ իրականում խոսքը կարող է վերաբերել 716-717թթ.:Տե՛ս Սոփերք հայկականք, I-IV, մաս I, Վիեննա, 1895, էջ 9-12:

[14] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 72:

նոս Սյունեցու հանդեպ, մատնանշել նրան որպես ոսկեդարյան մշակութային ավանդույթների անմիջական և արժանի հետևորդ, հելլենական դպրության կրող և հանրագիտակ մտավորականի տիպար, որի գրչի արգասիքն էին Ավետարանի համառոտ մեկնությունը, ինչպես նաև Հոբի, Դանիելի և Եզեկիելի գրքերի մեկնությունները, Գերմանոս պատրիարքի թղթի պատասխանը, Նեմեսիոսի և Գրիգոր Նյուսացու հայտնի երկասիրությունների թարգմանությունները և Մեկնութիւն քերականին ձեռնարկը[15]: Հենց այդ «եւ հետոյ Ստեփանոս Սիւնեցի եպիսկոպոս...» արտահայտությունը հիմք է ծառայել Ստեփանոս Սյունեցի Ա-ի վարկածը առաջ քաշելու համար, ինչը բացահայտ հակասության մեջ է պատմական իրականության հետ:

Մյուս աղբյուրը հայ միջնադարյան մատենագրության մեջ հայտնի տարբեր հեղինակների կողմից ստեղծված չարականագիրների ցուցակներն են[16], որոնցից հնագույնը Հովհաննես Վանականի «Հարցմունք եւ պատասխանիք» ուսումնական նպատակների համար նախատեսված ձեռնարկում զետեղված ցուցակն է[17]: Նմանատիպ ցուցակների հեղինակներ են նաև Սարգիս Երեցը, Գրիգոր Տաթեացին, Անանունը[18]: Շարականագիրներին նվիրված չափածո երկեր են ստեղծել Առաքել Սյունեցին, Ստեփանոս Զիգ Ջուղայե-

---

[15] Տե՛ս նաև Աս.Մնացականյան, Ստեփանոս Սյունեցու նորահայտ տաղերը, «Բանբեր Մատենադարանի», 1973, N11, էջ 275-290: Երջանկահիշատակ հմուտ բանասերի այս ուշագրավ հոդվածը չափազանց չահեկան տվյալներ է պարունակում Ստեփանոս Սյունեցու անձի և ստեղծագործության ոլորտների ճշգրտման առումով: Հոդվածը հիմնված է ՄՄ, N 3503 (1394թ.) հայտնի Գանձարանի ընձեռած տվյալների վրա, որոնք, սակայն, վրիպել են այլ ուսումնասիրողների ուշադրությունից: Տվյալ Գանձարանը հատկանշվում է մեր վաղ միջնադարի մի շարք երևելի չարականագիրների գրչին պատկանող և ձեռագրում զետեղված տաղերով ու մեղեդիներով: Դրանք են՝ Սահակ Պարթև - Տաղ ծննդի ի Պարթևէ «Անպարագրելին երկնի եւ երկրի», Մովսես Խորենացի - Մեղեդի Տրդատայ թագաւորին ի Մովսէս Քերթողէ «Ի վերին յաւդնականութենէն ծագեցաւ քեզ հանդէս բարեպաշտութեան», Ստեփանոս Սյունեցի - Ի Սիւնեաց եպիսկոպոսէ ի սուրբ Խաչն «Սկիզբն անբովկզբան սկզբնաւորեալ խորհըրդոց սկիզբն», Ստեփանոս Սիւնեցի եպիսկոպոսի տաղ սրբոյ Խաչին. «Սրբոյ Խաչին զաւրութիւն վաղագոյն տեսեալ»: Դրանով փաստորեն ապացուցվում է տաղային ժանրի՝ Գրիգոր Նարեկացուն նախորդող չրջանի առկայությունը հայ հոգևոր երգարվեստում:

[16] Տե՛ս Հ.Անասյան, Հայկական մատենագիտություն, հ.Ա, Երևան 1959, էջ LXI-LXXIV:

[17] Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Ս.Յակոբեանց վանքի, հ.Դ, աշխ. Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1965, էջ 485:

[18] Հ.Անասյան, նշվ. աշխ., էջ LXV-LXIX:

ցին, Հակոբ Սսեցին[19]: Ուշադիր հետևենք նշված հեղինակների հաղորդած տեղեկություններին: Դրանց ճնշող մեծամասնությունը Ավագ օրհնությունների ստեղծումը միահամուռ ընծայում է Ստեփանոս Սյունեցուն: Այն հանգամանքը, որ նրանք նկատի ունեն VII-VIII դդ. ապրած մատենագիր եպիսկոպոսին, հետևում է նաև հեղինակների որդեգրած ժամանակագրական կարգից, որի համաձայն հիշատակվում են հայ հոգևոր երգաբվեստի երախտավորները՝ սկսած Մաշտոցից և Սահակից մինչև մեր վերջին կանոնակարգված չարականագիրը՝ Կիրակոս Երզնկացին: Մեջբերենք խնդրո առարկա հեղինակին վերաբերող մասերը միայն.

Հովհաննես Վանական. «ԶՅարութեան Աւրհնութեանն է. ձայնն՝ Ստեփաննոս Սիւնեցին, եւ զՎառն Ներսէս Կաթողիկոս»[20]:

Սարգիս Երեց. «ԶՅարութեան աւրհնութեներն զիւաքն ձայնին, զՍրբութիւն սրբոցն Ստեփաննոս Սիւնեցին ասաց»[21]:

Գրիգոր Տաթևացի. «Զաւագ օրհնութիւնք զէ. ձայնին՝ Ստեփանոս Սիւնեցին»[22]:

Առաքել Սյունեցի. «Յաղթող բանիւ երանելին՝ Տէր Ստեփանոսըն Սիւնեցին»[23]:

Ստեփանոս Զիզ Ջուղայեցի. «Եվ զօրհնութիւնս որ մեծ կոչին՝ Ստեփանոսըն Սիւնեցին»[24]:

Հակոբ Սսեցի. «Էրեց Յոհան (Հովհ. Վանական – Ա.Ա.)
այսպէս իմայ՝ Աւագ օրհնութեներն որ կայ,
Զայն եօթն Սիւնեաց Ստեփանոսաց,
Սուղ թէ մընաց նըշան չըկայ»[25]:

Անանուն խմբագրություն (ԺԸ-ԺԹ դդ.). «Ստեփանոս Սիւնեցի առաջինն, որ յաշակերտաց անտի սրբոց թարգմանչաց, զեօթն ձայնս Աւագ օրհնութեանց»[26]:

Ահա այս մեջբերումների ցուցակն ամփոփող Անանունի հաղորդած տեղեկությունն է Թահմիզյանի աղբյուրը: Ի՞նչ կարևոր եզրահանգումների է հասել Թահմիզյանը: Նա վերագրել է Ստեփանոս Սյունեցու (երկրորդի) ողջ վաստակը, այն է՝ Հարության Ավագ օրհնությունների ստեղծումը 80 երգ(!) Ստեփանոս Սյու-

---

[19] Նույն տեղում, էջ LXIX-LXXIV:
[20] Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մ.Յակոբեանց վանքի, էջ 485:
[21] Հ.Անասյան, նշվ. աշխ., էջ LXVI:
[22] Նույն տեղում, էջ LXVII:
[23] Նույն տեղում, էջ LXIX:
[24] Նույն տեղում, էջ LXXI:
[25] Նույն տեղում, էջ LXXIV:
[26] Նույն տեղում, էջ LXVIII:

նեցի Առաջինին:

Հայտնի է, որ Ավագ օրհնությունների ստեղծումը ազդարարում էր բյուզանդական հիմներգական կանոնի VIII դ. առաջատար հիմներգական երաժշտաբանաստեղծական տեսակի մուտքը հայ շարականերգություն: Տվյալ տեսակը ձևավորվել է VII-VIII դդ. ոչ չուտ Անդրեաս Կրետացու և ապա՝ Կոզմա Մայումացու և Հովհաննես Դամասկացու ստեղծագործության մեջ: Բնական է, որ գիտելիքները կատարելագործելու և ընդլայնելու նպատակով իր աշակերտակից ընկեր Գրիգոր Գռզիկ Այրիվանեցու[27] հետ Կոստանդնուպոլիս մեկնած Ստեփանոս Սյունեցին, հաղորդակից դառնալով բյուզանդական եկեղեցական երգաստեղծության նորագույն ձեռքբերումներին, հայկական հիմներգական կանոնը ստեղծելիս, որպես չափանմուշ օրինակ նկատի է ունեցել հենց Անդրեաս Կրետացու 10 երգից բաղկացած շարքը: Այսինքն՝ նույնիսկ զուտ մշակութաբանական կտրվածքով կանոնը որպես երևույթ գոյություն չի ունեցել V դարում[28]:

Դրա հետևանքով խեղաթյուրվել է իրական Ստեփանոս Սյունեցու երաժշտագիտական վաստակի խնդիրը: Թահմիզյանը նրան վերապահել է բավական համեստ մի դերակատարում. արդեն չրջանառության մեջ եղած շարականների վերակարգավորումը, շարադասումը ըստ Ութձայնի (այդպես է նա մեկնաբանում Ստ.Օրբելյանի «կարգեաց չարեաց» արտահայտությունը), որոնք ի մի էին բերված, հավանաբար, Բարսեղ Ճոնի «Ճոնընտիր» երգարանում, և «Մեկնութիւն քերականին» երկասիրության միջի երաժշտությանը վերաբերող ասույթները: Նորարար բեղուն ստեղծագործողի, բարենորոգչի դերն ամբողջությամբ ընծայվել է V դ. ննթադրյալ Ստեփանոս Սյունեցի Ա-ին[29]:

Սակայն ուշադիր քննելով Անանուն խմբագրությունը՝ կարելի է եզրակացնել, որ Ստեփանոս Սյունեցի Առաջին և Երկրորդ նշելով՝ ցուցակի անհայտ հեղինակը, բացի VIII դ. Ստեփանոս Սյունեցուց, նկատի է ունեցել մյուս հիշատակվող չարականագիր Ստեփանոսին՝ Մոկացի կամ Ապարանցի եպիսկոպոսին, որն ապ-

---

[27] Գրիգոր Գռզիկի մասին տե՛ս Ն.Թահմիզյան, Գրիգոր Գռզիկը և հայ-բյուզանդական երաժշտական կապերը, «Բանբեր Երևանի համալսարանի» 1968, N 3, էջ 198-210:

[28] Այդ մասին մանրամասն տե՛ս Շարական Հ.Ա., Առաջաբան, էջ XIII-XV, XVII-XIX:

[29] Տե՛ս նաև նույն խնդրին նվիրված ուշագրավ և ծավալուն հետևյալ հոդվածը՝ Լ.Գ.Սարգսյան, Կարծեցյալ Ստեփանոս Սյունեցի՝ չարականագիր V դարի, ԳՍՍ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1993, N1, էջ 120-129:

րել է X դարում, և որի հեղինակած «Սրբուհիւն սրբոց» անվանական ծայրակապով 983թ. հորինած հայտնի չարականը՝ Բյուզանդիայի վասիլ կայսրի նվիրաբերած մի քանի նշանավոր մասունքների և Ապարանից խաչի կապակցությամբ, չարականագիրների ցուցակի որոշ հեղինակների կողմից վերագրվել է Ստեփանոս Սյունեցուն՝ դարձնելով նրան Ավագ օրհնությունների և «Սրբուհիւն սրբոց» չարականի հեղինակ (Սարգիս Երեց), կամ «Ստեփանոս Սիւնեցի երկրորդն՝ զՍրբուհիւն սրբոց Խաչին, զոր ոմանք Ստեփաննոսի Մոկաց եպիսկոպոսի տան, որ Ապարանցի ևս կոչի»[30] (Անանուն խմբագրություն): Սակայն որոշ հայագետներ հստակորեն զանազանել են այդ երկու չարականագիրների հեղինակումները, ինչպես, օրինակ, հ. Ղ.Ալիշանը, որը նշել է. «Սիւնեցի եւ Մոկացի Ստեփանոսեանց»[31]: Այս դեպքում, իրոք, ունենք Ստեփանոս անունով երկու նշանավոր չարականագիր, բայց ոչ Սյունեցի մականունով: Պարզվում է, որ Անանուն խմբագրության երկու Ստեփանոս չարականագիրների մասին վկայող հատվածը Թահմիզյանի կողմից սխալ է մեկնաբանվել, հավանաբար, նաև Մ.Զամչյանի կարծիքի ազդեցությամբ, որի համաձայն. «Աւագ Օրհնութիւնները կրնան գրուած ըլլալ Ե. դարու Ստեփանոս Սիւնեցիէն, եւ կանոնի վերածուած Ը. դարու Ստ.Սիւնեցիէն»[32]: Իրականում խոսքն այստեղ ոչ թե V և VIII դդ. հեղինակների մասին է, այլ VIII և X դդ., այսինքն՝ Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսի և Ստեփանոս Ապարանցու՝ Մոկաց եպիսկոպոսի մասին: Ահա սրանք են, մեր կարծիքով, «Ստեփանոս Սյունեցի Առաջին» և «Ստեփանոս Սյունեցի Երկրորդ» չարականագիրների տակ հասկացվող հեղինակները:

Ըստ Ղազար Ջահկեցու վկայության՝ Ստեփանոս Սյունեցին «երգեաց զերգս չարականաց քաղցր եւ զեղեցիկ եղանակաւ եւ մեծ խորհրդով: Զծննդեան Քրիստոսի, եւ զմկրտութեան, եւ զեկաւորութեան ի Բեթանիա եւ յերուսաղէմ, եւ զմեծի չաքաթու զՋարչարանացն, եւ զՅարութեան, եւ զհամբարձմանն, եւ զհոգւոյն Սրբոյ Գալստեանն, եւ զեկեղեցւոյ, եւ զԱւագ Օրհնութեան կարգք, բայց ի վառէն, եւ այլ ոտանից տէրունականաց եւ սրբոց բազմաց, զոր մինչև ցայսօր պաշտի յեկեղեցի Հայաստանեայց»[33]: Ըստ էության, Ղազար Ջահկեցին, քավ գիտակցելով Ստեփանոս Սյունեցու դերը Շարակնոցի ձևավորման գործում, թվար-

---

[30] Տե՛ս Հ.Անասյան, նշվ. աշխ., էջ LXVIII:
[31] Տե՛ս Ղ.Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1973, էջ 82:
[32] Տե՛ս Մ.Զամչեան, Հայոց պատմութիւն, հ.Ա, Կ.Պոլիս, 1784, էջ 782:
[33] Ղազար Ջահկեցի, Գիրք որ կոչի Դրախտ ցանկալի, Կ.Պոլիս, 1764, էջ 625:

կում է այն կանոնները, որոնք խմբագրել և հեղինակել է (մասնավորապես Ավագ օրհնութիւնները) Ստեփանոս Սյունեցին:

Հ.Գ.Ավետիքյանը «Բացատրութիւն չարականաց» մեծածավալ աշխատության մեջ, անդրադառնալով խնդրո առարկա հարցին, գրել է. «Յօրինող Աւագ Օրհնութեանցս ասի Ստեփաննոս Սիւնեցի, որ եկաց ի վերջ եօթներորդ դարուն, բաց ի Վառ ձայնէն՝ զոր ասէն արարեալ Ներսէսի Շնորհալւոյն: Ըստ որում յիշէ զայս հետինս Կիրակոս պատմիչ: Բայց ըստ այս թերևս տարակոյս արկանիցէ այն, զի ի Մագիստրոսի թուղթս բերի բան երկրորդ տան իններորդ չարականին. «Որ յաճուռս քերովբէական բազմեցաւ ընդ հօր», թեպետ նա ոչ իբրև բան չարականի բերէ զայս»[34]:

Հ.Ղ.Ալիշանը բազմիցս անդրադարձել է Ստեփանոս Սյունեցու երաժշտական վաստակին. «... Աւագ Օրհնութիւնք բաւական էին ոչ միայն նմա միայնոյ ի փառս, եթէ և չէր այլ ինչ մնացեալ յերկոց նորին, այլ և համօրէն ազգի նորին՝ եթէ ընդեալ բարձեալ էր բնաւ այլ դպրութիւն սորա (...), գոհար, որ արդ և ի միջի դպրութեան մերոյ, մանաւանդ ի շարս սրբազան երգոց, գերազանցօրէն փայլէ և փայլեսցէ մինչեւ երգաբանեալն ի նմանէ, Յարուցեալն ի մեռելոց յարուսցէ զննջեցեալսն յուսով յանմահութեան»[35]: Իսկ «Ներսէս Շնորհալի եւ պարագայ իւր» աշխատության մեջ այսպես է բնորոշել երգահանին. «Ի դարուն սկիզբը Ստեփանոս Սիւնեցին՝ իւր գերազանց չարականօքն»[36]:

Ի դեպ, Ստեփանոս Սյունեցի Ա-ի մասին չի հիշատակում ամենավստահելի հեղինակներից նաև Մ.Աբեղեպս. Օրմանյանը: Նրան հայտնի է ընդամենը մեկ 735թ. նահատակված Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսը[37]:

Գնել Ծ.վրդ. Գալեմքերյանը ևս Ավագ օրհնությունները վերագրում է Ստեփանոս Սյունեցուն, որին և համարում է Օրհնութիւն չարականի հայ եկեղեցու երգեցողության մեջ ներմուծած առաջին հեղինակը[38]:

Մ.Աբեղյանը, ուսումնասիրելով Հարության Օրհնությունների հեղինակի հարցը[39] և հատկապես հիմնվելով Ստ.Օրբելյանի

---

[34] Տե՛ս Բացատրութիւն չարականաց, Վենետիկ, 1814, էջ 672:
[35] Տե՛ս Ղ.Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 128:
[36] Տե՛ս Ղ.Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, էջ 89:
[37] Տե՛ս Մ.աբք. Օրմանեան, Ազգապատում, հ.Ա., պրակ Բ, Պէյրութ, 1912, էջ 862-864:
[38] Տե՛ս «Տաճար», 1910, էջ 654-656:
[39] Տե՛ս Մ.Աբեղյան, Շարականների մասին, «Արարատ», 1912, էջ 484-488:

նշած վկայության վրա՝ հանգել է այն եզրակացության, թե Ստեփանոս Սյունեցին «մեքենայորեն կարգել, չարել է տասը մարգարեական օրհնությունների կցուրդներն իբրև Հարության Օրհնություններ[40]: Ըստ այդմ, Ստեփանոս Սյունեցին մարգարեական օրհնությունների կցուրդները չարել է որպես Հարության Օրհնություններ, և նրանց կցելով մասնավոր Հարց (իր գործատունով), Մեծացուսցէ, Ողորմեա, Տէր Յերկնից, Ձաշու և Համբարձի չարականները, կազմել է Ավագ Օրհնության կարգը կամ կանոնը: Ստեփանոս Սյունեցին, մտցնելով կանոնը, կարող էր ուրիշ կանոնների չարականներ ևս կարգել. «կարգեաց չարեաց չարականս», բայց այդ չգիտենք»[41]:

Մեր կարծիքով, անհավանական է, որ մարգարեական օրհնություններին, դատելով բազմաթիվ ձեռագիր ժամագրքերում պահպանված դրանց խազագրումներից, որոնք վկայում են տվյալ երգասացությունների ծորերգային-զարդոլորուն (մելիզմատիկ) մեղեդիական նկարագիրը, կցուրդներ ավելացնելու անհրաժեշտություն առաջանար: Այդ է հուշում ժամասացության եբրաժշտական ձևավորման տարբական տրամաբանությունը: Անկասկած, Ավագ օրհնություններն ինքնուրույն և հատուկ նպատակով հորինված երգեր էին:

Շատ ճիշտ է ձևակերպել իրողությունը Հ.Աճառյանը իր «Հայոց անձնանունների բառարանում» գրելով. «Ստեփանոս Ա Սյունեցի եպիսկոպոս Սիւնեաց. Դուինի աւագերեցի որդին. աշակերտ Մովսէս Սիւնեցու»[42]:

Մեր օրերում Մեսրոպ վրդ. Գրիգորյանը իր «Ստեփանոս Սիւնեցի» աշխատության մեջ գրել է հետևյալը. «Ստ.Սիւնեցիի կենսագիրները, ինչպէս և տպագիր ու ձեռագիր չարականոցներու սկիզբը գետեղված չարականագիրներու ցուցակները, կը վկայէն թէ իր հեղինակութիւնն են Քրիստոսի Յարութեան յիշատակին նուիրուած Աւագ Օրհնութիւնները»[43]: Սակայն, մեծբերելով հայտնի հայագետների տեսակետները այս հարցի վերաբերյալ, Մ.Գրիգորյանը ի վերջո հակվում է Մ.Զամչյանի սխալ տեսակետին:

Նշենք, որ Ստեփանոս Սյունեցուն որպես VIII դ. չարականագիր և տեսաբան են գնահատում նաև մեծանուն երաժշտագետները

---

[40] Տե՛ս «Արարատ», էջ 833, 834:
[41] Տե՛ս Հայ գրականության պատմություն, հ.Ա, Երևան, 1944, էջ 486:
[42] Տե՛ս Հայոց անձնանունների բառարան, հ.Դ, Երևան, 1943, էջ 605:
[43] Մ.վրդ. Գրիգորեան, Ստեփանոս Սիւնեցի, Պէյրութ, 1958, էջ 40, 41:

Ե.Տնտեսյանը,[44] Ք.Քուշնարյանը[45] և Ռ.Աթայանը[46]:

Թերևս մեր տեսակետը հստակ դարձավ ընթերցողին, թեպետ Մեսրոպ Մաշտոցի ստեղծագործական ժառանգության հետ կապված դեռ իրենց վերջնական լուծումը չստացած բազում հարցեր կան, սակայն դրանք սույն հոդվածի նպատակից դուրս են: Այսպես, օրինակ, ընթերցողը, հավանաբար, նկատեց, որ դեռևս միջնադարյան մատենագիրներն ամենուրեք նշել են, թե Մեսրոպ Մաշտոցին հեղինակել է միայն յոթ ձայնեղանակների Ավագ օրհնությունները, իսկ Վառ ձայնին, այսինքն՝ Գ կողմին պատկանող շարականները հորինել է Ներսես Շնորհալին[47]:

Վառ ձայնի Ավագ օրհնությունների ուսումնասիրության հարցով հատուկ զբաղվել է երաժշտագետ Լ.Հակոբյանը, որը տվյալ շարականների տաղաչափության քննության հիման վրա համոզիչ կերպով ապացուցել է, որ վերջիններս, իրոք, տարբերվում են իրենց տաղաչափական և բովանդակային առանձնահատկություններով և ստեղծվել են ավելի ուշ շրջանում:

Մի բան պարզ է, որ և՛ Կիրակոս Գանձակեցին, և՛ Անանուն խմբագրության հեղինակը, գրելով «Մեսրոպ Սիւնեցի առաջինն, որ յաշակերտաց անտի սրբոց թարգմանչաց», բառացիորեն նկատի չեն ունեցել որոշակի ժամանակաշրջան, այլ ցանկացել են նշել, որ Ավագ օրհնությունները կերտելիս Մեսրոպ Մաշտոցին հավատարիմ է մնացել Սուրբ Թարգմանիչների խստաշունչ և վեմ առաջին կցուրդների ընդհանուր ոգուն և ոճին: Այդպիսով, Մեսրոպ Մաշտոցին յուրովի հարստացրել է կցուրդի ժանրը դառնալով ոսկեդարյան շարականագիրների թողած ավանդույթների արժանի շարունակողը:

---

[44] Տե՛ս Ե.Տնտեսեան, Նկարագիր երգոց, Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ եւ յաւելուած բովանդակութիւն երգոց ըստ ութն ձայնից, Բ. Տպագր., Իսթանպօլ, 1933, էջ 136:

[45] Х.С.Кушнарян. Вопросы истории и теории армянской монодической музыки. Л., 1958, с. 115.

[46] Ռ.Ա.Աթայան, Հայկական խազային նոտագրություն, Երևան, 1999, էջ 73, 74:

[47] Տե՛ս L.Hakobyan. The Versification of the Šarakan-hymns, REArm, 24, 1993, pp.118-119.

Անահիտ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ԱԻ

ՀԱՅ ԱՇՈՒՂԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԳԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ

Ներկա հաղորդման առարկան Ալեքսանդրապոլում 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին տարածված հայ աշուղական հայրենասիրական երգերն են, որոնք (չուրջ 83 նմուշ, զրանցից 49-ը՝ ձայնագրված) դիտարկել ենք «Հայրենասիրության թեման հայ երաժշտության մեջ» մեր հետազոտական աշխատության շրջանակներում: Մեր նպատակն է ուսումնասիրել այդ երգերի երաժշտաբանաստեղծական դիմագիծը՝ վերջինիս տարբեր բաղադրիչներով՝ բառակազմ, լեզվական հատկանիշներ, բովանդակություն և այլն:

Առաջնորդվել ենք «Հայ ազգային մշակույթի երախտավորներից մեկի երաժիշտ-ֆոլկլորագետ Արշակ Բրուտյանի» (Մ.Բրուտյան)[1] «Ռամկական մրմունջներ» «կոթողային» (Մ.Բրուտյան)[2] ձայնագրված ժողովածուի երկրորդ հատորով, որի նյութը՝ հիմնականում աշուղական երգեր, ալեքսանդրապոլցի երաժշտագետը հավաքել է Շիրակի գաշտավայրի գյուղերում և, մանավանդ, հայրենի քաղաքում ապրող աշուղներից, ինչպես նաև քաղաքի հայտնի երգիչներից, նվագածուներից և ամենից առաջ մեծն աշուղ Ջիվանուց[3]: Հիմք են ծառայել նաև «Շիրակի հայ աշուղները» արժեքավոր ժողովածուն (Երևան, 1986, կազմող՝ բանասեր-աշուղագետ Կ.Դուրգարյան), Ջիվանու և Շերամի ձայնագրված ժողովածուները[4] և այլ տպագիրներ:

Ինչպես հայտնի է, հայրենասիրության գաղափարը թեմատիկ, բովանդակային ամենալայն ընդգրկումով, ժանրային, երաժշտական մարմնավորման այլևայլ դրսևորումներով խիստ բնորոշ է հայ աշուղական երգարվեստին, որ հատկապես

---

[1] Ա.Բրուտյան, Ռամկական մրմունջներ, հ. 2, Երևան, 2002, կազմեց Մ.Բրուտյանը, «Աւաջաբան», էջ 12: Հետագա տեքստում ժողովածուն նշում ենք կրճատ՝ «Ռամկ. մրմ.», հ. 2:

[2] Նույն տեղում, էջ 12:

[3] Նույն տեղում, էջ 9:

[4] «Ջիվանի», Երևան, 1955, կազմ. և խմբ. Մ.Աղայանը և Շ.Տալյանը, «Ջիվանի» (ձայնագրված երգարան), Երևան, 1998, աշխատասիր. Մ.Մանուկյանի: Հետայսու՝ ժողովածուները նշում ենք. առաջինը՝ Ջիվանի, 1955, երկրորդը՝ Ջիվանի, 1998: Շերամ, Երգեր, Երևան, 1959, խմբ.՝ Մ.Աղայան, Շերամ, Երգեր, Երևան, 1981: Հետայսու՝ Շերամ, 1959 և Շերամ, 1981:

ընդգծվեց 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին տասնամյակներում տարբեր պատերազմների, դաղթերի, կոտորածների, նաև հայոց հերոսամարտի, ազատագրական շարժման և այլ նմանօրինակ երևույթների «թոհ ու բոհով» առնեցուն ազգային կյանքի պայմաններում: Այս իմաստով Ալեքսանդրապոլը՝ «Հայաստանի աշուղական երկրորդ՝ Նոր դպրոցի կենտրոնը» (Գ.Լևոնյան)[5], որտեղ «...ամեն ինչ հայկական շունչ ուներ՝ լեզուն, սովորույթները, նիստուկացը»[6], և «...լիարյուն կյանքով ապրում էր աշուղական արվեստն իբրև գաղափարախոսություն որդեգրած փայլուն արհեստավորների մի հսկա բանակ»[7], առանձնահատուկ նշանակություն ունեցավ: Այստեղ լիաթոք հնչեց հայ աշուղների հայրենաշունչ քնարը, լայնորեն տարածվեցին «խիստ չեշտված հայրենասիրական» երգերը[8]: Դրանք կատարվում էին ամենուրեք՝ սրճարաններում, հավաքույթներում, հասարակաց խնջույքներում և այլուր, շատ անգամ, հատկապես 19-րդ դարի 70-ական թվականներից, նույնիսկ փոխարինելով քաղաքի կենցաղում ընդունված, սիրված աշուղական դասական երկացանկի նմուշները՝ սիրո, խրատական, երգիծական, կրոնաբարոյագիտական և այլ երգերը, սիրավեպերը, հեքիաթները[9]:

Երգերի հեղինակները՝ չուրջ տասնինը անուն, հայ աշուղական տարբեր սերունդների ներկայացուցիչներն էին (ամենատարեցը՝ Զահրին՝ ծնված 1818թ., կրտսերը՝ Ծահրատը՝ ծնված 1867թ.), մեծ մասամբ ալեքսանդրապոլցիներ՝ Հավեսի, Հազիրի, Ֆիզահի, Ջամալի, Յուշարի, Խայաթի, կամ Շիրակի գյուղերից՝ Գյուլգյազյան, Հովսեփ, Ծահրատ, կամ դրսից եկածներ և Ալեքսանդրապոլում՝ «աշուղների ոստանում»[10], նաև մերձակա գյուղերում հաստատվածներ՝ Զահրի, Մալուլ, Բագրատունյան, Ջիվանի, Պայծառե և ուրիշներ: Քաղաքում երգել են նաև հայ աշուղական Երևանյան կամ Արարատյան դպրոցի հիմնադիր Շիրինի հայրենասիրական երգերը[11]: Միաժամանակ «Ախ, իմ անուշ Հայրենիք» երգի հեղինակն անհայտ է[12]:

---

[5] «Հայ աշուղներ», կազմեց Գ.Թարվերդյանը, Երևան, 1937, «Առաջաբան», էջ XV:
[6] «Շիրակի հայ աշուղները», «Առաջաբան», էջ 9:
[7] «Ռամկ. մրմ.», հ. 2, էջ 9:
[8] «Ռամկ. մրմ.», հ. 2, էջ 10:
[9] «Շիրակի հայ աշուղները», էջ 9:
[10] Նույն տեղում, էջ 5:
[11] Ինչպես հայտնի է, Շիրինն իր աշուղական կրթությունը ստացել է Ալեքսանդրապոլում աշուղ Բավեի մոտ («Ռամկ. մրմ.», հ. 2, էջ 212):
[12] «Ռամկ. մրմ.», հ. 2, էջ 164, ծանոթագրություն 3:

Աղյուսակ 1[13] *Ալեքսանդրապոլում տարածված աշուղական հայրենասիրական երգերի հեղինակներ:*

Հեղինակ	Ծննդավայր	Ստեղծագործության տարեթիվը	Ալեքսանդրապոլի	Երևանի նկատմամբ	Կարսի նկատմամբ, տրանսկովկասյան	Կարսում գրված, կամ Կարսի նկատմամբ	Ալեքսանդրապոլի նկատմամբ, գրված Ալեքսանդրապոլում կամ հիշատակված Ալեքսանդրապոլում
1. Զահրի	*Վան, գ. Կեմ*	*1818*			+		
2.Բագրատունյան[14]	*Կարս*	*1823*			+		
3. Մալուլ[15]	*Կարս*	*1823*				+	
4. Շիրին	*Սուրմալու, գ. Կողբ*	*1827*					+
5. Հավեսի[16]	*Ալեքսանդրապոլ*	*1830*	+				
6. Հադիի[17]	*Ալեքսանդրապոլ*	*1840*	+				
7. Ջիվանի	*Ախալքալաք, գ. Կարծախ*	*1846*			+		
8. Ֆիդահի[18]	*Ալեքսանդրապոլ*	*1847*	+				
9. Ջամալի	*Ալեքսանդրապոլ*	*1848*	+				
10. Յուշարի	*Ալեքսանդրապոլ*	*1850*	+				
11. Խայաթի[19]	*Ալեքսանդրապոլ*	*1850 կամ 1854*	+				

[13] Աղյուսակ 1-ում բերված բոլոր տվյալները քաղել ենք «Ռամկ. մրմ.», հ. 2 և «Հայ աշուղներ» ժողովածուներից:

[14] Բագրատունյան կամ Հակոբ քահանա մահտեսի Խաչատրյան-Տեր-Մկրտչյանց («Ռամկ. մրմ.», հ. 2, էջ 211):

[15] Հայտնի է նաև որպես Մալուլի («Հայ աշուղներ», 1937, էջ 511), Մալիլ («Ռամկ. մրմ.», հ.2, էջ 212):

[16] Հավեսին հայտնի է նաև որպես Հավես («Ռամկ. մրմ.», հ. 2, էջ 212):

[17] Հայտնի է նաև «Գյումրեցի» անվամբ («Հայ աշուղներ», էջ 516):

[18] Հայտնի է և որպես Ֆիդայի («Հայ աշուղներ», էջ 516):

[19] Հայտնի է նաև որպես Խայաթ («Ռամկ. մրմ.», հ. 2, էջ 211):

12. Շերամ	*Ալեքսանդրապոլ*	*1857*	+				
13. Պայծառե	*Լոռի, գ. Գյուլագարակ*	*1859*			+		
14. Գյուլգյազյան[20]	*Շիրակի մարզ, գ. Թեքնելի*			+			
15. Հովսեփ[21]	*Շիրակի մարզ, գ. Սոգութլու*	*1860*		+			
16. Ցահրատ	*Շիրակի մարզ, գ. Դիրեկլեր*	*1867*		+			
17. Կրպե	*Մննդավայրի վերաբերյալ տվյալները բացակայում են:*						
18. Կիկո կամ Կիրակոս	*Ալաշկերտ*	*ապրել և ստեղծագործել է 19-րդ դարի երկրորդ կեսին*					+
19. Սեֆիլ	*Մուշ*	*ապրել և ստեղծագործել է 19-րդ դարի երկրորդ կեսին*					+

Երգերի լեզուն հիմնականում գրական հայերենն է՝ աշխարհաբար: Վերջինս ներկայացված է ոչ միայն իր «անխառն» տեսքով (14 երգ)[22]*, այլև մեծ մասամբ (56 նմուշ, երգերի ընդհանուր թվի մոտ 75%-ը) համեմված հայոց լեզվի «Կը» ճյուղի կարնո բարբառին հատուկ խոսքերով, արտահայտություններով, նաև բառերի հնչյունափոխության, հոլովման և խոնարհման այլևայլ ձևերով*[23]*.*

1. «Ջունիս մեկ ցավակից, չունիս օգտակար»:

---

[20] Հայտնի է նաև որպես Գյուլգյազօղլի («Ռամկ. մրմ.», հ. 2, էջ 211):

[21] Հայտնի է նաև որպես Սոգութլվեցի («Հայ աչուղներ»), էջ 518:

[22] Ինչպես օրինակ Չիվանու «Կռունկ»-ը, տե՛ս Ա.Գևորգյան, «Հիշողության ծալքերից»/Ալաբարանի ժողովրդական երգեր և պարեղանակներ/ Ձայնագրյալ ժողովածուն, N 49, էջ 125-127, Շերամի «Զեյթունցիների քայլերգ»-ը, Շերամ, 1981, էջ 147 և այլն:

[23] Ինչպես հայտնի է, «Կը» ճյուղի «Կարնո բարբառին պատկանում են Լենինականի քաղաքի (Ալեքսանդրապոլի Ա.Բ.) և շրջանի, Ախալքալաքիի, Ախալցիխայի քաղաքների և շրջանների գյուղերի խոսվածքը», Աբ.Աբրիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 407: Աչուղական երգերի բանաստեղծական տեքստերի վերը բերված 1, 2, 3, 4 և հետագա պատառիկներում «Կը» ճյուղի Կարնո բարբառին հատուկ օրինակներն ընդգծել ենք:

2. «Հիմա Տերն է էնող դատաստան քեզի»[24]*:*

3. «Կյանք կուտան ողջ հայերը, Ջիվանին էլ քեզի համար»[25]*:*

4. «Գարուն կուգա իր անուշիկ հովերով:
Կանցնի կեռթա նրա գլխեն ցողերով»[26] *և այլն:*

Որոշ երգերում գրական հայերենն ընդմիջվում է գրաբարյան բառերով և դարձվածքներով, որի առավել ցայտուն օրինակն է Բագրատունյանի «Այս իմ ծով արտասուք» երգը («Ռամկ. մրմ.», հ. 2, N 6, էջ 26-27)[27]*:*

5.«Այս իմ ծով արտասուք գնան-ընթանան
Ի քեզ սիրտ ապառաժ, քանի՞ կան մնան
Քո ընթացք նազելի, քո դեմք գեղուն,
Էարկ գիս Ավարայր, Ավարայր» և այլն:

Տե՛ս նաև Ջիվանու «Ես հայի զավակ եմ» երգը («Ռամկ. մրմ.», հ. 2, N 28, էջ 59):

6. «Ես հայի զավակ եմ, եղբայրք,
Ինձ տանում են զինվորութեյան,
Բարեկամներ, պատվելի հարք» և այլն:

Պայծառեի «Հեռացե՛ք, ով ամպեր» երգը («Ռամկ. մրմ.», հ. 2, N 48, էջ 82-83):

7. «Վաան որո՞յ մենք գործից չենք քաղում օգուտ» և այլն:

Պայծառեի մեկ այլ երգում՝ «Իբրև Արաքս ես հոսում եմ» («Ռամկ. մրմ.», հ.2, N 39, էջ 71), գրական լեզուն զուգորդված է գրաբարյան և միաժամանակ բարբառային («Կը ճյուղի» կարնո բարբառ) օրինակներով:

8.«Զկար քեզ նման վարդարան
Բայց վարդերդ օտարք տարան»:

9.«Ինձի վարձել է քո տերդ» և այլն[28]*:*

Նշենք նաև Մշո բարբառով հորինված մի շարք երգեր: Դրանք են աշուղ Ջամալուն վերագրվող «Իմա՞լ պըտի էնինք» («Ռամկ. մրմ.», հ. 2, N 92, էջ 134, տե՛ս նաև երգի ծանոթագրու-

---

[24] Գյուլգյազյան, «Երանի թե չուտով ննջած լինեի», «Ռամկ. մրմ.», հ. 2, N 31, էջ 62,63:

[25] Ջիվանի, «Ի՞նչ եղար, մեկ դուրս արի», «Ռամկ. մրմ.», հ. 2, N 41, էջ 73, 74:

[26] Եղեամ, «Հերոսի հիշատակին», Երեմ, 1959, էջ 152: Մասնավորապես Երեմի երգերի բարբառախառն լեզվի մասին տե՛ս Գ.Լևոնյան, «Երկու խոսք», Երեմ, 1959, էջ 9:

[27] 5, 6, 7, 8 բանաստեղծական հատվածներում սև տպատառով առանձնացրել ենք գրաբարյան օրինակները:

[28] Նույն զուգորդման օրինակը տե՛ս նաև Ջիվանու «Աչխարհն ընդհանուր քո սիրուդ համար» («Ռամկ. մրմ.», հ. 2, N 11, էջ 33) երգում:

թյունը, նույն տեղում, էջ 180):

10.«Իմա՞լ պըտի էնինք, ես լե չըմ գինա,
Որ չը թորկինք քոչինք մըր տուն ու վաթան» և այլն:

Կրպեի «Էս ի՞նչ թավուր քար չիկար իմ» (Մշեցու երգ, «Ռամկ. մրմ.», հ. 2, N 36, էջ 68), կիկոյի «Թորկեր իմ խեղճ, տվլոր դիմ ճժեր» («Ռամկ. մրմ.», հ. 2, N 38, էջ 70) և այլն:

Հանդիպումն են և օտարալեզու բառեր՝ հունարեն, ռուսերեն, պահլավերեն, արաբերեն, պարսկերեն, տաճկերեն: Ստորև բերված «Աղյուսակ 2»-ի միջոցով փորձել ենք հնարավորինս արտացոլել դիտարկվող երգերի բազմապիսի բառակազմը: Վերջինս, այս անգամ ըստ հեղինակների, ներկայացրել ենք հաջորդ աղյուսակ 3-ի միջոցով:

Դիտարկվող երգերում հայրենասիրության գաղափարը մարմնավորված է իմաստային երկու նշանակությամբ: 1. Առկա են հայրենասիրական երգին հատուկ ընդունված, ավանդական թեմաները՝ սեր, կարոտ հայրենի երկրի, ժողովրդի նկատմամբ (Չիվանի «Ազգ իմ»[29], գովք ծննդավայրին (Շերամ՝ «Մննդավայրս»[30], լեզվին (Չիվանի՝ «Հայոց լեզու»[31]): 2. Միաժամանակ երգերի գերակշռող մասը (մոտավորապես 75%) նվիրված է ժամանակաշրջանի (19-րդ դար և 20-րդ դարի սկիզբ) ազգային կարևորագույն խնդիրին՝ Արևմտյան Հայաստանի և արևմտահայոց ողբալի ճակատագրին, և օսմանյան լծից ազատագրման թեմային[32]: Հայրենասիրության գաղափարի մեկնության նշված երկու կերպերը, ըստ հեղինակների, ներկայացրել ենք աղյուսակ 4-ի միջոցով:

---

[29] «Ռամկ. մրմ.», հ. 2, N 1, էջ 18: Տե՛ս նաև Չիվանու «Մեր գործերը», «Օտարի բնական գիտությունները» («Համոզմունք»), նույն տեղում, N 53,73, էջ 89, 111, Հավեսի «Բոլոր երկիրներեն ինձի համար», նույն տեղում, N 21, էջ 48, Շերամի «Ալրել գիտեն», «Շիրակի հայ աշուղները», էջ 164 և այլն:

[30] «Շիրակի հայ աշուղները», էջ 166, տե՛ս նաև Չիվանի, «Առավոտյան քաղցր հովիկ» («Հովիկ»), «Ռամկ. մրմ.», N 13, էջ 36:

[31] «Շիրակի հայ աշուղները», էջ 65, տե՛ս նաև Ֆահրատ, «Հայոց լեզու», նույն տեղում, էջ 169:

[32] Ինչպես հայտնի է, նույն գաղափարները սնել են ժամանակի ոչ միայն հայ աշուղական ստեղծագործությունը, այլ նաև ազգային ողջ արվեստն ընդհանրապես և հատկապես գրականությունը:

Աղյուսակ 2[33]

«Կր» ճյուղի կարնո բարբառ			
1. ապատվին	32. լռե	62. կուղարկե	92. չունիմ
2. աճև		63. կուտա	93. չունին
3. ամսուն	33.ծալվեցա	64. կուտամ	94. չունխ
4. անասնոց			
5. աչխարհքե-աչխարհք	34. ծառայե	65. կուտան	95. պատմե
6. ասե	35. ծիծաղե	66. կուտանք	96. պակսեր
7. արնոտ	36. ծովնն	67. հաղորդե	97. պատրաստե
8. բանանք	37. ծովուն	68. համարե	98. սարեն
9. բացվան	38. կանե	69. հայուն	99. սարերեն
10. բլեց	39. կանչե	70.հայրենիքես	100. սխալվեցա
11. բռնե	40. կատե	71. հասցուց	101. սովորխս
12. գեղ	41. կենաս	72. հոգուդ մատաղ	102. սպասե
13. գեղացի	42. կերգե	73. հոսե	103. սևնան
14. գյորխս	43. կերթա	74. ձագոց	104.վախկոտներու
15. դուն էլ	44. կերթամ	75. ձեղի	105. վանքերուդ
16.գավակներուն	45. կերթաս	76. ձեռին	106. վերջացուր
17. էգ	46. կեցած	77. ձորերեն	107.տաճարներուդ
18. էղավ	47. կեցար	78. ճընչե	108. ցավե
19. էնե	48.կեգյորե	79. ճուտերուդ	109. ցողալեն
20. էնող	49. կըլինխս	80. մամիս	110. ուղտերուն
21. էնոր	50. կըխրատե	81. ման կուգամ	111. ունխս
22. էնտեղ	51. կըմեռնխս	82. մեղի	112. ու՞րտեղ է
23. էրեցած	52. կըռվեցուց	83. մոլորխս	113. փաթաթե
24. էրթաս	53. կըսպանե	84. մոռցած	114. Փարիզու
25. ընծայե	54. կըվնասե	85. նայե	115. փըրկե
26. թողիր	55. կիստակեր	86. նըվաճե	116. քաչե
27. թոռե-թոռ	56. կուգա	87. ոտոգե	117. քաջերու
28. ժողվե	57. կուգամ	88. չըհնչե	118. քեղի
	58. կուգան		
29. ինձի	59. կուգե	89. չըսիրե	119. քընընե
30. իշի նահատակ	60. կուլան	90. չըսպասե	120. օգնե
31. լողալեն	61. կուլաս	91. չոքան	121. օրհնե

[33] Գաղտնի «ը» հնչյունը ներկայացրել ենք սև տպատառով: Օտարալեզու բառերի ծագման վերաբերյալ տեղեկությունները քաղել ենք Ստ.Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան» քառահատորից (Երևան, 1944-1945):

Գրաբար	Մշո բարբառ	Օտարալեզու բառեր
1. աւուր	1. Ես լե չըմ գինա	1. ալման՝ արաբերեն /երփներանգ/
2. բազմեալ	2. Թորկեր	2. բախչա՝ արաբերեն /փոքր բաղ/
3. դորա	3. իդա	3. բլբուլ՝ արաբերեն /սոխակ/
4. եղեալ	4. իմա՞լ	4.դաստա՝ արաբերեն /մի ձեռք/
5. գի՞արդ	5.լաո	5. դարդ՝ արաբերեն /վիշտ/
6. գիս	6. մըռնիմ	6. դուշման՝ արաբերեն /թշնամի/
7. էարկ	7. մըր տուն	7. զուլում՝ արաբերեն /անիրավություն/
8. իմոյ	8. չեմլե	8. լալա՝ պարսկերեն /կակաչ/
9. ընդ նմա	9. չը Թորկինք	9. խաբար՝ արաբերեն /լուր/
10. ի քէն	10. չուր ե՞ք	10. խանչալ՝ պարսկերեն /դաշույն/
11. լերինք	11. ուրան	11. խաս՝ արաբերեն /ընտիր տեսակի/
12. լուր	12. քըգի	12. դամբար՝ հունարեն /լապտեր/
13. հայք		13. դշեր՝ տաճկերեն /թռչուններ/
14. հարք		14. զուրբան՝ արաբերեն՝ տաճկերենից /զոհ, մատաղ/
15. յառաջ		15. մաչինա՝ ռուսերեն /մեքենա/
16. յինեն		16. մեյդան՝ արաբերեն /հրապարակ/
17. յուր		17. չալաղ՝ տաճկերեն /մերկ/
18.նորա		18.ջիվան՝ պարսկերեն /երիտասարդներ/
19. նոցա		19. ջուխտ՝ պահլավերեն /զույգ/
20. նոքա		20. սաղ՝ տաճկերեն /կենդանի/
21. վառեալ		21. վաթան՝ տաճկերեն /հայրենիք/
22. վասն որոյ		22. օրդու՝ տաճկերեն /բանակ/

Աղյուսակ 3

Հեղինակներ	Գրական հայերեն	Գրական հայերեն՝ «Կը» ճյուղի Կարնո բարբառով	Գրական հայերենի և գրաբարի զուգակցություն	Գրական հայերեն, «Կը» ճյուղի Կարնո բարբառի և գրաբարի զուգակցություն	Մշո բարբառ	Օտար-լեզու բառեր
Զահրի		+				
Բագրատունյան			+			
Մալուլ		+				+
Շերլին				+		
Հավեսի		+				
Հազիրի		+				
Զիվանի	+	+	+	+		+
Ֆիզահի				+		
Ջամալի	+	+			+	
Յուշարի		+				
Նայաթի		+	+	+		
Շերամ	+	+	+			+
Պայծառե	+	+	+	+		
Գյուլզյազյան		+			.	
Հովսեփ	+					
Ֆահրատ		+			+	+
Կրպե					+	+
Կիկո					+	+
Սեֆիլ		+				+

Աղյուսակ 4

Հեղինակները	*Հայրենասիրության ավանդական թեմաներ*	*Արևմտյան Հայաստանին և արևմտահայերին նվիրված երգեր*
Զահրի		+
Բագրատունյան		+
Մալուլ		+
Շիրին		+
Հավեսի	+	+
Հազիրի		+
Ջիվանի	+	+
Ֆիզահի	+	
Ջամալի		+
Յուշարի	+	
Խայաթի	+	+
Շերամ	+	+
Պայծառեե	+	+
Գյուլգյազյան		+
Հովսեփ	+	
Ֆահրատ	+	+
Կրպե		+
Կիկո		+
Սեֆիլ		+

Հատկանշական է, որ Արևմտյան Հայաստանի և արևմտահայոց վիճակին անդրադարձել են վերոհիշյալ համարյա բոլոր աշուղները (տե՛ս աղյուսակ 4), որոնց խնդրո չուրջ բազմաբովանդակ և բազմաբնույթ «երգաբանությունները»[34] *փորձել ենք դա-*

[34] «Երգաբանեալ ասացից» (Պետրոս Ղափանցի), այսինքն՝ ասացի և՛ խոսքով, և՛ երգով, բերված է Շ.Նազարյանի «Պետրոս Ղափանցի» գրքից, Երևան, 1969, էջ 48:

սակարգել ըստ թեմատիկ խմբերի: Դրանք են.

1.«Մարտնչող» երգեր, այս խմբում ընդգրկել ենք «ակտիվ, գործնական հայրենասիրության» (Շ.Նազարյան)[35] բնույթի երգային նմուշներ, որոնք բովանդակում են կոչեր «ի զէն» պայքարելու, կռվելու «յանուն նախնեաց և հայրենեաց», Զիվանի՝ «Սլաք նանք» (Զիվանի, 1955, էջ 141), «Դառն իրականություն»[36], գովք հերոսներին գեներալ Արշակ Տեր-Ղուկասովին, Սեֆիլ՝ «Էկավ հասավ վանա ծովուն» («Գովեստ գեներալ Արշակ Տեր-Ղուկասյանին»)[37] ապստամբած զեյթունցիներին, Շերամ՝ «Զեյթունցիների քայլերգ» (Շերամ, 1959, էջ 147), սասունցիներին, Զիվանի՝ «Սասունա սար» (Զիվանի, 1998, էջ 10), ֆիդայիներին, Շերամ՝ «Ալ ու ալվան ես հագել»[38], Անդրանիկին, Շերամ՝ «Իբրև արծիվ»[39] և այլն:

2.Պատերազմի և արտագաղթի մասին երգեր, որոնք դիտարկվող երգերի չորեքհարյուրամյա ընդամենը չորսն են: Դրանցից մեկը Շերամի «Մալ ու մալալս չարդեցին» երգն է (Շերամ, 1959, էջ 148), ժողովրդական ոճով հորինված գեղջուկի բողոք-պատմվածքը պատերազմական արհավիրքների մասին: Երգն առանձնանում է «կը» ճյուղի կարևոր և մշտ բարբառների միախառն լեզվով, պատկերված իրադարձությունների պարզ, անպաճույճ՝ «գեղջկական» մեկնաբանությամբ, հայ ավանդական պարերգին հատուկ[40] նախերգ, կրկնակ «տողընդմեջ» հաջորդական կառուցվածքով՝ նաև, մասնավորապես, Շերամի ավանդական պարերգերին հատուկ՝ քորեյամբ, չորրորդ պեան, քողաբորբ վանկաչափական

---

[35] Նույն տեղում, էջ 45:

[36] «Հայ աչուղներ», Երևան, 1937, էջ 202, կազմող՝ Գ.Թաթվերդյան, տե՛ս նաև Հավերի «Ղոշմա», «Շերամի հայ աչուղներ», էջ 35:

[37] «Ռամկ. մրմ.», հ. 2, N90, էջ 131: Գեներալ Արշակ Տեր-Ղուկասով (1819-1881), ռուսական բանակի հայազգի զորավար, մասնակցել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին, ազատագրել է Բայազետը և Արևմտյան Հայաստանի մյուս քաղաքները, Հայկական սովետական հանրագիտարան (ՀՍՀ), հ. 11, Երևան, 1985, էջ 674:

[38] Ա.Քոչարյան, Հայ գուսանական երգեր, Երևան, 1976, N79, էջ 179: Տե՛ս նաև նույն հեղինակի «Հրաժեշտի երգ»-ը մոր և Հայրենիքի պաշտպանությանը վերաբերվող որդու երկխոսությունը, Շերամ, 1981, էջ 151:

[39] Շերամ, 1981, էջ 148: Տե՛ս նաև Ծահրատի «Անդրանիկը սարեն իջավ» երգը, «Շերամի հայ աչուղներ», էջ 172:

[40] Ավանդական պարերգի բանաստեղծական տեքստի «տողընդմեջ» կառուցվածքի մասին տե՛ս բանագետ Ա.Սահակյանի հոդվածում. «Թալին» ձայնագրյալ ժողովածու, Երևան, 1984, կազմողներ Ա.Փահլևանյան, Ա.Սահակյան, էջ 33: Կառուցվածքային նշված ձևը, ըստ աչուղագետ Է.Մարգսյանի, հանդիպում է նաև գուսան Շահենի մի շարք երգերում:

ձևերով[41]: Արտագաղթի թեմայով երեք երգերում երևույթը՝ արտագաղթը, ներկայացված է որպես «ախտ» (Զամալի՝ «Դաղթականություն», «Շիրակի երգեր», էջ 100), հայ իրականության առավել բացասական, հայակուլ կողմերից մեկը (Զիվանի՝ «Դաղթականություն», «Շիրակի երգեր», էջ 69, «Դու այն երկրեն մի հեռանար» («Հայի ճուտ»), «Ռամկ. մրմ.», հ. 2, N25, էջ 55):

3.Այլաբանական երգեր: Խնդրո առարկա երգերին բնորոշ է հայրենասիրության մեկնության այլաբանական կերպը (29 նմուշ): Ավելին, այստեղ «գործում է» հայրենիքի հետ կապված այլաբանությունների մի ամբողջ համակարգ: Այսպես օրինակ, Զիվանու «Քուլրերիս մեջ միշտ սգազգայց» երգում («Ռամկ. մրմ.», հ. 2, N72, էջ 11)), հայաստանը ներկայացված է սգազգայց կնոջ մի|ոցով: Նա մեկն է քուլրերից՝ Օսմանյան լուծը տեսած երկրներից, որը օգնություն է սպասում «քաջ» հյուսիսից՝ Ռուսաստանից[42]: Զիվանու «Աչխարհն ընդհանուր քո սիրույդ համար» երգում («Ռամկ. մրմ.» հ. 2, N11, էջ 33) Հայաստանը սիրուհի է[43] «ազնիվ թագուհի», «եդեմյան ծաղիկ», «հայրենի հողով սնված մանուշակ», որը կատանա համբավ, փառք ու պատիվ, երբ «կուգա ժամանակ»: Հայրենիքը նաև մայր է, որի արցունքները պետք է սրբեն ոտքի ելած հայի որդիք («Ախ իմ անուշ հայրենիք», «Ռամկ. մրմ.», հ. 2, N3, էջ 21), անհոգ այծյամ է, որին գամփռներով և բարակներով հետապնդում է որսակոը (Զիվանի՝ «Անհոգ ես» («Այծյամ»), «Ռամկ. մրմ», հ. 2, N9, էջ 30), «սիրուն հավ» է, թշնամիներով՝ ուրուր, կով, եզ, խորամանկ աղվես, չրջապատված (Զիվանի՝ «Սիրուն հավ», «Շիրակի հայ աշուղները», էջ 66), վանդակված սոխակ է (Պայծառե «Առ սոխակն վանդակված», «Շիրակի հայ աշուղները», էջ 130), վերածվել է «ցամաք ու չոր» ծուխի, ձկներին անճար թողնելով խոնավ քարերի տակ (Խայաթի «Սեմայի», «Շիրակի հայ աշուղները», էջ 113): Հաճախ, որպես Հայաստանի այլաբանություն, հանդիպում է նաև անջուր, անմշակ, առանց պահապանի

---

[41] Շիրակի ավանդական պարերգի վանկաչափական կառուցվածքների մասին տե՛ս Ա.Բաղդասարյան, Շիրակի ավանդական պարերգի տաղաչափության որոշ առանձնահատկություններ, Հայ ժողովրդական մշակույթ, Հանրապետական գիտական նստաշրջան, IX, զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1997, էջ 8:

[42] Նմանօրինակ «ծածկագրով» են հորինված նաև Զիվանու «Հո» տաղը», «Մեծ քեռի» երգերը, «Շիրակի հայ աշուղները», էջ 64 և 67:

[43] Ըստ գրականագետ Շ.Նազարյանի՝ նույն այլաբանությամբ են ստեղծված Պաղտասար Դպիրի «Ի ննջմանէդ» հանրահայտ տաղը, նաև Պետրոս Ղափանցու հայրենասիրական երկերը, տե՛ս Շ.Նազարյան, Պետրոս Ղափանցի, էջ 29:

մնացած այգու, պարտեզի, բուրաստանի կերպարը (Շերին՝ «Ախ, իմ փոքրիկ բուրաստան», Ջիվանի՝ «Վերջացավ մեր այգին», Պայծառե «Իբրև Արաքս ես հոսում եմ», «Ռամկ. մրմ.», հ. 2, N4, 67, 39, էջ 23, 104, 71 և այլն):

Նշենք նաև մայր մտած «հայոց արեգակը», որն իր որդիներին թողել է խավար մթի տակ (Ջիվանի՝ «Ի՞նչ եղար, մեկ դուրս արի», «Ռամկ. մրմ.», հ. 2, N41, էջ 73), սև հագած բնությունը (Շերամ՝ «Վշտալույս երգը», Շերամ, 1981, էջ 141), պղտորված «զուլալ ջրերը» (Շերամ «Զուլալ ջրեր», Շերամ, էջ 144), սև ամպերը, որ մթնեցրել են Հայաստանը (Պայծառե «Հեռացե՛ք, ով ամպեր», «Ռամկ. մրմ.», հ.2, N48, էջ 82), ավետաբեր կռունկը (Ջիվանի՝ «Կռունկ», Ա. Գևորգյան, «Հիշողության ծալքերից», N49, էջ 125) և այլն:

Միաժամանակ գարունն ու առավոտը Հայրենիքի բաղձալի ազատագրության այլաբանական կերպարներն են (Ջիվանի՝ «Երբ որ լինի գարնանամուտ», Մ. Մանուկյան «Ջիվանի», էջ 40, «Առավոտը չատ մոտ է» («Հուլս»), «Ռամկ. մրմ.», հ. 2, N12, էջ 35, «Ուրախ երգ», «Շիրակի հայ աշուղները», էջ 81):

Դիտարկվող երգերի այլաբանական կերպարները ներկայացնում ենք նաև ստորև բերված աղյուսակ 5-ի միջոցով:

Աղյուսակ 5

Հայրենիքի այլաբանական կերպարները								Հարակից այլաբանական կերպարները					
աղավնյայց կին	սիրուհի	մայր	այծյամ	հավ	սոխակ	այգի	ծով	արեգակ	ամպ	ջուր	կռունկ	գարուն	առավոտ

4. Պատմական երգեր: *Այս երգերում ներկայացված է «Նորահրաչ պսակաւոր և զօրագլուխ առաքինեաց» («Ջայնքաղ Շարական», Վաղարշապատ, 1888, էջ 432) ս. Վարդան Մամիկոնյանը «հայ ցեղին խորհրդանշական դեմքը» (Ա.Զոպանյան)[44], «գաղափար անձնավորություն»-ը, «ազգ-մարդը»[45], և նրա կյանքի սխրանքը՝ Ավարայրի ճակատամարտը, որը «հայրենասիրության ու ազատասիրության ոգով խանդավառել և պայքարի*

[44] «Նոր կյանք», 1898, թիվ 5, էջ 65, բերված է Վ.Բաբխուդարյանի «Ավարայրը և հայ ազատագրական չարժումները» հոդվածից, տե՛ս «Ավարայրի խորհուրդը», Երևան, 2003, էջ 184:

[45] Նույն տեղում:

է կոչել ապագա սերունդներին»[46] (Չիվանի՝ «Ավարայրի դաշտը», «Ռամկ. մրմ.», հ. 2, N15, էջ 40): Մամիկոնյանի հետ միասին ոգեկոչվում են նաև հայոց պատմության մյուս հերոսները՝ քաջ Տրդատ արքան, «քսան երկու կանգուն գետի վերայից մեկեն թռչող Վարազդատը», Գայլ Վահանը, Բագրատունի քաջ Սմբատը (Չիվանի՝ «Գնաց վրեժ առավ Հռչե արքայից», «Ռամկ. մրմ.», հ. 2, N23, էջ 50), Երվանդյան Տիգրանը, Արշակը, Արտաշեսը և այլք (Ջամալի, «Ո՞ւր են մեր նախնիքը», «Շիրակի հայ աշուղները», էջ 101): Նմանօրինակ ոգեկոչումները հատուկ են հայ քնարերգությանը: Տե՛ս, մասնավորապես, 18-րդ դարի առաջին կեսի կրոնական բանաստեղծ Ղազար Ջահկեցու «Ողբ ի վերայ Հայաստան աշխարհին» տաղը, որտեղ հեղինակը «սրտառուչ ողբում է հայ պետականության կորուստը և այն վերականգնելու համար փնտրում է նոր մուշեղներ և վահաններ»[47]:

Երգերի «հերոսներից է նաև «ողբալի քաղաք Անին» (Չիվանի՝ «Հանդիպողը քեզի տխրի կը մնա», «Ռամկ. մրմ.», հ. 2, N46, էջ 79), որպես տառապյալ Հայրենիքի և ազգի, հայ քնարերգության ավանդական խորհրդանիշներից մեկը:

Մեր ուսումնասիրության հայորդ կետերը, որոնք վերաբերում են դիտարկվող երգերի ոտանավորի և մեղեդու կառուցվածքային տարբեր հատկանիշներին, նաև երգային այդ երկու բաղադրիչների փոխկապակցության հարցերին, մտադիր ենք մանրամասն ներկայացնել մեր հայորդ հաղորդման շրջանակներում[48]:

---

[46] Նույն տեղում: Այս մասին տե՛ս նաև «Հայ ժողովրդական ռազմի և վիճվորի երգեր», աշխատասիրությամբ՝ Ա.Ղազիյանի, Երևան, 1989, էջ 37:

[47] Շ.Նազարյան, Պետրոս Ղափանցի, էջ 30:

[48] Ամփոփ այս մասին տե՛ս Ա.Բաղդասարյան, Հայ աշուղական հայրենասիրական երգը՝ Ալեքսանդրապոլում, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, հանրապետական վեցերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2004, էջ 100-102:

Լոլա ԴՈՂՈՒԽԱՆՅԱՆ

ՄԻ ՇԵՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հին Երևանն իր մշակույթով, ավանդույթներով, կենցաղով մինչև այսօր քիչ է ուսումնասիրված և ներկայացված հանրությանը:

Քիչ բան է մնացել հին Երևանից: Քաղաքը կորցրել է մշակութային մի շերտ, հատկապես XIX դարը, որը ժամանակի առումով մեզ առավել մոտ է:

Անվերադարձ կորել են բազմաթիվ շինություններ՝ քաղաքի հոգևոր կյանքի վկաները, թողնելով սպիտակ բծեր Երևանի և հայ ճարտարապետության մեջ: Յուրաքանչյուր կառույց ունեցել է բավականին հետաքրքիր կենսագրական՝ կապված քաղաքի այս կամ այն իրադարձության հետ:

Խոսքը վերաբերում է պատմական այն ժամանակաշրջանին, երբ Հայաստանում զարգանում էին կապիտալիստական հարաբերությունները, և նա դառնում էր համաշխարհային քաղաքական և տնտեսական պրոցեսներին մասնակից:

Բնականաբար զարգանում էր ճարտարապետությունը: Հայաստան էին թափանցում բոլոր այն ճարտարապետական հոսանքները, որոնք այն ժամանակ գոյություն ունեին Եվրոպայում:

Երևանը կառուցվում էր՝ իր վրա կրելով բոլոր այդ հոսանքների ազդեցությունը, և ոճերի բազմազանությամբ էլ պայմանավորված էր հին Երևանի գեղարվեստական կերպարը: Այստեղ ստեղծագործում էին թվով ոչ այնքան շատ, բայց վերին աստիճանի արհեստավարժ և իրենց քաղաքին նվիրված ճարտարապետներ: Հիշենք քաղաքային տեխնիկ-ճարտարապետ Մեհրաբյանի անգնահատելի վաստակը Երևանի գլխավոր հատակագիծը կազմելու գործում, որ ճարտարապետը իր երկար տարիների աշխատանքը (1905-1911) անհատույց նվիրեց հարազատ քաղաքին:

Յավոք, հին Երևանի չենքերից քիչ է պահպանվել, և այսօր դժվար է լիարժեք խոսել հին Երևանի գեղարվեստաճարտարապետական կերպարի մասին, որը XIX դարում սկսել էր քայլել մեծ քաղաքներին համընթաց:

Իհարկե, Հայաստանի տնտեսական վիճակը այդ տարիներին հնարավորություն չէր տալիս խոշոր ճարտարապետական գործերի իրականացմանը, ինչպիսիք տեսնում ենք հայ ճարտարապետների կառույցները այլ քաղաքներում՝ Մոսկվա, Բաքու, Թիֆլիս և

այլն: Այնուամենայնիվ, Երևանում կառուցվում էին թվով ոչ այնքան շատ խոշոր հասարակական շենքեր:

Երևանի ճարտարապետների ստեղծագործական գործունեությունը ընդհատվեց 1920-ական թվականներին, երբ փոխվեց հասարակարգը, որն իր հետ բերեց այլ որակի ճարտարապետություն:

Հարկ է անդրադառնալ մեզ ժառանգություն թողած կառույցներից մեկին՝ արական գիմնազիայի շենքին: Այն այսօր արդեն հուշարձան է:

Բոլոր դարերում հայկական իրականության համար ուսումնական հաստատությունները շատ կարևոր և արդիական էին, քանի որ ուսման պահանջը հայ ժողովրդին միշտ բնորոշ է:

Արական գիմնազիայի նոր շենքի կառուցումը Երևանի հասարակական կյանքի համար օրվա պահանջ էր: Նազարովսկայա (այժմ՝ Ամիրյան) փողոցում գտնվող արական գիմնազիայի շենքը (ճարտ.՝ Ֆոն-դես-Նոննե) այլևս չէր բավարարում սովորողների աճող թվին:

Ուստի 1879 թվականին քաղաքային իշխանությունները ձեռնամուխ եղան գիմնազիայի նոր շենքի կառուցմանը, որը նպատակահարմար գտան տեղադրել Աստաֆյան (այժմ՝ Աբովյան) փողոցում[1]:

Տարածքը գնելու համար բավականին ժամանակ պահանջվեց, և միայն 1898 թվականին գիմնազիայի մանկավարժական խորհուրդը նախագծի մշակումը հանձնարարեց նահանգային ճարտարապետ Վ.Միրզոյանին, որը 1906 թվականին քննարկման ներկայացրեց գլխավոր մասնաշենքի էսքիզային նախագիծը: Շենքի համար նախատեսված էր բավականին մեծ տարածք Աստաֆյան (Աբովյան), Տեր-Ղուկասովսկի (Նալբանդյան), Յարսկայա (Արամ Մանուկյան) և Բեբուտովսկի (Հանրապետության հրապարակ) փողոցների միջև:

Այնուհետև ուսուցչական խորհուրդը նպատակահարմար գտավ գիմնազիայի շենքի նախագծման համար հրավիրել նաև ճարտարապետ Վասիլևին, որը մեծ փորձ ուներ այս ասպարեզում: Մինչ այդ նա նախագծել և կառուցել էր Շուշիի ռեալական դպրոցը: Այն ժամանակ ընդունված էր հրավիրել ճարտարապետների, որոնք մասնագիտացած էին այս կամ այն բնագավառում:

Այսպես, 1920-ական թվականներին Երևան հրավիրվեց

---

[1] Որոշ տվյալներ բերված են Ն.Պապուխյանի ուսումնասիրություններից:

առողջարանային քաղաքների նախագծման մասնագետ-ճարտարապետ Պ.Եսկովը՝ առողջարան-քաղաքներ Արզնիի և Դիլիջանի գլխավոր հատակագծերի մշակման համար:

Վերադառնալով մեր նյութին՝ ասենք, որ ճարտարապետ Վասիլևը մշակեց գիմնազիայի շենքի նախագիծը՝ հիմքում ունենալով Միրզոյանի տարբերակը: Ըստ Վասիլևի՝ ճշտվեցին շենքի առանձին մասերը, և հստակեցվեցին գիմնազիայի ֆունկցիոնալ գոնաները:

1912 թվականին Միրզոյանը վերամշակում է նախագիծը 720 աշակերտի համար: Սակայն այս տարբերակը ևս վերջնական չէր, և պահանջվեցին որոշ լրացումներ, որոնք իրականացրեց նահանգային ճարտարապետ Վլ.Սիմենսոնը: Նա ղեկավարեց և ավարտին հասցրեց շենքը:

Նախագծերից և ոչ մեկը չի պահպանվել: Ճարտարապետ Աննա Տեր-Ավետիկյանի հիշողության մեջ տպավորվել են այդ գծագրերը՝ կատարված բավականին մեծ չափերի բաց օխրայի երանգով մագաղաթների վրա:

Արական գիմնազիայի շենքի կառուցման հովանավորներն էին մեծահարուստ արդյունաբերողներ Տիգրան և Երվանդ Տեր-Ավետիկյան եղբայրները, նաև մեծահարուստներ Արշակ Աֆրիկյանը և Երեմ Մարաբեկյանը:

Գիմնազիայի շենքը զբաղեցնում է մի ամբողջ թաղամաս, կառուցված պարագծով և ներքին բակով: Երեք ճարտարապետների նախագծերում էլ պահպանված է նույն հորինվածքը:

Գլխավոր մասնաշենքը ուղղված է դեպի Աստաֆյան փողոց: Այստեղ նախատեսված էին հանդիսասրահը, դահլիճը երկրորդ հարկում, վարչական և ուսումնական սենյակները, լաբորատորիաները: Ըստ ուսումնական ծրագրի՝ գիմնազիաներում դասավանդում էին կրոնի պատմություն, հայոց, ռուսաց, օտար լեզուներ, նաև լատիներեն, երկրաչափություն, աստղագիտություն և այլն: Առաջին հարկը տրամադրվում էր նախապատրաստական դասարաններին: Նկուղային հարկում նախատեսվում էին ձեռքի աշխատանքի, երաժշտության, պարի, մարմնամարզության և սուսերամարտի սենյակներ: Դրսից եկած երեխաների համար շենքի ձախ թևում նախատեսված էր պանսիոն, որը հաղորդակցվում էր շենքի կենտրոնական մասի հետ, իսկ անհրաժեշտության դեպքում կարող էր մեկուսացվել: Ուսուցիչների բնակարաններին հատկացված էր աջ թևը: Երկու թևերն էլ ունեին ինքնուրույն մուտքեր, որոնք մինչ այժմ օգտագործվում են: Տեր-Ղուկասովսկի փողոցի կողմից նախատեսված էր սննդի մասնաշենք՝ իր բոլոր

ծառայությունններով, և փոքր եկեղեցի:

Ինչպես և հին Երևանի բազմաթիվ շենքեր, արական գիմնազիան նույնպես կառուցված էր տեղական սև սրբատաշ տուֆից՝ միդիա չարվածքով: Քարհանքը պատկանում էր ռոստովյան արդյունաբերողներ Արազյաններին: Աստաֆյան փողոցի կողմից ճակատի ձևավորման համար տեղ-տեղ օգտագործվել է կարմիր քար: Ընդհանուր առմամբ՝ շենքի ճարտարապետությունը մեկնաբանված է կլասիցիզմի ոճով: Հորինվածքը խիստ սիմետրիկ է. շքամուտքը շեշտված է իր գեղարվեստական լուծմամբ, փոքր-ինչ առաջ եկած, վերևում պատշգամբով՝ միակը ամբողջ կառույցում, որը բնորոշ էր կլասիցիզմի ճարտարապետությանը: Շքամուտքի գեղարվեստական լուծման մեջ օգտագործված են հունական մոտիվներ:

Աջ և ձախ թևերի ճակատներն աչքի են ընկնում պարզությամբ, դասական տարրերի զուսպ օգտագործմամբ, պատուհանների դասավորության հստակ ռիթմով:

Հանդիսավոր են ներքին տարածքները: Գլխավոր մասնաշենքի ընդլայնական առանցքով տեղադրված են եռաթռիչք շքասանդուղքները, որոնք տանում են նախասրահ և դահլիճ:

Հետագայում (1956) այս աստիճանների համակարգում փայլուն ներմուծվեց Մարտիրոս Սարյանի «Հայաստան» վիտրաժը, որի թափանցող լույսը ինտերիերում ստեղծում է հարուստ գունային ներկապնակ:

Դահլիճը տեղադրված է գլխավոր ճակատի ամբողջ երկայնքով, նրա ճարտարապետությունը հետաքրքիր է իր համաչափություններով, դեկորատիվ տարրերի զուսպ օգտագործմամբ: Դահլիճը հայտնի է իր հիանալի ակուստիկայով:

Դրան նպաստում են նախատեսված աջ պատի երկայնքով պատշգամբներ հիշեցնող փոքր խորշերը՝ մշակված դասական ճարտարապետության տարրերով:

Դասասենյակները (մակերեսը՝ 69մ, բարձր.՝ 3,6մ) լուսավոր էին և կենսուրախ:

Աջ և ձախ թևերի սենյակների բարձրությունը փոքր-ինչ ցածր էր:

Ցավոք, այս շենքը նպատակին երբեք չծառայեց: 1916 թվականին քարային աշխատանքները ավարտվեցին: Առաջին համաշխարհային պատերազմի օրերին շինարարությունը դանդաղեց, բայց որոշ սենյակներ կարճ ժամանակով տրամադրվեցին ռազմական հոսպիտալին:

Շենքի հանդիսավոր բացումը կայացավ 1918 թվականի նո-

յեմբերի 10-ին, սակայն ներքին հարդարման աշխատանքները շարունակվում էին:

Հայաստանի առաջին հանրապետության հռչակումից հետո աշխուժանում է հասարակական, քաղաքական և մշակութային կյանքը: Երևանում հասարակական շենքերի մեծ պահանջ էր զգացվում: Ուստի արական գիմնազիայի համար նախատեսված շենքը օգտագործվեց տարբեր նպատակներով:

1920 թվականին այստեղ հիմնվել է կենտրոնական մանկավարժական թանգարան: Պառլամենտի ընդլայնված նիստերը տեղի էին ունենում այս շենքի դահլիճում, սենյակներն էլ օգտագործվում էին տարբեր միջոցառումների համար:

Խորհրդային իշխանության օրոք՝ 1921-ին, արական գիմնազիայի շենքը հայտարարվեց Մշակույթի տուն, որտեղ ժամանակավոր տեղավորվեցին տարբեր հաստատություններ:

Հաջ թևում տարածքներ տրամադրվեցին նորաստեղծ Պետական պատմական թանգարանին, որի կերպարվեստի և գրականության բաժինների հիման վրա հետագայում ստեղծվեցին Պետական պատկերասրահը և Ե.Չարենցի անվան արվեստի և գրականության թանգարանը: Այստեղ տեղավորվեցին Պետական համալսարանի տեխնիկական ֆակուլտետի ճարտարապետական բաժինը և Պետական հանրային գրադարանը:

Աջ թևի առաջին հարկը տրվեց ինդուստրիալ տեխնիկումին, իսկ նկուղում տեղավորված էր N1 տպարանը, մինչև նոր շենքի կառուցումը կնունյանց փողոցի վրա: Վերին հարկը զբաղեցնում էին հրատարակչությունը, որտեղ աշխատել է Ե.Չարենցը, և նորաստեղծ գրողների տունը:

Շենքի դահլիճում էր կենտրոնացված Երևանի մշակութային կյանքը: Դահլիճի հետ է կապված Հայաստանի երաժշտական նորաստեղծ կոլեկտիվների գործունեությունը: Այստեղ էին կայանում Ալեքսանդր Սպենդիարյանի հեղինակային համերգները, աշխույժ գրական երեկոներ, բուռն քննարկումներ: 1936-ին հրաժեշտի համար այստեղ դրված է եղել Փարիզից հայրենիք բերված Կոմիտասի աճյունը:

1946թ. բակում բացվեց գերմանական ռազմավարային զենքի ցուցահանդես:

1924 թվականին Ա.Թամանյանի՝ Երևանի նոր գլխավոր հատակագծով հյուսիսային պողոտան միանում էր կենտրոնական հրապարակին: Այս մտահղացմանը խոչընդոտում էր արական գիմնազիայի շենքը: Շենքի քանդման վերաբերյալ տեղի ունեցան բանավեճեր: Այնուամենայնիվ շենքը պահպանվեց:

Գլխավոր հատակագծի հետագա մշակումների ընթացքում որոշվեց այդ շենքը դիտել որպես հրապարակի հորինվածքի բաղկացուցիչ:

Հետպատերազմյան տարիներին, երբ ձեռնարկվեց կենտրոնական հրապարակի վերջնական կառուցապատումը, հարց բարձրացավ հրապարակը ընդլայնել հյուսիսից մինչև կուլտուրայի տան շենքը:

1948-54 թվականներին հրապարակի մասշտաբային և գեղարվեստաճարտարապետական ընդհանուր լուծման համար պահանջվեց շենքի այ թևը բարձրացնել ևս մեկ հարկով: Եվ ամբողջ բարձրությամբ և ճակատով կառուցվեց բաց կամարաորահը, համահունչ հրապարակի ճարտարապետությանը: Հորինվածքում ընդգրկվեց չատրվանով ջրավազանը չրջապատված պարտերային կանաչով (ճարտ. Մ.Գրիգորյան, Է.Սարապյան):

1960-ական թվականներին կուլտուրայի տան շենքը կրկին ենթարկվեց փոփոխությունների: Անհրաժեշտ էր ընդլայնել պետական պատկերասրահը, որի մակերեսի ավելացման համար շենքի կենտրոնական մասում կառուցվեց ուղղահայաց ծավալ 42մ բարձրությամբ, որի երրորդ հարկից վերև մակերեսների ավելացման համար շենքը ընդլայնվեց ի հաշիվ կոնսոլների, որի հետևանքով մասամբ ծածկվեց ներքին բակը: Կոնսոլների ծածկերը երկաթբետոնյա ֆերմաներ են: Նոր ծավալում նախատեսվեցին ընդարձակ ցուցասրահներ: Հրապարակի կողմից կազմակերպված գլխավոր մուտքից միաթռիչք չքասանդուղքներով այցելուները հասնում են վերելակային սրահներ, որոնք կրկնվում են յուրաքանչյուր հարկի կենտրոնական մասում:

Վերելակները այցելուներին հասցնում են վերին հարկ, որտեղից սկսվում է ցուցադրումը, և հարկ-առ-հարկ իջնում են դեպի ելք: Ցուցասրահները հիմնականում տեղաբաշխված են 5-6-7-րդ հարկերում:

Վերակառուցման ընթացքում համակառույցի ճակատները զգալի փոփոխություն կրեցին: Սև տուֆի հարթությունները երեսպատվեցին Նոյեմբերյանի բաց գույնի ֆելզիտով:

Շենքի սկզբնական տեսքը պահպանվեց միայն Աբովյան փողոցի կողմից: Վերակառուցման հետևանքով նոր, դեպի վեր աստիճանաձև բարձրացող ծավալի առկայությունը փոխեց շենքի սկզբնական կերպարը, որը հակասության մեջ մտավ հրապարակի ճարտարապետության հետ: Հրապարակի ճարտարապետական արտահայտչականությունը, այնուամենայնիվ, ընորոշվում է 1926-1950-ական թվականների կառուցապատումով:

Այսօր կուլտուրայի տունը մի համալիր է, որտեղ կենտրոնացած են մշակույթի օջախներ. Աբովյան փողոցին հարող հատվածը իր ավանդական մուտքով զբաղեցնում է Առնո Բաբաջանյանի անվան Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճը, Արամ Մանուկյան փողոցի կողմում՝ Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը, Հանրապետության հրապարակի կողմից՝ պետական պատմության թանգարանը և Հայաստանի ազգային պատկերասրահը:

Արական գիմնազիայի շենքի գոյությամբ երևում է, թե ինչպիսի իմացական դեր են ունեցել հին Երևանի կառույցները (հատկապես XIXդ. վերջի և XXդ. սկզբի), և որքան բարձր է նրանց գեղագիտական արժեքը ժամանակակից քաղաքի հոգևոր կյանքի և կենսական միջավայրի կազմավորման համար:

ՆՈՐԱՀԱՅՏ ԷՋԵՐ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՂԵՐՍՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Մշակութային խաչաձևումների առումով այնպիսի ներկայանալի «խառնարանում», ինչպիսին Մերձավոր Արևելքն է, ժողովրդամասնագիտացված արվեստի ցանկացած ճյուղի ուսումնասիրությունն առնչվում է միջմշակութային կապերի ու փոխազդեցությունների խնդիրներին:

Հայ երաժշտամշակութային արվեստի զարգացման ուղին բազմաթիվ թելերով է կապված Մերձավոր և Միջին Արևելքի համապատասխան մշակութային երևույթներին: Տարածաշրջանի էպիկական երգարվեստի ընդերքում են խմորվել աշուղական ասքերն ու սիրավեպերը, հերոսական դաստաններն ու հոգևոր բնույթի արտապաշտամունքային հորինվածքները: Այստեղ է զարգացել աշուղական մրցույթի երաժշտաբանաստեղծական ավանդույթը՝ ծնունդ տալով բազում հանելուկների, հարց ու պատասխանի, առանձնահատուկ աշուղական գաղտնալեզվի և կատարողական-տեխնիկական հնարների՝ օրգանապես ներհյուսված Արևելքի պատմողական արվեստի ժանրային համակարգի ամենատարբեր դրսևորումներին:

Փաստագրական նյութերի համաձայն՝ աշուղական մրցույթի բնօրրանը պատմական Հայաստանի Կարս և Էրզրում քաղաքներն են: Աշուղական մրցույթին նվիրված թուրք հետազոտող Յ.Էրդենների աշխատությյան մեջ գիտակցաբար տեսադաշտից դուրս է թողնված հայկական գործոնը: Մինչդեռ այն հիմնված է կարսում գտնվող աշուղ Ջոբանօղլու (ծագումով հայ) սրճարանում մեկ տարվա ընթացքում հեղինակի դիտած 600 աշուղական մրցույթի տեսարանների, աշուղների հիշողությունների և նրանց հետ ունեցած հարցազրույցների վրա: Ավելին, հեղինակը գրում է, որ աշուղ Շեհլիքից (1850-1913թթ.) առաջ ոչ մի փաստ արձանագրված չէ թուրքիայի այլ նահանգներում աշուղական մրցույթի կենցաղավարման վերաբերյալ: Այս երևույթի մեկնաբանումը միարժեքորեն կապվում է Կարսի և Էրզրումի աշխարհագրական դիրքի՝ ռուսական և իրանական Ադրբեջանի հետ ունեցած հարևանության թյամբ. չեն հիշատակվում միայն Հայաստան և հայ բառերը[1]*:*

[1] Y.Erdener, The Song Contests of the Turkish Minstrels, New York & London, 1995, p. 32-33. Իբրև փաստարկ նշվում է, որ 1878-1918թթ. Կարսը պատկանել է Ռուսաստանին, և տեղի աշուղները սերտ փոխհարաբերություններ են եղել Ադրբեջանի աշուղների հետ:

Նշված, ինչպես նաև այլ հայաբնակ շրջանների՝ Անիի, Իգդիրի երաժշտաբանաստեղծական ավանդույթները տարրալուծվել են մերձավորարևելյան աշուղական երգարվեստի ընդարձակ խճանկարի մեջ: Տարածաշրջանի աշուղական արվեստում XIX-XXդդ. առանձնանում են աշուղներ Վիրանիի (Անիից), Զուլալիի, Սազայիի անուններով՝ իբրև ներկայիս աշուղական արվեստի հիմնադիր-վարպետների[2]: Բազմաթիվ աշուղների վկայությամբ, նախ ուսանելու, ապա իրենց արվեստը կատարելագործելու նպատակով նրանք մեկնել են Թիֆլիս, Գյումրի, Ռեվան (Երևան), Բաքու. աշիկ Շերիֆը հատկապես ընդգծում է Էրիվանի ռադիոյի հաղորդումները և սազով մի չարք երգեր նվագելուց հետո ասում է, որ այդ բոլոր մեղեդիները նա սովորել է Երևանի ռադիոյից[3]: Հենց ազրբեջանական աշուղների երկացանկում հաճախ են հանդիպում «Իռեվանի» կամ «Իռեվան չերիլիսի», «Իռեվան գերայլիսի» և այլ անուններ կրող մեղեդիներ, որ ասվածի լավագույն հավաստումն է:

Ժողովրդամասնագիտացված արվեստի ոլորտում ստեղծագործող հայ երաժիշտները խոշոր ավանդ են ներդրել Մերձավոր Արևելքի երաժշտական մշակույթի զարգացման գործում: Հայտնի են ռուս արևելագետ Վ.Դորոլևսկու, ուկրաինացի երաժշտագետ Կ.Կվիտկայի տեսակետները հայ երաժշտության վճռորոշ ազդեցության վերաբերյալ, մասնավորապես, թուրքական մշակույթի ձևավորման ու զարգացման խնդրում[4]:

Ժամանակակից էթնոերաժշտագիտական ուսումնասիրություններում նույնպես հանդիպում ենք Իրանի և Թուրքիայի երաժշտական արվեստում հայ աշուղների ու գործիքահարների խաղացած դերին ու նշանակությանը տրվող օբյեկտիվ գնահատականների: Եվրոպացի և թուրք գիտնականները երբեմն հիշատակում են և հայ երաժիշտների իբրև լավագույն կատարողների անունները, օրինակ՝ Օրֆանյան (թառ), Ղաֆուրյան (երգիչ): Սակայն եթե Իրանում և Թուրքիայում ստեղծագործող և ապրող այլազգի երաժիշտների համար անպայմանորեն նշվում է ծագումը թուրքմեն, քուրդ, բալուջի, ապա հայերի կապակցությամբ

---

[2] **Aslan Ensar,** Cildirli Asik Senlik, Ankara, Sevin Matblaasi, 1975, p. XLI.

[3] **Y.Erdener**, նշվ. աշխ., էջ 32:

[4] **В.Гордлевский**, Происхождение османсного "узан", Научные труды института народов Востока. М., 1930; **К.Квитка,** О происхождении хроматизма в народной музыке славянских народов, Избранные труды, в 2-х томах, т. 1. М., 1971, с. 320-321; նույնի՝ К вопросу о тюркском влиянии, т. 1, сс 336-348.

երբևէ չի ընդգծվում նրանց ազգային պատկանելությունը[5]:

Հատկապես Կ.Պոլսի և Փոքր Ասիայի տարբեր քաղաքներում ստեղծագործող հայ երաժիշտները, խնամքով թաքցնելով իրենց ազգությունը, առավելագույնս նպաստել են մերձավորարևելյան երաժշտական արվեստի զարգացման գործընթացին: Այս ցավոտ երևույթը, որ հայ ժողովրդի ինքնության դրսևորման ճանապարհի մշտական ուղեկիցն է եղել, անդառնալիորեն բացասական դեր է կատարել այդ երաժիշտների ստեղծագործության ազգային ակունքների գնահատման խնդրում:

Հանրահայտ աշուղական ասքերի և սիրավեպերի ուսումնասիրությունը Մերձավոր Արևելքի մշակութային համատեքստում մեզ թույլ է տվել առաջադրել և փաստացի հաստատել երաժշտապատմողական ավանդույթի հզոր արմատների կենսունակությունն ու ինքնատիպությունը Հայաստանի տարբեր պատմազգագրական գոտիներում: Իսկ Արևելքի էպիկական երգարվեստի հանրահայտ կոթողի՝ Քյոռօղլու քննությունը հայ–թուրքական փոխառնչությունների տեսանկյունից վկայում է ասքի հայկական երաժշտաբանաստեղծական մեկնակերպի վաղեմի գոյությունն ու լայն ճանաչումը խնդրո առարկա տարածաշրջանում[6]:

Ուշագրավ է, որ հայ պրոֆեսիոնալ երաժշտության հիմնադիր Կոմիտասը XX դարասկզբին գրառել է «Քյոռօղլու» հայկական պատումի հարուստ մեղեդային նկարագիրը ունեցող թուրքերեն բառերով մի ավանդական նմուշ, որի ռիթմաեւէջային կայուն հիմք ունեցող մոդելն իր առաջին հաստատագրումից առ այսօր պահպանվել է աշուղների տարբեր սերունդների արվեստում[7]: Հարկ է նշել, որ աշուղական երգերին առանձնապես բնորոշ չէ մեծ ձայնածավալով ինտերվալային հիմքը, և այս առումով Քյոռօղլու երգն իր սեպտիմային վարընթաց թռիչքներով, համապատասխան ռեգիստրային ոլորտների ընդգծմամբ, արխետիպային մտածողությամբ բացատրվող բանաձևային հիմքով հիշեցնում է հայ էպիկական երգարվեստի, մասնավորապես «Սասունցի Դավիթ» էպոսի լեզվաոճական հատկանիշներն ու հռետորական պաթոսը: Միևնույն ժամանակ այն իր վառ արտահայտված երգային բնույթով առանձնանում է թուրքական

---

[5] Ch.Albright, The Music of Professional Musicians of Northwest Iran (Azerbaijan), University of Washington, 1976, p. 274.

[6] Տե՛ս մեր հոդվածը՝ «Քյոռօղլին» և հայ – թուրքական երաժշտական աղերսները, Հայ արվեստի հարցեր, Երևան, 2006, էջ 116-127:

[7] Տե՛ս Կոմիտաս, Երկերի ժողովածու, հատոր 14, Երաժշտաազգագրական ժառանգություն, Գիրք Զ, Երևան, 2006, էջ 82:

և ադրբեջանական աշուղների ստեղծագործության մեջ գերիշխող ասերգային լեզվաոճից[8]: Հիշյալ երգի սխեմատիկ տարբերակը Ադրբեջանում 1938թ. գրառված է հայ աշուղ Ավագ Ազատյանի թուրքերեն կատարումից[9]:

Կոմիտասի գրառած և նրա ժառանգության ակադեմիական հրատարակության 14-րդ հատորում առաջին անգամ հրապարակված այս մեղեդին Քյոռօղլի վիպերգող աշուղների ստեղծագործության լեյթմոտիվներից է: Արևելահայ իրականության մեջ իր բազմաթիվ տարբերակներում «Այ Քյոռօղլի, չան Քյոռօղլի» սկզբնաառողով սկսվող այս երգի աննախադեպ ժողովրդականության ապացույցն են նաև հայ կոմպոզիտորների մշակումները:

Շնորհիվ Կոմիտասի՝ մեզ է հասել նաև իր տեսակի մեջ մի եզակի նյութ, որ նա գրառել է իր հայրենի քաղաք Քյոթահիայում և վերնագրել՝ «Արևելյան թրքական եղանակներ, հավաքեց Սողոմոն ավ. սարկավագ Սողոմոնյան, միաբան Մայր Աթոռոյ Ս.Էջմիածնի, 1892թ., 15/ԺԱ (նոյեմբեր)»: Նոր հայկական ձայնագրության՝ Հ.Լիմոնջյանի ստեղծած նոտագրության համակարգով գրառված 69 երգ պարունակող այս տետրը արևելյան երաժշտության և նրա հիմքում ընկած ձայնակարգերի մի ինքնատիպ հավաքածու է, որն ընդգրկում է թուրքական, հայկական ժողովրդական, աշուղական, քաղաքային երգարվեստներին բնորոշ մեղեդիներ՝ համապատասխան մակամների անվանումներով (ուշշաք, հիջազ, շահնազ, ռաստ, սեգյահ և այլն): Ասենք նաև, որ Կոմիտասի 22 բանասացներից 20-ը հայեր են եղել, հետևաբար, նրանց կատարումները, ըստ Ռ.Աթայանի ճշգրիտ բնութագրման, թուրքիայի հայաբնակ թրքախոս գավառական քաղաքի երաժշտական կենցաղում առկա փոխադարձ ներթափանցումների արտացոլումն են և թուրքական երաժշտության ուսումնասիրության դիտակետից մի արժեքավոր և հարուստ աղբյուր են[10]:

«Քյոռօղլին» թուրքական երաժշտապատմողական ավանդույթի զարգացման աստիճանում հայ երաժիշտների վաստակը

---

[8] Т.Мамедов, Песни Кёроглу, Баку, 1984.

[9] Э.Эльдарова, Искусство ашугов Азербайджана, Баку 1984, с. 62-64.

[10] Տե՛ս Կոմիտաս, հատոր 14, նախաբան, էջ 20-22: Կոմիտասի գրառած թուրքերեն եղանակների ժողովածուն մեզ հետաքրքրող հայ-թուրքական փոխառնչությունների մի առանձնահատուկ դրսևորում է, որ թույլ է տալիս հստակեցնել թյ

ներկայացնող միակ օրինակը չէ:

Արդեն ասացինք, որ պատմողական արվեստը ավանդաբար ձևավորվել և մեծ ժողովրդականություն է վայելել պատմական Հայաստանի Կարս և Էրզրում նահանգներում: Այսուհանդերձ, Թուրքահայաստանի հյուսիսարևելյան չրջաններում՝ Ադանայում, Ղազիայնթափում, Կոզանում նույնպես մասնագետներին հաջողվել է ձայնագրել մի չարք աշուղական դաստաններ ու հեքիաթներ: Ամենատարածված պատմություններից են «Էլբեյլի-օղլին», «Կոզանօղլին» և «Ալի փաշան»: Այս պատմությունների դանազան տարբերակներում հերոսները ծագումով Մարաշից կամ Ադանայից են. հաճախ հիշատակվող վայրերից են Մալաթիան, Ուրֆան: Սրանք համեմատաբար ուշ ծագում ունեցող (XVIII դ. վերջ – XIX դ. սկիզբ) պատմություններ են, որոնցում տեղ է գտել հայ-թուրքական թշնամական հարաբերությունների մոտիվը:

Համարյա բոլոր ձայնագրված ասքերում հայազգի հերոսները ներկայացվում են իբրև բացասական կերպարներ հայանի ցեղերի առաջնորդների և Սամբուլի սուլթանի միջև ծագած խռովությունների հրահրողներ: Այս կապակցությամբ Վ.Էբերհարդը գրում է, որ հայերի այսօրինակ նկարագիրը թուրքական պատմություններում Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդող հայերի ջարդի և նրանց տեղահանության հետևանքով ստեղծված թշնամական վերաբերմունքի արտացոլումն է[11]: Ցավոք, որևէ հրատարակության մեջ տրված չէ հիշյալ պատմությունների երաժշտական բնութագիրը: Տարբերակներից մեկը թուրքերենով Էբերհարդին տրամադրել է կոզանաբնակ Մ.Խաչիկյանը, ով 1909թ. հայերի կոտորածից հետո լքել է Կոզանը և տեղափոխվել Սան Ֆրանցիսկո: Մյուս հայկական տարբերակն ընդգրկված է Միսակ Քելեսյանի «Սիս մատյան» գրքում[12]: «Կոզանի հայկական պատմությունը» ներառում է մի ասք, որ ստեղծվել է Գևորգ աղա Քյուփելյանի՝ հանրահռչակ Կոզանօղլու մոտ ծառայող տոհմիկ ընտանիքներից մեկի ներկայացուցչի մահվան կապակցությամբ: Այս պատմությունները մեծ ընդհանրություններ ունեն, և միայն մանրակրկիտ տեքստաբանական համեմատական ուսումնասիրությունը կարող է երևակել նրանց միջև եղած կապն ու ընդհանուր ծագումնաբանական հիմքը, ինչպես նաև լույս սփռել թուրքալեզու աշուղների և նրանց պատմությունների հերոսների ազգային պատկանելության խնդրի վրա: Ընդհանուր

---

[11] **W.Eberhard**, Minstrel Tales from Southeastern Turkey, Univ. of California, 1955, p. 13.
[12] Սիս մատյան (Կոզանի հայկական պատմությունը), Բեյրութ, 1949թ.:

առամբը, Թուրքիայի տարբեր գավառներում կենցաղավարող և գրանցված նյութը, որն առայժմ մասամբ է մեզ մատչելի, էապես կարող է նպաստել աշուղական արվեստի ծվյալ ճյուղի առավել ամբողջական պատկերմանը հայ իրականության մեջ:

Ուշագրավն այն է, որ այդօրինակ պատմություններն ու պոեմները, մասնավորապես «Կոզանօղլին», հավասարապես տարածված են եղել հայկական ու թուրքական միջավայրերում՝ միևնույն թեմատիկ առանցքով, բայց հերոսի տարբեր ազգային նկարագրով: Կոզանի հայկական պատմողական ավանդությունում հերոսը Գևորգ աղա Քյուփելյանն է, որը ըմբոստացել և պայքարել է սուլթանի դեմ: Սակայն նրա ուժերն աստիճանաբար սպառվել են, համախոհները սպանվել կամ հեռացել են, և նա հանձնվել է քուրդ փաշային, որը ստիպել է հերոսի 14-ամյա որդուն սպանել իր հորը: Բնականաբար, նույնիսկ մահվան սպառնալիքով տղան չի համաձայնվել. փաշայի զինվորներից մեկն է սպանել Քյուփելյան աղային և նրա ընտանիքն աքսորել: Հիմնականում ասքի հատվածները պատմվում են հերոսի երիտասարդ այրու կողմից՝ իբրև երգ-էլեգիա:

Հայկական տարբերակներում պոեմն ավելի կարգավորված և տրամաբանական շարադրանք ունի: Խաչիկյանի տրամադրած նյութն ամենահինն է ծագումով: Թուրքական և հայկական տարբերակների համեմատությունը բացահայտում է ազգային մտածողության, բանաստեղծական կերպարների, անունների, տեղանունների տարբերությունները. երևույթ, որին առնչվել ենք արևելյան համանուն սիրավեպերի հայկական և մահմեդական մեկնաբանություններում: Ըստ ամենայնի, դեպքերը կատարվել են 1870-ական թվականներին՝ Արևմտյան Հայաստանի նահանգներում, որտեղ գանազան տեղական հայտնի և զորեղ իշխաններ, բեյեր ու աղաներ փորձեր են կատարել ընդվզել սուլթանի բռնությունների դեմ: Կոզանօղլի-Քյուփելյանը չի ցանկացել լքել Հայրենիքը և պայքարել է մինչ ի մահ, թեև նրան խորհուրդ են տվել գնալ «գյավուրների սարերը»: Բոլոր տարբերակներում այրիացած կինն անիծում է Դերվիշ փաշային, որ կանանց որբևայրի է թողել: Վերոհիշյալ տարածքը հարուստ է նմանատիպ ասերգվող և երգային մասեր պարունակող բալլադ-ասքերով, սակայն «Կոզանօղլի»-ն թե՛ իր թեմատիկ առանցքով, թե՛ պատկերների վերարտադրման մի[illegible]ներով և մոտիվային բովանդակությամբ տարբերվում է մյուսներից: Ժամանակի ընթացքում այն մոռացության է մատնվել կամ գիտակցաբար սղվել ասերգողների երկացանկից՝ տեքստի անթաքույց հակաթուրքական (կամ հակաքրդական)

կողմնորոշման պատճառով:

Երկարատև պրպտումներից հետո այդ հոգեցունց պատմության երաժշտաբանաստեղծական պատառիկները հայտնաբերեցինք Բելա Բարտոկի «Թուրքական ժողովրդական երգեր» ժողովածուի մեջ[13]: Դրանք հինգն են. երգերի ծանոթագրություններում Բարտոկը նշում է, որ բանասացներից չատերը գիտեին այս եղանակը, սակայն չէին հիշում բառերը: Հեղինակի ձայնագրած տեքստերից երկուսում հիշատակվում է Կոզանօղլու դրամատիկ մահը և ողբացող կնոջ անեծքը ուղղված Դերվիշ (Kurt) փաշային, որը պարտադրելիս է եղել տղային սպանել իր հորը[14] (տե՛ս նոտային օրինակները):

Տվյալ պարագայում մեզ հետաքրքրողը ասերգվող հերոսական պատմություններ կամ բալլադային ժանրի կենցաղավարման ավանդույթի հավաստումն է Թուրքահայաստանում: Ավանդույթ, որի պատմական հիմքի տեղաշարժը կործանարար ազդեցություն է թողել գրական բաղադրիչի վրա դժվարացնելով երաժշտական նյութի հայտնաբերման և վերջնական գնահատման խնդիրը: Ակնհայտ է, որ ժողովուրդը հայազգի իշխանի սխրանքների ու ողբերգական մահվան շուրջ պատմություն է հյուսել ու ասերգել հաստատուն երաժշտաբանաստեղծական կաղապարով: Բանավոր ավանդույթի պայմաններում տեքստն աստիճանաբար աղճատվել է, փոփոխվել և այլ խոսքերով գոյատևել թուրքական ժողովրդական ստեղծագործության մեջ:

Ադանայի վիլայեթում հաճախ իրենց ծննդավայրն ու ծագումը չհիշող բանասացներից ձայնագրված այս (և բազում այլ երգերի) պատառիկների գրական-բանաստեղծական և երաժշտաարտահայտչական հատկանիշների ինքնատիպ ոճն ու գեղար-

---

[13] Տե՛ս B.Bartók, Turkish Folk Music from Asia Minor, ed. By B.Suchoff, with an afterword by K.Reinhard, Princeton Univ. Press, 1975, էջ 11-16: Բարտոկի ժողովածուի երգերից չատերի ձայնագրությունները կատարվել են Զիլդիրում (Կարսի նահանգ) հայտնի իր երգարվեստով:

[14] Մյուս տեքստերը թեև լի են խորհրդանշական արտահայտություններով՝ մուկ-ժանդարմ-բամբասանք և այլն, սակայն բացահայտորեն կապված չեն բալլադի մեզ ծանոթ հատվածների բովանդակությանը: Ընդհանուր առմամբ, ըստ Բ.Բարտոկի, երգերի և «ֆոլկլորեմների» բովանդակությունն ու կառուցվածքային առանձնահատկությունները այնքան սյուրռեալիստական են, որ մոտեցում են ժամանակակից բանաստեղծական արվեստին (B.Bartók, նշվ. աշխ., էջ 205): Այս կարևոր դիտողությունն առիթ է տալիս ենթադրել որոշ տեքստերի հեղինակային ծագումը կամ Արևելքի բազմակողմ մշակութային կենտրոններում ձևավորված ժողովրդամասնագիտացված ստեղծագործության տարբեր ճյուղերին հարելու հանգամանքը:

վեստական ավարտվածությունը հարուցել է Բ.Բարտոկի տարակուսանքը: Հաճախ տեքստերի ընդգծված գրական արտահայտություններն ու գործնքային հանկարծաբանական մտածողության սկզբունքները փորձառու փոլկլորագետի և մեծ երաժշտի ականջին անսովոր են թվացել և չեն տեղավորվել Թուրքիայի քաղաքակրթությունից կտրված հեռավոր գյուղերի անգրագետ բանաստեղծների պատկերացումների համակարգում, որոնք չհիշելով, երբեմն էլ չհասկանալով աղավաղված բառերի ծագումն ու իմաստը, փորձում են վերականգնել իրենց նախնիներից լսած երգերը: Սակայն մեզ համար ավելի քան տարակուսելի է, որ Բարտոկը, նշելով և թվելով բոլոր հնարավոր քոչվոր և նստակյաց ցեղերի ու ազգությունների անունները, որոնց հետ թուրքերը չփվել են դարեր շարունակ, գեթ մեկ անգամ չի հիշատակում հայերի անունը: Հնարավոր է, որ դա նաև «լուրջ» խմբագրական աշխատանքի արդյունք է: Ժողովածուն հրատարակվել է թուրքական կառավարության որոշմամբ և կոմպոզիտոր Ադնան Սայգունի հավաքչական աշխատանքներին անմիջական մասնակցությամբ: Ավելացնենք նաև, որ աշխատանքի վերջում Սայգունի և Բարտոկի հարաբերություններն անհայտ պատճառներով խզվել են:

Հիշատակված հատվածների երկու տարբերակները (նոտային օրինակում ներկայացված են միայն առաջին տները) քառատող պարբերություններից բաղկացած կայուն ռիթմամեղեդիական կառույցներ են: Համանչայի նվագակցությամբ կատարվող առաջին օրինակի բոլոր տների սկզբնատողերն ավարտվում են վերջին վանկի ընդգծված երկարացմամբ, որ ամբողջական կառույցի մակարդակում ինքնատիպ հեղինակային կատարողական հնարանքի է նմանվում: Աշուղական արվեստին բնորոշ մեղեդային բարձրակետի ցուցադրումով և ներքընթաց չարժումով ծավալվող մեղեդու հետագիծը օկտավա է ընդգրկում: Առաջին երկու տողի ժամանակավոր հենակետը կվինտան է, երրորդինը՝ տերցիան, չորրորդը բնականոն հանգեցնում է տոնիկային, այն է՝ ընդհանուր գծերով պահպանված է էվիկական երաժշտական լեզվամտածողությանը բնորոշ արխետիպային սխեման: Ի դեպ, *A A B A* ձևը, որ քննարկվող տեքստերում, ինչպես նաև հայկական աշուղական և ժողովրդական երգերում հաճախ նկատվողներից է[15], Բարտոկը համարում է թուրքական ժողովրդական երգաստեղծության առանձնահատուկ չափագիծը, քանի որ այն չի հանդիպում «իրեն ծանոթ մյուս արևելաեվրոպական ժողովուրդների մշակույթնե-

[15] Տե՛ս Գ.Լևոնյան, Աշուղները և նրանց արվեստը, Երևան, 1944, էջ 50:

րում»[16]:

Սակայն նույնիսկ 8 վանկանի A A B A հանգով ստեղծված բանաստեղծական տեքստերում բառերի և երաժշտության չհնչտերը հաճախ չեն համընկնում, այդ իսկ պատճառով կատարողը յուրաքանչյուր տողի վերջում ավելացնում է եզրափակիչ «յի» վանկը: Մեղեդու տխուր հնչերանգները բնական կամ դորիական մինորի վերին օղակում և դրանց տարբերակային կրկնողություններն ամեն մի տողի սկզբնամասում ողբերգ են հիշեցնում:

Դժվար է վերջնական կարծիք հայտնել տվյալ դրվագների երաժշտաբանաստեղծական կառույցի միասնության կամ չհնչտարական անհամապատասխանության վերաբերյալ՝ առանց պատկերացնելու անցյալ դարի սկզբին Ադանայի վիլայեթում կատարվող այս երգերի ներքին չհնչտադրության, երգային տվյալ ոճին հատուկ և հետագայում մոռացված յուրահատկությունները: Անհմաստ է նաև բացատրել երևույթը՝ առաջնորդվելով թուրքերենի ագգլյուտինատիվ էությամբ (ինչպես անում է Բարտոկը), որը հնարավորություն է ընձեռում փոքր մասնիկների կուտակումների չնորհիվ հասնել բառերի էներգետիկ ուժի մեծացմանն ու երկարաձգմանը[17]: Սրա օգտին կարող էր խոսել նաև թուրքերենի վերջին վանկի չհնչտադրման օրենքը, եթե այն առկա չլիներ նաև հայերենում: Թուրքամետ որևէ փաստարկի առաջնությունը հնարավոր է հերքել տեքստերում հանդիպող անհասկանալի և չթարգմանված, աղավաղված հայերեն բառերի վանկերի ու ինտերպոլյացիաների անբնական առատությամբ: Այս պարագայում կարևորվում է տեքստի ալեգորիկ չերտը ևս. հինավուրց մեղեդու մինորով դուրս հորդող բողոքի և վրդովմունքի ձայնն ու անեծքը՝ ուղղված քուրդ կամ թուրք փաշային.

---

[16] B.Bartok, նշվ. աշխ., էջ 203: Իր տեսակետը Բարտոկը հիմնավորում է՝ հենվելով Ի.Կունոսի թուրքական մանիների հրատարակության վրա, որոնց տեքստերի մեծամասնությունը վերոհիշյալ հանգավորման ձևն ունի: Առայժմ կարող ենք միայն ենթադրել, որ մանիների ուսումնասիրությունը մեզ հետաքրքրող դիտակետից օգտակար կարող է լինել հայ մոնոդիկ երաժշտության ելևէջային-ոճական ոլորտների սահմանները հստակեցնելու խնդրում: Հիշեցնենք, որ այլազգի շրջապատի ազդեցության տակ հինավուրց հայկական սիրային քառյակները սկսել են մանի անվանվել: Հատկանշական է, որ Ավ.Իսահակյանը Ադրադածին նվիրված բանաստեղծությունները վերնագրել է «Ալաչյազի մանիներ»:

[17] Թուրքերենը և ուգրո-ֆիննական լեզուները համարվում են ագգլյուտինատիվ: Եզրը մատնանշում է ածանցյալ բառերի և քերականական ձևերի կազմավորման մի ձոց, որով ածանցները միակցվում են բառերին՝ առանց խաթարելու դրանց հնչողությունը, նպաստելով բանաստեղծության հեշտ հանգավորմանը: Տե՛ս Словарь иностранных слов, М., 1989, с. 14.

Հնարավո՞ր է արդյոք
Որ տղան սպանի իր հորը,
Փաղիշահի (կամ սուլթանի) մարդիկ
Մի՞թե կմնանք աչխարհի տերը...(թարգմանություն մերն է):


Ընդհանուր ծանոթացումը երգերի որոշակի խմբի ձայնակարգերին (հիմնականում՝ էոլական, դորիական և փռյուգիական), ժանրային ընդգրկման (նանի, Ղարիբի, Լորկե, անձրևաբերության երգեր, ողբերգեր, պարերգեր), ռիթմամեղեդային դարձվածքների հյուսվածքին, ի դերև է հանում դրանց սերտ աղերսները հայ երաժշտության տարբեր սեռերին ու ժանրերին: Իսկ որոշ երգերի տեքստերը, վերնագրերն ու համապատասխան երաժշտահուզական մտահղացումներն առնվազն իրենց համարժեքներն ունեն հայ մոնոդիկ երգարվեստում: Միայն այն փաստը, որ 11 վանկանի տեքստերի գերակչիռ մասի մետրական կառույցը (ըստ Բարտոկի խոստովանության) առանց երաժշտական բաղադրիչի երևակում է 4+4+3 վանկատրոհումը, մինչդեռ մեղեդային արտաբերմամբ այն դառնում է 6+4+1 կամ 6+3+2, կամ էլ մեղեդային տողի կառույցը (melody stanza) հիմնականում ավելի շատ վանկեր է պահանջում, քան գրական տողն է պարունակում, խոսում է երաժշտական բաղադրիչի անկախության կամ ինքնուրույնության մասին: Հավելենք նաև տեքստերի բովանդակության ապակողմնորոշող, երբեմն էկլեկտիկ ու անհեթեթ, խորհրդավոր ու բազմիմաստ լեզուն:

Մեր խորին համոզմամբ Բարտոկի համար հանելուկային և տարօրինակ այս երևույթներն իրենց որոշակի բացատրությունն ունեն հայ երաժշտաբանաստեղծական ավանդույթում: Եթե բոլոր տարակուսանքներով, անորոշություններով և չբացահայտված խնդիրներով հանդերձ՝ Բարտոկը «Թուրքական երգերը» փորձել է համեմատել հունգարականի հետ, ապա ավելի քան արդյունավետ է այդ երգերի քննարկումը հայկական մոնոդիայի համատեքստում: Ժողովածուի մի ստվար քանակի հետազոտությունը հայ ժողովրդական և ժողովրդամասնագիտացված երաժշտության լեզվաոճական, ձայնակարգային-ելևէջային և կառուցվածքային հատկանիշների հետ ունեցած ընդհանրության կտրվածքով թույլ է տալիս ընդհուպ առաջադրել դրանց միջև եղած ծագումնաբանական կապի խնդիրները:

Պատմական Հայաստանի տարբեր նահանգների երաժշտապատմողական արվեստի և այդ արվեստի հիմնադիր կրողների ստեղծագործության մասնագիտական քննությունը կարիք ունի անկողմնակալ վերաբերմունքի: Ընդհանուր առմամբ, նորահայտ


Նյութերը թույլ են տալիս եզրակացնել, որ աշուղական արվեստը խոր արմատներ է ունեցել հիշատակված տարածքում և ամուր թելերով կապված է եղել արևելահայության (ներառյալ Անդրկովկասի տարբեր քաղաքներում ապրող և ստեղծագործող հայ արվեստագետները) երաժշտական ավանդույթների հետ:

Բ. Բարտոկ
Օրինակ N 1



Բ Բարտոկ.

Օրինակ N 2



Ջավեն ԹԱԳԱԿՋԱՆ

ՀԱՅՈՑ ՀՈՌՈՎԵԼՆԵՐԻ ՋԱՅՆԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ

ՄԻԱՁԱՅՆԱԿԱՐԳ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես ընդհանուր երաժշտագիտության, այնպես էլ երաժշտական ֆոլկլորագիտության մեջ մեծապես կարևորվում են կառուցվածքների ձայնակարգային (լադ) հենքի բացահայտումն ու գնահատանքը: Դրա միջոցով հնարավոր է դառնում դասակարգել նմուշների երաժշտական մտածողության ելևէջադարձման ընդհանուր օրինաչափությունները: Խնդրի հանգամանալից ուսումնասիրության ճանապարհին անհրաժեշտ է ճշտել ձայնակարգերի անվանումները, գրանցման ձևը կառուցվածքներում, յուրաքանչյուր հնչյունի դերն ու մյուսների հետ ունեցած փոխառնչությունը:

Հայ երաժշտագիտության մեջ ձայնակարգային տեսությունն ածանցվել է հոգևոր երաժշտության ութ ձայների համակարգից, որն իր հիմքային կառուցվածքներում համանման է Արևելքի և Արևմուտքի վաղ միջնադարյան մշակույթում տարածում գտած ձայնային տեսությանը: Ժամանակի ընթացքում (5-17դդ.) այն թե՛ գրանցման կարգի և թե՛ խազ-նիշերի բովանդակության իմաստով վերափոխվել ու հարստացվել է: Հայ եկեղեցական ու ժողովրդական երաժշտության մեղեդային հարստությունների հիմքի՝ ութձայնի տեսության սկզբունքները, ճշգրտվել ու մեկնաբանվել են 19-րդ դարի 70-ականներին Ն.Թաշչյանի աշխատասիրած «Հայոց եկեղեցական ձայնագրության դասագրքում»[1]: Հիմնվելով հայ եկեղեցական ու ժողովրդական երաժշտության ուսումնասիրության իր հարուստ փորձի վրա՝ Կոմիտասն առաջինն էր, որ նկատեց վերջիններիս երաժշտության հենքային կառուցի՝ հնչյունաշարի գոյացման քառյակների շղթայման կարգը[2]: Հետագայում Ք.Մ.Կուշնարյանը, հիմք ընդունելով կոմիտասյան քառյակների շղթայման դրույթը, շարադրեց իր կողմից համակարգված ձայնակարգային տեսությունը[3]: Ըստ աշխատության՝ հայկական երաժշտարվեստի ձայնակարգերի համար հեղի-

---

[1] Ալ.Շահվերդյան, Հայ երաժշտության պատմության ակնարկներ, Երևան, 1959, էջ 343, 344:

[2] Կոմիտաս, Հայ յեկեղեցական յերաժշտություն, Sammelbande der internationalen Muzikgezellschaft, Berlin, 1899, p. 54-64, տե՛ս նաև՝ Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 153-164:

[3] К.Кушнарев. Вопросы истории и теории армянской монодической музыки. Л., 1958, с. 312-601:

նակի ընդունած բնական հնչյունաշարը որոշ ձայնակարգերի կառույցներին, ինչպես հնգալար (պենտախորդ) հիմնառանցքով էոլական-դորիականինը, չի համապատասխանում: Վերջիններս դրքում ներկայացվում են որպես բացառություններ: Բացի այս, կուշնարյանական տեսության մեջ բնական հնչյունաշարից բխող ձայնակարգերի մեծ մասի անվանումները բազմանշանակ են և չփոթմունք ու հարցականներ են առաջացնում: Խնդրին մասնավորապես անդրադարձել է Մ.Ա.Բրուտյանը, որը, հիմնվելով Ռ.Կուշնարյանի վերը նշված ձայնակարգային տեսության վրա, մի շարք հարցերում սեփական մոտեցում է դրսևորել[4]: Այն հիմնականում վերաբերում է ձայնակարգերի չփոթմունք առաջացնող անվանակարգերի եղրաքանութ յանը: Այսպես՝ Ռ.Կուշնարյանը «Լոկրիական հիմնաձայնով ձայնակարգեր» խորագիրը բխեցրել է առանցքային համարվող բնական հնչյունաշարի լոկրիական աստիճաններից, սակայն լոկրիականից բացի, խմբավորել է առաջնային նշանակություն ունեցող եռալար ու քառալար հիմնառանցքով փռյուգիական ձայնակարգերը ևս, որոնք այս կարգի մեջ մեծ մաս են կազմում[5]: Թե՛ լոկրիական և թե՛ փռյուգիական որոշիչների դեպքում հիմնաձայն-ղիմող ձայն հիմնառանցքի կառույցը փռյուգիականն է, որը վերը նշված խորագրի մեջ արտացոլում չի ստացել: Մ.Բրուտյանը, փռյուգիականն ու նույնի 5-րդ ցած աստիճանով տարբերակը, այն է՝ լոկրիական ձայնակարգերը միավորելով, «երեք փռյուգիական քառալարերի (տետրախորդներ) շղթայումից» առաջացած կառույցն անվանել է հիպոփռյուգիական-լոկրիական դեկախորդ (տասնահնչյուն): Վերջինս առավել ճշգրիտ ու ամբողջական է ներկայացնում վերը նշված մեկը մյուսին լրացնող ձայնակարգերը: Այս պարագայում էլ դասագրքում ընդգրկված օրինակները մասնակի են արտացոլում հիպոփռյուգիական-լոկրիական դեկախորդ եղրի բովանդակութ յունը: Դրանց մի զգալի մասը երկակի անվանման՝ փռյուգիական-լոկրիական, անհրաժեշտութ յունը չունի, քանի որ բերված նմուշներից[6] ցած 5-րդ լոկրիական աստիճանը կիրառված

---

[4] Մ.Բրուտյան, Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործութ յուն, Երևան, 1971, էջ 16-58:

[5] К.Кушнарев, указ. соч., с. 420-435.

[6] Մ.Բրուտյան, էջ 31-33, թիվ 32, 34, 36, 37 օրինակները:

Ռ.Կուշնարյանի աշխատութ յան մեջ այս նույն ձայնակարգը լուսաբանող 15 նմուշներից (էջ 421-435, թիվ 124-138) 4-ում է կիրառված փռյուգիական կամ լոկրիական 5-րդ աստիճանը:

Ներկա աշխատութ յան մեջ այս ձայնակարգում չարադրված բազմաթիվ օրինակների քննութ յան արդյունքում ևս ցած 5-րդ՝ լոկրիական աստիճանը սակավ

է միայն մեկ օրինակում: Ասվածից պարզ է դառնում, որ ձայնակարգի հիպոփոյգիական-լոկրիական դեկախորդ անունը կարող է վերաբերել այն սակավաթիվ օրինակներին, որոնցում առկա է 5-րդ ցած՝ լոկրիական աստիճանը: Որպես փոյգիական ձայնակարգի իրական դրության արտացոլում Մ.Բրուտյանը խորհրդի կարգով դասագրքի տողատակում նշել է. «...օրինակը, որը չի ընդգրկում ձայնակարգի լոկրիական կվինտան, պարզության համար կարելի է օգտագործել որպես տերցիային հիմք ունեցող փոյգիական մինոր»[7]: Այս ձայնակարգում փոյգիական եզրն առաջին հերթին արտացոլում է հիմնաձայն-դիմող ձայն եռալար (տրիխորդ) կամ քառալար (տետրախորդ) հիմքը, որն էլ կառույցի որոշիչներից առաջնայինն է: Ասվածից պարզ է դառնում, որ այն նմուշներում, որտեղ 5-րդ աստիճանն ընդգրկված չէ կամ ընդգրկված է իր փոյգիական տարբերակով, հարկ է նշել որպես փոյգիական ձայնակարգ, իսկ այն նմուշները, որտեղ առկա է 5-րդ լոկրիական աստիճանը՝ փոյգիական-լոկրիական:

Չնայած Մ.Բրուտյանի կողմից առաջարկվող հիպոփոյգիական-լոկրիական դեկախորդ բնորոշումը, որպես կառույցի առավել ամբողջական արտահայտություն, մեր կողմից ընդունելի է, սակայն որպես եզր այն մանրամասնեցված է և պարզեցման կարիք ունի: Եթե նկատի ունենանք, որ հայ ավանդական երաժշտության ձայնակարգերն, առանց բացառության, ոչ օկտավային կառույցի հիպոձայնակարգեր են (ընդգրկում են հիմնաձայնից ցած՝ հիմնաձայն ձգտող 1-3 և ավելի հնչյուններ), ապա եզրի այդ բաղադրիչը կարելի է սղել և կիրառել միայն խիստ անհրաժեշտության դեպքում: Սղել կարելի է նաև եզրի դեկախորդ բաղադրիչը: Այն, ձայնակարգի հնչյունածավալի ցուցանիշը լինելով, իր կարգի մեջ հաստատուն չէ և կարող է բաղկացած լինել երեքից մինչև տաս և ավելի հնչյուններից: Երաժշտական ստեղծագործությունների վերլուծության կամ տիպաբանության ժամանակ հնչյունածավալ ցուցանիշն օգտագործվում է որպես այս կամ այն տիպը բնորոշող հատկություն: Այսու, նմուշների ձայնակարգերի ընդհանրական կերպը նշելիս դեկախորդ որոշիչն ավելորդ պետք է նկատել:

Վերջնական արդյունքում կունենանք ձայնակարգի անվանման պարզեցված՝ փոյգիական եռալար՝ հապավումով Փ3 (եռա-վեցալար՝ Փ3/6, եռա-յոթալար՝ Փ3/7), փոյգիական քառալար՝

է հանդիպում:

[7] Մ.Բրուտյան, էջ 32, թիվ 1 տողատակ:

Փ4, կամ դրանց փոյուգիական-լոկրիական՝ Փ/լ3, Փ/լ4 սակավ հանդիպող տարբերակները:

Էոլական հիմնաձայնով ձայնակարգեր բաժինը Ռ.Կուշնարյանը վերնագրել է նախորդի սկզբունքով՝ դրանք ածանցելով բնական հնչյունաշարի էոլական հնչյուններից: Ինչպես նախորդում, այստեղ էլ ձայնակարգերի հիմնաձայն-դիմող ձայն հիմնառանցքը դորիական եռալար, քառալար կամ հնգալար է կազմում, և նրանցով դրսևորված միայն որոշ նմուշներում է կիրառվում ձայնակարգերի 6-րդ էոլական աստիճանը: Պատահական չէ, որ Ռ.Կուշնարյանի աշխատության այս բաժնում բերված 39 օրինակից 27-ում բացակայում է էոլական ձայնակարգերի բնորոշ հատկանիշը՝ 6-րդ կամ 06-րդ աստիճանը, 5-ում՝ թիվ 159, 162, 163, 164, 167, այն դորիական է, թիվ 159ա և 171-ում՝ փոփոխական՝ դորիական-էոլական և միայն թիվ 150,166, 168, 169, 170-ում՝ էոլական[8]:

Ի տարբերություն Ռ.Կուշնարյանի՝ Մ.Բրուտյանն այս խմբի ձայնակարգերը ներկայացրել է երկու՝ *Էոլական մինորներ և Դորիական մինոր խորագրերի ներքո:* Նկատենք, որ մինոր (ինչպես և մաժոր) եզրը, որպես ընդհանրական հասկացություն, դասական երաժշտությանը հատուկ ուրնահնչյուն ձայնակարգերի հիմնական բնորոշիչներից է, և ինչպես Կոմիտասն է գրել. «Ձուր ջանք կլիներ, եթե եվրոպական majeur, mineur կամ dur, moll ձևերին համապատասխանող ելևէջներ որոնենք մեր երաժշտության մեջ էլ. չենք գտնի, որովհետև չկան»[9]:

Որպես էոլական և դորիական մինորների դրսևորում՝ Մ.Բրուտյանն առաջարկում է հիպոդորիական-էոլական դեկախորդ եզրը, որտեղ էոլական բաղադրիչը ենթադրում է ձայնակարգում էոլական 6-րդ կամ 06-րդ աստիճանների առկայություն: Սակայն, այստեղ էլ, բերված 13 օրինակներից միայն մեկը՝ թիվ 54-ն է պարունակում էոլական 6-րդ աստիճանը: Թիվ 45 և 48-ում առկա է դորիական 06-րդ աստիճանը, իսկ թիվ 55-ում 6-րդ աստիճանը փոփոխական՝ դորիական-էոլական է: Մնացած 9 օրինակներում 6-րդ կամ 06-րդ աստիճանների չգոյության բերումով ձայնակարգի էոլական լինելը մնում է առկախ[10]: Ըստ մեր որդեգրած սկզբունքի՝ Մ.Բրուտյանի առաջարկած անվանումից, ինչպես փոյուգիական ձայնակարգերի պարագայում էր, հարկ է

[8] К.Кушнарев, указ. соч., с. 435-495.

[9] Կոմիտաս, Երգեցողություն. ս.Պատարագի, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 139:

[10] Մ.Բրուտյան, էջ 34-39:

սղել հիպո և դեկախորդ բաղադրիչները:

Կարևորելով ձայնակարգերի հիմնառանցքի դորիական եռալար, քառալար կամ հնգալար կառույցները՝ դորիական համակարգում կունենանք դորիական եռալար-Դ3, դորիական քառալար-Դ4 և դորիական հնգալար-Դ5 կառույցները: 6-րդ, 06-րդ էոլական, կամ փոփոխական՝ 6-րդ, 06-րդ դորիական-էոլական աստիճանների առկայության պարագայում, որպես տարբերակ, դորիականին կհավելվի էոլական բաղադրիչը՝ Դ/Է3, Դ/Է4, Դ/Է5[11]:

Ք.Կուշնարյանի ձայնակարգերի առաջին՝ հիմնական շրջանի երրորդ խումբը *Մաժոր ձայնակարգեր* խորագիրն ունի: Ինչպես նշեցինք, մաժորն իր արմատական հասկացության մեջ համմանման է մինորին և հարիր է դասական երաժշտությանը: Հավանաբար, Ք.Կուշնարյանն այստեղ այն կիրառել է որպես գունեղանգ մի ընդհանուր հասկացություն, որն այս խմբի ձայնակարգերի կառուցվածքային արմատական հատկանիշները չի բնորոշում:

Մ.Բրուտյանը դասագրքում փոքր-ինչ պարզեցրել, նաև տիպական երանգ մտցնելով՝ ձայնակարգերի կուշնարյանական անվանը հավելել է *իոնական-միքսոլիդիական մաժորներ* եռադեմ որոշիչը: Կիրառված մաժորները բաղադրիչը, իոնական-միքսոլիդիականի կրկնությունը լինելով, ավելորդ է: Նկատի առնելով ձայնակարգերի հիմնառանցքը Մ.Բրուտյանի առաջարկած անվանումից հարկ ենք համարում թողնել միայն *իոնական* բնորոշումը: *Միքսոլիդիական* բաղադրիչը, որը կապված է ձայնակարգի 7-րդ աստիճանի հետ, մեր երգարվեստում սակավ հանդիպելով, չի կարող հանդես գալ հիմնական բնորոշիչների շարքում: Այն, ինչպես նույն կարգն ունեցող լիդիական որոշիչը, որպես երկրորդական հատկանիշ, ձայնակարգերի անվանակարգում պետք է մասնակի նշում ունենա:

Իոնական ձայնակարգերի հիմնառանցքը կարևորելով՝ մեր անվանակարգում կունենանք հիպոիոնական-Հիպոի-, *իոնական եռալար-Ի3*, *եռալար անհեմիոն-Ի3անհեմ*, *եռա-հնգալար-Ի3/5* և

---

[11] Մեր որդեգրած սկզբունքի մեջ բոլ էոլեյան պահպանվում են Ք.Կուշնարյանի կամ Մ.Բրուտյանի կիրառած ձայնակարգերի հիմնառանցք, հիմնաձայն, դիմող ձայն, հիմնաձայնի և դիմող ձայնի ոլորների հչյունակարգեր եղերն ու դրանց իմաստային ըմբռնումները: Իսկ ձայնակարգերի անվանումներն ու դրանց գրաֆիկ պատկերումը, որ մեր կողմից չտկվում, հստակեցվում ու դրանց գրաֆիկ պատկերումը, որ մեր կողմից չտկվում, հստակեցվում ու պարզեցվում է, նպատակամղված է հոդվածների երբեմն բարդ, բազմաձայնակարգ կառույցների վերլուծությունն ու ուսումնասիրությունը դյուրացնելուն:

Ի3/05, *իոնական քառալար-Ի4, իոնական հնգալար-Ի5 և դրանց իոնական-միքսոլիդիական-Ի/մ, նաև իոնական-լիդիական-Ի/լ ենթատեսակները:*

Ք.Կուշնարյանի ձայնակարգերի առաջին չրջանի վերջին խմբի երկակի ձայնակարգեր (Двойственные лады) *անվանումը*[12] *բխում է հիմնաձայնից վեր մեծ՝ մաժոր եռյակի և հիմնաձայնից վեր փոքր՝ փոյուգիական մինոր երկյակի համատեղումից առաջացած կառույցից: Այլ կերպ ասած՝ երկակի եզրը եվրոպական դասական երաժշտության բնորոշումներից բխող դրսևորում է և ձայնակարգերի, դասական ըմբռնմամբ գունեղանգը նշելով՝ չի արտացոլում կառուցվածքային առանձնահատկությունը:*

Մ.Բրուտյանը, ձայնակարգերի հիմնառանցքի քառալարի (տետրախորդի) տեսակը նկատի ունենալով, վերտառել է Հարմոնիկ լադեր[13]*: Վերջինս ուղղակիորեն կապվում է միջնադարյան տետրախորդային տեսության հետ և, ըստ էության, համընկնում է մեր չափորոշիչներին: Այս հիմքով, ըստ հիմնառանցքի մեծության, հարմոնիկ ձայնակարգերն ունենում են քառալար՝ չ4 և հնգալար՝ չ5 կառույցներ*[14]*:*

Այսպիսով, մինչ այժմ ձայնակարգերի և նրանց ենթակառույցների, երբեմն խճողված բազմազանություն ներկայացնող անվանակարգերը, համաձայն մեր որդեգրած չափորոշիչների, հետևյալ դասակարգումը կունենան.

1. Փոյուգիական եռալար՝ Փ3, եռա-վեցալար՝ Փ3/6, եռա-յոթալար՝ Փ3/7, քառալար՝ Փ4 ձայնակարգերն իրենց փոյուգիական-լոկրիական՝ Փ/լ տարբերակներով.

2. Դորիական եռալար՝ Դ3, քառալար՝ Դ4, հնգալար՝ Դ5 ձայնակարգերն իրենց դորիական-էոլական՝ Դ/է տարբերակներով.

3. Իոնական եռալար՝ Ի3, եռալար անհեմիտոն՝ Ի3-անհեմ.,

---

[12] К.Кушнарев, указ. соч., с. 519:

[13] Մ.Բրուտյան, էջ 44:

[14] Հիմնառանցքից բացի, հայոց ավանդական երաժշտարվեստում հարմոնիկ քառալարը հաճախ հանդիպում է ձայնակարգերի առանցքային կառույցներից դուրս (վեր կամ վար ձայնաստիճանների խրոմատիկ ձևափոխումների հետևանքով առաջացած մեծագույն երկյակ պարունակող հարմոնիկ քառալարով կառույցները, որոնք անփոփոխ են չալաղրանքի ողջ ընթացքում, Ք.Կուշնարյանը դիտել է որպես երկրորդ կամ երրորդ խմբի ձայնակարգերի (круг ладов) դրսևորում կամ հիմնական ձայնակարգերից ածանցված տարբերակ(К.Кушнарев, с. 535-548): Հոռովելների պարագայում այդօրինակ ձայնակարգային տարատեսակներն առատ են և հանդիպում են հատկապես բազմաձայնակարգ կառույցներում:

եռա-հնգալար՝ Ի3/5, *քառալար՝* Ի4, *հնգալար՝* Ի5 *ձայնակարգերն իրենց իոնական-միքսոլիդիական՝* Ի/մ *և իոնական-լիդիական՝* Ի/լ *տարբերակներով:*

4. Հարմոնիկ քառալար՝ Հ4, *հնգալար՝* Հ5 *ձայնակարգեր:*

ՁԱՅՆԱԿԱՐԳԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՆՇԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հայ ավանդական երաժշտության հրատարակված նմուշների նոտային գրառումներն առ այսօր ընթացել են երկու ճանապարհով: Կոմիտասը, Արշակ Բրուտյանը, հատկապես Կոմիտասի սաներից Միհրան Թումաճանը, մասամբ՝ Սպիրիդոն Մելիքյանը («Հայ ժողովրդական երգեր և պարեր» երկհատորյակում ընդգրկված նմուշների մի զգալի մասը) և Հակոբ Հարությունյանը («Մանյակ» ժողովածուի պարունակած նմուշների կեսից ավելին) նախընտրել են գրանցումները կատարել Կոմիտասի հետագծած <u>հիմնական հնչյունաշարի</u> համակարգում, որտեղ նմուշների տոնայնական, մասամբ՝ ռեգիստորային իրական հնչումը չի գրանցվել, փոխարենը նմուշները շարադրվել են մեկ, երբեմն էլ երկու տոնայնություններում: Միքսոլիդիական՝ g, a, h, <u>c1</u>, d1, e1, <u>f1</u>, g1, a1, <u>b1</u>, c2, d2, <u>es2</u>, f2, g2, <u>as2</u>, հնչյունաշարի պարագայում փոյուգիական, փոյուգիական-լոկրիական ձայնակարգ ունեցող նմուշները գրի են առնվել e 1, կամ a 1, դորիական, դորիական-էոլական ձայնակարգ ունեցողները՝ d1, g1, իոնական, իոնական-միքսոլիդիական կամ իոնական-լիդիական ձայնակարգ ունեցողները՝ f1, b1 (հազվադեպ c1), հարմոնիկ ձայնակարգերովը՝ a1 հիմնաձայներով[15]: Սկսած Սպ.Մելիքյանից («Վանա ժողովրդական երգեր», «Շիրակի երգեր» և այլն)՝ նմուշների գրառումն ընթացել է փոլկլորի գրառման միջազգային չափանիշներով՝ տոնայնական և ռեգիստորային իրական հնչումին համապատասխան[16]: Նյութի ձայնակարգային վերլու-

---

[15] Մ.Թումաճանի «Հայրենի երգ ու բան» քառահատոր ժողովածուում նոտային գրառումները կատարվել են a, h, cis1, d1, e1, fis1, g1, a1, h1, c2, d2, e2, f2, g2, a2, b2՝ միքսոլիդիական բնական հնչյունաշարի հիմքով: Ձայնակարգերը գրի են առնվել նախորդ կարգի համեմատ մեկ տոն վեր:

[16] «Հայ երկրագործի աշխատանքային երգեր» համահավաք ժողովածուն կազմելիս հրապարակի վրա եղած նմուշները թողել ենք անփոփոխ՝ բնագրերի նոտային գրաֆիկ պատկերմամբ: Այսու, դրանց մեծ մասը, այդ թվում և Կոմիտասի գրառումները (28 նմուշ), չարադրված են բնական հնչյունաշարի համակարգում: Արվեստի ինստիտուտի ձայնագրարանի ձայներիզային ձայնագրություններից վերծանված անտիպ նմուշները նոտագրվել են իրական տոնայնական և *ռեգիստորային* հնչողությամբ:

ծուլթյան համեմատական ուսումնասիրությունն կատարելիս անհրաժեշտ էր գտնել գրանցման համակարգ, որի միջոցով հնարավոր կլիներ գրառել հոռովվելների թե՛ պարզ-միաձայնակարգ ու երկձայնակարգ և թե՛ բարդ-բազմաձայնակարգ չարադասությունները[17]*: Այս խնդիրը լուծելու նպատակով ձայնակարգերի նշանային համակարգի ընտրությանն հարցում հիմնվել ենք Կ.Խուդաբաշյանի ստեղծած «Մոդուլների համակարգի»* (Система модулей) *տեսության վրա*[18]*: Դրանում կարևորել ենք ձայնակարգերի տրամաբանական դիֆերենցում ստացած՝*

1. Քանակական ցուցիչներից՝

- *Ձայնաշարի ձայնամիջոցային (ինտերվալ) կազմը.*
- *Հնչյունների միջև ձայնամիջոցային հեռավորությունները.*
- *Ձայնաշարի ձայնաստիճանների քանակը.*
- *Հնչյունաշարի ծայրի աստիճանների միջև ձայնամիջոցի մեծությունը* (амбитус).
- *Ձայնակարգի հիմնառանցքը* (Остов)

2. Որակական ցուցիչներից՝

- *Կայուն աստիճանը (հիմնաձայնը).*
- *Համեմատական կայուն աստիճանը (դիմող ձայնը կամ ձայները).*
- *Անկայուն աստիճանները (միջնահնչյուններ, հիմնաձայնի ու դիմող ձայնի ոլորտի հնչյուններ)*
- *Ըստ բարձրության ձայնաստիճանների տարբերակումը:*

Համակարգի չրջանակ (Рамка) *քանակական հատկանիշը, նաև որակական հատկանիշներից սկզբնահնչյուն, վերջնահնչյուն և զարդահնչյուն* (опевающий звук) *որակումները երկրորդային համարելով՝ աշխատության մեջ չենք կիրառել կառույցնե-*

---

[17] Վերլուծությունն ընթացել է Կոմիտասի, Քր.Կուչնարյանի, Վ.Հոլովակու, Կ.Խուդաբաշյանի և այլոց կողմից կիրառվող ամբողջական կառույցի բաղադրիչների փոխհարաբերումներից ձայնակարգային կերտվածքը դուրս բերելու ճանապարհով: Նշված սկզբունքն օգնել է խուսափել հնարավոր անճշտություններից, հստակ գրանցել և արժևորել յուրաքանչյուր բաղադրիչ-օղակը (звено)՝ իր բոլոր հատկանշական կողմերով այլ կառույցների հետ ունեցած փոխհարաբերության մեջ: Այսու, հնարավոր է եղել ամբողջությունը ճշտիվ տողատել, ապա և ավարտուն մխոք արտահայտող մասերի տրոհել:

[18] К.Худабашян. Система модулей и ее использование в описании ладовой структуры народной песни. Традиции и современность. Ереван, 1996, с. 127-140.

ըի գերհագեցած պատկերագրումից խուսափելու՝ պարզեցնելու, ձայնակարգերի համեմատական վերլուծությունը դյուրացնելու նպատակով:

Ձայնակարգերի նշանային համակարգի մեջ ձայնածավալներն ավելի ցայտուն ու դիտարկելի դարձնելու նպատակով Կ.Խուդաբաշյանն 8-նյակի (օկտավա) սահմաններում առաջարկել է երկրաչափական նշանների համակարգ[19]: Նկատի ունենալով ձայնածավալների, նույն թվային արժեքի դեպքում որակական տարբեր դրսևորումները[20] հրաժարվել ենք առաջարկվող նշանային համակարգից՝ փոխարինելով այն ավելի պարզ ու ճշգրիտ կառույցներով: Լիովին ընդունելով նմուշների ձայնակարգերի ըստ օղակների վերլուծության խուդաբաշյանական մոդուլային համակարգման սկզբունքը որոշ փոփոխություններով այն կիրառել ենք հոռովելների բազմաձայնակարգ կառույցները գրառելիս: Միաձայնակարգերի պարագայում, ավելորդ ծանրաբեռնվածությունից խուսափելով, դրանք ներկայացրել ենք Կ.Խուդաբաշյանի աշխատության «Ադյուսակ 4»-ում (էջ 136)՝ բերված մոդուլների միաձայնական հանրագումարը ներկայացնող՝ z,= 21223 բանաձևային գրառմանը համարժեք:

ՆԵՐԿԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԻՐԱՌՎՈՂ ՆՇԱՆԱԳԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

1. Ձայնակարգի հնչյուններն իրենց քանակի չափով նշանակվել են շեղագծերով (8 հնչյունի դեպքում կունենանք 8 շեղագիծ (/ / / / / / / /).

2. Ձայնակարգի հիմնահնչյունն արտահայտված «Հ» հապավումով՝ փոխարինում է հնչյունաշարի համապատասխան շեղագիծը (/ / Հ / / / /).

3. Ձայնակարգի դիմող ձայնը կամ ձայները արտահայտված Դ հապավումով՝ փոխարինում են հնչյունաշարի համապատասխան շեղագծերը (/ / Հ / Դ / Դ /).

4. Ձայնակարգի ձայնաստիճանների միջև ձայնամիջոցների թվային արժևորման կարգը համանման է Կ.Խուդաբաշյանի կողմից վերը նշված աշխատության մեջ կիրառված Լենդվաիի կիսատոնների քանակով հաշվարկելու համակարգին[21] (հոնական եռա-

---

19 Եռահնչյուն ծավալը պատկերվում է անկյունաձև գծով, քառահնչյունը՝ ուղիղ, հնգահնչյունը՝ վեր ուղղված կորագծով և այլն:

20 Օրինակ՝ քառյակը (кварта) կարող է լինել պարզ (чистая), մեծագույն (увеличенная) կամ փոքրագույն (уменьшенная) և այլն:

21 1/2 տոնը =1-ի, 1 տոնը = 2-ի, 1 և 1/2 տոնը = 3-ի և այլն:

հնգալար՝ Ի3/5 ձայնակարգի օրինակ՝ / 2 / 1 Հ 2 / 2 Դ 2 / 1 Դ 2 /).

5. Ձայնակարգի հիմնաձայն-դիմող ձայն հիմնառանցքն ամբողջությամբ ցայտուն դարձնելու նպատակով ընդգծել ենք հոծ տառատեսակով (/ 2 / 1 Հ 2 / 2 Դ 1 / 2 Դ 2 /).

6. Ձայնամիջոցների թվերին համապատասխանեցրել ենք չեղագծերի միջև տարածությունը (/ 1 / 2 / 3 / 4 / և այլն): Այս կերպ ձայնակարգերի առանձին գրանցման ենթակա ձայնաստիճանների փոխակերպումները, նաև չարունակական կապի մեջ գտնվող երկու և ավելի ձայնակարգերի հորիզոնական գրանցմամբ ուղղահայաց հարաբերումը դառնում է տեսանելի ու դյուրըմբռնելի:

7. Ձայնակարգերի հիմնական աստիճանների հպանցիկ՝ գրեթե աննշան հնչյունափոխությունները և հնչյունազարդերը ձայնամիջոցի թվային դրսևորմամբ (1 կամ 2)՝ դրվում են փակագծերում (/ 2 /1 Հ(1) 2 / 2 Դ 1 / 2 Դ(1) 2 /).

8. Սքեմատիկ պատկերին կից ներկայացվում է կառույցների սղագիրը: Օրինակ՝ պարզ 8-նյակ հնչյունածավալ ունեցող իոնական եռա-հնգալարը նշվում է՝ Ի3/5 ՋՄ = 12 կտ (պարզ 8):

Համահավաքի ամենատարբեր ծավալներում (1-ից մինչև 22-ը պարբերություն) չարադրված 140 հոռովելների ձայնակարգային ուսումնասիրությունը կատարվել է ըստ բարդության աստիճանի՝ տրոհելով միաձայնակարգ (46.76%՝ 65 նմուշ), երկձայնակարգ (32.37%՝ 43 նմուշ) և բազմաձայնակարգ (20.87%՝ 32 նմուշ) կառույցների:

ՊԱՐԶ ԿԱՄ ՄԻԱՁԱՅՆԱԿԱՐԳ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Հոռովելների միաձայնակարգ, պարզ կառույցները հարմար ենք նկատել քննության առնել ըստ ձայնակարգերի տեսակների: Հայգմ՝ 65 նմուշների 24.6 %-ը չարադրված են փռյուգիական, 32.3 %-ը՝ դորիական, 12.3 %-ը իոնական, 30.76 %-ը՝ հարմոնիկ ձայնակարգերում:

Փռյուգիական ձայնակարգում չարադրված կառույցների համապատկերն է.

1.				Հ 1 /	2	Դ	2	/	ՋՄ = 5 կտ (պարզ 4)
2. / 1 /		4		Հ 1 /	2	Դ			ՋՄ = 8 կտ (փ 6)
3. /		4		Հ 1 /	2	Դ	2	/	ՋՄ = 9 կտ (մ 6)
4. / 1 /	3		/ 1	Հ 1 /	2	Դ	2	/	ՋՄ = 10 կտ (փ 7)
5 /		4		Հ 1 /	2	Դ	2	/	ՋՄ = 9 կտ (մ 6)
6.			/ 1	Հ 1 /	2	Դ	2	/ 1 /	ՋՄ = 7 կտ (փքց 6)

7.				/ 1	Հ 1 /	2	Դ	2	/ 1 /						ՁՄ = 7 կտ (փքց 6)
8.		/ 1 /	2	Հ 1 /	2	Դ	2	/							ՁՄ = 8 կտ (փ 6)
9.				/ 1	Հ 1 /	2	Դ(1)2	/							ՁՄ = 6 կտ (փքց 5)
10.					Հ 1 /	2	Դ	2	/						ՁՄ = 5 կտ պարզ 4)
11.					Հ 1 /	2	Դ	2	/ 1 /						ՁՄ = 6 կտ (փքց 5)
12.					Հ 1 /	2	Դ 1	/							ՁՄ = 4 կտ (փքց 4)
13.					Հ 1 /	2	Դ 1	/	2	/					ՁՄ = 6 կտ (փքց 5)
14.					Հ 1 /	2	Դ	2	/ 1 /						ՁՄ = 6 կտ (փքց 5)
15.					Հ 1 /	2	Դ								ՁՄ = 3 կտ (փ 3)
16.	/	2	/ 1	Հ 1 /	2	Դ									ՁՄ = 6 կտ (փքց 5)

Բերվածից երևում է, որ միաձայնակարգ կառույցներում Փ4 ձայնակարգում նմուշներ չեն գրանցվել:

Եռալար հիմնառանցք ունեցող 16 նմուշներից միայն թիվ 15-ում հնչյունածավալը հիմնառանցքն (Հ-Դ) ընդգրկող փոքր եռյակից չի անցնում: Առավելագույն հնչյունածավալը 10 կիսատոն կամ փոքր յոթնյակ, ընդգրկված է նուլնպես մեկ նմուշում (թիվ 4): Միջին հնչյունածավալը, որ տատանվում է 5-8 կիսատոների՝ պարզ քառյակից մինչև մեծ վեցյակի սահմաններում, զգալի մաս է կազմում (ամբողջի 62,4 %-ը):

Ձայնակարգի բնորոշ հատկանիշներից է 4-րդ աստիճանի առկայությունը: Այն ընդգրկող 13 օրինակից 10-ում (թիվ 1, 3, 4, 5, 6, 7, 8, 10, 11, 14) բնական է, երկուսում (թիվ 12,13)՝ իջեցված (ալտերացված), մեկում (թիվ 9)՝ փոփոխական (և՛ բնական, և՛ իջեցված-ալտերացված):

Փ3 ձայնակարգում առանձնանում է 1 հիմնական տիպային բանաձև, որն ունի երկու տարբերակ: Հիմնական տիպային բանաձևն ընդգրկում է ամբողջի 37.5 %-ը (թիվ 1, 8, 9, 10, 15, 16):

/(1) 2 /(2)1 Հ 1 / 2 Դ 2 /:

Բնորոշվում է հիմնաճայնի ոլորտի 06 և 07 աստիճանների հարաբերակցության երկակի՝ ձայնամիջոցային (/(1) 2 /(2)1 Հ) դրսևորումներով, որը նշված ձայնոլորտում առաջ է բերում իոնական, երբեմն՝ դորիական երանգավորում:

Ա 1 տարբերակը բնորոշվում է 5-րդ ցած՝ լոկրիական աստիճանով. (թիվ 6, 7, 11, 12, 13, 14) և ընդգրկում է ամբողջի 37.5%-ը:

/ 1 / 2 Հ 1 / 2 Դ 2 / 1 /

Այս տարբերակի կրճատ գրառման համար կիրառել ենք երկակի Փ/Լ3 (փոյուգիական/լոկրիական) գրառման ձևը: Որպես երկրորդային հատկանիշ՝ տարբերակում, երբեմն (թիվ 12, 13) 5-րդ ցածրից բացի, կիրառվում է 4-րդ ցածր աստիճանը, որը պետք

է նշել փակագծերում՝ Փ/Լ 3 (-4) կարգով:

Ա. 2 տարբերակը, որ ամբողջի 25%-ն է կազմում (թիվ 2, 3, 4, 5), բնորոշվում է հիմնաճայնի ոլորտի հարմոնիկ քառալար կառույցով՝

/1 / 3 /1Հ1 / 2 Դ 2 /,

որն իր ամբողջության մեջ դրսևորվել է միայն թիվ 4-ում[22]: Մյուս 3 օրինակներում այն թերի է. կիրառում չի գտել ճայնակարգի 07 աստիճանը: Թերի՝ 1 / 4 Հ կառույցը Ա. 2 տարբերակի հաճախ կիրառվող հատկանիշներից է:

Ներկայացվող դորիական հիմնառանցքով միաճայնակարգ նմուշների համապատկերում, նկատի ունենալով հիմնառանցքի մեծությունը, ամբողջը տրոհել ենք տիպային 3 խմբի.

Ա. Եռալար հիմնառանցքով՝ Դ3,

1.(17) Հ 2 / 1 Դ 2 / ՁՄ = 5 կտ (պարզ 4)
2.(18) / 2 /1 Հ 2 / 1 Դ ՁՄ = 6 կտ (փքգն 5)

Բ. Քառալար հիմնառանցքով՝ Դ4,

3.(19) Հ 2 / 1 / 2 Դ(1) 2 / ՁՄ = 7 կտ (պարզ 5)
4.(20) Հ 2 / 1 / 2 Դ 2 / ՁՄ = 7 կտ (պարզ 5)
5.(21) Հ 2 / 1 / 2 Դ 2 / ՁՄ = 7 կտ (պարզ 5)
6.(22) Հ 2 / 1 / 2 Դ 2 / ՁՄ = 7 կտ (պարզ 5)
7.(23) Հ 2 / 1 / 2 Դ 3 / ՁՄ = 8 կտ (փ 6)

---

[22] Ք.Կուչնարյանի հայտնի աշխատության մեջ նույնպես տեղ է գտել *Փ3*-ի այս տարբերակը, էջ 429, 430:
Համահավաքում հանդիպում են այս կառույցի հնչյունաշարի /1/ 3 /1/1 / 2 / 2 / կերտվածքն ունեցող չարադասությունները, որտեղ ճայնաստիճանների նշանակության ու դերի չեզոտքրումը տարբեր լինելով՝ ճայնակարգային հիմնառանցք է ձևավորվում Հ1/ 3 /1Դ ներքևի հարմոնիկ քառալարը, իսկ վերնամասի /1/ 2 / 2 / փոլոքիական քառալարը հանդես է գալիս որպես դիմող ճայնոլորտի հնչյունային համակարգ: Վերջինս, երբեմն ճայնաստիճանների հնչառության փոխակերպումների հետևանքով առանցքային դառնալով ու կիրառության փոխակերպումների հետևանքով առանցքային դառնալով ու կիրառության փոխակերպումների հետևանքով առանցքային դառնալով ու եղրակացնելով կառույցը, որակվում է որպես *Ֆ4* կատարվող զարտուղում: Հանդիպում է և հակառակ պատկերը, երբ սկզբնամասում որպես հիմնառանցք հաստատում է գոնում փոլոքիական Հ1/ 2/2Դ քառալարը, իսկ վերի հարմոնիկ քառալարը՝ Հ1/ 3 /1Դ հանդես է գալիս եղրակացնող դերում: Այս անգամ զարտուղում է գրանցվում փոլոքիականից հարմոնիկ: Փոլոքիական ու հարմոնիկ ճայնակարգերի այսօրինակ փոխհարաբերությունը գերակա համարելով Մ.Բրուսյանը (էջ 128) նշում է, որ *բոլոր հոռովելները, չնչին բացառություններով, ծավալվում են կամ այս լադերից որևէ մեկում, կամ դրանց զուգորդումներում:* Մինչդեռ, ինչպես հավաքածուի ճայնակարգային վերլուծությունն է ապացուցում, այդպիսիք ամբողջության մի մասն են կազմում:

8.(24) / 2 Հ 2 / 1 / 2 Դ 2 / ՁՄ = 9 կտ (մ 6)
9.(25) / 2 Հ 2 / 1 / 2 Դ 2 / ՁՄ = 9 կտ (մ 6)
10.(26) / 2 Հ 2 / 1 / 2 Դ 2 / ՁՄ = 9 կտ (մ 6)
11.(27) Հ 2 / 1 / 2 Դ ՁՄ = 5 կտ (պարզ 4)
12.(28) Հ 2 / 1 / 2 Դ ՁՄ = 5 կտ (պարզ 4)
13.(29) Հ 2 / 1 / 2 Դ ՁՄ = 5 կտ (պարզ 4)
14.(30) Հ 2 / 1 / 2 Դ– – 2– – – / ՁՄ = 7 կտ (պարզ 5)
15.(31) / 1 / 2 Հ 2 / 1 / 2 Դ 2 / ՁՄ = 10 կտ (փ 7)

Գ. Հնգալար հիմնառանգքով՝ Դ5, ձայնակարգեր

16.(32) Հ 2 / 1 / 2 / 2 Դ
ՁՄ = 7 կտ (պարզ 5)
17.(33) Հ 2 / 1 / 2 / 2 Դ 2 / 1 / 2 /
ՁՄ = 12 կտ (պարզ 8)
18.(34) / 2 / 1 / 2 Հ 2 / 1 / 2 / 2 Դ 1 /
ՁՄ = 13 կտ (փ 9)
19.(35) / 2 / 1 / 2 Հ 2 / 1 / 2 / 2 Դ 1 /
ՁՄ = 13 կտ (փ 9)
20.(36) / 2 / 1 / 2 Հ 2 / 1 / 2 / 2 Դ 1 /
ՁՄ = 13 կտ (փ 9)
21. (37) Հ 2 / 1 / 2 / 2 Դ
ՁՄ = 7 կտ (պարզ 5)

Ինչպես փոլուգիական ձայնակարգերի պարագայում, այստեղ էլ տիպային բանաձևերից յուրաքանչյուրը ներկայացվում է հնարավոր տարբերակներով: Եռալար հիմնառանգք ունեցող Ա խումբը, որ դրսևորվել է ընդամենը 2 օրինակով, տիպային մեկ բանաձև է, որը նույն օրինակների ձայնակարգային կառույցների միավորումն է.

/ 2 / 1 Հ 2 / 1 Դ 2 /

Բնորոշը 06 և 07 հիմնաձայնի ոլորտի համակարգում դորիական եռալար կառույցն է, նաև 4-րդ դորիական աստիճանը: Բանաձևի ձայնածավալը մեծ չէ. սահմանափակվում է փոքր վեցյակով, ինչը հատուկ է եռալար կառույց ունեցող ձայնակարգերին:

Քանակապես գերակայող (70%) քառալար՝ Դ4 *հիմնառանգքով Բ տիպն ունի 3 դրսևորում: Հիմնական բանաձևը, որ ձայնակարգի հիմնառանգքն է ընդգրկում, արտացոլվել է թիվ 11, 12, 13, մասամբ էլ 14 նմուշներում:*

Հ 2 / 1 / 2 Դ

Բ1 տարբերակում (թիվ 3, 4, 5, 6, մասամբ էլ 14) հիմնառանգքից բացի կիրառում է գտել 5-րդ դորիական աստիճանը.

Հ 2 / 1 / 2 Դ 2 /

Բ2 տարբերակը, որ նախորդներից ավելի ընդարձակ հնչյունածավալով է (մեծ 6-յակ)՝ ընդգրկում է հիմնաձայնի ոլորտի դորիական/էոլական 07 աստիճանը (թիվ 8, 9, 10, 15):

/ 2 Հ 2 / 1 / 2 Դ 2 /

Որպես ոչ էական հավելում՝ նշենք թիվ 15-ում 06 դորիական աստիճանի առկայությունը:

Գ տիպը, որ ընդգրկում է Դ5 -ում չարադրված 6 նմուշ, հարկ է եղել ներկայացնել երեք տարբերակով:

Միայն հիմնառանցքն ընդգրկող թիվ 16-ը և 21-ն ենք որակել որպես հիմնական կառույց.

Հ 2 / 1 / 2 / 2 Դ:

Դիմող ձայնի ոլորտի դորիական քառալարն ընդգրկող թիվ 17-ն առանձնացրել ենք որպես Գ1 տարբերակ

Հ 2 / 1 / 2 / 2 Դ 2 / 1 / 2 /[23] :

Գ2 տարբերակը (թիվ 18, 19, 20) բնորոշվում է հիմնաձայնի ոլորտի դորիական քառալար ու դիմող ձայնի ոլորտի էոլական 6-րդ աստիճանն ընդգրկող կառույցներով.

/ 2 / 1 / 2 Հ 2 / 1 / 2 / 2 Դ 1 /

Վերոհիշյալ տարբերակի երկդիմի դրանցումը կունենա՝ Դ/է5, դիմող ձայնից վեր էոլական 6-րդ և հիմնաձայնից ցած 06 դորիական աստիճանն ընդգրկելու բերումով[24]: Տարբերակի համար բնորոշ է լայն՝ 13 կիսատոն (փոքր 9-յակ) հնչյունածավալը, որը մեր օրինակներում նպաստում է մեղեդիակերտ տարրերի բարդ համակցումներին:

Իոնական ձայնակարգում չարադրված սակավաթիվ նմուշները տրոհել ենք Ա՝ 62,5%-ը կազմող եռալար՝ Ի3 և Բ՝ 37,5%-ն ընդգրկող եռա-հնգալար՝ Ի3/5 հիմնառանցքով տիպերի:

1(38)		Հ	2	/	2	Դ	3	/	*Ի 3* ՁՄ = 7 կտ (պարզ 5)
2(39)	/ 1	Հ	2	/	2	Դ 1 /			*Ի 3* ՁՄ = 6 կտ (փքգն 5)
3(40)	/ 1	Հ	2	/	2	Դ 1 /			*Ի 3* ՁՄ = 6 կտ (փքգն 5)
4 (41)		Հ(1)	2	/	2	Դ	3	/	*Ի 3* ՁՄ = 7 կտ (պարզ 5)
5(42)		Հ	2	/	2	Դ 1 /			*Ի 3* ՁՄ = 5 կտ (պարզ 4)
6(43)	Հ	2	/	2	Դ 1 /	2	Դ	2	/ *Ի 3/5* ՁՄ = 9 կտ (մ 6)

[23] *Դ5 ձայնակարգի Գ1 տարբերակը, թեև համահավաքում մեկ օրինակով է ամրագրված, սակայն, ընդհանրապես, բնորոշ է հայ գեղջուկ երգին (տե՛ս Մ.Բրուտյան, էջ 39, 40):*

[24] *Ձայնակարգերի նման երկդիմի կառույցները հայ ավանդական երգարվեստի համար բնականոն են:*

Հ 3 / 1 /
7(44) / 2 / 2 / 1Հ 2 / 2 Դ 1 / 2 Դ 2 /
/ 3 Հ *Ի 3/5* ՁՄ = 14 կտ (ֆ 9)
8(45) / 1 Դ 2 / 2 / 1Հ 2 / 2 Դ 1 / 2 /
/ 5 / 2 Հ *Ի 3/ 05* ՁՄ = 13 կտ (փ 9)

Իոնական եռալար հիմնառանցքով Ա տիպն ունի (թիվ 1-ից 5-ը) երկու դրսևորում:

Հիմնական կառույց ենք ընդունել հիմնաձայնից կիսատոն վար և դիմող ձայնից կիսատոն վեր հնչյուններ պարունակող կառույցը (թիվ 2, 3 և 5 նմուշները): Բնորոշ հատկանիշը փոքրագույն (уменьшенная) *5-յակն է.*

/ 1 Հ 2 / 2 Դ 1 /

Ա1 տարբերակը (թիվ 1 և 4) բնորոշվում է իր անհեմիտոն չարադասութ յամբ.

Հ 2 / 2 Դ 3 /

Կառույցում, առանց 4-րդ աստիճանի կիրառության, Ի3 հիմնառանցքին հավելվում է 5-րդ աստիճանը՝ որպես քառաստիճան ձայնաշարի վերջին հնչյուն: Շարքի Ա1 խմբի նմուշներից թիվ 4-ում տեղ է գտել 2-րդ ցած աստիճանի հպանցիկ կիրառությունը: Այն, որպես հիմնաձայնը հաստատող վերևի օժանդակ, հնչյունազարդի դեր է կատարում և ձայնակարգի ընդհանուր կառույցի վրա չի անդրադառնում: Հայ ավանդական երգարվեստում անհեմիտոն ձայնակարգի հիմնաձայնը, դիմող ձայնը, երբեմն նաև 5-րդ աստիճանը, կես վեր կամ կես վար հնչյուններով հաճախ հնչյունազարդվում են:

Իոնական ձայնակարգի Բ Ի3/5 տիպը ևս ունի երկու դրսևորում: Հիմնական բանաձևը, որ շարքի թիվ 7-ի ձայնակարգային ամբողջական կառույցն է, հատուկ է թիվ 6-ին ևս.

/ 2 / 2 / 1Հ 2 / 2 Դ 1 / 2 Դ 2 /

Տարբերությունն այն է, որ թիվ 6-ում կիրառված չեն հիմնաձայնի ոլորտի 05, 06, 07 աստիճանները: Բանաձևը բնորոշող հիմնաձայնի ոլորտի հնչյունների իոնական քառալար կառույցի, ինչպես նաև 6-րդ իոնական աստիճանի ընդգրկումից հնչյունածավալը ընդլայնվելով մեծ իննյակ է կազմում: Նման ձայնածավալ հանդիպում է միջնադարյան հայ երաժշտարվեստի առավել զարգացած տեսակներում, որոնք նախահիմքում աղերսվում են հնագույն երգատեսակների, այդ թվում և այսօրինակ հոռովել-ների հետ:

Բ1 տարբերակը, որ դրսևորվել է շարքի թիվ 8 օրինակում,

բնորոշվում է երկրորդ՝ ներքևի 05 դիմող ձայնով (Ի3/ 05).

/ 1 Դ 2 / 2 / 1 Հ 2 / 2 Դ 1 / 2 /:

Այս բանաձևն իր ամբողջությամբ մեծ մոտ է օկտավային ձայնակարգերին: Ընդամենը ձայնակարգի 5-րդ աստիճանը նմուշում դիմող ձայնի կարգավիճակ չունի և մտնում է առաջին դիմող ձայնի ոլորտի (ձայնակարգի 3-րդ աստիճանի) փոլուգիական եռալար համակարգի մեջ, սակայն ներքին բովանդակությամբ ընկալվում է որպես երկրորդ դիմող ձայն: Այն 8-նյակ ցած՝ որպես դիմող ձայն (ձայնակարգի 05-րդ աստիճանը) լիարժեք հաստատում ունի: Այլ կերպ ասած՝ ձայնակարգում 05 և 5-րդ աստիճանները գրեթե նույն (դոմինանտային) դրսևորումն ունեն: Ինչպես հիմնական կառույցում, այստեղ էլ հնչյունածավալը մեծ է (փոքր իննյակ), նպաստում է ձայնելուէջային դարձումների հարուստ դրսևորումներին:

Իոնական ձայնակարգի Բ տիպի երկու տարբերակներին բնորոշ են ներձայնակարգային, հպանցիկ (ոչ հաստատուն), հիմնական հնչյունաշարերից տարբեր, ելուէջադարձումները (թիվ 6-ում՝ Հ 3 / 1 Դ, թիվ 7-ում՝ / 3 Հ, թիվ 8-ում՝ / 5 / 2 Հ)[25]*, որոնք, հարստացնելով հիմնաառանցքի հնչյունների տեսականին, չեղումների կամ զարտուղումների չեն հանգեցնում:*

Համահավաքի միաձայնակարգ կառույցներում հարմոնիկ ձայնակարգն ունեցող երկու տասնյակ նմուշները տրոհել ենք՝ Ա. 85 %-ը կազմող՝ Հ4-ի (թիվ 1–ից մինչև 14-ը, 16, 17 և 18-ը) երեք և Բ. Հ5-ի (թիվ 15, 19, 20) երկու տարբերակների:

1(46)			Հ 1 /	3	/ 1 Դ	2	/	ՁՄ = 7կտ(պարզ 5)
2(47)	/	2	Հ 1 /	3	/ 1 Դ	2	/	ՁՄ = 9 կտ (մ 6)
3(48)		/ 1	Հ 1 /	3	/ 1 Դ	2	/	ՁՄ = 8 կտ (փ 6)
4(49)	/ 1 /	2	Հ 1 /	3	/ 1 Դ	2	/ 1 /	ՁՄ = 11 կտ (մ 7)
5(50)		/ 1	Հ 1 /	3	/ 1 Դ	2	/ 1 /	ՁՄ = 9 կտ (մ 6)
6(51)	/	2	Հ 1 /	3	/ 1 Դ	2	/	ՁՄ = 9 կտ (մ 6)
7(52)		/ 1	Հ 1 /	3	/ 1 Դ	2	/ 1 /	ՁՄ = 9 կտ (մ 6)
8(53)		/ 1	Հ 1 /	3	/ 1 Դ	2	/ 1 /	ՁՄ = 9 կտ (մ 6)
9(54)	/	2	Հ 1 /	3	/ 1 Դ	2	/ 1 /	ՁՄ = 10 կտ (փ 7)

[25] Թիվ 6-ում, որպես *երկրորդական, հպանցիկ* նկատված հնչյունները կարճատև փոխում են հիմնաառանցքը Հ 3 / 1 Դ կառույցով, որտեղ բանասացը, կիրառելով 2-րդ բարձրացված (ալտերացված) աստիճանը, թերի հարմոնիկ քառալարի երանգ է առաջացնում: Այսօրինակ հնչյունային դարձումները, տևողական չարունակականության հետևանքով ծավալների մեծացման և ընդլայնման բերումով, կընկալվեին որպես զարտուղում կամ չեղում:

10(55) / 1 / 2 Հ 1 / 3 / 1 Դ 2 / 1 / ՁՄ = 11 կտ (մ 7)
11(56) / 1 / 2 Հ 1 / 3 / 1 Դ 2 / 1 / ՁՄ = 11 կտ (մ 7)
12(57) / 2(1)Հ 1 / 3 / 1 Դ 2 / 1 / ՁՄ = 10 կտ (փ 7)
13(58) / 1 Հ 1 / 3 / 1 Դ 2 / 1 / 2 ՁՄ =11 կտ (մ7)
14(59) / 1 / 2(1)Հ 1 / 3 / 1 Դ 2 / 1 /
{ 1 / 3 / ՁՄ=12կտ(պարզ 8)
15(60) Հ 1 / 3 / 1 / 2 Դ 1 / 2 / ՁՄ=1 1կտ (մ 7)
{ 2 / 2 /
16(61) / 1 Հ 1 / 3 / 1 Դ 2 / 1 / 1 / ՁՄ = 13 կտ (փ 9)
/ 4 }
17(62) / 2 Հ 1 / 3 / 1 Դ 2 / ՁՄ = 9 կտ (մ 6)
/ 2 }
18(63) / 1 / 2 Հ 1 / 3 / 1 Դ 2 / 1 / ՁՄ = 13 կտ (փ 9)
{ - - - - - - - 5 - - - - - - - /
19(64) Հ 1 / 3 / 1 / 2 Դ 1 / 2 / 2 /
ՁՄ= 12 կտ(պարզ 8)
20(65) / 1 Հ 1 / 3 / 1 Դ 2 Դ 1 / 2 /
/ 2 / 1 } ՁՄ = 11 կտ (փքց 8)

Ա տիպի հիմնական կառույցը, ունենալով մեծ 6-յակ հնչյունածավալ՝ բնորոշվում է հիմնաձայնից 1 տոն ցած և դիմող ձայնից մեկ տոն վեր հնչյունների (07 և 5 աստիճաններ) ընդգրկումով (թիվ 2, 6, 17):

/ 2 Հ 1 / 3 / 1 Դ 2 /

Սրանց են հարում փոքր-ինչ տարբերվող թիվ 1-ը, որտեղ 07 աստիճանը կիրառում չի գտել, և թիվ 9-ն ու 12-ը, որտեղ 5-րդից բացի կիրառում ունի նրանից կես տոն վեր 6-րդ աստիճանը: Վերջիններս միասին դորիական եռալար՝ Դ 2 / 1 /, կառույցն ունեն:

Փոքրագույն 8-նյակ հնչյունածավալ ունեցող Ա1 տարբերակում (թ. 4, 10, 11, 14, 18), կիրառում են գտել հիմնաձայնից ցած փոյգիական և դիմող ձայնից վեր դորիական եռալարերը, որոնցից մեկը մյուսի հայելատիպ արտացոլումն է:

/ 1 / 2 Հ 1 / 3 / 1 Դ 2 / 1 /

Այստեղ 06 և 6-րդ աստիճանների խրոմատիկ կիսատոն տարբերությունից գոյացած փոքրագույն 8-նյակը նկատելի ելևէջային լարվածություն է հաղորդում կառույցներին[26]: Բերված օրինակներում հիմնատանջքից դուրս տեղ են գտել ձայնաստի-

[26] Տե՛ս Ք.Կուշնարյան, էջ 519՝ e-[g-c]-es բանաձևը:

ճանապհային փոխակերպումները (թիվ 14-ում՝ Դ 1 / 3 /, թիվ 18-ում Դ - 5-/), որոնք, երկորդային հպանցիկ լինելով, չեն փոխում ձայնակարգի տիպային կերտվածքը:

Ա2 տարբերակը նախորդից տարբերվում է 07 ձգտող տոնի հիմնաձայնից կիսվար դասավորությամբ (թիվ 3, 5, 7, 8, 13, 16):

/ 1 Հ 1 / 3 / 1 Դ 2 / 1 /

Տիպային այս բնորոշիչը, ձայնակարգի 6 աստիճանների հետ փոքրագույն 7-յակ, կազմելով խիստ լարվածություն է հաղորդում կառույցին[27]: Այս տարբերակը ևս հարուստ է հոռովելներին բնորոշ հիմնառանցքից դուրս կիրառվող, երկորդական, հպանցիկ հնչյունափոխություններով[28]:

Հարմոնիկ ձայնակարգերի Բ խմբի հիմնական՝ 5 բանաձևն ընդգրկում է պարզ 8-նյակ ձայնածավալ

Հ 1 / 3 / 1 / 2 Դ 1 / 2 / 2 /,

արտացոլում է գտել բերված աղյուսակի թիվ 15 և 19 օրինակներում[29]: Այն բնորոշվում է հիմնաձայնից ցած հնչյունների բացակայությամբ և դիմող ձայնի ոլորտի հնչյունների փոյագիական քառալար (թիվ 15 ում՝ եռալար) կառույցով, որը հնչյունածավալն ընդլայնում է մինչև պարզ 8-նյակ[30]:

Հարմոնիկ ձայնակարգերի Բ1 տարբերակը (թիվ 20), բացի այն, որ բնորոշվում է երկու հնգալար և քառալար, դիմող ձայների մեծից փոքր հաջորդիվ ընթացքով՝

---

[27] Քառալար հիմնառանցքով հարմոնիկ ձայնակարգի հիմնաձայնից կիսվար՝ ալտերացված 07 աստիճանի առկայության և կառույցի համար տիպական լինելու հանգամանքը թե՛ Ռ.Կուչնարյանի (էջ 519-535), թե՛ Մ.Բրուտյանի (էջ 44-47, 124-135) և թե՛ այլոց աշխատություններում չենք հանդիպել:

[28] Թիվ 13-ում դիմող ձայնից վեր կիրառված է դորիական / 2 / 1 / 2 / քառալարը: Թիվ 16-ում 7-րդը, 6-րդ աստիճանից կիսվեր գոնվելով, կազմում է ոչ սովորական, տոն-կիսատոն-կիսատոն՝ /2/1 /1/ լարված գուներանգ ունեցող քառալար, որի վերջնահնչյունը հիմնաձայնից կիսվար 07 աստիճանի հետ կազմում է փոքրագույն 7-նյակ, իսկ հիմնահնչյունից 2 տոն ցած(4 կիսատոն-մեծ եռյակ) հպանցիկ կիրառվող 06 աստիճանի հետ՝ փոքր 9-յակ: Այս երևույթը մեր երգարվեստում հազվագեպ է հանդիպում:

[29] Թիվ 19 օրինակում վերջավորության մեջ, որպես հավելյալ երկորդ *kadans*, առանձնանում է դիմող ձայնից վեր, կիսատոն-տոն-տոն (1-2-2) կառույցն ունեցող փոյագիական քառալար դարձվածքը: Նրա վերջնահնչյունը, որն ամբողջ երգի վերջնահնչյունն է, ուշնյակ վեր կրկնելով ձայնակարգի հիմնահնչյունը հոռովելի նախընթաց յոթնահնչյուն շարահարությանը օկտավային ձայնակարգերին հատուկ ավարտ է հավելում:

[30] Ռ.Կուչնարյանի և Մ.Բրուտյանի, Ռ.Ամբարյանի աշխատություններում՝ ավանդական երգարվեստում հարմոնիկ հնգալար՝ 5 ձայնակարգի կիրառության մասին տեղեկություններին չենք հանդիպում:

/1Հ1/ 3 /1Դ 2 Դ1/ 2 /

Հ5/4[31], ինչպես հարմոնիկ ձայնակարգերի Ա2 տարբերակում է, պարունակում է գեղջուկ երգարվեստում սակավ հանդիպող հիմնաձայնից կիսվար ձգտող 07 աստիճանը, որը դիմող ձայնորդի 6-7 աստիճաններից կազմված փոյուգիական եռալարի բարձրակետի հետ մեծ լարում պարունակող փոքրագույն 8-նյակ է կազմում[32]:

Այսպիսով, հոռովելների «համահավաք ժողովածուի» հիմքով կատարված միաձայնակարգ կառույցների քննությունից պարզվում է, որ.

1. Հայ ավանդական երաժշտարվեստի 4 հիմնական ձայնակարգերից միայն իոնական ձայնակարգերն են համեմատաբար սակավ հանդիպում:

Դորիական և հարմոնիկ ձայնակարգերը քանակապես գրեթե հավասար են, իսկ փոյուգիականները, նախընթաց երկուսից փոքր-ինչ պակաս լինելով, բոլոր միաձայնակարգերի 26,6%-ն են կազմում:

2. Նշված 4 ձայնակարգերի տեսականուց պակասում են փոյուգիական և իոնական քառալարերը: Հազվադեպ են իոնական եռա-հնգալար՝ Ի3/05-ը և հարմոնիկ հնգալար Հ5 ձայնակարգերը:

3. Միաձայնակարգերում հատկանշական տիպային հիմնական 8 (Փ3, Դ3, Դ4, Դ5, Ի3, Ի3/5, Հ4, Հ5) բանաձևերն իրենց տարբերակներով 19 կառույց են ներկայացնում, որոնք ապացուցում են հայոց հոռովելների պարզ ձայնակարգային կերտվածքներում առկա բազմազանության փաստը: Ինչպես երևաց համահավաքում, քանակական անհամաչափությունը բխում է դորիական և հարմոնիկ ձայնակարգերի գերակայությունից, որը, սակայն, այլ ձայնադարաններում ամբարված նյութերով համալրելու պարագայում ենթակա է փոփոխության:

---

31 Նման ձայնակարգային զուգորդումը, հայ գեղջուկ երաժշտության հատկանիշներից մեկը լինելով, առավել հաճախ հանդիպում է նույն հիմնաձայնն ունեցող դորիական եռալար-քառալար կամ քառալար-հնգալար ձայնակարգերի հաջորդականությամբ:
Տե՛ս Ք.Կուշնարյան, էջ 550, 551: Մ.Բրուտյան, էջ 51:

32 Նմուշում հպանցիկ կիրառված է 2-րդ իոնական աստիճանը՝ / (2) /1Դ, որը թեթևակի երանգ է հավելում ձայնակարգի հիմնառանցքին:

Մուրադ ՀԱՍՐԱԹՅԱՆ

ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԹՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ԳՄԲԵԹՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ճարտարապետությունը հայ ժողովրդի միջնադարյան մշակույթի կարևորագույն բնագավառն է: Նրա բազմաթիվ հուշարձաններում ցայտուն արտահայտվել են հայկական արվեստի ինքնատիպությունը, բարձր մակարդակը և գեղարվեստական հարուստ ավանդները:

Հայկական ճարտարապետության ազգային կերպարը ձևավորվեց վաղ միջնադարում, երբ 301 թ. Հայաստանն աշխարհում առաջինն ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն: Ճարտարապետությունը IV–VII դդ. հայ արվեստի առաջատար ճյուղն էր: Թեպետ երկրում ստեղծագործ աշխատանքը VI և VII դդ. բազմիցս ընդհատվում էր Սասանյան Պարսկաստանի և բյուզանդական զորքերի ներխուժումներից, բայց VII դ. կեսից սկսած՝ արաբների ասպատակություններից, բայց պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում տեղի է ունեցել հայ ճարտարապետության իսկական վերելք: Դա շարունակվեց մինչև VII դ. վերջը, երբ Հայաստանում հաստատվեց արաբական տիրապետության ծանր լուծը, որը երկու դար բերեց երկրի տնտեսության և մշակույթի անկմանն ու չինարարության գրեթե ընդհատմանը:

Հայաստանի՝ IV–VII դդ. ճարտարապետության զարգացման պատմությունը բաժանվում է երկու ենթափուլի: Առաջինն ընդգրկում է IV դ. սկզբից մինչև VI դ. վերջը և բնորոշվում է մոնումենտալ կառույցների բոլոր հիմնական տիպերի ստեղծմամբ, ինչպես նաև հելլենիստական շրջանի ճարտարապետությանը հատուկ շատ գծերի պահպանմամբ: Երկրորդ ենթափուլը VI դ. վերջից մինչև VII դ. վերջը, բնորոշվում է հայկական ճարտարապետության ազգային ինքնատիպության լրիվ ձևավորումով, որն ուղենշեց նրա հետագա զարգացումը փաստորեն մինչև XX դարը:

Վաղ միջնադարում հայկական ճարտարապետությունը ձևավորվեց և զարգացավ եկեղեցական շենքերի կառուցումով: Կատարելով նոր կրոնի պահանջը՝ Հայաստանի ճարտարապետները երկրում քրիստոնեության ընդունումից հետո առաջին դարերում բազմաթիվ եկեղեցիներ կառուցեցին՝ հավատացյալ ժողովրդի հոգևոր պահանջների բավարարման համար: Եվ IV–VII դդ. եկեղեցիների օրինակով միայն կարելի է պատկերացում կազ-

մել հայկական ճարտարապետության ազգային առանձնահատկությունների մասին: Մանավանդ եթե նկատի ունենանք, որ IV-VII դարերից Հայաստանում ոչ մի աշխարհիկ չենք կանգուն վիճակում չի պահպանվել:

IV դարից սկսած՝ Հայաստանի եկեղեցական ճարտարապետության մեջ հստակ նկատվում է նրա զարգացման հիմնական ուղղությունը՝ բազիլիկների հետ կառուցվում են նաև գմբեթավոր եկեղեցիներ, առաջին հերթին՝ կենտրոնագմբեթներ: Գմբեթավոր եկեղեցաշինությունը բուռն զարգացավ Հայաստանում հատկապես քրիստոնեության՝ գմբեթը որպես սրբազան երկնքի խորհրդանշան սրբագործելուց հետո: Գմբեթը դարձավ Աստծո տան՝ եկեղեցու կենտրոն, աղոթասրահը ծածկող և շինության կերպարի, ծավալատարածական հորինվածքի կարևորագույն բաղադրիչ տարր:

Վաղ միջնադարում Հայաստանում՝ ողջ քրիստոնյա աշխարհում տարածված գմբեթավոր եկեղեցիների տիպերի հետ («ազատ խաչ», քառամույթ գմբեթավոր բազիլիկա) կառուցվեցին հայկական ճարտարապետության ստեղծագործություն հանդիսացող եկեղեցական շենքերի ինքնատիպ հորինվածքներ, որոնք եղան հայկական շինարարական արվեստի խոշոր ավանդը համաքրիստոնեական մշակույթում: Դրանք են քառախորան գմբեթավոր քառակուսի («մաստարայատիպ»), քառախորան, միջնակյալ խորշերով («հռիփսիմեատիպ»), քառախորան, չորս գմբեթակիր մույթերով («էջմիածին–Բագարանի տիպ»), շրջանի մեջ ներգծված քառախորան («զվարթնոցատիպ») և «գմբեթավոր դահլիճ» տիպի եկեղեցիները:

Վաղ միջնադարից պահպանված հայկական բազմաթիվ գմբեթավոր հուշարձաններից, սակայն, քչերն են որոշակի թվագրված շինարարական արձանագրություններով և պատմիչների հայտնած տեղեկություններով: 405 թ.՝ հայոց գրերի ստեղծումից հետո, առաջին շինարարական արձանագրությունը պատկանում է Տեկորի Ս.Սարգիս վկայարանին (478–490 թթ.): VI դարից շինարարական արձանագրություններ չեն պահպանվել, և միայն VII դ. դրանք զետեղվել են եկեղեցիների պատերին, ընդ որում՝ քչերի: Եվ չթվագրված հուշարձանների կառուցման մոտավոր ժամանակը հայկական ճարտարապետության հետազոտողները որոշում են թվագրված եկեղեցիների հետ համեմատական վերլուծություն կատարելիս՝ դիտարկելով շինության հորինվածքային, կոնստրուկտիվ առանձնահատկությունները, դեկորը և այլն:

Այս գիտավերլուծական աշխատանքում կարևոր է հուշար-

ձանի գմբեթը, որի ձևերը, հարդարանքը օգնում են հնարավորինս ճիշտ որոշել այս կամ այն գմբեթավոր եկեղեցու կառուցման դարը և նույնիսկ տասնամյակները: Սակայն նման աշխատանքը, միաժամանակ, դժվար է, որովհետև թվագրված գմբեթավոր հուշարձանները բավական քիչ են, ընդ որում դրանցից մի քանիսի գմբեթը չի պահպանվել՝ օրինակ Արուճի Ս.Գրիգոր (662-666 թթ.), Բագարանի Ս.Թեոդորոս (624-631 թթ.), Ավանի Ս.Հովհաննես (591 թ.) եկեղեցիներինը, իսկ VII դ. երկրորդ կեսի հայկական ճարտարապետության զարգացման համար մեծ դեր խաղացած Զվարթնոցի տաճարը (643-652 թթ.) ընդհանրապես ավերակ է:

Գմբեթի միջոցով վաղքրիստոնեական հայկական եկեղեցիների թվագրության հարցը ճարտարապետական գրականության մեջ մինչև օրս, փաստորեն, չի քննարկվել: Հայկական միջնադարյան ճարտարապետության պատմության առաջին չարադրող Նիկոլայ Տոկարսկին խոսում է միայն VII դ. առաջին կեսի և նույն դարի երկրորդ կեսի հայկական հուշարձանների գմբեթների տարբերության մասին, որը արտահայտվել է դրանց դեկորատիվ հարդարանքում[1]: Գմբեթի միջոցով վաղմիջնադարյան հայկական հուշարձանների թվագրման համար անհրաժեշտ է դիտարկել Հայաստանում գմբեթի առաջացման գործընթացը, ծագումնաբանությունը, IV-VII դդ. դրա ձևերի փոփոխությունը:

Հայերենում «գմբեթ» բառը ծագել է պարսկերեն «գումբաթ» բառից, որը վկայում է IV-V դդ. Հայաստանի և Պարսկաստանի ճարտարապետական սերտ կապերը: Ըստ արևելյան խոշորագույն արվեստաբան և ճարտարապետության մասնագետ, ավստրիացի գիտնական Յոզեֆ Ստրժիգովսկու վաղ միջնադարում քառակուսի հիմքի վրա բարձրացող գմբեթի ձևը Պարսկաստանից է թափանցել Հայաստան, որտեղ և այն վերամշակվել և կատարելագործվել է, ու գմբեթատակ քառակուսուց տրոմպների միջոցով թմբուկով գմբեթի ձևը Արևմուտք է անցել Հայաստանից[2]: Անվանի հայագետ Գարեգին Հովսեփյանը գրում է, որ «Հինգերորդ դարի մեր թարգմանական և ինքնուրույն գրականության մեջ «գմբեթ» բառը գործադրված է այնքան հաճախ և այնպիսի հոլովումներով և բարդություններով, որ ցույց է տալիս, թե այդ գաղափարն ու բառը ամենասովորական հասկացություններն են

---

[1] Н.М.Токарский. Архитектура Армении IV-XIV вв. Ереван, 1961, с. 168.
[2] J. Strzygowski. Die Baukunst der Armenier und Europa. Wien, 1918.

ժամանակի գրողների և թարգմանիչների համար»[3]: Հետևաբար, գմբեթավոր կառույցների գոյությունը Հայաստանում միանգամայն հնարավոր է V դ. էլ վաղ, այսինքն՝ IV դ.: Դրա ապացույցները կան հայ պատմիչների մոտ: Ագաթանգեղոսը գրում է, որ IV դ. առաջին տարիներին Էջմիածնի Մայր տաճարի հիմնադրման նախօրեին Գրիգոր Լուսավորիչի տեսիլքում երևացել է չորս սյուների վրա բարձրացող գմբեթ «Եւ ի չորեցունց սեանցն ի վերայ խաչիցն կամարի զարմանատեսք ի միմեանս կապեցան և ի վերայ այնորիկ դեսի գմբեթաձև խորանարդ ամպեղէն չինուած...»[4]:

Պատմիչ Ստեփանոս Օրբելյանը թողել է IV դ. առաջին կեսում Հայաստանում կառուցված մի ուշագրավ գմբեթավոր տաճարի մանրամասն նկարագրությունը, որի հիման վրա բավական հավաստի կարելի է վերակազմել նրա թե՛ հատակագիծը և թե՛ ծավալատարածական հորինվածքը: Դա Սյունիքի Մայր եկեղեցին է՝ Շաղաթի Ս.Ստեփանոս տաճարը (որը չի պահպանվել, բայց դեռ կանգուն է եղել պատմիչի օրոք), որի ինքնատիպ կերպարը նույնիսկ զարմացրել է այնպիսի փորձառու հոգևորականի, ինչպիսին մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանն է: Նա գրում է, որ IV դ. պարսից Շապուհ արքայի կողմից Սյունյաց աշխարհի ասպատակության ժամանակ Անդոկ իշխանի հրամանով եկեղեցում պահվեցին երկրամասի գանձերը, և կառույցը ծածկեցին հողաբլրով: Այն քսանհինգ տարի հետո վերստին բացվում է 378 թ. Անդոկի որդի Բաբիկի կողմից «Եւ հրամայեաց Բաբիկ՝ Սիւնեաց տէր, բազմութեանն պեղել զհող բլրին. և տեսին ի ներքոյ եկեղեցի քարկոփ չքնաղաչէն որ ոչ ուրէք էր այնպիսի հրաշաճարտար չինուած, գմբէթն և խորանքն չորեքկուսի, մի յարկ, մի տանիք և ոչ ուրոյն որպէս և այլ գաղատոսաչէն եկեղեցիք»[5]: Իսկապես, այսպիսի ձևն իր նմանը չի ունեցել հայկական հազարավոր եկեղեցիների շարքում, իսկ նրա խաչաձև գմբեթավոր հորինվածքը ոչ միայն հնագույնն է Հայաստանում, այլև առաջիններից է քրիստոնեական ճարտարապետության մեջ ընդհանրապես:

Երևանից ոչ հեռու Ողջաբերդ գյուղի մոտ, պեղումներով (Ն.Տոկարսկի) բացվել է իր ձևերով չափազանց արխայիկ գմբեթավոր եկեղեցի: Այն հատակագծում ճիշտ քառակուսի է (4,1x4,1 մ), աստիճանաձև գետնախարսխի վրա բարձրացող, որի խորանը արտաքուստ չեշտված է եռանիստ ծավալով: Գտնվել են տրոմպներ,

---

[3] Գ.Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, Գ պրակ, Նյու Յորք, 1944:

[4] «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», ՃԲ, 737:

[5] Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, ԺԱ:

որոնց բավական փոքր չափերը վկայում են նրանց՝ անմիջականորեն գմբեթի կիսագնդի մեջ դրված լինելու մասին: Իր առանձնահատկություններով Ողջաբերդի եկեղեցին թվագրվում է IV-V դդ.:

Մինչև վերջին տարիները համարվում էր, որ հայկական գմբեթները դրվել են բացառապես քառակուսի հիմքի վրա, և վաղմիջնադարյան Հայաստանի ճարտարապետությանն անծանոթ են հռոմեական տիպի չրջանաձև դամբարանները: Սակայն այդ տեսակետը վերանայվեց, երբ 1991 թ. գիտական չրջանառության մեջ դրվեց իր հորինվածքով և քանդակներով վաղմիջնադարյան հայկական ճարտարապետության բացառիկ հուշարձան Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի սահմանամերձ Բարեկամավան գյուղի մերձակա լեռան գագաթին գտնվող[6]: Այս կառույցը ծառայում է չրջակա բնակչության համար որպես ուխտատեղի և կոչվում է «Բարձրեալ խաչ»: Հուշարձանն ունի աշտարակաձև ծավալ՝ արտաքուստ բազմանիստ (14 նիստանի), ներսից գլանաձև, գետնախարսխի վրա բարձրացող և ծածկված է ներսից ու դրսից սֆերիկ ձև ունեցող գմբեթով: «Բարձրեալ խաչի» ամենակարևոր և ուշագրավ մանրամասը նրա ողջ պարագծով ընթացող, կենդանակերպ բարձրաքանդակներով իրականացված քիվն է: Պատի մակերեսի հարթությունից զգալի դուրս եկող ծավալներով պատկերված են ցուլի, խոյի, շան, եղջերուի, վարազի գլուխներ, ընդմիջված ծաղկեշղթայի և ականթի քանդակներով:

«Բարձրեալ խաչի» թե՛ հատակագծային ու ծավալատարածական հորինվածքը, թե՛ պատկերաքանդակներով քիվը ոչ միայն իրենց նմանակը չունեն հայկական ճարտարապետության մեջ, այլև Անդրկովկասի և ընդհանրապես Հայաստանի մերձակա երկրների արվեստում. «Բարձրեալ խաչը» հայկական միջնադարյան չինարարական արվեստում միակ կոթողային կառույցն է, որի գմբեթը իրականացված է չրջանաձև հիմքի վրա: Այն իր զուգահեռներն ունի անտիկ ճարտարապետության ռոտոնդաձև դամբարաններում: Կարելի է ենթադրել, որ «Բարձրեալ խաչը» եղել է դամբարան, հետագայում մատուռ-ուխտատեղիի վերաիմաստավորված, որի ժամանակ արևելյան լուսամուտը ստացել է խաչաձև բացվածք: Այսօր Բարեկամավանի և հարևան գյուղերի բնակիչները ուխտագնացության ժամանակ հուշարձանի մեծ զոհաբերություններ են կատարում՝ հեթանոսական ժամանակներից մնացած

---

[6] G.Karakhanyan. Ancient Armenian Cupola Memorial. .Atti del Quinto simposio internazionale di arte armena. Venezia, 1991:

սովորութիւմբ:

Շաղաթի և Ողջաբերդի առանց թմբուկի գմբեթով եկեղեցիները, Բարեկամականի շրջանաձև հիմքի վրա դրված գմբեթով դամբարանը եղակի մնացին հայկական ճարտարապետութեան մեջ: Վ դ. սկսած՝ ձևավորվեց հայկական եկեղեցիների գմբեթի կանոնիկ ձևը՝ թմբուկով, քառակուսի հիմքի վրա դրված:

Հայկական եկեղեցական ճարտարապետութեան մեջ մեզ հայտնի ամենավաղ քարե գմբեթը պատկանում է Տեկորի տաճարին (Տեկորի Ս. Սարգիս վկայարան): Տեկորը գտնվում է պատմական Շիրակում՝ Անիից մոտ 20 կմ հարավ-արևելք (այժմ՝ Թուրքիայի տարածքում): Ողջ քրիստոնեական ճարտարապետութեան համար հանգուցային այս հուշարձանը այսօր արդեն գոյութիւն չունի. 15 դար կանգուն մնալուց հետո այն քանդվեց XX դ., և այժմ նրանից միայն հետքերն են մնացել:

Տաճարը բարձրացել է բազմաստիճան գետնախարսխի վրա, հյուսիսից, արևմուտքից և հարավից ունեցել է բաց սյունասրահներ, արտաքուստ չեչտված եռանիստ Ավագ խորանի (արևելյան աբսիդի) երկու կողմերում՝ թաղածածկ ավանդատներ: Ստորին՝ 10-11 շարքերը կառուցված են մուգ գույնի, իսկ վերնի՝ մասը՝ դեղնավուն տուֆ քարով: Զորս հզոր մուլթերի վրա բարձրացել է խորանարդաձև գմբեթը՝ իր ձևով միակը հայկական ճարտարապետութեան մեջ:

Ըստ չինարարական արձանագրութեան՝ Տեկորի տաճարը կառուցել է իշխան Սահակ Կամսարականը Ամենայն հայոց կաթողիկոս Հովհան Մանդակունու գահակալութեան օրոք (478-490թթ.): Տաճարը կառուցվել է որպես բազիլիկա մինչև 481թ.՝ պարսիկների դեմ հայերի բարձրացրած ապստամբութիւնը, հետո ընդհատվել և վերսկսվել ու ավարտվել է որպես քառամույթ գմբեթավոր բազիլիկա՝ դառնալով այդ հորինվածքն ունեցող առաջին կառույցներից մեկը եկեղեցական ճարտարապետութեան մեջ ընդհանրապես: Հնավանդութիւնը Տեկորի գմբեթի ձևերում արտահայտվում է, առաջին հերթին, կիսագնդաձև ծածկի բացակայութեամբ: Սա Հայաստանում մոնումենտալ չենքում քարե խոշոր գմբեթի կառուցելու առաջին փորձերից է, և այստեղ նկատվում է հայկական ժողովրդական բնակելի տան՝ փայտե գմբեթների ճարտարապետական ձևերի ազդեցութիւնը: Տեկորի սեղանաձև ութ նիստերով գմբեթի թմբուկը հիմքում հենվում է մեկ քարի մեջ փորված չորս փոքր տրոմպների վրա: Անկյունային նիստերի աստիճանաբար լայնացման և գլխավոր նիստերի նեղացման միջոցով վերևում ստեղծվում է գմբեթի հավասարակողմ ութանիստ

հիմքը: Սա գմբեթավորման առաջին փորձերից էր, և հետագայում VI-VII դդ., հայ ճարտարապետները հաջորդ գմբեթավոր բազիլիկաներում, ինչպես նաև կենտրոնագմբեթ եկեղեցիներում տրոմպներն արդեն տեղադրել են գմբեթակիր կամարների վերև:

Բառանիստ, խորանարդաձև ծավալով գմբեթը հայկական ճարտարապետության մեջ այլևս չհանդիպեց: Կա տեսակետ, որ էջմիածնի Մայր տաճարը սկզբում նույնպես ունեցել է նմանատիպ գմբեթ, սակայն սա մնում է միայն որպես ենթադրություն: Խորանարդաձև գմբեթը եղել է ոչ միայն հայկական ճարտարապետության մեջ կիրառված նախնական ձևը, այլև այդպիսի գմբեթ նույն Vգ. կառուցվել է, օրինակ, Ռավեննայում՝ Գալլա Պլացիդայի դամբարանում: Պետք է նշել, որ Տեկորի տաճարն ունի բացառիկ արժեք նաև հայ վիմագրության համար: Նրա չինարարական արձանագրությունը, որը փորագրվել է Մեսրոպ Մաշտոցի մահվանից ընդամենը չորս տասնամյակ անց, հավանաբար հենց Մաշտոցի աշակերտներից մեկի ձեռքով, հավաստի պատկերացում է տալիս մեսրոպյան այբուբենի տառաձևերի ճնշող մեծամասնության մասին՝ մի բան, որ հայագիտության համար ունի անանց արժեք:

Խորանարդաձև գմբեթից բացի, վաղքրիստոնեական հայկական ճարտարապետության մեջ կա նաև մի այլ եզակի և բացառիկ ձև ունեցող գմբեթ՝ վեցանիստ թմբուկով: Դա վերջին տարիներին հետազոտված, համեմատաբար լավ պահպանված Արագածի Գրիգորաշեն եկեղեցին է: Հուշարձանն ունի միևնույն չափի, պայտաձև հատակագծով վեց խորան, որոնք ավարտվում են շեշտված պայտաձև, կրկնակի գմբեթարդներով: Անցումը գմբեթատակ տարածությունից դեպի ներսից և դրսից վեցանիստ գմբեթի թմբուկն իրականացված է երկու շարք տրոմպներով: Թմբուկի քիվը երկշարք է՝ ստորին շարքն ատամնաձև, վերինը՝ կամարային: Եկեղեցին պահպանել է նաև իր կղմինդրե ծածկը: Ճարտարապետության հնավանդ առանձնահատկությունների հիման վրա Արագածի Գրիգորաշեն եկեղեցին թվագրվում է VI դ. վերջով:

Հայկական եկեղեցական ճարտարապետության մեջ գմբեթի ձևն իր ավարտուն տեսքը ստացավ փաստորեն VII դ.: Եվ չինարարական արձանագրություններով թվագրվող գրեթե բոլոր գմբեթավոր հուշարձանները պատկանում են այդ հարյուրամյակին: Ցավոք, թվագրվող այդ կառույցներից չատ քչերի գմբեթներն են պահպանվել և հասել մեզ: Շինարարական արձանագրություններով թվագրված են Թալինի Ս.Աստվածածին և Ալամանի Ս.Աննա փոքր խաչաձև գմբեթավոր եկեղեցիները, քառամույթ գմբե-

թավոր բազիլիկաներ՝ Մրենի Կաթողիկե, Էջմիածնի Ս.Գայանե և Բագավանի Ս.Հովհաննես եկեղեցիները, կենտրոնագմբեթ հուշարձաններ՝ Էջմիածնի Ս.Հռիփսիմե, Սիսիանի Ս.Հովհաննես և Եղվարդի Զորավար եկեղեցիները: Ահա բոլոր այն վաղքրիստոնեական հայկական գմբեթավոր հուշարձանները, որոնց գմբեթները պահպանվել են: Հետևաբար անհրաժեշտ է դիտարկել դրանց ճարտարապետության, առաջին հերթին գմբեթների առանձնահատկությունները, դեկորը, որպես չափորոշիչներ՝ չթվագրված հուշարձանների հետ համեմատական վերլուծություն իրականացնելու համար:

Ալամանի Ս.Անանիա եկեղեցին գտնվում է Անիից դեպի Տեկոր տանող ճանապարհին՝ համանուն գյուղում: Եռախորան, արտաքուստ ուղղանկյուն խաչաթևերով գմբեթավոր կառույց է, որի գմբեթատակ քառակուսուց թմբուկին անցման ձևն ունի առանձնահատուկ լուծում. երկրորդ շարք ութ փոքր տրոմպները տեղադրված են անմիջապես առաջին շարք չորս տրոմպների վրա: Ներսից գլանաձև թմբուկը արտաքուստ ութանիստ է, գմբեթի քիվը և վեղարը չեն պահպանվել: Ըստ եկեղեցու հարավային ճակատի չինարարական արձանագրության՝ եկեղեցին կառուցվել է 637թ.:

Թալինի Ս.Աստվածածին եկեղեցին նույնպես եռախորան, խաչաձև հորինվածք ունի, կառուցված է սրբատաշ կարմրավուն տուֆ քարերով: Շարքերի հորիզոնական կարաններն ունեն 45° եզրակոնքեր չինարարական տեխնիկայի մի հնարք, որը հատուկ է վաղմիջնադարյան հայկական հուշարձաններին: Արևելյան և արևմտյան խաչաթևերն ավելի լայն են, որի հետևանքով գմբեթատակ հիմքը ոչ թե քառակուսի է, այլ ուղղանկյուն, հյուսիսից հարավ ձգված: Առաջին չորս շարք տրոմպներով ստացվում է գմբեթի ութանիստ անհավասարակողմ հիմքը, որից վերև տեղադրված ութ փոքր տրոմպներն իրականացնում են անցումը դեպի գմբեթի ձվաձև ծածկը: Թմբուկն ութանիստ է՝ անհավասարաչափ նիստերով, գմբեթի վեղարը 1990-ական թթ. վերականգնվեց կղմինդրե ծածկով, որը միանգամայն համահունչ է հուշարձանի ճարտարապետությանը: Արևմտյան չինարարական արձանագրության մեջ նշված են եկեղեցու (Ս.Աստվածածին) և կառուցողի՝ իշխան Ներսեհ Կամսարականի անունները: Արձանագրության վերլուծությամբ այն թվագրվում է 613-615 թթ.: Թվագրման համար կարևոր տարր է նաև գմբեթի քիվը, որն ունի V-VII դդ. բնորոշ ատամիկներով մշակում:

Գմբեթավոր բազիլիկաներից Հայաստանի Հանրապետու-

թյան տարածքում է գտնվում էջմիածնի Ս.Գայանե եկեղեցին՝ կառուցված 630թ. Եզր կաթողիկոսի կողմից: Եկեղեցին ամբողջովին պահպանել է իր նախնական ծավալատարածական հորինվածքը և մանրամասները, միայն XVIIդ. Փիլիպոս կաթողիկոսը նորոգել է նրա տանիքը և գմբեթի վեղարը: Ս.Գայանե եկեղեցում կենտրոնագմբեթ ձևը զերիչխում է բազիլիկայինին: Աղոթասրահը համաչափություններով մոտ է քառակուսուն, գմբեթակիր մույթերը կողմնորոշված են դեպի ենթագմբեթային քառակուսին, իսկ Ավագ խորանը ներգծված է արտաքին պատերի ուղղանկյան մեջ: Գմբեթատակ քառակուսուց թմբուկին անցումն իրականացված է երկու շարք տրոմպների (ստորինը չորս, վերինը ութ) միջոցով: Թմբուկն արտաքուստ ութանիստ է՝ ծածկված բրգաձև վեղարով: Գմբեթի նախնական քիվը և լուսամուտների պսակները չեն պահպանվել:

Բագավանի Ս.Հովհաննես տաճարը միջնադարյան Հայաստանի ամենախոշոր գմբեթավոր եկեղեցական շենքն է: Ըստ շինարարական արձանագրության այն կառուցվել է 631թ. հունիսի 15-ից մինչև 639 թ. օգոստոսի 20-ը: Արձանագրության մեջ նշված է նաև եպարտապետի անունը՝ Իսրայել Գոռաղեցի. սա վաղմիջնադարյան Հայաստանի շինարարական արձանագրություններում ճարտարապետի անունը նշելու միակ դեպքն է:

Բագավանի տաճարում աղոթասրահը հսկայական գմբեթը կրող երկու զույգ հզոր մույթերով բաժանված է երեք նավի: Ավագ խորանն ունի խոր բեմ և դրսից չեշտվում է բազմանիստ ծավալով: Միջնադարում գմբեթը հիմնովին վերակառուցվել էր, և նախնականը փոխարինվել էր ութանիստ, բավական ցածր թմբուկով նոր գմբեթով:

Բագավանի տաճարը թուրքական իշխանությունները 1960-ական թթ. քանդել և տեղը հարթեցրել են:

Այսօր Թուրքիայի տարածքում սակավաթիվ պահպանված հայկական վաղմիջնադարյան հուշարձաններից է Մրենի կաթողիկեն, որը,ըստ պատմիչ Սամվել Անեցու, հիմնադրվել է 613թ., և ըստ շինարարական արձանագրության՝ եկեղեցու կառուցումն ավարտվել է 640թ.: Ունի քառամույթ գմբեթավոր բազիլիկի հորինվածք արտաքուստ չեշտված հնգանիստ Ավագ խորանով: Մրենի կաթողիկեն մեզ է հասել առանց նորոգությունների և փոփոխությունների, նույնիսկ պահպանվել են գմբեթի վեղարի և շենքի տանիքների կղմինդրե ծածկերը: Գմբեթատակ քառակուսուց տրոմպային փոխանցումով իրականացված գմբեթի թմբուկը ութանիստ, պարզիկ համաչափություններով ծավալ ունի: Գմբեթի չորս բավական

ձգված լուսամուտները վերևում ունեն հոնքաձև երեսակալներ: Կաթողիկեի ծավալատարածական լուծման կատարելությունը ժամանակին մեծ տպավորություն է թողել Յ.Ստրժիգովսկու վրա, որը գրել է. «...դիտողը չի կարողանում աչքը հեռացնել համաչափությունների այն ներդաշնակությունից, որն այնքան բնորոշ է այս կառուցվածքին»[7]:

Հայկական վաղքրիստոնեական թվագրված և գմբեթը պահպանված հուշարձաններից են նաև Էջմիածնի Ս.Հռիփսիմե, Սիսիանի Ս.Հովհաննես և Եղվարդի Զորավար եկեղեցիները:

Հայկական ճարտարապետության գլուխգործոց Էջմիածնի Ս.Հռիփսիմե տաճարը կառուցել է Կոմիտաս կաթողիկոսը 618թ.: Այն պատկանում է քառախորան, միջանկյալ խորշերով և անկյունային սենյակներով հուշարձանների տիպին և այդ հորինվածքի կատարյալ օրինակն է, որի հետևանքով համանման եկեղեցիներն անվանվում են «Հռիփսիմեատիպ»: Տաճարի ծավալը վերևում խաչաձև՝ կենտրոնում պսակված 16-նիստանի թմբուկով գմբեթով: Բացառիկ են գմբեթին դրսից կից չորս գլանաձև աշտարակները, ինչպես նաև ներսում թմբուկի պարագծով ընթացող պատշգամբը: Թմբուկի նիստերից տասներկուսն ունեն խոշոր և լայն լուսամուտներ, որոնց հոնքաձև երեսակալները գմբեթի՝ ուշ միջնադարում կատարած նորոգումից հետո չեն պահպանվել:

«Հռիփսիմեատիպ» մյուս թվագրված և գմբեթը կանգուն հուշարձանը Սիսիանի Ս.Հովհաննես եկեղեցին է՝ կառուցված 670-689թթ.: Գմբեթատակ քառակուսուց գմբեթին անցումն իրականացված է տրոմպների միջոցով: Թմբուկը 12-նիստանի է և զարդարված զույգ կիսասյունիկներով դեկորատիվ կամարաշարով: Գմբեթի քիվը մշակված է հյուսածո զարդաքանդակով, որը բնորոշ է Հայաստանի VII դ. երկրորդ կեսի հուշարձաններին և կրում է Զվարթնոցի տաճարի ազդեցությունը:

Եղվարդի մոտ Հայաստանի կառավարիչ իշխան Գրիգոր Մամիկոնյանի՝ 661-685թթ. կառուցած Զորավար Ս.Թեոդորոս ուղղաբուրգ եկեղեցին ունի կենտրոնակազմ ծավալ: Առագաստային փոխանցումով գմբեթատակ ութանկյունը փոխանցվում է գմբեթի ներսից չրջանաձև, արտաքուստ 12-նիստանի թմբուկին: Ստորին ծավալի և գմբեթի քիվերը հյուսածո քանդակազարդված են, իսկ թմբուկի և աբսիդների լուսամուտներն ունեն VII դ. բնորոշ բուսական և երկրաչափական զարդաքանդակներով մշակված հոնքաձև պարակալներ:

---

[7] J. Strzygowski. Die Baukunst der Armenier und Europa. B. 1, S. 182.

Սրանք են չինարարական արձանագրություններով և պատմիչների հայտնած տեղեկություններով որոշակի թվագրված վաղմիջնադարյան հայկական հուշարձանները: Դրանց պետք է հավելել նաև Թալինի Կաթողիկեն, որի պատին կա VIIIդ. արձանագրություն (ոչ չինարարական), և մինագամայն իրավացիորեն այս բացառիկ ճարտարապետական-գեղարվեստական արժեք ունեցող հուշարձանը համարվում է կառուցված VIIդ. երկրորդ կեսում Կամսարական իշխանների կողմից: Թալինի Կաթողիկեն ունի հայ ճարտարապետների ստեղծած եռաբսիդ գմբեթավոր բազիլիկի հորինվածք, որի գմբեթի պահպանված թմբուկը 12-նիստանի է, գմբեթատակ քառակուսուց առագաստների միջոցով փոխանցում ունեցող թմբուկի նիստերը զարդարված են զույգ կիսասյունիկներով կամարաշարով, քիվն ունի հյուսածո զրվագումով մշակում:

Պաղնևի վաղ միջնադարի գմբեթավոր դահլիճի տիպի եկեղեցու գմբեթակիր կամարներից միայն մեկն է պահպանվել, որի չնորհիվ հնարավոր է վերականգնել նրա գմբեթը՝ տրոմպային փոխանցումով, ութանիստ թմբուկով:

Գմբեթի պահպանված բեկորների հիման վրա միանգամայն հավաստի վերականգնվում է իշխան Գրիգոր Մամիկոնյանի կառուցած մի ուրիշ նշանավոր հուշարձանի Արուճի Ս.Գրիգոր տաճարի (662-666թթ.) գմբեթը: Վերջինս նույնպես 12-նիստանի է և ինչպես Թալինի Կաթողիկեում, թմբուկի նիստերին ունի դեկորատիվ կամարաշար ու հյուսածո զարդաքանդակով քիվ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վաղ միջնադարի հայկական գմբեթավոր հուշարձանների ճնշող մեծամասնության թմբուկները արտաքուստ 8-անիստ են: Այդպիսին են, նախ և առաջ, Թալինի ու Ալամանի փոքր խաչաձև եկեղեցիների հետ նաև VI-VIIդդ. Օշականի Մանկանոց Ս.Սիոն, Արզնիի Ս.Կերակիր, Ագարակի Ս.Ստեփանոս Նախավկա, Դորբանտիվանքի, Պեմզաշենի, Դաշտադեմի Ս.Քրիստափոր, Լմբատավանքի Ս.Ստեփանոս եկեղեցիները և այս տիպի լավագույն հուշարձանը՝ Աշտարակի Կարմրավոր Ս.Աստվածածին եկեղեցին, որի գմբեթն իր նախնական կղմինդրե ծածկով կարող է օրինակ ծառայել վաղմիջնադարյան հայկական գմբեթների համար:

Ութանիստ թմբուկ ունեն Մաստարայի Ս.Հովհաննես, Ոսկեպարի Ս.Աստվածածին, Գառնահովտի Ս.Գևորգ կենտրոնագմբեթ եկեղեցիները:

Գմբեթավոր բազիլիկներից Օձունի տաճարը (VI-VIIդդ.) պահպանել է իր սկզբնական 8-անիստ թմբուկով գմբեթը և

բրգաձև վեղարը: Նշված բոլոր եկեղեցիների գմբեթով փոխանցումը տրոմպային է, որի հետևանքով գմբեթատակ քառակուսին երկու չարք տրոմպների միջոցով վերածվում է ութանիստ թմբուկի:

VII դ. սկսած՝ առագաստային փոխանցման կիրառման չնորհիվ հնարավոր եղավ ավելացնել թմբուկի նիստերի քանակը և ստանալ 12-նիստանի (Եղվարդի Զորավար, Թալինի Կաթողիկե, Արուճի Ս. Գրիգոր եկեղեցիները) և նույնիսկ 16-նիստանի թմբուկներ (Էջմիածնի Ս. Հռիփսիմե, Հառիճավանքի Ս. Գրիգոր): Չվարթնոց տաճարի գմբեթի թմբուկը նույնպես վերակազմվում է 16-նիստանի:

Գմբեթի ձևը (թմբուկի նիստերի քանակը, գմբեթատակ քառակուսուց թմբուկին անցնելու եղանակը) անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է հուշարձանների թվագրման համար: Թվում է, թե ութանիստ թմբուկով և տրոմպային փոխանցումով գմբեթը հատուկ է միայն VI–VII դդ. հայկական ճարտարապետությանը և կարող է հիմք ծառայել չթվագրված հուշարձանի կառուցման դարը որոշելու համար: Սակայն արաբական տիրապետության պատճառով VIII դ. Հայաստանում չինարարական կյանքի ընդհատումից հետո, երբ IX դ. հայ ճարտարապետները վերստին սկսեցին մոնումենտալ շենքեր կառուցել, նրանք կրկնեցին VII դ. հայտնի եկեղեցիների ոչ միայն հորինվածքները, այլև առանձին ձևերը: Այսպես, օրինակ, Սևանի վանքի եկեղեցիները, կառուցված 874թ., ունեն ութանիստ թմբուկով և բրգաձև վեղարով գմբեթներ, ընդ որում Ս. Առաքելոց եկեղեցու գմբեթատակ փոխանցումը իրականացված է տրոմպներով: Եկեղեցիներն ունեն վաղ միջնադարում լայն տարածում ունեցող «աղաստ խաչ» տիպի հորինվածք, նույնիսկ քիվերը կրկնում են VII դ. ձևերը: Տրոմպային փոխանցումով 8-անիստ թմբուկով գմբեթ ունի նաև Վանեվանի եկեղեցին (903թ.) Գեղարդունիքում:

Սակայն X դ. հայ ճարտարապետները մշակեցին եկեղեցական շենքի գմբեթի երկու ձև, որոնք բնորոշ են միայն զարգացած միջնադարի հայկական չինարարական արվեստին և սկզբունքորեն տարբերվում են վաղմիջնադարյան ձևերից: Դրանցից առաջինը արտաքուստ շրջանաձև թմբուկով գմբեթն է, որը դարձավ X–XIII դդ. հայկական եկեղեցիների գմբեթի հիմնական ձևը: Այդպիսի գմբեթ ունեն, օրինակ, Հաղպատի Ս. Նշան, Հայկաձորի Ս. Գրիգոր (ճարտարապետ Սամեհան), Սանահինի Ս. Ամենափրկիչ և Ս. Աստվածածին (X դ.) եկեղեցիները: Գմբեթի այս ձևը հատկապես տարածում ստացավ Հայաստանի վանքերի ճարտարապետու-

թյունում:

Հդ. մշակված գմբեթի մյուս ձևը հայկական ճարտարապետության Անի-Շիրակի դպրոցի ստեղծագործությունն է: Բազմանիստ թմբուկի նիստերի կողերը զարդարված են փնջաձև կիսասյունիկներով, նիստերը վերևում ավարտվում են ճակտոններով, իսկ վեղարն ունի հովանոցաձև ծավալ: Դրա լավագույն նմուշներն են Մարմաշենի վանքի Կաթողիկե, Ամբերդի, Խծկոնքի վանքի եկեղեցիները: Զարգացած միջնադարում այս երկու ձևերը եղան ամենատարածվածը:

Վաղմիջնադարյան Հայաստանի գմբեթավոր հուշարձանների թվագրումը պետք է իրականացնել համալիր վերլուծության եղանակով:

Հայկական ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր Թորոս Թորամանյանը գմբեթների ձևը ըստ դարաշրջանների դասակարգում է թմբուկի արտաքուստ խորանարդաձև պատվանդանի բարձրության չափով: Տեկորի տաճարում (Vդ.) այն կազմում է 2,80 մ, Բագարանի Ս.Թեոդորոս եկեղեցում (VIդ. առաջին կես)՝ 1,30 մ, Մրենի կաթողիկեում գմբեթի պատվանդանը հավասար է արդեն տանիքի կատարին, իսկ Հդ. այն նույնիսկ ցածր է տանիքից իր բարձրության կիսով չափ, ինչպես, օրինակ, այդ առկա է Անիի Մայր տաճարում[8]:

Թվագրված վաղմիջնադարյան հայկական հուշարձանները, չնչին բացառությամբ, պատկանում են VIդ.: Հետևաբար, համեմատական վերլուծությամբ կարելի է տարբերել V-VIդդ. հուշարձանները VIդ. կառույցներից, իսկ վերջիններս ենթաբաժանել VIդ. առաջին կեսին և VIդ. երկրորդ կեսին պատկանողների: Մինչև VIդ. առաջին տասնամյակներում կառուցված եկեղեցիների ինչպես հիմնական ծավալը, այնպես էլ գմբեթներն ունեն ատամիկներով, կամ մոդուլյոններով քիվեր: VIդ. վերջից մինչև VIIդ. կեսը գմբեթների քիվը ատանում է կիսակամարիկներով ձև: VIIդ. կեսից սկսած, Զվարթնոցի տաճարի ազդեցությամբ, կիրառվում է զամբյուղաձև, հյուսածո զարդաքանդակով քիվը, որի հիման վրա Թալինի Կաթողիկե, Արթիկի Ս.Մարգիս եկեղեցիները թվագրվում են այդ ժամանակահատվածով:

VIIդ. առաջին կեսին բնորոշ է նաև գմբեթի քիվի իրականացումը ուղղանկյուն սալի մեծ ելուստով, որը մշակված է օղակաձև զարդաքանդակներով: Ահա գմբեթի (նաև չենքի հիմնական ծա-

---

[8] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատոր 1, Երևան, 1942, էջ 206-208:

վալի) քիվերի ձևով կարելի է կես դարի ճշտությամբ թվագրել հուշարձանը VII դ. առաջին կեսում ատամիկների և կամարիկների քանդակներով և VII դ. երկրորդ կեսում՝ թեքագիր, ցցուն ելուստով, զամբյուղաձև զարդաքանդակով:

Թվագրման համար կարևոր է նաև թմբուկի նիստերի դեկորատիվ կամարաշարը, որը կիրառվել է VII դ. երկրորդ կեսից սկսած, Զվարթնոցի տաճարի ազդեցությամբ: Այս մանրամասով են թվագրվում Արթիկի Ս.Սարգիս «մաստարայատիպ», Թալինի Կաթողիկե, Ոսկեպարի Ս.Աստվածածին եկեղեցիները:

Քիվերի հետ միաժամանակ պետք է դիտարկել նաև լուսամուտների հոնքաձև պարակալների զարդաքանդակները: VII դ. բնորոշ ձևերն են նշտարիկներով, ոճավորված արմավիկներով ու շուշաններով, կիսակամարիկներով, վարդյակներով քանդակները, որոշ դեպքերում զուգակցված գնդիկների հետ:

Ամփոփելով այս բոլորը՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

1. գմբեթների ձևը, որի բաղադրիչներն են նիստերի քանակը, վեզարի ձևը (աղավարտաձև, բրգաձև), ծածկի նյութը (կղմինդր, քարե սալ), գմբեթատակ փոխանցման եղանակը (տրոմպ, առագաստ) անհրաժեշտ, բայց ոչ բավարար տվյալներ են վաղմիջնադարյան հայկական հուշարձանների թվագրման համար:

2. Գմբեթների ձևը միայն բավարար է զարգացած միջնադարի՝ գլանաձև թմբուկով, ինչպես նաև սյունախիճերով զարդարված և հովանոցաձև վեզարով գմբեթները վաղմիջնադարյան ձևերից տարբերելու համար:

3. Գմբեթների դեկորատիվ տարրերը՝ քիվը, լուսամուտների երեսակալները, նիստերի կամարաշարը բավարար են հուշարձանը թվագրելու VII դ. առաջին կամ երկրորդ կեսով:

4. Հայաստանի վաղքրիստոնեական չթվագրված հուշարձանները թվագրելու համար անհրաժեշտ է համալիր վերլուծություն՝ համեմատելով ոչ միայն գմբեթն իր ձևով և դեկորով, այլև ողջ կառույցի հատակագծային և ծավալատարածական հորինվածքը, համաչափությունները, լուսամուտների ձևը, չքամուտքերը, զարդաքանդակները և պատկերաքանդակները, չինարարական տեխնիկան:

ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ԴԻԴԱՍԿԱԼԻԱՆ

Ու հնամյա քաղաքների հազարամյա քարն եմ սիրում:
Եղիշե Չարենց

Արձանագրությունը, որ ավելի քան երկու հազար ու երկու հարյուր տարվա հնություն է ենթադրում, վաղուց է գտնվել (1908) ու տառ առ տառ վերծանվել (1911)[1]: Նոր ընթերցումը, եթե կարող է նրբերանգներ ճշտել, ելնելու է ակադեմիկոս Յակով Սմիռնովի վերծանությունից, բուն աղբյուրը գոյությունն չունի. ոչնչացվել է: Արձանագրությունն իր տեղում վերջին անգամ գննել են ակադեմիկոս Հովսեփ Օրբելին և Բորիս Պիոտրովսկին 1943 թվի գարնանը: Հնավայրը հսկողությունից դուրս է եղել, և աստւմ են՝ քարը պայթեցվել է, օգտագործվել շինարարության մեջ: 1951-ին հնագիտական արշավախումբը քարի տեղում գտել է մի փոս և նրանից տասներկու մետր հեռու երկրորդ մի քար, զարձյալ հունարեն արձանագրությամբ[2]: Այսպիսով Սմիռնովի 1912 թվին Ռուսական հնագիտական ընկերությունում կարդացած զեկուցումը, վերծանված տեքստով հանդերձ, մնում է միակ հիմքը բոլոր դատողությունների (Տեր-Ավետիսյան, Գրակով, Մանանդյան, Բոլտունովա, Երեմյան, Տրեվեր, Հաքիխտ), որ ընդհանուր գծերով համերաշխ են: Հիշեցնելով դրանք՝ փորձում ենք մեզ հասած տեքստի իմաստն ու նպատակը վերըմբռնել մեզ հետաքրքրող խնդրի տեսակետից:

Երեք արձանագրություններից երկրորդում նկատելով չափածոյի տարրեր (յամբական ոտանավոր)՝ Սմիռնովը նպատակադրված թերթել է Սոֆոկլեսի ու Եվրիպիդեսի ողբերգությունները, Մենանդրոսից հասած հատվածներն ու պապիրուսի պատռտիկներից արտագրված ու վերծանված փրագմենտները և եղրակացրել, որ իր առջև դրամատիկական երկի մի հատված է՝ ինչ-որ ողբերգության սկիզբը կամ նախերգանք, ժամանակը՝ 1-ին դար մ.թ.ա. (...[?]), և հեղինակը... Սմիռնովի ենթադրությունը, թե այս արձանագրությունը կարող է լինել մի հատված Արտավազդ Բ-ի այն

---

[1] Տե՛ս К.Тревер, Очерки по истории культуры древней Армении. М.-Л., 1953, с. 113-133.

[2] Նույն տեղում, էջ 114: Այս քարը հայտնաբերել է Սմբատ Տեր-Ավետիսյանը, 1927թ. (տե՛ս նույն տեղում, էջ 106):

ողբերգությունից, որ ակնարկել է Պլուտարքոսը «Կենսագրությունների» 33-րդ գլքում[3], անհիմն է ու անզգույշ: Դրանից օգտվել է լեզվից ու տեքստից անտեղյակ թատերագետը և ասպարեզ նետել սենսացիոն ենթադրություններ, ուր գիրկընդխառն են ճշմարտությունն ու հորինվածքը[4]:

Արմավիրի արձանագրության տասնմեկ տողանոց հատվածը տասնմեկ ընթերցումներից հետո էլ դատողության նյութ է տալիս, եթե դիտում ենք ճիշտ ժամանակի մեջ և իր պատմամշակութային համատեքստում, առանց երևակայության խաղերի:

Սմիռնովի եզրակացության վերջին կետին գրեթե անվերապահորեն համաձայնել է Ա.Բոլտունովան[5], և առարկել է ակադեմիկոս Մանանդյանը՝ և՛ ժամանակը որոշելու, և՛ մանավանդ Արտավազդին պատկանելու խնդրում: Ըստ Մանանդյանի՝ այդ հատվածը որևէ կապ չունի ողբերգության հետ, և բանաստեղծությունը կամ ողբերգությունը քարի վրա փորագրելը «չունի ոչ մի բանական իմաստ»[6]: Մինչդեռ Տրեվերը համոզված է, որ «արմավիրյան երկրորդ արձանագրությունն անվիճելիորեն հատված է ողբերգությունից», բայց «այն հարցը, թե գործ ունենք հույն դրամատուրգներից մեկի ստեղծագործության կամ Արտավազդ երկրորդի որևէ երկի հետ, առայժմ լուծվել չի կարող»[7]:

Ավելին՝ հիմք չունենք նման հարց տալու, բայց տողեր կան, որ մեզ ուղիղ տանում են հելլենիստական թատրոնի դուռը: Վերծանված հատվածի առաջին տողն ուղղակիորեն հիշեցնում է Մենանդրոսից հասած փրագմենտներից մեկը՝ վեցից ութերորդ տողերը Եվրիպիդեսից հայտնի մի փրագմենտ, իսկ յոթերորդ տողն ակնհայտորեն Եվրիպիդեսինն է: Հատվածն առանց թարգմանության բերված է Տրեվերի հայտնի աշխատությունում[8]:

Առաջին տողը խոսքային մի բանաձև է՝ հատուկ հելլենական աստվածությունների հայտարարություններին.

οὐκ' ἐ'στι δ'οὐ πολυ πολεμικωτέρα θεὸς...
Չկա ինձնից ավելի մարտնչող աստվածուհի...
Այս խոսքը Մենանդրոսից է առնված մեկ բառի տարբե-

---

[3] Տե՛ս Plutarchi, Vitae, Parisus, 1846-47, էջ 673:

[4] Տե՛ս Г.Гоян. Театр древней Армении. М., 1952, էջ 135, 136:

[5] Տե՛ս А.Болтунова. Греческие надписи Армавира, 1942, N 1-2, էջ 55, 56:

[6] Я.Манандян. Армавирские греческие надписи в новом освещении. Ереван, 1946, с. 40.

[7] К.Тревер, նշվ. աշխ., էջ 128:

[8] Նույն տեղում:

րուբյամբ.

οὐκ' ἐ'στι τολμης ἐπιφανεστέρα θεὸς...
Չկա ինձնից ավելի հզոր ներկայացող աստվածուհի...

*Խոսքային այս բանաձևը գտնում ենք Մենանդրոսի մեկ այլ ֆրագմենտում. «Չկա Լրբուբյունից ավելի պայծառապայլ աստվածուհի»[9]: Սա արդեն իսկապես կատակերգակ հեղինակի խոսք է: Այս էլ հասկանալի է, եթե նկատի առնենք հելլենիզմի դարաշրջանի միմոգրաֆներին, որոնք ծաղրի ու խեղկատակության էին վերածում դիցաբանական թեմաներն ու հերոսներին: Հայտնի է, որ Մենանդրոսի թեմաներն ու խոսքերը հետագայում ընդօրինակվել են, փոխանցվել հռոմեական կատակերգակներին (Տերենցիուս, Պլավտուս): Տարբերությունները ու իմաստափոխությունները հեռևանք են նաև խաղային տարբեր վիճակների կամ արտագրությունների: Սմիռնովի կարծիքը, որ արձանագրությունը ներկայացնում է դրամատիկական երկի մի հատված, առանձնապես վիճելի չի երևում (թեև կարող է այլ բնույթ և այլ նպատակ ունենալ), բայց ողբերգությո՞ւն է արդյոք: Ցամքական չափը, ինչպես Արիստոտելն է նկատել, «առավելապես համապատասխանում է խոսակցական լեզվին»[10], ասել է՝ առօրեական, կենցաղային ոճին: Արմավիրյան արձանագրության հիշյալ հատվածը բարոյաիրավական և պարսավական բովանդակություն ունի և ակնարկում է ընտանեկան ներքին իրավունքը: Խոսքն ունեցվածքի կամ ժառանգության արդարացի բաժանման մասին է. դատապարտում է ընչաքաղցությունն ու անազնվությունը: Սա ողբերգական թեմա չի հուշում, համենայն դեպս ողբերգական մոտիվ չէ, այլ կատակերգական, եթե նկատի առնենք կատակերգակների հելլենիստական բացատրությունը՝ հիմնված արիստոտելյան տեսակետի վրա. «կատակերգությունը վատերի վերարտադրությունն է...»[11]: Հատվածը գուցե Մենանդրոսի՞ն կամ նրա հետևորդներից որևէ մեկի՞ն պետք է վերագրել: Հետևորդները, ընդօրինակողներն ու արտադրողները շատ են եղել: Կարող է որոշ շփոթություն ստեղծել բացահայտորեն Եվրիպիդեսից քաղված ու վերաձևակերպված երեք տողը՝ վեցից ուղերորդ և յոթերորդն անփոփոխ:

---

[9] Менандр. Комедии, фрагменты, М., 1982, с. 341. Այս ֆրագմենտն ինձ հայտնի է միայն ռուսերեն թարգմանությամբ. "Богини нет блистательнее Наглости".
[10] Аристотель. Сочинения в 4-х томах, т. 4. М., 1984, с. 650.
[11] Նույն տեղում:

Արմավիրյան հատված. [δ]ύστι δὴ χίβδηλον ἀνθρώποις κακὸν
καὶ γλῶσσα φαύλη καὶ φθόνος τοῦ μὴ φθον[εῖν]
…δικαίως μὴ καλῶς ὠρισμένος…

Եվրիպիդեսյան հատված. τὰ μὴ δίκαια δ'ὡς απανταχοῦ κακὸν
καὶ γλῶσσα φαύλα καὶ φθόνος τοῦ μὴ φθονεῖν
ὠ'σῳσω μὴ καλῶς ὀγκωμένοις…[12]

Թարգմանելով էլ տեսնում ենք, որ գրեթե ոչինչ չի փոխվում իմաստի առումով. նույն բանն է ասված տարբեր բառերով: Մեր խնդրի տեսակետից ավելի կարևոր է նմանությունը, քան տարբերությունը:

Արմավիրյան հատված. Կեղծավոր մարդը աղետ է ու բեռ,
Լեզվով անպատկառ, նախանձ ու չարիք.
Արժանի չէ նա ազնիվ կոչումի…

Եվրիպիդեսյան հատված. Այսքան անարդար չնորհ ամեն տեղ,
Անպատկառ լեզու, նախանձ ու չարիք.
Եվ այսքան ստոր ու պիղծ իսկապես…

Այստեղ կարևոր չէ ժանրի խնդիրը՝ կատակերգություն է, թե ողբերգություն, կոնտամինացիա, թե այլ բան: Կարևոր չէ անգամ այն հարցը՝ դրամատիկական երկից է, թե ոչ: Եվրիպիդեսի մեկ անխաթար տողն էլ բավական է իմանալու համար, որ այստեղ տեղյակ են եղել հունական դրամայից: Տեքստի աղավաղումն արդյունք է թերևս բանավոր փոխանցման՝ խաղի: Ենթադրվում է, որ տեքստի հեղինակը հույն չի եղել. ոճը «բարբարոսության» տարրեր ունի[13]*: Դա հիմք չէ: Հեղինակը կարող էր և հույն լինել, ոչ մեծ գրագիտության տեր, թափառող մի հիպոկրիտ, հիշողության մեջ հազար ու մի խոսք փրագմենտներ թատերագիր հեղինակներից: Իսկ որ Եվրիպիդեսի տողերը կարող էին կրկնվել Մենանդրոսի հետևորդներից մեկի կատակերգության մեջ կամ միմական տեքստում, զարմանալի չէ: Նման փաստեր հայտնի են: Հեղինակային իրավունք չի գործել ոչ միայն հին աշխարհում, այլև վերածնության դարաշրջանում: Ինչ վերաբերում է ժամանակի խնդրին, ապա հակված ենք ընդունելու Մանանդյանի կարծիքը,*

---

[12] Հատվածներն առանց թարգմանության բերված են Տրեվերի նշված աշխատությունում, արմավիրյան հատվածը՝ ըստ Սմիռնովի, Եվրիպիդեսինը՝ ըստ հրապարակված փրագմենտների (էջ 124, 128):

[13] Տե՛ս Գ.Հօյո, նշվ. աշխ., էջ 467 (Ա.Բոլոտունովայի նամակից):

որ արձանագրությունը պատկանում է 3-2-րդ դարերին (մ.թ.ա.), համենայն դեպս մոտ է Երվանդյան շրջանին, մանավանդ որ չորրորդ արձանագրության մեջ ընթերցվում է Ἐβρόντης (Երվանդ) անունը[14]: Ժամանակի խնդրում նույն տեսակետին է ակադեմիկոս Երեմյանը, որ ունի իր տեսակետը արձանագրության բնույթի, իմաստի ու նպատակի վերաբերյալ, այն է՝ վերաբնակիչ հույների սեփականատիրական իրավունքի պահպանը[15]: Այո՛, նայած՝ ով ինչ խնդրով է մոտենում պատմության վկայությանը: Բոլոր դեպքերում արձանագրության ժամանակն ընդունված է համարել 3-2-րդ դարերը[16]: Բնույթն ու նպատակն ինչ էլ լինեն, չի կանխվում հին հունական դրամայի հետքը տեսնելու մեր միտումը: Արտավազդին վերագրելն իհարկե հիմք չունի. դա Սմբռնովի թեթև վրիպումն է և թատերագետ Գոյանի ցանկությունը: Վերջինս իր աչքով չի տեսել ո՛չ արձանագրությունը, ո՛չ էլ նրա վերծանված պատկերը և այնուամենայնիվ ձգում է իր չտեսածը դեպի իր ուզած տեղը[17]: Գոյանը վկայաբերում է Բոլտունովայի իբրեն ուղղած նամակը, որտեղ որպես թե անվիճելիորեն հիմնավորվում են արձանագրության՝ 1-ին դարին պատկանելը և Արտավազդի հեղինակությունը: Հետաքրքիր է սակայն Գոյանի մի ենթադրությունը որպես ենթադրություն: Նա ուշադրություն է հրավիրում երկու անունների վրա՝ Եվտիքարմիդես և Պելամիդես, որ վկայված չեն գրականության մեջ: Այս հիման վրա էլ նա շրջանցում է Սմիռնովի ու մյուսների ընթերցումները և վճռում, որ դրանք դրամատիկական պերսոնաժների անուններ են[18]: Ո՞վ իմանա, գուցե և հիպոկրիտեսներ են, որոնք Մակեդոնացու արշավանքներին հաջորդող տարիներին, հատկապես Սելևկյան տիրապետության շրջանում (312-ից), խմբեր (սինոդոս) կազմած, շրջում էին իրենց ներկայացումներով արևելյան երկրներում՝ Էկբատանից մինչև Բակտրիա և Սոգդիանե: Սա «Հունաստանի բարձրագույն արտադրին ծաղկման շրջանն» է (Մարքս) և դրա դրսևորումներից մեկը՝ թատերական ավանդության տարածումն Արևելքում՝ մի երևույթ, որ տարբեր էր դասական պոլիսային ավանդություններից, ինչ-որ ձևերով վերասերված: Դրա հետագա արդյունքը եղան այն թեատրոնները (թատրոնական շենքերը), որ տեսնում ենք մերձարևելյան երկրներում: Դրանք, ճիշտ է, հռոմեական շրջանից են,

---

[14] Տե՛ս К.Тревер, նշվ. աշխ., էջ 10-41:
[15] Տե՛ս Տեղեկագիր հասարակական գիտությունների, 1948, 11, էջ 57:
[16] Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 514:
[17] Նշվ. աշխ., էջ 466-468:
[18] Նույն տեղում, էջ 151:

բայց հելլենիստական թատերական ավանդությունն արևելյան միջավայրում վաղ է արմատավորվել, հատկապես Ասորիքում: Հնարավոր է, որ արմավիրյան արձանագրությունը անուղղակի կապ ունենա հելլենիզմի շրջանում տարածված թատերական ելևէջների հետ: Իսկ թե ինչու պետք է դա իր հետքը թողներ մի ապառաժի վրա, որ «աննպատակ ու անիմաստ» է համարել Մանանդյանը, այս էլ իր բացատրությունն ունի և բավական հիմնավոր:

Դիմում ենք արմավիրյան արձանագրությունների վերջին ընթերցողին ու մեկնիչին Քրիստոֆեր Հաբիխտին: Նրա հոդվածը հրապարակվել է 1953 թվին: Մեր քննության առարկա երկրորդ արձանագրությունը նա չի տեսել (քարն այլևս չկար), ծանոթացել է վերծանությանը, գուցե և տեսել պահպանված քարերը, ուր, թվում է, Եվրիպիդեսի ու Մենանդրոսի խոսքերից չկան: Այնուամենայնիվ նա եզրակացրել է, որ այդտեղ ոչ միայն Եվրիպիդեսից, այլև ուրիշ՝ մեզ անհայտ հեղինակների երկերից քաղվածքներ կան, որոնք միմյանց հետ բովանդակային կապ չունեն և փորագրված են քարերի վրա ուսուցողական նպատակով: Ենթադրվում է, որ Երվանդյանների շրջանում (330-201թթ.) Արմավիրում եղել է հունական դպրոց[19]: Ենթադրությունը տրամաբանական է և մոտ է մեր խնդրին: Հայտնի է, որ ուսուցողական նպատակով փորագրված քարերը դրվել են սրբավայրերում՝ տաճարների մոտ (ἱερα οἰκία - սուրբ տուն) և կոչվել են դիդասկալիա (διδασκαλία - ուսուցում): Դասական շրջանում այսպես են կոչվել նաև այն քարե տախտակները, որ դրվել են թատրոնների մոտ, և որոնց վրա գրանցվել են ներկայացված պիեսների վերնագրերը, հեղինակների ու դերակատարների անունները և ինչ-ինչ ֆրազներ[20]: Հայտնի է, որ Արիստոտելը գրառել է այս արձանագրությունները և շատ տեղեկություններ դասական շրջանի (իր ժամանակ) ազոնալ (մրցակցային) թատրոնի մասին այստեղից է քաղել: Նկատի ունենք նաև դիդասկալիա բառի մի քանի նշանակությունները՝ ուսուցում, ցուցադրում, բեմադրություն, խաղարկում, դրամատիկական երկ, տեսարանոգիա (ողբերգական տրիլոգիա և

---

[19] **Chr.Habicht**, Über eine armenische Inschrift mit Versen des Euripides, "Hermes", 81, 1953, էջ 256: Այս աղբյուրին տեղեկացել ենք «Հայ ժողովրդի պատմության» նշված հատորից (էջ 515, 913):

[20] Տե՛ս **В.Латышев**. Очерк греческих древностей, Богослужение и сценические древности. СПб., 1997, էջ 285:

մեկ սատիրական դրամա), ցուցակ ներկայացված երկերի[21]: Արմավիրի արձանագրության բարոյախրատական բովանդակությունը մեզ թելադրում է այս համատեքստում ըմբռնելու նրա բնույթն ու նպատակը: Ուսումնասիրողները երեք խմբի են բաժանում դիցադակալիա կոչվող արձանագրությունները. ա)ժամանակագրական նշումներ ներկայացված երկերի մասին, կազմակերպիչների (արխոնտ) անուններով, բ)մրցակցության մեջ հաղթող հեղինակների ու կատարողների (հիպոկրիտեսներ) անուններ, գ)հաղթող հեղինակների անուններ, հաղթանակների թվի նշումով[22]:

Արմավիրի արձանագրությունը հելլենիզմի շրջանից է և նման չէ դասական շրջանից մնացած այն քարե տախտակներին, որ գտնվել են թեատրոններում և հիմնականում Դիոնիսոսի և Ասկլեպիոսի տաճարների մոտ: Քարն էլ նման չէ. անտաշ ապառաժ է: Բայց Եվրիպիդեսի և Մենանդրոսի տողերը մեզ հիմք են տալիս դիդակալիա անվանելու այդ արձանագրությունը՝ նկատի ունենալով նաև բառի վերոհիշյալ բոլոր նշանակությունները: Մտածել են տալիս նաև Եվտիքարմիդես և Պելամիդես անունները: Սրանք հիշվում են որպես ընդօրինակելի անձինք: Ինչպե՞ս ենք որակելու սրանց, ի՞նչ անուն ենք տալու. արխո՞նտ, հիպոկրի՞տես, պրոտագոնի՞ստ... Ինչ-որ մի կապ կա՞ սրանց և Մենանդրոսի ու Եվրիպիդեսի տողերի միջև: Եթե անգամ չկա կամ անուղղակի է այդ կապը, դարձյալ մտածելու հիմքեր ունենք: Մեր հարցադրման օգտին է խոսում նաև այն փաստը, որ արձանագրությունը գտնվել է Հայոց հնագույն սրբավայրերից մեկի մոտ: Ո՞ր աստվածության... Առաջին տողը ռազմի աստվածուհու անունից է (πολεμικωτέρα): Տրեվերը ենթադրում է, որ դա Արտեմիսն է: Այս ենթադրությանը հիմք է տալիս Խորենացին իր երկրորդ գրքի ԻԲ գլխում, որ վերաբերում է Արտաշես Ա-ի շրջանին: «Եւ գտեալ յԱսիայ պղնձածոյլ պատկերս զԱրտեմիդայ և զՀերակլեայ և զԱպողոնի՝ տա բերել յաշխարհս մեր, զի կանգնեսցին յԱրմավիր»: Ովքե՞ր էին այստեղ տաճարի սպասավորները ու քրմապետը, եթե ոչ «յազգեն վահունեաց»[23]: Վկայությունն, ինչպես նկատում ենք, համախոս է և՛ արձանագրությանը, և՛ վերծանողի ու մեկնիչի ենթադրությանը: Վերջինս հակված է արձանագրության տեղում՝ բլրալանջին փնտրելու Խորենացու հիշատա-

---

[21] Древнегреческо-русский словарь, т. I, М., 1958, с. 397.

[22] В.Латышев. նշվ. աշխ., էջ 285, 286:

[23] **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, աշխ. Մ.Աբեղյանի և Ս.Հարությունյանի (վերատպություն), Երևան, 1991, էջ 122:

կած հնագույն գուշակավայրը «ըստ պաշտամանց ի սօսիսն <...> որ յԱրմավիր»[24]: Ենթադրություններ ու կռահումներ էլի կարող են լինել: Մենք կանգ ենք առնում սոսկ վկայությունների առջև: Արմավիրը եղել է Երվանդյանների աթոռանիստ կենտրոնը, Արտաշեսի ժամանակ՝ պաշտամունքային կենտրոն, որի մասին «աղոտ ու խառնաշփոթված հիշողություններ են պահպանվել Խորենացու պատմության մեջ»[25]: Հունարեն արձանագրություններն ասում են, որ հելլենիզմի ազդեցությունը հասել է մինչև այստեղ: Արձանագրությունների և Խորենացու «Պատմության» միջև, որքան էլ «աղոտ ու խառնաշփոթված» լինեն հիշողությունները, ոչ մի հակասություն չկա: Իսկ հելլենիզմը բերում էր կրոնաքաղաքական ու մշակութային մի ամբողջ համակարգ իր տարբեր դրսևորումներով՝ կրթություն, գրական ճաշակ, գեղարվեստական ձգտումներ, հասարակական հաղորդակցման ձևեր, որոնցում չէր կարող բացառվել դրաման, ովքեր էլ լինեին դրա կրողները: Այն, ինչ գրված է քարին, վկան է երբևէ եղածի, դպրոց լիներ, թե բեմ:

---

[24] Նույն տեղում, էջ 64:

[25] **Հ.Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան, 1945, էջ 104:

ՍԱՐՅԱՆԸ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐԸ

Սարիկ Սարյանի պայծառ հիշատակին

Հասկանալով և ընդունելով, որ Սարյանը 20-րդ դարի իր տարեկիցների մեջ աչխարհի մեծագույն նկարիչներից է և մեծագույնը Հայաստանի նկարիչներից, որի ժառանգության մեջ ավելի, քան որևէ մեկի, արտահայտված է ազգայինի քվինտէսենցիան, ինչպես պատահում է գերօժտված անհատների դեպքում, փորձենք գտնել մի քանի նշումներ այդ բազմաբեղուն վարպետի հայացքներում և արվեստում:

Խոսքն առաջին հերթին վերաբերում է հայ միջնադարին: Մենք այդ դեպքում ոչ թե նկատի ունենք, որ Սարյանը հատուկ ծրագրված է դիմել միջնադարին, այլ այն երևույթը, որ գերմանական էսթետիկայում կոչվում է «Einfühlung» (համզգացում), թեև որոշ անուղղակի վկայումներ թույլ են տալիս պնդել, որ նա գիտակցորեն իր ստեղծագործական ինչ-որ պահերի դիմել է ուղղակի մանրանկարչությանը (ինչպես Բրյուսովի հրատարակած «Поэзия Армении» գրքի անվանաթերթում օգտագործված է 11-րդ դարի Մոզնու Ավետարանի անվանաթերթը):

Խոսքս վերաբերում է ավելի խորքային խլրտումների, որ կային թե՛ Եվրոպայի և թե՛ Ռուսաստանի գեղարվեստական կյանքում:

Կարող ենք մատնանշել, որ այս կամ այն նկարիչը ուղղակի էր օգտվում միջնադարի գեղարվեստական հնարներից (օրինակ, Ռերիխը, Պետրով-Վոդկինը, նույնիսկ Մալևիչը և Դեյնեկան իրենց՝ պլրմխիվից և իկոնայից ներշնչված նկարներում, Պյուվի դը Շավանն ինտերնացիոնալ գոթիկայից, Ռուոն՝ վիտրաժից ու Ջայումայան պատկերներից, Մատիսը՝ պարսկական մանրանկարչությունից ու իկոնայից, Կոջոյանը՝ հայկական հեքթաթների և Վարդան Այգեկցու առակների իր ձևավորումներում և այլն):

Իհարկե, այս չարքում Մատիսի պարագան փոքր-ինչ այլ է. Սյորա-Սինյակի լրացուցիչ գույների ուսումնքի հաստատումը նա տեսնում էր պարսկական մանրանկարում, բայց իր մոտիվները և պատկերագրությունը ո՛չ պարսկական էին, ո՛չ էլ, առավել ևս, Սյորայից կամ Սինյակից բխող:

Էլ ավելի տարբեր է Սարյանի պարագան: Նա թերևս հատուկ չի զբաղվել հայ միջնադարյան արվեստով: Նա պատանի և

երիտասարդ հասակում տպավորվել է Անիից, էջմիածնից, Գողթն գավառից, նա ավելի չատ իր ուղեգրություններում և զրույցներում հիշատակում է ճարտարապետական հուշարձաններ, թեև չի բացառվում մանրանկարչության և որմնանկարչության տպավորությունը: Նա նաև տպավորված էր բնությունից և գեղջկական ու գավառական կյանքի խայտաբղետությունից, որ Մոսկվայից հետո նման էր հրաշքի:

Սարյանին սովորաբար համարում են բնապաշտ կամ պանթեիստ, որի համար ինքը ևս առիթ է տալիս՝ միշտ արտահայտելով իր զարմանքը հայրենի բնությունից ու արևից: Ըստ էության նրա ակնածանքը և էքստազը (զարմանքը) բնության առջև նման է էպիկուրյան և պլատոնական զարմանքին դեմիուրգի և կոսմոսի առջև, որ հատուկ էր նաև միջնադարյան հայրերին՝ Սյունեցի, Շնորհալի, Տաթևացի: Իսկ Դավիթ Անհաղթը ուղղակի պլատոնական էր:

«Այն, ինչ ես հասկանում եմ տիեզերք ասելով, ինձ համար միաժամանակ էսթետիկական կատարելություն է, որը ես բնորոշում եմ ունիվերսալ և գեղեցիկ երկու բառով և որը հենց հավերժական պրոցես ապրող Աբսոլյուտն է»[1]:

Աբսոլյուտը գրավել է դեմիուրգի կամ արարչի տեղը, որի մի անունը գեղեցիկն է (Դիոնիսիոս Արեոպագացի): Կարծում եմ, որ Սարյանը գեղեցիկը չի ընկալում պյութագորական համաչափությունների ու միստիկական թվերի իմաստով, այլ նրա մեջ դնում է հոգևոր իմաստ, ինչպես նոր-պլատոնականները և միջնադարյան չատ մտածողներ:

Մեր ուշադրությունը գրավեց նույն տեղում արտահայտված մի միտք ևս. «Անգամ քարը ոչ թե հենց այնպես ընկած է տարածության մեջ... կյանք է ներկայացնում»[2]: Որտեղի՞ց է քարի կյանքն գալում Սարյանը: Կարող ենք ասել, որ արվեստի պատմության մեջ քարը հատկապես միջնադարում (Բյուզանդիա, Ռուսաստան, Իտալիա, Բարձր Հայք և Ղրիմ, նաև 1232թ. Թարգմանչաց Ավետարանում) ամենախորհրդավոր մոտիվներից էր, որի մասին միստիկական և արվեստագիտական ամբողջ տեսություններ են գրվել վաղ միջնադարից մինչև այսօր: Բայց Սարյանը քարը դիտում էր իբրև ամենաքիչ զգացող արարած, որն ունի կյանքի (այսինքն՝ Աբսոլյուտի) մի նշույլ (Աստծու լույսը նույնիսկ քարին է հասնում, կամ Աստված նրանում ևս կա, կասեին

---

[1] **Մարտիրոս Սարյան,** Արվեստի մասին. կազմեցին. Վ.Հ.Մաթևոսյան, Յու.Գ.Խաչատրյան, Երևան, 1986, էջ 11:
[2] Նույն տեղում, էջ 12:

Յամբլիխոսը կամ Դիոնիսիոս Արեոպագացին):

Մի այլ առիթով (1972) Սարյանը ասում է. «Ի՞նչ հրաշալի են մրգերը... Ամբողջ բնության հրաշք է, ամեն ինչ երգ է, տերևը, ծաղիկը, սոխը...»[3]:

Իսկ ինչու՞ են դրանք հրաշալի. որովհետև բնության (Աբսոլյուտի) պարգև են: Իսկ ինչո՞վ են օժտված. գույնով և պայծառությամբ:

Գույնը և պայծառությունը սիրում էին Ս.Օգոստինոսը, Թոմա Աքվինացին, Գրիգոր Նարեկացին (տաղերը), Ներսես Շնորհալին, Գրիգոր Տաթևացին և Սարգիս Պիծակը: Դրանցով օժտված են և՛ մրգերը, և՛ ծաղիկները, ինչպես ուզած միջնադարյան նկարչի համար: Բայց Սարյանի ինչի՞ն էր պետք գույնի այդ պայծառությունը (նա իր հիշյալ միտքը հայտնում է դեկորատիվ արվեստի առթիվ)[4]:

Ոչ ինքնին, «այլ չրջապատող աչխարհի գեղեցկությունն իր հավերժական արարման մեջ բացահայտելու համար»:

Սարյանի վերոհիշյալ միտքը գալիս էր թերևս կյանքի նոր փիլիսոփայությունից, բայց նա քաջ գիտեր, որ միջնադարում «պատկերվող տվյալ առարկան չուներ իր առարկայական իմաստը, նրա արժեքը մի այլ բան խորհրդանչելու մեջ էր»[5]:

Բայց միջնադարը գիտեր նաև էքստազը, հեղհնհեն, զարմանքը և վայելչությունը, որ պակաս հզոր գործոններ չէին թերևս, քան սիմվոլը, խորհուրդը: Հեղհնհեն և էքստազը (զարմանքը) վայելչության հետ հայ միջնադար էին թափանցել Էպիկուրից, Պլատոնից, Դիոնիսիոսից և Փիլոնից:

1936թ. իր ինքնակենսագրական նյութերում (ցուցահանդեսի կատալոգում) Սարյանը նչում էր. «1903-1904 թվականներից ես վճռականապես սկսեցի պայքարել ամենայն գորչության դեմ, որ ինձ պարտադրել էր դպրոցը»[6]: Դա ընդվզում էր ոչ միայն դպրոցի (ռուսական), այլև «Միր իսկուսստվա»-ի դեմ, նույնիսկ իմպրեսիոնիզմի ու դիվիզիոնիզմի դեմ: Ֆրանսիական նկարչության մեջ մինչև ֆովիզմ (կհանդգնեի ասել՝ ֆովիզմն էլ ներառյալ) թերևս միակ մարդը Գոգենն էր, որ գորշը (սևից սպիտակ գունային, որ զսպում էր վառ գույների ճիչը) գրեթե վտարել էր իր պալիտրա-

---

[3] Նույն տեղում, էջ 21 (Շ.Խաչատրյան, Մարդը բնություն է, բնությունը՝ մարդ..., Երևան, 1970, էջ 30):

[4] М.С.Сарян. Все должно быть связано с землей. —Декоративное искусство, М., 1960, N 11 (նույն տեղում, էջ 82):

[5] Սարյան, Արվեստի մասին, էջ 160:

[6] Նույն տեղում, էջ 221:

յից: Վերջինիս մաքուր գույները, սինթետիզմը, դեկորատիվիզմը, ըստ Վենտուրիի, Մալլարմեի չուրջը խմբված գրողները համարեցին «սիմվոլիկ ոճ»[7]: Բայց Գոգենի արվեստի մի քանի էական գծեր ավելի խորը որսաց սիմվոլիստ վաղամեռիկ պոետ Օրիեն.[8] մենք մի քանի կետ ենք առանձնացնում, որոնք այս կամ այն չափով փոքր-ինչ պարզում են Սարյան-միջնադար հարաբերությունը. արվեստը պետք է լինի գաղափարական, քանի որ նրա միակ նպատակը գաղափարի արտահայտումն է. իսկ այդ գաղափարը Սարյանի համար, ինչպես տեսանք, բնությունն էր Աբսոլյուտը: Սիմվոլիկ է, քանի որ գաղափարը արտահայտվում է ձևերի միջոցով: Սարյանի համար ձևը սիլուետն է ու խարակտերը: Նաև սիմվոլիկ, որովհետև այդ ձևերը, այդ սիմվոլները պետք է հասկանալի լինեին բոլորին: Սարյանի թե՛ վաղ, թե՛ հասուն նկարչության մեջ ամեն ինչ այնքան բնորոշ է, որ ոչ մի նկարված առարկա կամ ֆիգուր, կամ դեմք չի շփոթվում ո՛չ տեսակով, ո՛չ ենթատեսակով: Դեկորատիվ, որովհետև դեկորատիվ նկարչությունը, ինչպես հասկանում էին դա եգիպտացիները, միաժամանակ սուբյեկտիվ է, սիմվոլիկ և գաղափարական: Այստեղ սուբյեկտիվ բառով Օրիեն նկատի ուներ ոչ թե կամայականություն, անարխիա, տարերք, այլ առարկայի սիմվոլի, գաղափարի (էմբլեմ) եզակիությունը: Այն, ինչ հատուկ էր Սարյանին: Գոգենի ուսուցիչ Պիսսարոն ավելացնում էր. այդ սիմվոլները, այսինքն՝ գաղափարները պետք է լինեն բնական,[9] ինչը հենց Սարյանի նվաճումն էր, որը նրան դարձրեց նոր դպրոցի հիմնադիր Հայաստանում, ինչը չհաջողվեց ո՛չ Այվազովսկուն, ո՛չ էլ այսօր Արշիլ Գորկուն, իհարկե, հայ արվեստում: Եթե Օրիեն Գոգենի որոշ գործերում զգում էր նմանություն եգիպտական արվեստի հետ, ապա Սարյանն առանց ճիգի հենց եգիպտոսում որսաց եգիպտական արվեստի ոգին և եգիպտոսի պատմական ոգին հենց եգիպտոսի ժամանակակից կյանքի դրվագներում, կոստանդնուպոլսի ոգին շների ու փողոցների պատկերներում և այլն:

Վոլոշինը նկատում էր, որ Սարյանի համար «թանկարժեք են կյանքի սովորական, ինտիմ գծերը»[10], իսկ դրանց հասնելու համար հարկավոր էր հասնել գծի, գույնի և խարակտերի պարզեցման ու միասնության: Սարյանը ժամանակային առումով ավելի

---

[7] Л.Вентури. От Моне до Лотрека. М., 1958, с. 96.

[8] Дж. Ревалд. Постимпрессионизм. М., 1962, с. 310.

[9] Նույն տեղում, էջ 312:

[10] О Саряне. Составители: А.А.Каменский, Ш.Г.Хачатрян. Ереван, 1980, с. 56.

խորքային արևելյան մշակույթի հետ էր կապված, քան իսլամը, որի արվեստի ու պոեզիայի մասին, չգիտես ինչու (գուցե Սոլովյովի ու հակաեվրոպական տրամադրությունների ազդեցությամբ) Վոլոշինը նախաբան է գրել Սարյանին նվիրված իր սքանչելի հոդվածում[11]: Իսլամական մանրանկարչությունն իր ինքնատիպությամբ չատ գծերով (մանավանդ պարսկական և մեծ մոնղոլների) սերում էր Հեռավոր Արևելքից, իսկ գույները, ինչպես Մատիսի մոտ, հանգստի ու վայելքի գույներն էր վարդագույններով, սառը կապույտներով ու կանաչներով, որոնք գրեթե խորք չունեն, վերջապես սպիտակագորշերով ու նկարելու բծախնդրությամբ: Այսինքն իսլամական արվեստը մոնումենտալ չէ: Սարյանի արվեստը մոնումենտալ է, այն չոշափելի է և խարակտերային: Այս վերջին հատկանիշը միմիայն իրենն է. խարակտերային և էմբլեմային են փյունիկյան արմավենին, բորենին, եգիպտական դիմակը, կնոջ մաշիկները, ավանակը, չունը, փողոցը, բակը, լեռնապարը, անապատը, արտերը, մարդիկ, ծաղիկները, ծաղկամանները, ապակյա տարաները, Արարատը, այն ամենը, ինչին դիպել է վարպետի ձեռքը: Մի նկարիչը կարող է խարակտերային նկարել կամ մարդու կամ բնության ինչ-որ տրամադրություն, կամ նատյուրմորտ: Սարյանի վրձինը կամ մատիտը որսում է ամենախարակտերայինը ուզած առարկայում կամ նկարի ուզած անկյունում, նույնիսկ ֆոնում:

Այսինքն, նրա տաղանդի այդ գիծը երբեք չի թուլանում, թեկուզ փոխվում է տեխնիկան (տեմպերան՝ յուղաներկով), փոխվում է նրա վերաբերմունքը կիսատոների նկատմամբ, որոնք մինչև 1914թ. նա հանել էր իր նկարներից, նկարների ներքին լուսավորումը դառնում է ավելի բնական և հարուստ երանգներով, բայց չի կորչում նրա մոտ այն, ինչ համարեցինք «խարակտերային»:

Իսկ խարակտերայինը, երբ հենվում է ոչ թե գույների նույն երանգների լույսուստվերների կամ գունաթափանցումների մշակման, այլ մի չարք զարմանալի դիպուկ վրձնահարվածների, գուշաղերների կամ գծերի վրա, դառնում է սիմվոլիկ: Իսկ երբ պլաստիկան, քանդակայնությունը, հրապուրանքը գեղեցիկ կամ տիկան, քանդակայնությունը, հրապուրանքը գեղեցիկ կամ տգեղ, առնական կամ կանացի մարմնի թովչանքով, խսպառ վերանում է (իսկ Սարյանի պարագայում հենց այդպես է), մնում է խարակտերը, սիլուետը, այս կամ այն էներգիայի ճառագումը: Սարյանի հետ կատարվում է այն, ինչ կատարվեց հայկական և

[11] "Аполлон", 1913, N9, с. 5-21.

ռոմանական միջնադարում որմնանկարչության և մանրանկարչության մեջ: Այդ «խարակտերայինի» մեջ էր Մարիետա Շահինյանը տեսնում Սարյանի գաղտնիքը, երբ թերթերի ու ամսագրերի բաժանորդագրության գրասենյակում պատանի Սարյանը նկարում էր իր հայրենակիցների խարակտերային դեմքերը և մի անգամ էլ նկարեց մի մորուքավոր կազակի, որը նկարի խարակտերային նմանության մոգական ազդեցությամբ ընկավ անկողին[12]:

Սարյան և միջնադար հարաբերությունը, մեր կարծիքով, ավելի խորքային է, քան արտաքին նմանություններում, դա Սարյանի արմատներում է[13]: *Բառը անորոշ է, բայց բազմիմաստ: Իլյա Էրենբուրգը այդ ասելիս նկատի ունի նրա արվեստի այն մոգական ուժը, որ առաջին անգամից արբեցնում է իր թովչանքով, որ անվանում են Հայաստան աշխարհ և Հայաստանի արև: Բայց այդ արմատները, այդ մոնումենտալությունը, այդ գույները, որոնք հատուկ են Սարյանի բոլոր շրջանների գործերին, հատուկ են նաև Մեծ Հայքի մանրանկարչությանը և որմնանկարին: Սարյանը միայն խնդրության նկարիչ չէ, նա նույնքան նաև դրամատիկ է: Նրա «ռեալիզմը», որ չեշտում են Վոլոշինից ու Լունաչարսկուց սկսած մինչև Էրենբուրգ, սովորական ռեալիզմ չէ, դա էմբլեմատիկ խորքային ռեալիզմ է, երբ նկարիչը որսում է իրերի ներքին խարակտերային այն գծերը, որոնք նրանց մշտական ուղեկիցն են, հիմնականում հրաժարվելով լույսուստվերային անցումներից, գունաթափանցումներից, դրանց ազդեցությամբ խարակտերային հատկանիշների սքողումներից: Արշիլ Գորկու հասուն նկարներում սքողումը խորհրդավոր էական դեր էր խաղում, Սարյանի մոտ էական դեր է խաղում ցայտունությունը, ինչը նա համարում էր գույն, որը կերտում է ձևը, այսինքն՝ գունաձև, իսկ Գորկու մոտ՝ գույն և գիծ, որոնք քողարկում են ձևը:*

Այդ պատճառով Լուի Արագոնը Սարյանին դնում էր Սեզանի ու Մատիսի կողքը, գուցե և ավելի բարձր, «քանի որ նա երջանկության նկարիչ է»:

Եթե նկատի չունենանք տերմինների տարբերությունները, ապա «Դեկորատիվնոյե իսկուստվո» հանդեսում (1960, N11) Սարյանի մի քանի մտքեր կարող էր ոսկե տառերով օծել միջնադարյան ամեն մի աստվածաբան, որ կանոններ էր տալիս՝ Շնորհալին, Հովհան Դամասկացին, Թովմա Աքվինացին, Թեոփիլոս

---

[12] О Сарьяне, с. 305:

[13] Նույն տեղում, էջ 319:

քահանան, Գրիգոր Տաթևացին : Արվեստը չի կարող իրադարձությունների գրանցիչ լինել, առանձնապես մոնումենտալ արվեստը[14]: Դեկորատիվությունը կապված է գույնի հանդեպ սիրո հետ... Գույնը պետք է վերածվի գունատոնի իմաստի...

Պայծառ գույները, ըստ խորանների հայ մեկնիչների, համարվել են աստվածային վայելչության գործոններից մեկը[15]: Այդ խիստ զգայական գործոնը թույլ է տալիս զգալ և ճանաչել Աստծուն: Սարյանի մոտ Աստծուն փոխարինում են Բնությունը, Արարչությունը:

Մենք կրկնում ենք. Սարյանի արվեստում հազվադեպ են հայ միջնադարյան արվեստի ուղղակի ազդեցությունները, ինչպես նաև հին եգիպտական, ռոմանական և այլն: Բայց նա հայտնագործում է գունատոնային հարաբերություններ, հոծ սիլուետային առարկայական խարակտեր և մի քանի մոտիվներ, որոնք առկա էին հայկական և ռոմանական միջնադարում:

Գույնի առումով դրանք տաք ու սառը գույների կոնտրաստներն են, որ կային միջնադարյան մանրանկարչության չատ նմուշներում՝ կարմիր գույների հետ կարմրի մգացում ծիրանիից ու մանուշակագույնից մինչև գրեթե սև և կարմրի պայծառացում ծիրանիից ու մանուշակագույնից մինչև նարնջագույն և դեղին, կանաչի դեպքում՝ կանաչի մգացում մինչև զմրուխտ ու հողականաչ և բացում մինչև դեղնականաչ և դեղին, կապույտի դեպքում՝ երկնագույնից մինչև մուգ կապույտ (լազուր կամ ուլտրամարմին) և մեղմացում մինչև սպիտակ գունաթթեր: Այս գույները մեծ կամ փոքր մակերեսներով ապրում են կողք կողքի և սրում խարակտերը: Որոշ նկարներում (օրինակ, Քալաքի ծաղիկները, 1914) նկատվում է ծաղկեպսակների ոճավորում՝ ձևերը հասցնելով էլիպսային ու շրջանաձև զարդաձևերի պահպանելով պայծառ կոլորիտը (ինչպես Հաղպատի 1211թ. Ավետարանում):

Հայ միջնադարյան մանրանկարչության պատկերային և պատկերագրական տարբեր հնարների հետ նմանություններ հանդիպում են Սարյանի բոլոր շրջանների նկարներում: Օրինակ՝ «Արևելյան հեքիաթ» (1903) ջրաներկում ծառի սաղարթում կին է պատկերված, իսկ պատերին կանացի սիլուետներ (այսինքն՝ կանայք տան մեջ), որ մեզ հայտնի է 11-րդ դարի գծային մանրա-

---

[14] Սարյան, Արվեստի մասին, էջ 105:

[15] Մեկնութիւնք խորանաց: Աշխ. Վ.Հ.Ղազարյանի, Մայր աթոռ Ս. Էջմիածին, 2004, էջ 204-216: V.H.Ghazarian, The Doctrine of Colour in Commentaries on Canon Tables. – Estratto dagli Atti del Quinto Simosio internationale di arte Armena – 1988, p. 687-694.

նկարչությունից (ջրաներկային) և «Ութ մանրանկարիչների Ավետարանից» (Կիլիկիա): Սարյանի նկարած աչքերը (մանավանդ կանացի) արտահայտիչ են և խոսուն նաև նշաձևությամբ՝ անկախ մեծ կամ փոքր լինելուց՝ սկսած նրա նկարած եգիպտական դիմակներից: Իսկ ըստ Վիտելլոյի (Թովմա Աքվինացու լեհ ընկեր աստվածաբան)՝ առավել զեղեցիկ են նշաձև աչքերը[16]: 16-րդ դարում Ջորջո Վազարին բարձր Վերածննդի դիրքերից կշտամբում էր Ջոտտոյին, որ աչքերը նշաձև է նկարել և ոչ կլոր[17]: Սարյանական լեռները, սկսած 1914-ից և մանավանդ 1918-ից հետո, արխետիպային ազգակցություն ունեն Անիի մոտ պատկերազարդված 11-րդ դարի Մողնու Ավետարանի մի քանի տերունական նկարների լեռների հետ, որոնք տարբեր են բյուզանդական և ռուսական իկոնաների լեռներից:

Բայց դա և ասածներս չեն նշանակում, թե Սարյանը միջնադարի նկարիչ է համեստ քահանայի կամ վանականի պես: Նա 20-րդ դարի մեծ նկարիչ է և մեծ արտիստ, որը ոչ միայն Հայաստանը, այլև Եգիպտոսը, Թուրքիան և Իրանը ներկայացրել է նուիրական խորքային, որքան Հայաստանը (ափսոս, որ զրկվել ենք նրա փարիզյան նկարներից): Եվ նրա անմիջականությունը բխում է գունահարվածի և դեկորատիվության ապշեցուցիչ դիպուկությունից ու տիպականությունից, զարմանալի կենդանությունից, որոնց համար նա պարտական էր 20-րդ դարի սկզբի ռուսական դպրոցին, իմպրեսիոնիստներին, Գոգենին, Սեզանին և, իհարկե, 20-րդ դարասկզբի այն հոգևոր-մշակութային մթնոլորտին, որ ծնում էր Բլոկի և Բելիի, Տերյանի և Զարեհցի պես հանճարների, Ռերիխի, Կանդինսկու և Պետրով-Վոդկինի պես մեծությունների:

Սարյանն ամբողջ կյանքում խորացրեց այն հիմնական արտահայտչամիջոցները, որոնք ձեռք էր բերել երիտասարդ հասակում և հարստացրել ու ազգային ցայտուն կերպ տվել իր հայրենիքում: 20-րդ դարի չատ քիչ նկարիչներ են հասել նման զարմանալի հումանիզմի, դեկորատիվ ու մոնումենտալ տիպականացման, որ դիտողի հոգում անսպառ կենսական էներգիա է ճառագում:

---

[16] Տե՛ս L.Venturi, History of Art Criticism, New York, 1936, p. 72.
[17] Նույն տեղում, էջ 106:

Մհեր ՆԱՎՈՅԱՆ

ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ԵՐԳՎԱԾՔԻ ՄԻ ՔԱՆԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՇՈՒՐՋ

Առաջարկվող թեման առնչվում է հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտական արվեստի ուսումնասիրման կարևորագույն հիմնահարցերին: Խնդրի հիմնավորվածությունը և դրվածքը հստակեցնելու համար անհրաժեշտություն է հոգևոր երաժշտության ուշմիջնադարյան պատմական մի անդրադարձ:

Հայ միջնադարյան մասնագիտացված կամ հոգևոր երաժշտաբանաստեղծական արվեստի զարգացման դասական շրջանի ավարտին այն ներկայանում էր իսկապես մասնագիտացված մշակույթի բոլոր հատկանիշներով. հեղինակային էր, գրավոր ավանդույթ ուներ, դասավանդվում էր, գիտականորեն ուսումնասիրված, գիտակցված էր և այլն:

Ուշ միջնադարի ընթացքում հայ միջնադարյան մշակույթի կրած բազմաթիվ փոփոխությունները չէրջանցեցին նաև հայ հոգևոր երգարվեստի ոլորտը: Երաժշտական բնագավառի մեծագույն կորուստը, իհարկե, խազարվեստի անկումն էր: Այն տևական մի ընթացք եղավ, որը ձգվեց XV-XVI դարերից ընդհուպ մինչև XIX դարի սկիզբը: Հատկանշական է, որ XVIII դարի վերջին պոլսահայ տեսաբանների միջև ծագած բանավեճը ծավալվում էր նոր երաժշտական նիշեր ստեղծելու կամ խազագիր ավանդույթը չարունակելու երկընտրանքի չուրջ[1], և համբարձում Լիմոնճյանին հակաճառողները, ամենայն հավանականությամբ, ծանրակշիռ փաստարկներ ունեին նոր ձայնագրությունը չընդունելու համար: Վերջապես հայտնի են պնդումներն այն մասին, որ Գրիգոր Գապասակալյանը տեղյակ էր խազագրության սկզբունքներին, կամ էլ, որ XVIII դարում և XIX դարի սկզբին դեռևս կարելի էր հանդիպել խազագիր գրառումների, որոնց հեղինակները սոսկ արտագրող գրիչներ չէին, այլ նշանների երաժշտական արժեքին տեղյակ անձնավորություններ[2]: Ինչևէ, հակառն այն է, որ խազագրությունն արդեն հասու չէր շատ երաժիշտների, չէր բավարարում ժամանակի երաժշտական անհրաժեշտությունները իր միջնադարյան, ներքին իռացիոնալ տրամաբանության, խրթին ու

---

[1] Արիստակէս ՔՀնյ. Հիսաբլեան, Պատմութիւն հայ ձայնագրութեան եւ կենսագրութիւնք երաժիշտ ազգայնոց 1768-1909, Կ.Պոլիս, 1914, էջ 14:

[2] Ռ.Աթայան, Հայկական խազային նոտագրությունը, Երևան, 1959, էջ106, 107:

խճողված համակարգի կամ մասնատված լինելու, մասնակի կորուստներով, սակավ մասնագետների իմացությամբ պահպանված լինելու պատճառով: Արդյունքն այն էր, որ հիշյալ ժամանակահատվածում հայ միջնադարյան երաժշտաբանաստեղծական արվեստի հիմնական հատկանիշներից այդ մեկի աղավաղումը հոգևոր երգը դարձրեց ավանդական կենցաղավարման և փոխանցման մշակույթի նման հայ մոնոդիկ արվեստի ժողովրդական և ժողովրդապրոֆեսիոնալ ճյուղերին:

Տարբերությունը նշվածներից այն էր, որ հոգևոր երգի ավանդումը, այնուհանդերձ, ենթադրում էր խիստ կանոնական մոտեցումներ: Եկեղեցում նույնիսկ բանավոր փոխանցումը կազմակերպվում էր ձայնեղանակային նորմերի պարտադիր պահպանման, կատարողական մի շարք առանձնահատկությունների և սկզբունքների անվթար փոխանցման միջոցով: Սակայն, որպես բանավոր մշակույթի, հայ հոգևոր երգը չէր կարող խուսափել տարբերակումներից, որոնք այնքան հատուկ են երաժշտական արվեստի և՛ ժողովրդական, և՛ ժողովրդապրոֆեսիոնալ ճյուղերին:

Միջնադարյան մասնագիտացված երաժշտական մշակույթի հսկայական մի շերտ աստիճանաբար ընկղմվեց դարերի մշուշի մեջ և դարձավ անընթեռնելի, անթեղված ժառանգություն: Դրան զուգահեռ, ծիսական ամենաանհրաժեշտ կիրառելիության պայմանով հազարավոր հոգևոր երգեր շարունակեցին կենցաղավարումը որպես բանավոր ավանդույթի դրսևորում: Բնականորեն տարբերակվելով և ենթարկվելով որոշակի տեղային երաժշտական ավանդույթների՝ ի վերջո XVIII-XIX դարերի սահմանագծին հայ հոգևոր երգը ձևավորեց ավանդական երգվածքների հինգ ճյուղ, որոնց մեջ որոշակիորեն առանձնացվում էր էջմիածնականը որպես կենտրոնական, հիմնական[3], հետևապես միջնադարյան ավանդույթին առավել հարազատ: Սակայն դա չէր նշանակում, թե մյուս երգվածքները և այդ թվում նաև մխիթարյան երգվածքը բոլորովին հետաքրքրություն էին, և կամ էջմիածնական երգվածքն ամբողջությամբ անաղարտ էր:

Խնդիրն առավել սրվեց XIX դարի կեսերին, երբ հատկապես պոլսահայ տեսաբանների ջանքերով փորձեր արվեցին ոչ միայն ձայնագրելու, այլև միօրինակության բերելու հայ հոգևոր երգի երաժշտական նկարագիրը: Հայտնի է, որ նշանավոր երաժշտաբեսերից յուրաքանչյուրն իր իմացած տարբերակներն էր համա-

[3] Ն.Թահմիզյան, Մակար եկմալյան, Երևան, 1981, էջ 66:

րում կատարյալ և իր ձայնագրություններն անթերի[4]:

Դուլդն-ինչ սխալված չենք լինի, եթե ասենք, որ խնդիրն իր սրությունը չի կորցրել ցայսօր և ընդհակառակը՝ առավել խորացել է, որովհետև ավանդական երգվածքների ուսումնասիրության, դրանց համեմատական քննության արդյունքներն ուղղակի կարող են խթանել խազերի՝ տեղում դուխով հիմնահարցի լուծումը:

Մյուս կողմից և՛ բանավոր սկզբունքով փոխանցված լինելը, և՛ երգվածքների առկայությունը առիթ են տվել ծայրահեղ մեկնաբանությունների այն իմաստով, որ կամ այսօր ունեցածը համարվել է միջնադարյան երաժշտական վաստակի ուղղակի և բացարձակ անխաթար արտահայտություն, կամ ընդհակառակը՝ սոսկ XIX դարի երաժշտական մշակույթի արտադրանք: Ու թեև սրանցից ոչ մեկը լուրջ արտացոլանք և հիմնավորում չի գտել գիտական գրականության մեջ, սակայն անհրաժեշտ զգուշավորությունը երաժշտական խնդիրներ քննելիս մեր գիտական ուսումնասիրությունների պարտադիր պայմանն է: Ավանդական երգվածքների համեմատությունը նախ հնարավոր կդարձներ բացատրել հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստի ուշմիջնադարյան զարգացումների ընթացքը, հասկանալ, բացատրել երգվածքների միջև գոյություն ունեցող տարբերությունները, և հետո, որ ամենակարևորն է, բացահայտված ընդհանրությունները ուղղակիորեն կվկայեին միջնադարից անխախտ ու անաղարտ պահպանված երաժշտական միջուկի մասին: Դրա հաշվարկով կարելի կլիներ և՛ վստահորեն զանազան ուսումնասիրություններ կատարել, և՛ վճռականորեն տեղից չարժել խազերի հիմնախնդիրը:

Մեր դիտարկումների համար առանձնացրել ենք Մաշտոցին վերագրվող ապաշխարության կարգերի մի քանի ողորմաներ, որոնց թաշճյանական գրառումները, ըստ Նիկողոս Թահմիզյանի, իսկապես հնագույն չերտ են ներկայացնում[5]: Մեր խնդիրը այդ նույն չարականների մխիթարյան տարբերակների հնությունը պարզելը չէ, այլ մի քանի տարբերություն ընդգծելը և այն ընդհանրությունները շեշտելը, որոնց մասին արդեն նշեցինք:

Նախ մեկ անգամ ևս անդրադառնանք այն խնդրին, որ

---

[4] Մ.Մուրադյան, Հայկական երաժշտական մշակույթի պատմություն, հ.2, Երևան, 1970, էջ 111-113:

[5] Ն.Թահմիզյան, Մեսրոպ Մաշտոցն ու հայ հոգևոր երգարվեստը, «Բանբեր Մատենադարանի», հ. 7, 1964, էջ 197-201:

թաշճյանական գրառումներն էջմիածնական տարբերակներ են, թեև այսօր էլ կարելի է հանդիպել երաժիշտների և հոգևորականների, ովքեր պնդում են, թե հոգևոր երգի թաշճյանական տարբերակները պոլսահայ երգվածքն են ներկայացնում: Այս պնդումների հիմքն այն է, թե թաշճյանը գրառել է Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու երգածը: Սակայն տեսակետն առաջ քաշողները չրջանցում են այն հայտնի կենսագրական փաստը, համաձայն որի Գևորգ Դ-ն հայ հոգևոր երգը սովորել էր էջմիածնից Պոլիս եկած մի դպիրից. և ավելին, խոսքը ավագ սարկավագի Թեոդորոսի մասին է, ով Սիմեոն Երևանցու աշակերտն էր[6]:

Բացի այդ հայտնի է, որ թաշճյանի ձեռքի տակ եղել են հոգևոր երգի այլ տարբերակներ ևս, ի դեպ՝ նաև մխիթարյան տարբերակներ[7], որոնցից ընտրողաբար օգտվել է երաժիշտը: Հետևապես, թաշճյանի գրառած չարակնոցը, բացի էջմիածնական ավանդույթի ներկայացնելուց, նաև որոշակի քննական սկզբունքով կազմված ժողովածուի արժեք ունի: Ըստ գիտական ուսումնասիրությունների՝ նշանակալի չափով համընկնում է մինչնադարյան օրինակների հետ[8]: Վերջապես մեր խնդիրը երգվածքների առաջնայնությունը պարզելը չէ, այլ երաժշտագիտության մեջ[10] չրջանառու օրինակների և Հայր Ղևոնդ Տայանի գրառումների համեմատությունը:

Մեծ պահքի կարգերի տասը ողորմյաների համեմատությունը հետևյալ արդյունքն ունի: Համեմատված ԱՋ երեք ողորմյաների թաշճյանական և տայանական տարբերակները բոլորովին տարբեր են: Դրանք են «Վտանգիմ ի բազմութենէ», «Ողորմեա ինձ Աստուած» և «Զղջման լսոյ զարտասուս» չարականները: Զարմանալիորեն տարբեր է նաև Մխիթարյան ԳՋ «Ողորմեա ինձ Աստուած» չարակնոը: Ասացինք զարմանալիորեն, որովհետև այս ձայնեղանակի ձայնակարգի հիմքը կազմող տետրախորդը

---

[6] Մ. եպ. Սմբատյան, Հայկական ձայնագրութիւն, «Արարատ», 1881,(թիւ Ը), էջ 480,481: Նաև՝ Մ.Աբեղյան, Գեւորգ Դ Մեծաւորի կաթողիկոս Ամենայն Հայոց, Վաղարշապատ, 1889, էջ 35:

[7] Ա.զգային տեսութիւն, «Արարատ», 1879, էջ 269-275: Նաև՝ Ն.Թահմիզյան, «Արարատ»-ն ու երգ-երաժշտության հարցերը, «Էջմիածին», 1969, հ. Գ, էջ 39:

[8] Ռ.Աթայան, «Շարական», Հայկական սովետական հանրագիտարան, հ.8, էջ 460:

[9] Ձայնագրեալ Շարական հոգեւոր երգոց Սուրբ եւ Ուղղափառ Առաքելական եկեղեցւոյս Հայաստանեայց, Վաղարշապատ, 1875:

[10] Շարական Հայաստանեայց եկեղեցւոյ, Ձայնագրեաց Հ.Ղեւոնդ Վ. Տայեան, հ. Գ, պրակ 1-6, Վենետիկ – Ս.Ղազար, 1963:

կիսող մեծացված սեկունդան, որն այնքան հեշտ ճանաչելի է դարձնում ձայնեղանակը, տայանական օրինակում ներքևից է կցվում վերջնաձայնին բողոքովին այլ երանգ հաղորդելով շարականի երաժշտական նկարագրին:

Բկ «Մեղայ քեզ Տէր» ողորմյայի երկու տարբերակները թեև ձայնակարգով մոտ են, բայց մեղեդիապես տարբեր: Ընդհանուր նմանություն ունեն Բկ «Յամենայն ժամ» շարականի տարբերակները, որտեղ ձայնակարգերը նույնական են: Ձայնակարգային տարբերակումով, սակայն մեղեդիապես նման են Դշ «Անկանխմ առաջի քո» ողորմյայի տարբերակները: Ձայնակարգային նույնականություն և մեղեդիական կորիզների նմանություն ունեն Գկ «Մաքսաւորն հառաչանօք» ողորմյայի բաղդատվող օրինակները: Վերջապես շատ մոտ են Դկ «Տէր որ ի մէջ լերինն» ողորմյայի զույգ դրսևորումները:

Ինչ խոսք, տաս շարականի համեմատությունը լուրջ եզրահանգումների տանել չի կարող, բացի տարբերությունների և ընդհանրությունների ընդհանուր արձանագրությունից: Սակայն հնարավոր է մխիթարյան օրինակներն առանձնացնող որոշ տարբերություններ բացատրել թող որ հպանցիկ դիտարկմամբ: Այդ առանձնահատկություններից է նախ այն, որ նույնիսկ վանկային տիպի շարականների հանգաձևերում, թաշճյանական օրինակների մեջ հանդես եկող զարդարուն վանկերը Տայանի գրառումներում կամ բացակայում են, կամ դրսևորվում հիմնականում երկու-երեք հնչյուններով և ներվանկային ոճին հատուկ ռիթմիկ կոտորակումով:

Սկզբից լեթ աչքի է զարնում այն, որ Հայր Ղևոնդը շարականները գրառել է եվրոպական երաժշտության չափանիշներին համաձայնեցնելով: Բացի եվրոպական նիշերի կիրառությունից, շարականների մեղեդին տակտաված է և չափանշված: Դրա հետևանքով այն որոշակի սքեմատիկ բնույթ է ստանում, ռիթմիկ փիգուրներն առավել պարզեցվում են, և հաճախ նախատակտեր են առաջ գալիս: Թեև փոփոխական չափեր են կիրառվում, սակայն, միևնույն է, մեղեդու ծավալման բնական ճկունությունն արհեստականորեն կաղապարվում է: Ուստի հայ երաժշտության մեջ հարաբերական ազատ չափի մոնոդիաներ գրառելիս որոշակի չափի հաստատումը և տակտավորումը նպատակահարմար չէ և քիչ է կիրառվել:

Կարող ենք մեզ թույլ տալ ենթադրել, որ այսօր էլ մխիթարյան հոգևոր ծեսի մեջ ընդգրկվող երգերն ունեն նույն ազատ և ճկուն մեղեդիական նկարագիրը, որը հատուկ է առհասարակ

հայ մոնոդիկ մշակույթին և որոշակիորեն տարբեր է Հայր Ղևոնդ վարդապետ Տայանի գրառումներից: Սա սոսկ ենթադրություն է, քանի որ, ցավոք, առիթ չենք ունեցել շատ լսելու կենդանի կատարումներ:

Եվրոպական երաժշտության առավել խորքային ազդեցության հետքեր ևս կան: Մեր դիտարկած ԲՋ «Բազում են քո գթութիւնդ» ողորմյայի ձայնակարգը, ինչպես Թաշճյանի մոտ, կվինտային հիմքով դորիական մինոր է, որը երբեմն դրսևորում է վեցերորդ աստիճանի իջեցում, որով և էոլական երանգավորում է ստանում: Հայր Ղևոնդ վարդապետ Տայանի օրինակում դիմող ձայնը առաջին օկտավայի լյան է, վերջնաձայնը առաջին օկտավայի ռեն: Սակայն վերջնաձայնը առկա է նաև երգի սկզբում, ինչը բնորոշ չէ ոչ միայն հայ հոգևոր, այնպես էլ ժողովրդական երգին (մենք չենք խոսում ձայնեղանակային այն դրսևորումների մասին, որտեղ դիմող և վերջավորող ձայները նույնն են, օրինակ ԱՋ-ն, ըստ Թաշճյանի, և կամ քիչ հանդիպող այլ օրինակները): Մինչդեռ եվրոպական երաժշտության մեջ T-ի կրկնությունը սկզբում և վերջում նույնիսկ օրինաչափություն կարող է համարվել: Նման օրինակ կա նաև ԳՋ «Ողորմեա ինձ Աստուած» շարականի ձայնակարգում: Մյուս կողմից շարականի կիսահանգաձևում բավականին հստակ դերիշխում է առաջին օկտավայի ֆա հնչյունը, որը ձայնակարգի մյուս հենակետերի հետ կազմում է եվրոպական երաժշտության համար խիստ տիպական մինոր եռահնչյունը:

ԳՋ «Ողորմեա ինձ Աստուած» շարականի մխիթարյան օրինակը գրված է դարձյալ շատ որոշակիորեն դրսևորվող լյա մաժորում: Նույնիսկ նշանները դրված են բանալիում: Մեզ ծանոթ ԳՋ-ի մինորային բնույթին հեռու և միջնորդավորված նմանություն է հաղորդում հանգաձևում և կիսահանգաձևում T-ի ներքևից մեծացված սեկունդայի շղթայությունը, որպես հիպո-ոլորտ, և իջեցված երրորդ աստիճանի մեկ կիրառությունը:

Իհարկե, եվրոպականի հետ չփումները Մխիթարյանների դեպքում ո՛չ պատահական են և ո՛չ էլ անհետ կարող էին մնալ: Դեռևս Մխիթարյան միաբանության ձևավորման փուլում Մխիթար Սեբաստացու աշակերտներից մեկը՝ Խաչատուր Էրզրումցին, հայ իրականության մեջ առաջիններից էր, որ առաջ քաշեց եվրոպական երաժշտական մշակույթի հետ առնչությունների անհրաժեշտության խնդիրը: Իսկ հետագայում բնական ակտիվ չփումներն իհարկե ինչ-ինչ տեսանկյուններից չէին կարող չազդել երգվածքի առանձնահատկությունների բյուրեղացման վրա: Սակայն

մեզ առավել հետաքրքիր են այն հեռակա կամ մոտիկ նմանությունները, որոնք նկատելի են Տայանական և Թաշճյանական տարբերակների միջև: Դրանք գոնե մեր օրինակներում ի հայտ են գալիս սկզբնական հատվածներում, թեև բուն սկսող դարձվածքները համարյա նման չեն: Կարծում ենք՝ առավել շահեկան համեմատություն կարող էր լինել մխիթարյան օրինակների և մյուս կողմից Տնտեսյանի գրառած պոլսական, Զերչյանի գրառած արմաշական տարբերակների միջև: Ընդհանրություններն այս դեպքում կարծում ենք ավելի շատ պետք է լինեն, քանի որ մխիթարյանների մշակութային չփումները պոլսահայ իրականության հետ անհամեմատ ավելի ակտիվ են եղել: Ինչևէ, նույնիսկ հայ հոգևոր երգի արտաքուստ իրարից այնքան հեռու ճյուղերի միջև համեմատությունը որոշակի ընդհանրություններ ի հայտ բերեց միջանկյալ բնորոշ դարձվածքների առումով: Սա մեկ անգամ ևս փաստում է, որ հոգևոր երգի հինգ ավանդական երգվածքների համեմատությունն օրախնդիր է: Դրա առաջին և հաջող ձեռնարկներից թերևս մեկը Աստղիկ Մուշեղյանի առենախոսությունը եղավ: Աշխատանքի հետևողական չարունակությունը լիահույս ենք, որ վեր կհանի հայ միջնադարյան երաժշտական մտածողության մեղեդիական տարրերի այն բնույթը, որը դարերի մեջ կայուն է, անաղարտ և հայ մշակույթի երաժշտական նկարագրի ողնաշարն է կազմում: Այս ճանապարհին Թաշճյանի, Տնտեսյանի, Զերչյանի, Էմի Աբգարի, Զիլինկիրյանի և այլ երաժիշտների տարբեր երգվածքներին առնչվող դրառումների կողքին Մխիթարյան հայրերի կուտակած հոգևոր երաժշտական ժառանգությունը թանկարժեք վաստակ է:

ՊԱՏԱՐԱԳԻ ՄԵՂԵԴԻՆԵՐԻ ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԸ

Ինչպես հայտնի է, Կոմիտասը Պատարագի մեղեդիներ մշակել է իր ստեղծագործական կյանքի զրեթե ողջ ընթացքում, տարբեր առիթներով: Ռ.Աթայանը քննարկում է Կոմիտասի դաշնակած տարբեր տարիներին գրված 7 Պատարագները[1]: Առաջինը գրվել է 1892թ., երբ Կոմիտասը դեռ երաժշտական պրոֆեսիոնալ կրթություն չուներ, երկրորդը՝ Բեռլինում ուսանելու տարիներին: Ինչ վերաբերում է երրորդին, ապա այն վերակազմվել է Կոմիտասի տարբեր ձեռագիր տետրերից քաղված նյութերի հիման վրա, և դրա ստեղծման տարեթիվ է առաջարկվել 1899-1901 թթ.[2]: Երեք Պատարագն էլ ամբողջական չեն և ընդգրկում են Պատարագի արարողության դպրաց դասի երգամասի տարբեր հատվածները: Մենք դրանք պայմանականորեն կանվանենք նաև «Ա», «Բ» և «Գ» Պատարագներ՝ ըստ Ռ.Աթայանի դասակարգման[3]:

Կոմիտասի առաջին Պատարագը[4]:

1892թ.՝ «Ա» Պատարագի ստեղծման ժամանակ, Կոմիտասն արդեն սարկավագ էր, բայց դեռևս չէր ավարտել ճեմարանը և փաստորեն երաժշտական պրոֆեսիոնալ կրթություն չուներ:

Մտեղծագործությունը Պատարագի արարողության երկրորդ մեծ բաժնի՝ Հավատացելոցի, այսինքն բուն Պատարագի մի քանի հատված է՝ հիմնականում խմբված այսպես կոչված «Կանոնի» շուրջը[5]: Պատարագի արարողության Կանոնի հատվածում հացն ու գինին փոխակերպվում են Հիսուսի մարմնին ու արյանը: Ընդգրկված են «Սուրբ-սուրբ»-ից մինչև «Հոգի Աստուծո» ընկած երգեցողությունները և պատասխան հատված «Տէր, ողորմեա»:

«Սուրբ-սուրբ»-ին հաջորդում է «Հայր երկնաւոր» երգը, որով դպիրները դիմում են Աստծուն, որ իր Որդուն մահվան հանձնեց որպես մեղքերի պարտապան: «Նրա արյան հեղումով» դպիրներն աղաչում են ողորմած լինել:

---

[1] Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. VIII, Երևան, 1998, նախաբան:
[2] Նույն տեղում, էջ 13, 19, 223:
[3] Նույն տեղում, էջ 13:
[4] Գ.Ա.Թ, Կոմիտասի դիվան, ծրար 1786: Կոմիտաս, հ. VIII, էջ 185-94:
[5] «Սրանով Ս. Պատարագի Կանոնն է, որ տեղի կ'ունենա, այսինքն՝ Հիսուսի մարմինն ու արյունը խորհրդանշող հացն ու գինին Աստուծոյ առջև որպես զոհ կը մատուցվին ի տես ժողովրդյան», Վ.ազգեն Ա. Կաթողիկոս, Մեր Պատարագը, Բուխարեստ, 1945, Մայր Աթոռ Ս Էջմիածին, 1888, էջ 86:

Հաջորդ համարում՝ «Յամենայնի օրհնեալ ես Տէր» հատվածի ընթացքում քահանան օրհնում է հացը, գինին, աղերսում է, որ աստվածային աներևույթ զորությամբ նշխարը մարմին դառնա, և գինին՝ արյուն: Այնուհետև հաջորդում են «Որդի Աստուծոյ»-ն և «Հոգի Աստուծոյ»-ն:

Այսպիսով, ուսանող կոմիտասն ընտրել է Պատարագի արարողության գաղափարական և դրամատուրգիական կարևորագույն մասը՝ կանոնի հատվածը, որպես քրիստոնյայի և քրիստոնեական իրողության համար ամենակարևոր դրվագ:

Առաջին Պատարագում Կոմիտասն ընդգրկել է Պատարագի մեղեդիների այն տարբերակները, որոնք կերտեել է նաև Եկմալյանը: «Հաստուն» Պատարագում[6] Կոմիտասը չի ընդգրկել այս մեղեդիներից ոչ մեկը:

Ստեղծագործությունը գրված է դասական հարմոնիայի կանոններից անկախ: Չկա ձայնատարության նկատմամբ այնպիսի վերաբերմունք, որը կցուցաբերեր հարմոնիային տիրապետող կոմպոզիտորը: Այնուամենայնիվ, ուշադրության արժանի են ներդաշնակման որոշ տարրեր: Մասնավորապես, որոշ խմբերգերի մշակման ընթացքում հանդիպում ենք մեղեդային գծի զուգահեռ կվարտաններով անցկացման կրկնապատկված երկու օկտավաններում: Արդյունքում առաջանում են զուգահեռ ունեցիմակորդներ՝ կվարտա-կվինտակորդային ներքին կառուցվածքով: Ներդաշնակման այսպիսի սկզբունքի մեջ կարելի է տեսնել Կոմիտասի հետագա գրելաոճի սաղմերը՝ կվարտա-կվինտային համահնչյունների ձևավորման ճանապարհը: Այդ իմաստով Կոմիտասի ստեղծագործական կենսագրության մեջ պատմականորեն կարևոր արժեք ներկայացնելուց բացի, առաջին Պատարագն արդեն ինքնուրույն մտածողության որոշակի աստիճան է ներկայացնում:

Կոմիտասի երկրորդ Պատարագը (Բեռլինյան Պատարագ):

Կոմիտասի «Բ» Պատարագի՝ տիտղոսաթերթում գրված է. «Berlin 15/9, Armenische Kirchengesange von Archimandrit Komitas Keworkian»[8]:

Ստեղծագործությունը ներկայացնում է հայ ավանդական Պատարագի երգեցողությունների, ինչպես նաև եկեղեցական

---

[6] Պայմանականորեն «Հասուն» ենք անվանում 1914-15-ին արական երգչախմբի համար մշակված Պատարագը: Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. VII, Երևան, 1997:

[7] ԳԱԹ, Կոմիտասի դիվան, ծրար 1648: Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. VIII, էջ 195-220:

[8] Կոմիտաս, հ. VIII, էջ 245:

տարբեր տոներին վերաբերող չարականների և սրբասացությունների մշակումներ: Տասներկու համարներից միայն չորսն են պատարագից «Փառք քեզ, Տէր», «Սուրբ-սուրբ», «Յամենայնի» և «Հայր մեր», իսկ մյուսները եկեղեցական օրացույցի տարբեր օրերին վերաբերող եղանակներ են Խաչելության, ս. Զատկի, Մեծ Պահքի, Ջրօրհնյաց և այլն: Դա ապացուցում է ստեղծագործության համերգային կատարման նպատակով ստեղծված լինելը, ինչը ենթադրում էր Ռ.Աթայանը[9]:

Կոմիտասի առաջին պատարագը, որպես ապագա հոգևորականի աշխատանք, հենվում էր ծեսի գաղափարապես կարևոր մասի՝ կանոնի վրա, իսկ երկրորդ պատարագը, որպես կոնսերվատորիայի ուսանողի աշխատանք, ցույց է տալիս ուսանողի մակարդակը թե՛ նյութի ընտրության, թե՛ գիտելիքների դրսևորման հարցում:

Գ.Գյոդակյանը նկատում է, որ Կոմիտասը 1899թ. հունիսի 14-ին Բեռլինի Շարվենկոյի երաժշտանոցի դահլիճում իր ներկայացրած հայ հոգևոր ստեղծագործություններում ընդգրկել է «Փառք քեզ, Տէր»-ը և «Ով զարմանալի»-ն, և չի բացառում, որ դրանք եղել են հենց «Բեռլինյան» պատարագի համապատասխան հատվածները[10]:

Ստեղծագործությունը հիմնվում է հայկական ավանդական մեղեդիների վրա, որոնք հարմարեցված են տեքստերի գերմաներեն թարգմանություններին: Եթե Կոմիտասը «Ա» պատարագում ավանդական եղանակները կիրառել է նուշնությամբ, ապա այս պատարագում ավանդական եղանակները ընդհանուր առմամբ պահպանված են, բայց փոփոխվել են որոշ տարրեր՝ կապված մի կողմից՝ գերմաներեն տեքստի, մյուս կողմից՝ ներդաշնակման արևմտաեվրոպական սկզբունքների հետ: Մեղեդիների մյուս կարևոր տարբերությունը ավանդական եղանակներից մետրական հավասարաչափ բաժանումներն են:

Կոմիտասի Բեռլինյան պատարագը, գրված լինելով եվրոպական երաժշտության կանոններով, մասնագիտական հմտություններին տիրապետող կոմպոզիտորի աշխատանք է: Ներդաշնակումն իրականացված է եվրոպական ֆունկցիոնալ հարմոնիայի կանոններով յուրքաքանչյուր հնչյուն որպես մաժորա-մինորային կառույցի տարր մեկնաբանելու և ըստ այդմ լայնորեն չեղումներ կիրառելու իմաստով: Երբեմն ավելանում են պոլիֆոնիկ գծերը: Ըստ էության, հայ երաժշտության ձայնակարգերը և ինտոնա-

[9] Նույն տեղում, նախաբան:
[10] Նույն տեղում, էջ 246:

ցիաները համակցվում են ֆունկցիոնալ հարմոնիայի ներքին տրամաբանության հետ: Իրականում սա դյուրին խնդիր չէ, եթե հաշվի առնենք, որ հաճախ այդ մեղեդիների կառուցվածքը հակասում է եվրոպական երաժշտության մտածելակերպին: Իրականում մեծ վարպետություն էր անհրաժեշտ իրարամերժ երկու երևույթների համար ընդհանուր առանցք գտնելու և նրանց միավորելու համար: Կոմիտասն այդ խնդիրը կարողացել է իրականացնել: Միևնույն ժամանակ նա չատ զգուշությամբ է վերաբերվել խոսքին և չի աղավաղել բառերը և դրանցով կազմված իմաստային կառուցվածքները, այլ գտել է գերմաներեն խոսքի ու հարմոնիայի և հայկական մեղեդիների փոխզիջումային համակցման այնպիսի ձև, որից գեղարվեստական առումով չի տուժել դրանցից ոչ մեկը: Մյուս կողմից էլ չի կարելի չնկատել, որ հայ երաժշտության հնչողական միջավայրը այնուամենայնիվ միշտ չէ, որ պահպանվել է:

Կոմիտասի երրորդ պատարագը[11]:

Պատարագը Կոմիտասի երկերի ժողովածուի խմբագիրների կողմից վերնագրվել է հետևյալ կերպ. «Հատվածներ քառաձայն պատարագից (1899-1901) տղաների երկձայն խմբի՝ դիսկանտների, տենորների և բասերի համար»[12]: Հեղինակն ինքը կատարողական կազմը չի նշել:

Հրատարակված տարբերակը պատարագի վերակազմություն է: Այս պատարագին վերագրվող 10 կտորները ենթադրաբար են հրատարակվել միասին: Ենթադրելի է նաև, որ պատարագը գոյություն է ունեցել ամբողջաբար:

Խմբերգերից ոչ մեկը չի ենթարկվում մետրական հավասարաչափ բաժանումների, ի տարբերություն «Բեռլինյան» պատարագի: Ավելին, Կոմիտասը ոչ մի տեղ մետրի նշումներ չի տալիս: Մետրական միավորներն ազատ են և ենթարկվում են խոսքի իմաստային միավորներին: Ավելի ստույգ՝ տակտի գիծը նպատակ ունի առանձնացնել ամբողջական մտքերը:

Բանալու նշանների հարցում նորույթ ենք հանդիպում: Կոմիտասը «Հոգի Աստուծոյ» խմբերգի բանալու նշաններ է դրել «b» և «d» բեմոլները[13]: Այդպիսով, այս վաղ շրջանում գրված ստեղծագործության մեջ Կոմիտասն արդեն հստակ կարևորել է

---

[11] Նույն տեղում, էջ 19-26:

[12] Նույն տեղում, էջ 19:

[13] **Կոմիտաս**, հ. VIII-ում «Սուրբ Աստուած», «Մարմին Տէրունական», «Տէր ողորմեա» խմբերգերի բանալու նշանները, որոնք ևս ավանդական չեն, բնագրերում բացակայում են:

հայ երաժշտության ձայնակարգային տարբերությունը և արևմտաեվրոպական երաժշտության հետ ալտերացիոն նշանների բանալիում նշելու կարգի հետ անհամապատասխանությունը:

Ուշագրավ է մի քանի համարների ավարտն՝ առանց տերցիային տոնի, ինչը բնորոշ է Կոմիտասի հասուն գրելաոճին:

Ինչ վերաբերում է դասական իմաստով հարմոնիկ չեղումներին, ապա այդպիսի մոտեցում հանդիպում ենք միայն «Խորհուրդ խորին» և «Այսօր ժողովեալ» խմբերգերում: Այդ տեսանկյունից դրանք ոճական առանձին խումբ են կազմում:

«Գ» Պատարագում կիրառված 10 համարներից 5-ը քաղված են Կոմիտասի դիվանի 1645 ծրարից, որի մեջ պարունակվող տետրի վրա Կոմիտասի ձեռագրով գրված է. «Մանրմանր. Կոմիտաս վարդապետ, 1897-98[14], Բեռլին»: Այսինքն, փաստ է, որ առնվազն տվյալ 5 համարները գրվել են «Բեռլինյան Պատարագ»-ի հետ գրեթե միևնույն ժամանակ:

Ստացվում է, որ Բեռլինում նույն ժամանակաշրջանում Կոմիտասը գրել է երկու՝ ոճապես ծայրահեղորեն տարբեր Պատարագ: Մեկը՝ «Գերմանական»-ը, ներդաշնակված է արևմտաեվրոպական դասական երաժշտության օրենքների համաձայն, մյուսը՝ քննարկվող Պատարագը, Կոմիտասի ինքնուրույն գրելաոճի փնտրտուքն է ներկայացնում: Եթե երկու ստեղծագործությունները գրվել են գրեթե զուգահեռաբար, ապա կարելի է եզրակացնել, որ «Գերմանական» Պատարագը ներդաշնակվել է որպես ուսանողական աշխատանք, ոչ թե որպես ստեղծագործական համոզմունք: Ստեղծագործական համոզմունք տվյալ ժամանակաշրջանում ներկայացնում է հենց «Գ» Պատարագը: Մյուս կողմից էլ չի բացառվում, որ թե՛ մեկը, թե՛ մյուսը պարզապես ստեղծագործական փնտրտուքի արդյունք են:

Կոմիտասի առաջին երեք Պատարագների մի[ջ]ոցով տեսնում ենք կոմպոզիտորի ստեղծագործական ճանապարհը: «Ա» Պատարագը աշխատանք է մասնագիտական տեսանկյունից թերուս, բայց մեծ օժտվածություն ունեցող ստեղծագործողի, որը միայն ինտուիցիայով գրում է զուգահեռ կվարտաններով մշակումներ՝ ձայնատարության կոպիտ խախտումներով: «Բ» Պատարագը հարմոնիա և պոլիֆոնիա ուսումնասիրող ուսանողի գիտելիքների դրսևորումն է: «Բ» Պատարագում դասական հարմոնիայի մի[ջ]ոցների հագեցած կիրառությունը հավանաբար պայմանավորված է

[14] Կոմիտաս, հ. VIII-ի ծանոթագրությունում նշված «1897-99» տարեթիվը վրիպակ է:

նաև Կոմիտասի առջև դրված խնդրով՝ ցույց տալ դասական հարմոնիայի իմացությունը:

Փաստորեն, «Գ» պատարագը կամ գոնե նրա համարների մեծամասնությունը գրվել են 1897-8-ին Բեռլինում: Տվյալ ժամանակաշրջանում գրված լինելու իմաստով Կոմիտասի «Գ» պատարագը էական ստեղծագործական քայլ է դեպի հեղինակի հասուն մտածողությամբ ստեղծագործությունները խոսքի մեկնաբանության, մետրական բաժանումները խոսքի իմաստային տրամաբանությանը ենթարկելու, տակտի գծերը նախադասությունների վերջում կամ նախադասության իմաստային ամբողջություն կազմող միավորների միջև տեղադրելու, մետրական չափի նշումներ չդնելու իմաստով: Նոր մոտեցում է ի հայտ գալիս եղանակների ձայնակարգային կառուցվածքի մեկնաբանման, բանալու նշանների նկատմամբ:

Էական է նաև երեք պատարագներում ավանդական եղանակների նկատմամբ մոտեցման տարբերությունը: «Ա» պատարագում եղանակները բնօրինակից հեղինակը վերցրել է առանց փոփոխությունների, «Բ» պատարագում դրանք հիմնականում համընկնում են ավանդական եղանակների հետ, իսկ կատարված փոփոխությունները պատճառաբանված են խոսքի տեքստով, «Գ» պատարագում եղանակների ուրվագծերը էականորեն ձևափոխված են:

«ԿՈՍՏԱՆՅԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ». ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Հայ թատերական արվեստը պատմականորեն ձևավորվեց իբրև աշխարհագրական լայն ընդգրկում ունեցող մի բազդ կառույց: Իր գործունեությունը ծավալելով տարբեր երկրներում, տրոհված լինելով բազմաթիվ ինքնուրույն հատվածների, հայ թատրոնը ժամանակի ընթացքում կարողացավ ներկայանալ որպես ընդհանուր օրինաչափություններով զարգացող միասնական մի համակարգ: Ձևավորվեց նաև թատերական գործչի ուրույն մի տեսակ. հայ դերասանը՝ հայտնի, թե սակավ հայտնի, մանավանդ անցյալ դարակզբին, իր կյանքի գեթ մի հատվածն ստիպված էր անցնել իբրև թափառական, շրջիկ դերասան, դրանով իսկ պահպանելով կապը թատերական աշխարհի տարբեր հատվածների միջև: Ոմանց համար էլ թափառական կյանքը դարձավ գործունեության միակ կերպը: Ստեղծվեցին նաև համախոհ-արվեստագետների նոր միավորումներ՝ ընտանեկան թատերախմբեր, որոնք, այս առումով, շատ ավելի հեշտ էին հաղթահարում ինչպես ստեղծագործական, այնպես էլ զուտ կենցաղային շատ հարցեր: Հայ թատրոնի պատմությունից առավել հայտնի են քույր-դերասանուհիների՝ Արուսյակ և Աղավնի Փափազյանների, Երանուհի և Վերգինե Գարագաշյանների, Սիրանույշ և Աստղիկ Գանթարճյանների, Վարդիթեր և Հրանույշ Ֆելեկյան քույրերի անունները: Քիչ չեն նաև ամուսին-դերասանների խմբերը, որոնց ավանդն անուրանալի է հատկապես սփյուռքում՝ որոշ դեպքերում թատերական շարժման սկիզբը դնելով այս կամ այն գաղութում: Թովմաս և Պայծառ Ֆասուլյաճյանները երկարատև շրջագայություններից հետո իրենց հանգրվանը գտան Եգիպտոսի հայ համայնքում՝ նոր լիցք հաղորդելով տեղում ձևավորվող թատերական շարժմանը: Մանուել Մարությանը, կանգնած լինելով Իրանի հայ թատրոնի ակունքներում, իր տիկնոջ՝ Ռոզա Մարությանի ընկերակցությամբ չուրջ 30 տարիների ընթացքում շրջեց գրեթե ամբողջ գաղթաշխարհը: Հայ թատերական արվեստի զարգացման գործում իրենց ներդրումն ունեցան նաև Արմեն Արմենյանը և Եկատերինա Դուրյան-Արմենյանը, Օննիկ Վոլթերը և Բեատրիս Եգենյանը, Արփիար և Աստղիկ Վարդյան, Հայկ և Էմմա Արթիվ, Քրիստափոր և Ժենյա Մանար, Վարդո և Արտո Տերյան, Սուրաբյան, Ոսկանյան, Սիմոնոֆ ամուսինները:

Ազգակցական հիմք ունեցող թատերախմբերից (հայ դերասանական կյանքի յուրահատուկ երևոյթներից էին), այսպիսով, կազմավորվեցին նաև ամբողջական ընտանիք-թատերախմբեր: «Կոստանյան թատերախումբը» «Անդրանիկ», «Շիշմանյան ընտանիք» և այլ դերասանախմբերի կողքին աչքի ընկնողներից է:

Թատերախմբի անդամները հինգն էին՝ Մարգո Կոստանյանը՝ ընտանիքի մայրը, Միքայել Կոստանյանը՝ հայրը, Վոլոդյա Կոստանյանը՝ նրանց որդին, Ասյա Զիլինկիր-Կոստանյանը՝ նրանց դուստրը և Նորայր Զիլինկիրը՝ Ասյա Կոստանյանի ամուսինը: Տարիների համատեղ աշխատանքը մշակեց խմբի անդամներից յուրաքանչյուրի դերասանական նախասիրություները՝ հստակեցնելով նրանց տեղը այս կամ այն ներկայացման մեջ: Թատերախմբի հերոսուհի պրիմադոննան Մարգո Կոստանյանն էր. նրան էին հանձնարարվում գլխավոր դերերը գրեթե բոլոր բեմադրություններում: Հայրը՝ Միքայել Կոստանյանը[1], կատարում էր հերոսի կամ առաջին սիրահարի դերերը, նրանց դուստրը՝ Ասյա Զիլինկիր-Կոստանյանը, հանդես էր գալիս ինժինյու, իսկ որդին՝ Վոլոդյա Կոստանյանը՝ դրամատիկ և խարակտերային դերերում: Նորայր Զիլինկիրը, ի տարբերություն ընտանիքի մյուս անդամների, հազվադեպ էր խաղում, այն էլ՝ հիմնականում երկրորդական դերերում:

Խմբի գործունեությունը, բացի Ամերիկայի մայրցամաքից, ընդգրկեց հայ թատրոնի գրեթե բոլոր աշխարհագրական ոլորտները՝ Կովկաս, Ռուսաստան, Անդրկասպյան երկրներ, Եվրոպա, Միջին և Մերձավոր Արևելք:

Մարգո և Միքայել Կոստանյանները, ինչպես և հայ բեմի գործիչներից շատերը, չստանալով մասնագիտական կրթություն, իրենց դերասանական դասընթացն ստացան մեծ վարպետների հետ անմիջական շփումից և համատեղ աշխատանքի ընթացքում: Երկուսն էլ թե՛ իբրև անհատականություն և թե՛ իբրև դերասան, կայացան Սիրանույշի, Հովհաննես Զարիֆյանի և հատկապես Հովհաննես Աբելյանի ազդեցության ներքո:

Միքայել Կոստանյանը ծնվել է 1889-ին, Թիֆլիսում[2]: 1905-ին, երբ սաստկացան հայ-թուրքական ընդհարումները, Թիֆլիսում հաճախ էր ներկայացվում Ա.Սարդարյան-Արևշատյանի «Աս-

---

[1] Միքայել Կոստանյանի իրական ազգանունն Ալլահվերդյան է՝ կրտսեր եղբայրն է անցյալ դարասկզբին ճանաչում գտած դերասան Լևոն Ալլահվերդյանի: Մ.Կոստանյանը փոխեց իր ազգանունը, նույն՝ թատրոնի ասպարեզում եղբոր հետ չփոթմունք չառաջացնելու նպատակով:

[2] Տե՛ս «Ալիք» (Թեհրան), 1951, 29 հուլիսի, թիվ 167:

լան Բալասի կամ Երևանի առումը» պիեսի բեմադրությունը՝ Հովհաննես Աբելյանի մասնակցությամբ գլխավոր դերում: Երիտասարդ Մ.Կոստանյանը, խորապես տպավորված արտիստի խաղով, թատրոնն ընկալեց իբրև կարևոր գործոն ոչ միայն ազգապահպանման, այլև ազգային-ազատագրական պայքարում ընդհանրապես: Այդ գիտակցումով էլ տակավին երիտասարդ՝ 16-ը չբոլորած, նա եկավ թատրոն: Նույն՝ 1905-ից, Մ.Կոստանյանը խաղում էր Մուրաշկովի, Հավլաբարի ժողովրդական թատրոններում՝ դառնալով Արամ Վրույրի, Ամո Խարազյանի, Պողոս Արաքսյանի խաղընկերը: Այնուհետև նա մուտք գործեց Թիֆլիսի Արտիստական թատրոն՝ խաղալով Սիրանույշի և Հովհ.Աբելյանի ղեկավարության ներքո: Հաճելի արտաքինը, քաղցրալուր ձայնը և հարուստ դիմախաղը որոշեցին Մ.Կոստանյանի տեղն այս խմբում: Նրան հիմնականում հանձնարարում էին սիրահար հերոսի դերեր: 1916-ին՝ հայաշատ գավառական քաղաքներում առաջին հյուրախաղերից հետո, Մ.Կոստանյանն ընդգրկվեց Բաքվի հայոց Կուլտուրական միության թատերախմբում: Այստեղ էին նաև Սիրանույշը, Հովհ.Աբելյանը և ուրիշ անվանի դերասաններ: Առաջին իսկ թատերաշրջանին Մ.Կոստանյանը փայլեց Կաուլոյի դերով՝ Վիկտոր Սարդուի «Հայրենիքում»: Ստանալով Սիրանույշի և Հովհ.Աբելյանի մկրտությունը, Մ.Կոստանյանը դարձավ հայ բեմի նվիրյալ արվեստագետներից մեկը:

Մարգո Կոստանյանը (Մամիկոնյան) ծնվել է 1887-ին, Անդրկովկասի Ջաքաթալա քաղաքում[3]: Միջնակարգը չավարտած, նա հրապուրվեց բեմարվեստով՝ դառնալով թատրոնի մշտական հաճախորդներից մեկը: Մարգո Կոստանյանն առաջին անգամ բեմ բարձրացավ 1908-ի ձմռանը՝ Թիֆլիսում, Ռուսական դրամատիկ խմբի կազմում: 1910-1911 թատերաշրջանին, ընդգրկվելով Ոսկանյանների խմբում, Մարգո Կոստանյանը կատարեց իր առաջին շրջագայությունը դեպի Ղարաքիլիսա:

1912-ին դերասանուհին խաղում էր Բաքվում՝ Սիրանույշի խմբում, իսկ մեկ տարի անց՝ 1913-ին, միացավ Հովհ.Աբելյանի ղեկավարած Կուլտուրական միության թատերախմբին: Բաքվում անցած տարիները դարձան որոշիչն ու արդասաբերը Մարգո Կոստանյանի ստեղծագործական կյանքում: Դերասանուհին ոչ միայն հարստացրեց իր խաղացանկը, այլև, Աբելյանի ռեժիսորությամբ, հղկեց և կատարելագործեց իր արտիստական վարպետությունը: Մ.Կոստանյանը խաղում էր տարբեր ժանրերում՝ ստանձնելով կա-

[3] Տե՛ս «Ալիք», 1955, 16 մարտի, թիվ 60:

նանց գրեթե բոլոր գլխավոր դերերը. Դեգդեմոնա՝ «Օթելլոյում», Օֆելյա «Համլետում», Զեյնաբ՝ «Դավաճանություն», Ժակլին՝ «Անհայտ կինը», Մարգարիտ Գոտյե՝ «Քամելիազարդ տիկինը», Տրիլբի՝ «Տրիլբի», Ամալյա՝ «Ավազակներ», Սատանելլա՝ «Սատանելլա», Իչխանուհի՝ «Հին աստվածներ», Սոնա՝ «Զար ոգի», Ռոզալյա՝ «Կորրագո կամ Ոճրագործի ընտանիքը» դերամաներում: Սա Մարգո Կոստանյանի դերերի ոչ լրիվ ցանկն է, որը թվով գերազանցում է երկու տասնյակը: Աբելյանի թատերախմբում էլ կայացավ Մարգո Մամիկոնյանի և Միքայել Կոստանյանի հանդիպումը: Մինչ այդ Մարգո Կոստանյանը կինն էր դերասան Մամիկոնյանի, արդեն երեք զավակների մայր: Շուտով նրանք ամուսնացան, և տարիներ էին պետք, որպեսզի դերասանուհին հրաժարվեր իրեն ճանաչում բերած կրկնակի՝ Մամիկոնյան-Կոստանյան ազգանունից՝ թողնելով միայն մեկը՝ Կոստանյանը: 1920-ին, վերադառնալով Սիրանուշյի խումբը, Կոստանյանները եղան Իրանում, այցելելով Ռեշտ, Ղազվին, Թեհրան, Սպահան քաղաքները: Այստեղ է, որ դերասաններն առանձնացան Սիրանուշյի խմբից և, կազմելով մի փոքր թատերախումբ, շարունակեցին շրջագայությունն Իրանի մյուս հայաշատ՝ Շիրազ, Ահվազ, Մաշհադ քաղաքներում:

1925-ից լինելով Բեյրութում, Փարիզում, Լոնդոնում, Հունաստանում, Ռումինիայում և Հնդկաստանում, սկիզբ է դրվում «Կոստանյան» կամ «Կովկասահայ դրամատիկ թատերախմբի» ինքնուրույն գործունեությանը, երբ դերասանական խմբին միացան արդեն հասակն առած երկու զավակները՝ Վոլոդյա և Ասյա Կոստանյանները: Միջին Ասիայի երկրներում հաջող հյուրախաղերից հետո Կոստանյանները, արդեն իբրև հայ թատերական աշխարհում հեղինակություն վայելող դերասաններ, 1929-ին մեկնեցին Եգիպտոս՝ տեղի հայ համայնքում համեմատաբար երկար մնալու մտադրությամբ:

Անցյալ դարի 30-ական թվականները վերելքի տարիներ էին եգիպտահայ թատերական կյանքում: Բազմաթիվ մշակութային միություններին հարող սիրողական խմբերի կողքին առաջատար դիրքում էին Օննիկ Վոլթերի «Եգիպտահայ դրամատիկ» և Արփիար Վարդյանի «Եգիպտահայ կոմեդի», «Շիշմանյան ընտանիք» և այլ թատերախմբեր և առանձին դերասաններ: Մեկը մյուսի հետևից հյուրախաղերի էին գալիս Սիրանուշյը, Արմեն Արմենյանը և Եկատերինա Դուրյան-Արմենյանը, Հովհաննես Աբելյանը և հայ բեմի ուրիշ ականավոր գործիչներ: 1929-ին Կոստանյանների այցելության թվականին, համայնքը դեռևս գտնվում էր

Հովհաննես Զարիֆյանի փայլուն հյուրախաղերի տպավորությանը ներքո:

«Կոստանյան թատերախումբը» այս իրավիճակում է, որ պետք է գրավեր եգիպտահայ թատերասերների ուշադրությունն ու համակրանքը: Թատերախումբը, հետևելով Եվրոպայում ընդունված կարգին, հայտարարեց իր խաղացանկը: 1929-ի ապրիլի 2-ից մինչև 1930-ի փետրվարի 9-ը ներկայացվեցին հետևյալ գործերը. Ալեքսանդր Յուժին-Սումբատով «Դավաճանություն», Պյոտր Նևեժին՝ «Երկրորդ երիտասարդություն», Ալեքսանդր Բիսոն՝ «Անհայտ կինը», Լևոն Շանթ՝ «Հին աստվածներ» և «Կայսրը», Ալեքսանդր Օստրովսկի՝ «Անմեղ մեղավորներ», Կարլ Գուցկով՝ «Ուրիել Ակոստա», Ալեքսանդր Դյումա-որդի՝ «Քամելիա-զարդ տիկինը»:

Առաջին իսկ՝ «Դավաճանություն» ներկայացումը, որը տեղի ունեցավ 1929-ի ապրիլի 2-ին, Կահիրեի «Ռամզես» թատրոնում, գերազանցեց բոլոր ակնկալիքները: «Կովկասահայ դրամատիկին» հաջողվեց հենց սկզբից գրավել եգիպտահայ թատերական կյանքի մենաշնորհը: Կոստանյանների մասին գրեցին համայնքի գրեթե բոլոր թերթերը՝ նրանց ներկայացնելով իբրև լուրջ գործոց անցած դերասանների: Թատերախոսները, հիշելով Հովհ. Զարիֆյանին, չհապաղեցին նմանություն աղերսներ գտնել մեծանուն արտիստի, նաև Հովհ.Աբելյանի և Միքայել Կոստանյանի խաղի միջև: Հրապարակախոս Գուրգեն Մխիթարյանը գրեց, որ Միքայել Կոստանյանի Օթար բեկի կերպարում առկա էին «Զարիֆյանի չեշտերը և Աբելյանի կարգ մը չարժուձևերը»[4]:

«Դավաճանությունից» ստացած տպավորությունն ամրապնդվեց, երբ Կոստանյանները ներկայացրին իրենց խաղացանկի լավագույն գործերից մեկը՝ Ալեքսանդր Բիսոնի «Անհայտ կինը» (1929, 27 ապրիլի, թատրոն «Ռամզես», Կահիրե): Մի գործ, որը շահեկան էր նրանով, որ հավասարապես ծանոթ էր ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ հանդիսատեսին: Թատերական քննադատությունը նույնպես, քաջատեղյակ լինելով երկի ամենատարբեր մեկնաբանություններին, համեմատելու հնարավորություն ուներ:

Ներկայացումից հետո գրվեց, որ մելոդրամատիկ այս գործը Կոստանյանների մեկնաբանմամբ ստացել էր ողբերգությանը հաղորդ լուծում: Թատերախոսները համամիտ էին, որ դա գլխավոր՝ ժակլինի դերակատար Մարգո Կոստանյանի խաղի շնորհիվ էր,

[4] «Հուսաբեր» (Կահիրե), 1929, 23 ապրիլի, թիվ 19:

որը կարողացել էր սոսկ հուզիչ տեսարաններին հաղորդել դրամատիզմով լի հնչեղություն: Ժակլինի և նրա որդու՝ Ռայմոնդի հանդիպման տեսարանում դերասանուհին նվազագույն արտահայտչամիջոցներով (փոխվեց միայն նրա ձայնը) հասավ առավելագույն արդյունքի: «Ճիչը, որ այդ պահուն թռավ իր բերնե, և որուն մեջ կբովանդակեր այդ ջախջախված ու ընկճված մոր սերը, զարմանքը, վախը, չէր կրնար ըլլալ ավելի հարազատ»[5],- գրվեց «Արաքս» թերթի թատերախոսականում: Մի քանի տարի անց Թեհրանի «Ալիք» թերթի Pectus ստորագրությամբ թատերախոսը, վերլուծելով դերասանուհու խաղը, գրեց, որ Մարգո Կոստանյանն «իր ստանձնած բոլոր դերերում վերհիշեցնում է հայ բեմի լավագույն ավանդույթները, երբ նրա վրա փայլում էին Սիրանույշները ու Մայսուրյանները»[6]:

Թատերախմբի հաջորդ՝ Ալեքսանդր Օստրովսկու «Անմեղ մեղավորների» ներկայացումը (1929, 28 հուլիսի, թատրոն «Ալհամբրա», Ալեքսանդրիա) հաստատեց, որ Մարգո Կոստանյանը հատկապես տպավորիչ էր մոր դերում: Դերասանուհին, իր խաղացանկում ընդգրկելով տարբեր խառնվածքի և հասարակական դիրքի կերպարներ, շեշտում և կարևորում էր նրանց հիմնական՝ մայր լինելու առաքելությունը: Չնայած ակնհայտ տարբերություններին՝ Մարգո Կոստանյանը հավասարապես տպավորիչ էր ինչպես Թագուհու (Չեյնաբ՝ «Դավաճանություն»), այնպես էլ սովորական կնոջ (Ժակլին՝ «Անհայտ կինը»), կամ էլ՝ փառքի գագաթին հասած արտիստուհու (Կրուչինինա՝ «Անմեղ մեղավորներ») դերերում: Դերեր, որոնց միավորում էր մեկ ընդհանուր հատկանիշ. կինը նախ մայր է և իր այդ արժանիքն էլ դասում է մնացյալից առավել: «Ես գիտեմ, որ մարդիկ ազնվասիրտ են, ընդունակ մեծագույն սիրո և անձնազոհության, կանայք՝ հատկապես»: Կրուչինինայի այս խոսքերը բացահայտում են իր խաղ՝ դերասանուհու սկզբունքային դիրքորոշումը: Կնոջ, հատկապես մոր կերպարները, նրա համար դարձան մարդկային վեհ բնութագրի արտահայտիչներ: Ինքը՝ արտիստուհին, դրան հասնում էր նրբանկատորեն՝ իր հերոսուհիներին ներկայացնելով որպես զուսպ ու կամային, իրենց արժանիքը գիտակցող անհատականություններ, որոնք միայն վճռական պահերին էին դրսևորում իրենց նվիրական զգացմունքները:

Մարգո Կոստանյանի կողքին նրա խաղընկերները՝ հայր և

---

[5] «Արաքս» (Ալեքսանդրիա), 1929, 29 հունիսի, թիվ 27:
[6] «Ալիք», 1935, 4 հունիսի, թիվ 43:

որդի Կոստանյանները, կազմում էին մի ներդաշնակ միասնություն: Թատերախոսների ուշադրությունից չվրիպեց, որ «Անհայտ կինը» և մյուս ներկայացումներում երիտասարդ Վոլոդյա Կոստանյանը հատկապես տպավորիչ էր տարեց մարդկանց դերերում, մինչդեռ նրա հայրը՝ Միքայել Կոստանյանը, նույնպիսի հաջողությամբ կերպավորում էր երիտասարդների դերեր: «Անհայտ կինը» ներկայացման մեջ Միքայել Կոստանյանը հանդես եկավ երկու՝ Ձելիքս Լարոկի և փաստաբան Ռայմոնդի ժակլինի որդու դերերով, մինչդեռ Վոլոդյա Կոստանյանը միանգամայն համոզիչ և բնական էր Ձլերիոյի դերակատարմամբ: «Երկրորդ երիտասարդությունում» ևս Վոլոդյա Կոստանյանը կատարեց տարեց մարդու Դոտովցևի դերը, մինչդեռ Միքայել Կոստանյանը փայլեց երիտասարդի, դարձյալ հերոսուհու որդու Վիտալիի դերում: Նշմարվեց որոշակի հետևողականություն, որը հաստատվեց հաջորդ «Քամելիազարդ տիկինը» ներկայացման մեջ: Վոլոդյան հիանալի էր Ժորժ Դյուվալի դերում, մինչդեռ Միքայել Կոստանյանը նրա որդու՝ Արման Դյուվալի կերպարը մարմնավորեց երիտասարդին հատուկ ավյունով:

Մամուլը, նշմարելով այս փաստը, ընդգծեց, որ Վոլոդյա Կոստանյանն ուներ «դերասանի խմոր», և որ նա «հարմարություն ունի չափահաս և տարեց անձնավորությանց դերերը պատշաճորեն մարմնացնելու»[7]: Կյանքում լինելով բավական հախուռն բնավորության և վարքի տեր անձնավորություն՝ բեմում Վոլոդյա Կոստանյանը համակ խոհեմություն և լրջություն էր, իր հորը՝ Միքայել Կոստանյանին զիջելով իրեն ավելի հոգեմոտ երիտասարդ հերոսների և սիրահարների դերերը: Ըստ ականատեսների և մամուլի վկայության դերաբաշխման այս եղանակը հավասարապես շահեկան էր ինչպես հայր, այնպես էլ որդի Կոստանյանների համար: Սիրահար հերոսի դերերը, որոնցով Միքայել Կոստանյանն սկսեց իր դերասանական գործունեությունը, զերակռեցին նաև նրա հասուն տարիքի խաղացանկում: Մինչդեռ որդի Կոստանյանը կերպարանափոխվելու իր հմտությամբ հասնում էր տպավորիչ արդյունքի, դառնալով «բեմի վրա մի ուրիշ մարդ»[8], հրաշալի խաղընկեր էր գլխավոր դերակատարների համար, ներկայացման ընթացքում դառնալով նրանց հիմնական հենարանը:

Այս կարգի խորը, դրամատիզմով լի դերերի կողքին իրենց ուրույն տեղն ունեին Ասյա Կոստանյանի ստեղծած կերպարները:

---

[7] «Արաքս», 1929, 29 հունիսի, թիվ 27:

[8] Գ.Ա.Թ, թատերական բաժնի անտիպ նյութերից (Եվգենյա Արիստակյան-Պոլյակինա):

Լինելով բոլորովին այլ խառնվածքի տեր անճնավորություն՝ արտիստուհուն հիմնականում հաջողվում էին խարակտերային դերեր. նա ուներ հրաշալի ձայն և հատկապես տպավորիչ էր պարային տեսարաններում: Բացի այդ, Ասյա Կոստանյանը համարձակ էր ու անկաշկանդ և իր այդ նկարագրով էլ յուրահատուկ անմիջականության և ջերմության մթնոլորտ էր ստեղծում իր շուրջը՝ ներկայացումն ամբողջապես դարձնելով վառ ու տպավորիչ:

Նման հակումների տեր դերասանուհին, անշուշտ, լավագույնս պետք է դրսևորվեր օպերետի ժանրում: Իրոք, Ասյա Կոստանյանը, մի խումբ սիրողների համագործակցությամբ, Կահիրեի «Բյուրեսալ» թատրոնում ներկայացրեց Կալմանի «Սիլվա» օպերետը[9]: Ներկայացումն արժանացավ ջերմ ընդունելության ինչպես հայ, այնպես էլ օտար, հատկապես ռուս համայնքի թատերասերների շրջանում: Սա ստեղծագործական լուրջ ձեռքբերում էր դերասանուհու համար հատկապես մի համայնքում, որտեղ երաժշտական ժանրը թատերական արվեստի ձևավորման հիմնական նախապայմաններից մեկն էր: Պատահական չէ, որ Ասյա Զիլլիկիրլին միացավ համայնքի ճանաչված օպերետային դերասանուհի Եվգենյա Արիստակյան-Պոլյակինան: Գրեթե նույն հակումների և խառնվածքի տեր արտիստուհի, որն անցյալ դարի 20-ական թվականներին փայլեց իր հոր՝ երաժշտական գործիչ Գ.Արիստակյանի[10] բեմադրած «Թմկաբերդի առումը» և «Անուշ» օպերաներում՝ իբրև երգչուհի և պարային տեսարանների անզուգական կատարող: Կոստանյանների մեկնումից հետո էլ թատերախումբը չարունակեց ներկայացնել «Սիլվա», այնուհետև «Գեյշա» և «Հարեմի քրմուհին» օպերետները, արդեն Եվգենյա Արիստակյան-Պոլյակինայի ղեկավարությամբ:

Այսպիսով, «Կոստանյան թատերախումբը» ուրույն ոճ ունեցող դերասանների միասնություն էր: Միաժամանակ, պետք է

---

[9] Տե՛ս նույն տեղում:

[10] Գ.Արիստակյանը եգիպտահայ համայնքում կանոնավոր ներկայացումներով հանդես եկող առաջին «Հայ դրամա-օպերետային խմբի» հիմնադիրն է: Իր չուրջը համախմբելով գրեթե բոլոր աչքի ընկնող դերասանական ուժերը Գ.Արիստակյանը բեմադրեց ինչպես օպերետներ՝ Գ.Երիցյանի «Ուշ լինի, նուշ լինի», Տ.Չուխաճյանի «Լեբլեբիջի Հոր-Հոր աղա», Ու.Հաջիբեկովի «Աբշին մալ լինի», այնպես էլ մեծ կտավի գործեր՝ Ա.Տիգրանյանի «Անուշ» (1925) և իր ալան», այնպես էլ մեծ կտավի գործեր՝ Ա.Տիգրանյանի «Անուշ» (1925) և իր ալան», այնպես էլ մեծ կտավի գործեր՝ Ա.Տիգրանյանի «Անուշ» (1925) և իր իսկ հեղինակած «Թմկաբերդի առումը» (1923) օպերաները: Եվգենյա Արիստակյան-Պոլյակինայի ամուսինը՝ Նաում Պոլյակինը, 1946-ին իրականացրեց «Անուշ» երկրորդ բեմադրությունը, որտեղ Մոսկվի դերով հանդես եկավ Միհրան Երկաթը:

նշել, որ նրանք նաև մշտապես ստեղծագործական որոնումների մեջ գտնվող արվեստագետներ էին, որոնք կարողացան խուսափել մեկընդմիշտ գտնված ամպլուաներից: Ասյա Չիլինկիր-Կոստանյանը եզիպտահայ համայնքում բոլորին գերեց իր Սեդայով՝ Լևոն Շանթի «Հին աստվածներում», իսկ Մարգո Կոստանյանը, որն անգերազանցելի էր Իշխանուհու դերում, մի քանի տարի անց՝ Իրանում հաստատվելուց հետո, նույնպիսի հաջողությամբ փայլեց որպես Խանում՝ Ա.Յագաբրելու համանուն օպերետում: Նրան չզիջեց Միքայել Կոստանյանը՝ «Խանումում» հանդես գալով Հակոբի դերով: Սա մի անցում էր, որը պայմանավորվեց տարբեր գործոններով: Նախ՝ Փարիզից Իրան վերադարձած Ասյա Չիլինկիր-Կոստանյանը տեղի կարող ուժերով ստեղծեց մի թատերախումբ, որը, բնականաբար, նախապատվություն տվեց դերասանուհու նախասիրած՝ օպերետի ժանրին: Բացի այդ, երկու գլխավոր՝ Խանումի և Հակոբի դերակատարներ Մարգո և Միքայել Կոստանյանները քաջատեղյակ էին Թիֆլիսի բարքերին, քաղաքի բարբառին տիրապետում էին անթերի, և, ինչպես հիշում է Եվգենյա Արիստակյան-Պոլյակինան, «լավ գիտեին կախեթի գինիի համն ու հոտը, այդ գինին, երակների միջով անցնելով, վառում էր արյունը, տալով նրանց եռանդ և զվարթություն»[11]: Երկու դերասաններն էլ՝ յուրաքանչյուրը յուրովի, ստեղծեցին Թիֆլիսահայ իրականությունն արտացոլող և միայն այդ քաղաքին բնորոշ կերպարներ: Մարգո Կոստանյանը, ըստ ականատեսների վկայության, անմրցելի էր Խանումի դերում, իսկ «Ալիքի» նույն Pectus ստորագրությամբ թատերախոսը դերասանուհու ստեղծած կերպարը կատարելության իր աստիճանով համեմատեց Գևորգ Զմշկյանի Պեպոյի հետ[12]:

Ասյա Կոստանյանը, լինելով ավելի համեստ ունակությունների տեր դերասանուհի, հիմնականում հանդես էր գալիս օպերետի ժանրում: Գեղեցիկ պարերի, չքեղ բեմանկարչության, նաև զգեստների սիրահարները հատկապես գալիս էին թատրոն՝ նրան տեսնելու «Սիլվա» օպերետում: Նրա վալսը՝ էմմա Վարդանյանի ուղեկցությամբ, դարձել էր հատուկ հիացմունքի առարկա: Այսուհանդերձ, Ասյա Կոստանյանն իրեն կարողացավ վերագտնել արվեստի մեկ այլ՝ կինոյի ասպարեզում: Մի բնագավառում, որն իր ծագումով և գոյությամբ հիմնականում պարտական է հայ արվեստագետներին, Ասյա Կոստանյանը գրավեց պատվավոր՝ իրանի

---

[11] Գ.Ա.թ., թատերական բաժնի անտիպ նյութերից (Եվգենյա Արիստակյան-Պոլյակինա):

[12] Տե՛ս «Ալիք», 1935, 4 հունիսի, թիվ 43:

չարժանկարի առաջին դերասանուհու տեղը[13]:

Մ.Քայել Կոստանյանը, 40-ական թվականներից ի վեր, հանդես էր գալիս իբրև բեմադրիչ՝ նախապատվությունը տալով ազգային և տեղի թատերագիրների գործերին: Իրանում հաստատվելու առաջին իսկ տարիներին Մ.Քայել Կոստանյանը բեմադրեց Գ.Եղիկյանի «Այն կինը» թատերախաղը (1932, 10 նոյեմբերի, Զրադաշտականների թատերասարահ): Մի գործ, որը, չնայած իր խոցելի կողմերին, ներկայացնում է եղեռնից մազապուրծ, ամեն ինչ կորցրած հայ կնոջ՝ իսկուհու ճակատագիրը, չէր կարող չհուզել կոտորածներից և դաժանություններից դեռևս չսթափված մարդկանց:

1948-ին՝ Րաֆֆու մահվան 60-ամյակին, Մ.Քայել Կոստանյանը բեմականացրեց գրողի «Դավիթ-Բեկ» վեպը՝ հանդես գալով գլխավոր՝ Դավիթ-Բեկի դերում: Սա հայրենասիրական ոգով տոգորված Մ.Քայել Կոստանյանի վերջին բեմադրություններից էր: Մի քանի տարի անց՝ 1951թ. հուլիսի 18-ին, Ահվազում, դերասանը կնքեց իր մահկանացուն:

Մարգո Կոստանյանը, ծանր տանելով ամուսնու կորուստը, կարճ ժամանակ անց նույնպես հեռացավ կյանքից: Դերասանուհին մահացավ 1955թ. հունվարի 29-ին, Չամադանում: Իր վերջին տարիներին էլ, արդեն վատառողջ, Մարգո Կոստանյանը համակողմանի աջակցում էր համայնքի թատերական կյանքին՝ վայելելով հանուրի խորին հարգանքն ու համակրանքը:

Հայ թատրոնը տաղանդավոր արվեստագետներ շատ ունի: Նրանց կողքին կա բեմի նվիրյալների մի տարատեսակ, առանց որոնց դժվար է պատկերացնել հայ թատերական արվեստի և նրա խոշոր անհատականությունների փայլուն ընթացքը: Կոստանյան ընտանիքի ներկայացուցիչները պատկանում են այս արվեստագետների թվին, որոնց չնորհիվ էլ թատրոնը շարունակում է մնալ կանգուն ինչպես հայրենիքում, այնպես էլ սփյուռքում:

---

[13] Տե՛ս «Ալիք», 1993, 29 օգոստոսի, թիվ 180:

Հռիփսիմե Պիկիջյան

ԵՐԳԱԳՈՅԱՑՄԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿԵՆՑԱՂՈՒՄ

*Եթե կյանքը նկատենք իբրև մի ամբողջական հնչյունային համատեքստ, ապա (երաժշտական հայտնի ժանրերից բացի) դժվար չի լինի տարանջատել կենցաղում անընդհատ լսվող ձայնարկությունները, կանչերը, ինտոնացիոն դարձվածքները: Ավանդական երգաբվեստի հավաքչությամբ և քննությամբ զբաղվող մասնագետներն, անշուշտ, նկատել են կենցաղում տարածված մի իրողություն, երբ ձայնի ելևէջումների, չափակշռության (մետրառիթմ) փոփոխումների ու դրանց հետ խոսքի տարբննության համադրումների միջոցով հանպատրաստից նմանակվում կամ արտահայտվում են աշխատանքային գործընթացը, կյանքի իրավիճակները, կատարողի հոգեվիճակները: Այս երևույթը խոսակցական լեզվում բնութագրվում է ձեռնով ասել բառակապակցությամբ: Այդ ինքնաբուխ երգաստեղծությունները չեն կարգաբերվում ավանդական երաժշտության հայտնի ժանրերի օրենքներով: Թերևս, ավելի հարմար է դրանք որակել իբրև ժանրի լծորդված տարբերակ[2]: Դիտարշավների ընթացքում նման նյութեր գրանցելիս բանասացները, որ գյուղում «քաղցր ձայն ունեցողի» համբավ էին վայելում, պնդում էին, որ երգել ու երգեր չգիտեն: Նրանք, սովորաբար, իրենց կատարումները չեն ընկալում իբրև երգ: Սակայն, անկախ կատարողական տվյալներից, երբ որոշակի իրավիճակներ ու համապատասխան պայմաններ են ստեղծվում, սկսում են հնչյուններով ձայնով, վերարտադրել սեփական ապրումներն ու մտքերը, վերաբերմունքն արտահայտել ընթացիկ իրողության հանդեպ: Հնչյունային մտածողությանը ենթագիտակցորեն գումարվում է և խոսքը, որ հաճախ չի չարակցվում համապատասխան բանաստեղծական կերպին: Դրանք աչքի են

---

[1] Դրանք մասնագիտական չրջանակներին հայտնի են Էկմելика, глоссолалия (glossema-Հուն.՝ խոսք) կամ ըստ Կ.Խուդաբաշյանի՝ փոնոլալի անվանումներով:

[2] *Ձեռով ասել* բանաձևային բառակապակցության մեջ պարունակված է երևույթի իմաստը. ձայնով (մեղեդի) ասել (խոսք), այսինքն՝ մեղեդուն (ավելի ստույգ նախամեղեդուն) հավելակցված է խոսքը: Հիշյալ տիպերին անընդհատ առնչվում էինք 1997-1998 թթ. Վայոց ձորի մարզում կազմակերպված գիտարշավների ընթացքում՝ կենցաղից մասամբ դուրս մղված ավանդական աշխատանքային երգեր (դուշանի, կալի, կով կթելու), մանուկներին խաղացնելու և քնեցնելու (թռնոցի, գովք, օրոր), հանգուցյալին լաց ու ողբով գովել-ծաղկեցնելու լալիքներ ու ողբեր գրանցել ջանալիս:

ընկնում ձայնարկությունների ու եղանակավորող բառերի առատությամբ, թոռլլ սյուժետային կառույցով ու չհստակեցված խոսքային տեքստով (այս բանասացներին պայմանականորեն դասենք մի խմբում)։ Ավելի օժտվածները, որ և՛ ձայնային տվյալներ, և՛ բնատուր երաժշտական զգացողություն ունեն, նման վիճակներում սկսում են հանպատրաստից ձենով երգ ասել՝ փորձելով պահպանել մեղեդու և խոսքի ներդաշնակությունը։ Հանգավորում են տեքստը, թեև առանձնակի կարևորություն չեն տալիս երգաստեղծմանն ու կատարողականությանը և ինչպես իրենք են նշում՝ «քթի տակ դնդնում են, քանի որ ներսից է գալիս» (երկրորդ խումբ)։ Հաջորդ երրորդ խմբի բանասացները չթաքցնելով, որ կարողանում են երգ կապել, իրենց ինքնուս են համարում։ Այնուամենայնիվ, գրեթե միշտ, սեփական կարողություններ գնահատում են ներքնատանեկան, սակայն նաև՝ համայնքի չրջանակներում։ Հայտնագործություն արած չենք լինի, եթե ասենք, որ այսօր Հայաստանի գյուղական չրջաններում երգ և երգել ասելով հասկանում են արևելյան գեղգեղանքով ու զարդոլորումներով համեմված աշուղական կամ ռաբիս ոճին դասվող երգերը։ Հաճախ, իբրև չափորոշիչ է ընկալվում ռադիոկայաններով ու հեռուստաալիքներով հաղորդվող երաժշտությունը՝ անկախ ժանրային պատկանելությունից։ Դրանց համեմատությամբ՝ մեծ արժեք չի տրվում ավանդական կենցաղի անբաժան մասը կազմող ծիսական, աշխատանքային, կատակային, մանկական երգերին, խաղիկներին ու պարերգերին, եթե կատարողը հատուկ ձայնային տվյալներ չունի[3]։ Վերջիններիս հիմնականում վերաբերվում են իբրև անցյալի մասունքի կամ ժամանցի, որը թեև հարգանքի է արժանանում, սակայն գնահատանքի առարկա չէ։ Այսուհանդերձ, կենցաղի բերումով կամ ծայրահեղ իրավիճակներում ավանդական ժանրերը կամ դրանց նմանողությամբ ստեղծվածները կրկին հնչում ու վերարժեքավորվում են։

Հակիրճ ներկայացնենք մեր պատկերացումները դրառողի և նյութի փոխկապակցվածության մասին։ Ուշագրավ է, որ երբ բանասացին խնդրում ես երգ երգել, հրամցնում է հայտնի ժանրի որևէ նմուշ, մինչդեռ ձենով ասելիս հնչում է դրան զուգահեռ գործող, տակավին անաղարտ նախօրինակը, որը երգ անվամբ չի

[3] Համմտ. «Ժողովրդական երգի ծավալումը և ազդեցությունը» գլխում Կոմիտասի մտորումները ավանդական երգի գնահատման շուրջ և 1905թ. Հառիճի վանքում վարդավառի ուխտագնացության ժամանակ գեղջկուհիների «երգ կապելու» նկարագրությունը։ Տե՛ս Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, 15-44։

«մեծարվում»: Գիտարշավների ժամանակ նկատելի է մի հետաքրքիր երևույթ ևս. հաճախ բանասացը որևէ ավանդական երգ չի հիշում (խոսքն աշխատանքային, ծիսական կամ վերը նշված ժանրերի մասին է): Երբ հորդորվում է այս կամ այն իրադրությունը, վիճակը ձենով ասել վերապրելով իր կյանքի համանման դրվագները (կամ վերարտադրել լսածը), մտովի տեղափոխվում է նախնական միջավայր, կերպարանափոխվում ու սկսում հանպատրաստից երգել: Զատորոշիչ ազդակներ են մշակութային միջավայրը, երաժշտապոետիկ օժտվածությունը, ստեղծագործական ու ձայնային տվյալները: Սակավ կարևոր չեն ծագումը, ընկերային (սոցիալական) պատկանելությունը, երաժշտական նախասիրությունը, տարբեր մշակութային շերտերից ստացած տեղեկատվությունն ու ժամանակի դրոշմը[4]: Տարեց բանասացը գիտակցաբար կամ ենթագիտակցաբար վերածվում է տարբեր ժամանակների տեղեկատվության կուտակիչի[5]: Նրա մեջ սինթեզված անցյալի աշխարհընկալումը կրավորական է՝ մինչ գրանցողի հարցին «բախվելը»: Բանասաց-ազգագրագետ զրույցն ըստ էության երկխոսություն է ժամանակների միջև, որի ընթացքում փորձ է արվում վերականգնել անցյալը՝ վերհուշի, վերապրումի, խոսքի ու մտապատկերի մակարդակներում: Գրանցողի համոզմունից է կախված ճշգրիտ տեղեկատվության վերհանումը, քանզի հիշողության բազմաշերտ պահոցում ամբարված փաստերն ի մի բերելը, հոգեբանական, տրամաբանական կամ ժամանակի խմբագրումներից զերծ վերարտադրելը դյուրին չէ[6]: Գրանցված տեղե-

---

[4] Հայ իրականության մեջ օժտված բանասացը կենցաղում չի առանձնանում միջավայրից, զբաղվում է գյուղական աշխատանքով կամ արհեստով: Համերկրացիներից տարբերվում է մեկայն ասացողի, երգողի կամ երգ կապղի ձիրքով ու համբավով: Տոների ու հավաքույթների ընթացքում մեծարվելով և նվերների արժանանալով հանդերձ՝ իր ձիրքը չի դարձնում կենսապահովման միջոց. չի դառնում արհեստավարժ, ինչպես թափառող երաժիշտներն ու աչուղները: Բանասաց-գրանցող հարցերի մասին տե՛ս Ա.Սահակյան, ժառանգություն և ժառանգորդ : Գենդերային հետազոտություններ, հ.7, Երևան, 2001: Մ.Սարգսյան, Բանասացը որպես ավանդական երգարվեստի կրող և փոխանցող : Ալագեմիկոս Լ.Ջահուկյանի ծննդյան 80-ամյակին նվիրված գիտաժողովի հիմնադրույթներ, Երևան, 2004, էջ 56-58: Б.Н.Путилов. Эпическое сказительство. Типология и этническая специфика М., 1997.

[5] А.Б.Лорд. Сказитель. Пер. с англ. и коммент. Ю.А.Клейнера и Г.А.Левинтона. М., 1994.

[6] Ինչպես պատմաբանն է փաստերի ընտրությամբ ու համադրությամբ վերականգնում պատմական ժամանակը, այնպես էլ ազգագրագետն է գրանցված հատվածների միջոցով վերականգնում էթնոերաժշտագիտական տեքստը. «...պատմական տեքստը ներկայացնում է համադրական մի միջավայր, որտեղ

կուլտուրաներն ու հանրապատրաստից հորինումները, ինչպես առասպելամտածողության յուրաքանչյուր արտադրանք, իրադրութենական (դիպվածային) բնույթ ունեն[7]:

Դաշտում աշխատելիս մասնագետն ամբողջությունից առանձնացնում է որևէ հատված, ինչպես տեսագրելիս օպերատորը որոշակի կադրի վրա է կենտրոնանում, կամ նկարիչը՝ բնությունը պատկերելիս[8]: Ի տարբերություն նրանց, երբեմն երգողն ինքն է կտրում հատվածը՝ համարելով, որ հիմնական խոսքն ասված է, իսկ մնացյալը սոսկ կրկնություն է (այս մտածողությամբ են հաճախ առաջնորդվել և երգ գրանցողներից չատերը)[9]: Մասնագետն ըստ ճաշակի ու հնարավորության անվերջից կտրում է հատվածն ու հրամցնում իբրև ավարտուն գործ: Այս կոնտինուումից (*continuum-լատ.*՝ անընդհատության համաձուլում) ստեղծվում է երգը՝ բանաձևը: Հաճախ այդ երգ-բանաձևը վերադառնում է գյուղ իբրև ամբողջական ստեղծագործություն: Այսպես, Ղ.Աղայանի հանրահայտ «Մանի՛ր, մանի՛ր, իմ ճախարակ» բանաստեղծության հիման վրա գրված երգից կարելի է ենթադրել, որ արձանագրվել է այն հատվածը, որտեղ մայրը պատմում է զավակների խնդիրների մասին. «Տիգրանիկս չուխա չունի..., Գաբրիելը գուլպա չունի...», իսկ Հակոբիկի կամ ընտանիքի այլ անդամների հոգսերը ինչ-ինչ պատճառներով չեն գրանցվել[10]:

Կենցաղի կազմակերպման կարևոր գործոններից են ռիթմն ու հնչյունը, որ ծնվում են որոշակի շարժումներ կամ գործողություններ կատարելիս՝ ուղեկցվելով համապատասխան ելևէջային ու խոսքային արտահայտչաձևերով (հմմտ. Կ.Բյուխերի վարկածը՝ երաժշտության ծագումը աշխատանքային ռիթմից[11]): Հաճախ

տարատամ անցյալականությունը վերածվում է *պատմական անցյալի*»: Տե՛ս **Ա.Սահինյանց**, Պատմություն իբրև տեքստ (մեկնություն և գրության հնարավորություն) : Պատմություն և կրթություն, 1-2 , Երևան, 2005, էջ 9-22:

[7] Երևույթը բնութագրվում է՝ bricoleur. տե՛ս **К.Леви-Строс.** Структурная антропология. М., 1983.

[8] Ասվածը համեմատելի է Ռ.Իսրայելյանի կատուցած *Ջարենցի կամարի* հետ, որ դիտվում է իբրև ճարտարապետական չրջանակ, որի մեջ «դրվում է բնությունը» (հմմտ. կոնցեպտուալ արվեստի հետ):

[9] Ինչպես խմբավար Կարո Ջալիկյանն է ավարտում ավանդական երգերի կատարումները:

[10] Նույն տրամաբանությամբ օրորներից մեկի ժամանակ գրանցվել է «Ջարենի՛ր, լաո, մըրնիմ քըզի...», որն, անշուշտ, ժանրին ոչ բնորոշ դիպվածային երևույթ է: Այս տարբերակը վերադարձել է իբրև երգ և իրադրության բերումով՝ համազգային հնչեղություն ստացել:

[11] **К.Бюхер.** Работа и ритм. М., 1923.

դրանք ամբողջանում են իրավիճակին բնորոշ մտքի ու հույզի հնչյունախոսքային փոխակերպում դարձած երաժշտական դարձվածքներով, ձայնարկություններով ու խոսքով: Այս ճանապարհով ծնվող երգագոյացումները մանր ժանրեր (կանչ, «Լա՛յ-լայ», «Նանի՛», «Թըռի՛-թռի՛», «Դընգո...» կամ «Պապաբի...», «Բըժո՛», «Մի՛կո-ծի՛կո», «Ջու՛-ջու՛»), տարբերվում են նույն իրավիճակում հնչող կանոնավոր ու ավարտուն փոքրաքանակ ժանրերից: Դրանք մեծամասամբ մնում են բանահավային մակարդակում: Մի քանիսը, զարգանալով համապատասխան ձևակառուցվածքային, մեղեդային ու պոետիկայի կազմակերպման կանոններով, վերածում են ինքնուրույն տեքստի (ինչպես «Ձո՛լ-յո՛լը»՝ «Հոռովելի», «Լա՛յ-լա՛յը» օրորոցայինի)[12]: Այդ բանահավային նմուշներից են թափառիկ մանրավաճառների կամ չրջիկ արհեստավորների տարաբնույթ ծառայություններն ու ապրանքը գովազդող կանչերը (մածուն, լավաշ, կանաչի, ժավել, ավել և այլն վաճառելու, դանակ-մկրատ սրելու, հին չոր, հին կոշիկ փոխանակել-գնելու առաջարկները)[13]: Ցավոք, այս ժանրերի ամբողջական հնչյունապոետիկ տեքստը գրեթե չի ձայնագրվում ու վերլուծվում, մինչդեռ ուսումնասիրվում է նույն թեմայով ստեղծված երգը: Օրինակ, մասնագիտորեն չի գրանցվում ընտանի կենդանուն կթելիս ասվող խոսքը, բայց ձայնագրվում է կթի երգը, որ դրա տրամաբանական չարունակությունն է՝ առանց կենդանու հետ մարդու հաղորդակցման ինտոնացիոն խոսքի և տրամադրության ռիթմահնչյունային պատկերի[14]: Կարելի է փաստել, որ մանր ժանրերը կենսընթաց արտացոլող խտացված նյութ են՝ տնտեսական, ընկերային, հոգեբանական տեղեկատվությամբ, ուստի երաժշտագիտական հետազոտությունից զատ, արժեքավորվում են իբրև ազգագրական վավերագիր:

Մեր դաշտային գրառումներն ու ձայնագրությունները

---

[12] Ծանոթ օրինակներից է նախապատերազմյան Երևանում լրավաճառ տղայի «Սառը չու՛րը, սառը չու՛րը, պուլպուլակի սառը չուրը...» հնչյունավորված արտահայտությունը, որի հիման վրա ստեղծվեց «Ջուր եմ ծախում, սառը ջուր» հանրահայտ քաղաքային երգը:

[13] Ուշագրավ օրինակ է Հ.Բեկնազարյանի հանրահռչակ «Պեպո» կինոֆիլմում արևելյան չուկայի տեսարանը մանրավաճառ կինտոների մեղեդայնացված դուդեղ արտահայտություններով («Դուլլի յաբլոկի՛», ձմերուկ, ձուկ վաճառողների և այլոց) :

[14] Ազգաբանության ոլորտում հիշյալ մանր ժանրերը ոչ միայն հնարավորինս գրանցվում են, այլև դրանց նվիրված գիտաժողովներ են կազմակերպվում, հրատարակվում ծավալուն աշխատություններ [Этнолингвистика текста 1988. Малые формы фольклора 1995]:

կյանքն՝ իբրև բնական միջավայրից չկտրված հնչյունային տեքստ փաստագրելու փորձեր են, որոնք էթնոերաժշտագետներին թույլ կտան վերլուծություններ կատարել ավելի ընդգրկուն նյութի վրա՝ համեմատելով հայտնի երաժշտապոետիկ ժանրերի հետ[15]: Հատուկ ուշադրության են արժանի դրանց գոյացման ու զարգացման մեխանիզմն ու կատարման կերպը, քանզի, ըստ իրադրության, ինքնաբերաբար ծնվում ու նույն անսպասելիությամբ ընդհատվում կամ մոռացվում են գործողության ավարտի հետ: Քննությունը ցույց է տալիս, որ հենց այս՝ նախնական տեքստի հետազոտման շնորհիվ կարելի է բացահայտել կանոնիկ երաժշտական տեքստի ծագման ու կազմավորման ընթացքը: Մանր ժանրերի միջոցով դիտարկելի են այն օրինաչափությունները, որոնց շնորհիվ դրանք փոխակերպվում ու կանոնավորվում են (նախնական տեքստ-վերականգնված տեքստ): Թեև դրանք լսելի են ամենուր, սակայն առավել գունեղ կերպավորումներ են ստանում գյուղերում կենցաղավարող կանչերն ու հնչյունային դարձվածքները: Առավել անաղարտ են բարբառներին հատուկ հնչերանգների գունեղության, ավանդության չարունակականության, բանահյուսական մտածողության և բն ական միջավայրի գերակայության շնորհիվ [Կոմիտաս 1941, 26-27]: Ուստի, բոլորովին էլ պատահական չէ, որ քաղաքում ևս աչքի են զարնում գեղչկական կենցաղից ներմուծված, կամ դրան բնորոշ հնչյունապոետիկ դարձվածքները՝ ավանդական ու ժամանակակից մշակութային չերտերի համադրության: Թեմատիկ բաժանմամբ (ըստ գիտարշավային նյութի) դրանք կարելի է դասդասել հետևյալ կերպ: Մանուկների խնամքը, դաստիարակությունը, մարմնակրթումը և հանգիստը կազմակերպող երգ-ասերգեր (հնչում են լողացնելու, մերսելու, խաղացնելու, պարեցնելու, թոցնելու, քայլեցնելու, քնեցնելու, լաց լինելիս հանգստացնելու ընթացքում): Ընտանի կենդանիներին ու թռչուններին ուղղված դիմելաճևեր՝

---

[15] Էթնոերաժշտագիտական նյութի ընտրության, հավաքման ու դրանցման մասին տե՛ս К.В.Квитка. Музыкальный фольклор и музыкальная фольклористика на Кавказе. Ереван, 2001, с. 86-90.

T.Rice. Toward a Mediation of Field Methods and Field Experience in Ethnomusicology. – Shadows in the Field. New Perspectives for Fieldwork in Ethnomusicology. New York, Oxford, 1997, p. 101-120.

K.K.Shelemay. The Ethnomusicologist, Ethnographic Method, and the Transmission of Tradition. – Shadows in the Field. New Perspectives for Fieldwork in Ethnomusicology. Cooley. New York, Oxford, 1997, p. 189- 203.

գովք, հորդոր, սաստելաձև, որ արտածվում են առտնին ու աշխատանքային հարաբերություններից: Տնտեսական գործունեության ընթացքում ծնունդ առնող երգ-ասերգեր, առևտրին առնչվող հորինումներ՝ ապրանքի գովազդ, հաճախորդի ուշադրությունը գրավելու կանչ և այլն: Տառապանք, ցավ, վիշտ, բաժանում արտահայտող երաժշտաբանահյուսական հորինվածքներ՝ լալիք[16], ողբ-գովք և այլն: Հավակնություն չունենք թվարկված թեմատիկ բաժանումներով սահմանափակելու մեղեդայնացված խոսքի գործառնության դաշտը, քանզի իրրև կյանքի բաղադրատարր այն ինքնաքավ է՝ օժտված կերպափոխվելու և վերածնվելու հատկությամբ[17]: Անդրադառնանք դրանց՝ ըստ առանձին թեմատիկ բաժանումների[18]:

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԽՆԱՄՔ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Երաժշտությամբ, պար ու խաղով երեխային կրթելու և հոգևոր արմատներին մերձեցնելու նպատակով առավելագույնս կարևորվում են ավանդական տոների ու ծեսերի ժամանակ մանուկներին վերապահված դերակատարումներն ու արարողությունները: Դրանց մեջ շեշտվում են բարեբերությունն ակնկալող հմայական երաժշտաբանահյուսական բանաձևերը[19]:

Հանպատրաստից հորինվող ու կատարվող մանկական երաժշտական ժանրերը հաճախ հանդես են գալիս մեկը մյուսին ներդաշնակելով ու լրացնելով, երբեմն՝ մի տեսակից մյուսի ան-

---

[16] Ի տարբերություն *ողբ-գովքի՝ լալիքը* լայն ընթացքում ասվող հուզական ձայնարկություններից ու առանձին բառերից կազմված հանպատրաստից հնչյունային խոսք է, որի ընթացքում սյուժետային և մեղեդային կառույցներ չեն գոյանում: Սույն հոդվածում այն չի քննարկվի՝ սահմանափակ ծավալի պատճառով. տե՛ս Հ.Պիկիչյան, Երաժշտությունը ժամանակակից թաղման ծեսում, Հայ ժողովրդական մշակույթ. Մ.Աշճյանի հիշատակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., 2004, էջ 112-120:

[17] 1970-80-ական թթ. գրեթե մոռացված ժանրերի (կթի երգ) զարթոնքը հետխորհրդային տարիներին պայմանավորված էր անանապատհության կենսապահովման դերի առաջնայնությամբ: Ասվածի ապացույցը 1995-2000թթ. ընթացքում գրանցված մեր դաշտային նյութերն են: Տե՛ս ՀՀ ԳԱԱ Ա.Ի Հայնադարանում Վայոց ձորի 1998, 2000թթ.՝ գիտարշավների նյութերը:

[18] Սույն հոդվածում չենք ընդգրկել ողբ-գովքին և հոռովելին առնչվող մեր գիտարկումները, քանզի առիթ ենք ունեցել հրապարակելու. տե՛ս Հ.Պիկիչյան, Երաժշտությունը ժամանակակից թաղման ծեսում, Հայ ժողովրդական մշակույթ. 12-րդ Հանրապետական գիտաժողով՝ նվիրված Մ. Աշճյանի հիշատակին, նյութերի ժողովածու, Եր., 2004, էջ 112-120: Հ.Պիկիչյան, Երկրագործական ծիսակարգը «Հոռովելի» ենթատեքստում, Հանդես Ամսօրեայ, Վիեննա-Երևան, 2002, էջ 441-461:

[19] Մեր նպատակներից դուրս է առանձին-առանձին դրանք էթնոերաժշտագիտորեն վերլուծելը:

ցումով, ուստի դյուրին չէ սահմանագատել, հատկապես երբ չեն ձայնագրվում ու նկարագրվում տոնի կամ ծեսի բնական ընթացքում, այլ կատարվում են իբրև առանձին ստեղծագործություններ: Թեև մանկական երգվող բանահյուսությունն իր բոլոր դրսևորումներով դեռ ամբողջովին ուսումնասիրված չէ, սակայն երաժշտագետներից շատերն անդրադարձել են առանձին խնդիրներին: Արժեքավոր են այն դաշտային գրանցումներն ու հետազոտությունները, որոնք հնարավորություն են ընձեռում ծանոթանալու հայ ժողովրդական երաժշտական մշակույթի մանկական ճյուղին[20]: Հայտնի է, որ մանկական ժանրերը երեք հիմնական խմբի են բաժանվում՝ ա)մանուկների համար մեծահասակների կողմից ստեղծված և կատարվող, բ)մանուկների կատարման համար մեծերի կողմից ստեղծված, գ)իրենց՝ մանուկների ստեղծագործություններ: Ժողովրդական երգերի գոյացման, նախնական մեղեդային ելևէջակարգերին փոխառնչվելու, երաժշտախոսքային շեշտադրության և տարրական երաժշտական գիտելիքներ ձեռք բերելու, հայեցի դաստիարակության առումով դժվար է գերագնահատել մանուկների խնամքի, հանգստի, խաղ ու ժամանցի անբաժան մաս դարձած մանր ժանրերի նշանակությունը[21]:

Մարդու առաջին ծանոթությունը մշակութային ավանդույթին անմիջապես սկսվում է ծննդյան օրից՝ օրորոցային ու մանկախաղաց երգերով: Դրանք նպատակամղված են ոչ միայն ապահովելու երեխայի խաղաղ հնչյունը կամ նպաստում են նրա առաջին չարժումների ռիթմիկ ու սահուն անցումներին, այլև առաջին գիտելիք-տեղեկություններն են հաղորդում շրջապատող առաջին գիտելիք-տեղեկություններն են հաղորդում շրջապատող աշխարհի, իր փոքրիկ աշխարհ-ընտանիքի և սեփական անձի մասին՝ վերաբերմունք ձևավորելով դրանց հանդեպ: Թեմատիկ

---

[20] Հայ մտավորականները հետևողականորեն գրանցել են մանկական երգվող, արտասանվող ու խաղարկային բանահյուսության օրինակները և հրապարակել

առումով միավորվելով՝ օրորները խիստ բազմազանվում են երգողի (մայր, տատ, քույր, պապ...) ապրած ժամանակի ու կյանքի պայմանների, հուզական դաշտի ազդեցությամբ խոսքային տեքստում ուղղակի կամ այլաբանորեն ներկայացվող մտորումներով ու դիպվածային արտահայտություններով: Հանդիպում են հեքիաթային սյուժեների բնորոշ պատկերներ ու կերպարներ ևս, որ ներդաչնակորեն միահյուսվում են բանաստեղծական կառույցին: Տարաբնույթ օրորները կարգաբերվում են կայուն կամ հանպատրաստից չարադրաճևերում: Բուն նպատակն արտացոլվում է թե՛ բանաստեղծական տեքստում, թե՛ եղանակավորման մեջ: Բնույթը կախված է երգողի կենսակերպից և հոգեվիճակից, որ ներգործություն են ունենում մեղեդու կառույցի ու երաժշտական լեզվի վրա: Ըստ Մ.Բրուտյանի՝ «Օրորները երգաստեղծության բարդ ժանրերից են, հատկապես հարուստ են իմպրովիզացիոն տարրերով... լայնաշունչ են, մեծ հնչյունածավալով, մեծ հատվածներ ընդգրկող աստիճանական կամ աստիճանականը հիշեցնող չարժումով...»: Օրորոցային ու մանկախաղաց երգերում հաճախ մանկանը ներկայացվում է ավանդույթով նախասահմանված բաղձալի տեսլականը. տղաներին՝ ընտանիքի սյուն, ազգի պաշտպան և «մարդամիջի մարդ», աղջիկներին՝ օջախի տիրուհի ու մայր[22]: Արևմտյան Հայաստանից գրառված նմուշներում, ի շարս այլոց՝ պատմական ճակատագրի բերումով, որոշակի խումբ են կազմում ողբի եղանակավորմամբ, ինչպես նաև հայրենասիրական երգերին բնորոշ մեղեդային դարձվածքներով՝ քայլերգային ռիթմերով տոգորվածները, որոնց չարքում կան ընդհակառակը՝ քնած մանկանն արթնացնող ու ի գեն կոչող երգեր[23]:

Դաշտային գրառումներում և հրատարակություններում ամփոփված օրորներից հանպատրաստից չարադրանքի նմուշները դիտարկելիս կարելի է նկատել երկու կերտվածք հաստատագրված մեղեդային հիմքով և հանկարծաբանորեն ձևավորվող: Ինդրո առարկան երկրորդ խումբն է՝ հանպատրաստից ձևավորվողը, որը մեղեդու չարադրանքի մեջ ավելի միալար ու ծորուն է՝ հաճախ առանց ընդգծված չեշտադրության ու խոշոր թռիչքների,

---

[22] Մ.Բրուտյանը [1983, 238-248] ևս անդրադառնում է օրոր ներմուծված ժողովրդական պատկերացումներին, որ արտահայտվում են առածի, ասույթի, օրհնանք-մաղթանքի, անեծքի ձևով:

[23] Հանրահայտ օրինակներից են Մ.Պեչիկեթաչլյանի բանաստեղծության հիմամբ ստեղծված «Աբլի, իմ սոխակ» կամ «Զարթիր, որդյակ» երգերը: Պատահական չէ, որ դրանք հաճախ դասվում են հայրենասիրական երգերի շարքը. տե՛ս Հայրենի երգեր, Հ.Մուրադյանի ձայնից վերծանեց և կազմեց Ա.Փահլևանյանը, Եր., 1980:

որ մեր գրառումներում առավելապես հանդիպում է Լոռու և Վայոց ձորի նմուշներում: Դրանք հիմնականում կառուցվում են օրոր, նանիկ, քնիր բառերի հնչյունափոխված տարբերակներից, մանկանն ուղղված փաղաքշական բառերից և ընտանիքի անդամների մասին տեղեկություններ հաղորդելիս: Մեղեդին հիմնականում քնարական, երգային բնույթի է, ոչ մեծ ձայնածավալով, մեղմ վերջավորության մեջ ձայնի աստիճանաբար նվազմամբ: Ցավոք, Արևմտյան Հայաստանի տարածքից գրանցված նուշնախպ նյութի բացակայությունը հնարավորություն չի տալիս լիարժեք համեմատություն անելու, քանզի ձայնագրված օրորները հիմնականում գրառվել են իբրև օրորոցային երգ (կայուն ժանր): Ասվածից չի բխում, թե այստեղի բնակիչների կենսընթացում բացակայում են հանպատրաստից հորինվածները, ընդհակառակը՝ նպատակ ունի կյանքի փոփոխականության կնիքը տեսնել նուշնախ այնպիսի որոշարկված ժանրում, որպիսին է օրորոցայինը[24]: Սկզբունքորեն այլ պատկեր կբացվի, եթե փորձենք նույն բանասացին ձայնագրել երեխային քնեցնելու ընթացքում «ձենով օրոր ասելիս»:

Գրանցված տիպական օրորներից մեկի բանաստեղծական առանցքը հայտնի թափառող սյուժե ունի ի դեմս կենդանու խնամքին մնացած անտառում հայտնված որբուկի կամ ընկեցիկի կերպարի, որի զուգահեռներն առկա են նաև ժողովրդական հեքիաթներում: Այն կազմվում է.

> Պախրեն կըգա, ծիծ կըտա, Ջիզյար չունի, քիչ կըտա,
> Վերնաքամին ժաժ կըտա, Ներքնաքամին մունջ կանի,
> Մըննդրատեղև փափկոց ա, Լենատեղև ծածկոց ա...

Հիմնատողերից, հավելվում ժանրին բնորոշ «օրո՛ր ասեմ», «նանա՛-նանա՛», «բալա՛ ջան, քնի՛ր», կամ նմանատիպ արտահայտություններով, կոնկրետ փաստերով ու նկարագրություններով, որոնց չնորհիվ բանասացը կառուցում է «երգի» սեփական տարբերակը: Ուշագրավ է, որ այս պատկերը կենցաղավարում է

---

[24] Հայոց մանկական բանահյուսական ժանրերի և հատկապես օրորների մասին ամբողջական կարծիք կազմելու հարցում կարևոր է Ռ.Գրիգորյանի Հայ ամբողջական օրորոցային և մանկական երգեր (Եր., 1970) համահավաք մենաժողովրդական տարբերակները, որտեղ ի մի է բերված 19-րդ դարից մինչև մեր օրերը հրապարակված նյութը՝ համալրված գիտաարշավային գրառումներով: Թեև գրքում զետեղված օրինակները ուղղված են պիոներներին բնորոշ հատկությունների, այսուհանդերձ, մեծ մասը լծորդված ժանրերն են, որ բանագետների գրանցմամբ վերածել են կայուն ժանրերի:

Հայաստանի տարբեր մարզերում[25]: Դրանք վկայում են ավանդույթի չարունակականության և գործող հարացույցների կենսունակության մասին, որոնց վրա է խարսխվում հանպատրաստից երգը: Օրորներում հաճախ են հանդիպում նաև ընտանի կենդանիների կերպարներ, որոնք ներկայացվում են չլքվապատի բոլոր չնչավորների ու առարկաների նման քնելու պատրաստվելիս նույնացվելով մանկան հետ կամ ընդհակառակը՝ խանգարող, որին սաստում-հեռացնում են՝ իբրև երեխայի լացի ու անքնության պատճառ:

Օրինակ՝

Լա՜յ, լա՜յ, լա՜յ, բալա ջան,
Կատուն կյամ ա, քնի,
Փշին, չոնը կյամ ա, քնի, բալա ջան,
Լա՜յ, լա՜յ, լա՜յ, բալա ջան,
Սև ինի մեր օրը, խափան ինի մեր օրը,
Սերտս լիդյն ա, համա լիդու չկա, թա ասիմ,
Բալա, լա՜յ, լա՜յ,
Յարալու սերտս քեզ մատաղ
Բալա, լա՜յ, լա՜յ ...

[Բաքվի հայոց քանահյուսությունը, 2004, 293]

Այս նմուշը վերնագրված է՝ «Օրորոցային երգ», սակայն ակնհայտ է ձենով ասվող ասերգին բնորոշ հարացուցային կառույցը, որ համեմատելի է մեր գրանցած օրորներին: Ըստ ամենայնի, եթե գրանցվեր գործընթացի ժամանակ, տեքստը կշարունակվեր, քանզի իբրև հիմնական տող ընկալվող երկրորդ տան «Սև ինի մեր օրը...» երկտողը դիպվածային իրավիճակի արտացոլում է, իսկ օրորելով քնեցնելու գործողությանը բնորոշ կրկնակային տողերի պարբերական ընթացքը կարող է չարունակվել մինչև մանկան քնելը (տողատումը մերն է՝ Հ.Պ.): Գրանցված դաշտային օրինակների սյուժեն մեծ մասամբ հրապարակվածների [Գրիգորյան 1970] տարբերակն է՝ մանրամասներով համալրված, ժամանակին բնորոշ հոգսերի պատկերներով, բանասացի կերպարին ու դիպվածին ներդաշնակ ձայնարկություններով, եղանակավորող բառերով: Հենց այս նշված հավելություններն ու կրկնություններն են ազդում բուն մեղեդային կառույցի վրա, փոխում հնչյունաելևէջային պատկերը գործելու ընթացքը հավասարեցնելով ձենով ասվող խոսքին: Գործողությունը միաժամանակ երկու մակարդակում է ընթանում՝ գործի և խոսքամեղեդային, որի արդյունքում

---

[25] Համանման օրորների տեքստերի տարբերակներ կարելի է հանդիպել դեռևս 20-րդ դարասկզբին հրատարակված ժողովածուներում [Շիրակի երգեր 1917, N120: Սպ.Մելիքյան, Հայ ժողովրդական երգեր և պարեր, 2, խմբ. Մ.Աղայանի, եր., 1952, N10]:

երաժշտությունը դառնում է ոչ թե կյանքն ուղեկցող միջոց, այլ կենսակերպ: Նմուշների կշռութային (ռիթմ) բնութագիրը համահունչ է երեխային օրորելու ձեռքի բնական չարժմանը:

Տեքստից ենթադրելի է, որ օրոր ասողը, բացի մանկիկից, այլ «ունկնդիր» չունի և կարող է ազատությունն տալ զգացմունքներին ու մտորումներին: Հայսմ՝ օրորի տեքստը և դրանից արտածվող եղանակավորումը միատարր չէ: Հանդիպում են միջանկյալ կամ անցումային ձևեր (կարող են ներմուծվել սերված երգի տողեր): Ձեն բացառվում նաև մի երգից կամ ժանրից մյուսը կատարվող անցումները (դեպի սկզբնականը հնարավոր վերադարձով): Այսպես, մեր գրանցածներից մեկը ձեռք է բերում լալիքի երանգներ՝ աստիճանաբար չեզվելով և՛ մեղեդու նախնական կառույցից, և՛ բանաստեղծական տեքստից, քանզի բանասաց տատը նանիկ է ասում իր մահացած հարսի երեխային: Ժանրային առումով այն կարելի է համարել անցումային կամ լողացող, քանզի կիսաձայն ասերգվող լալիքից անցնում է օրորի՝ հայտնի բանաստեղծական տեքստ վերստին ավարտվելով հանկարծաբանական մտածողությանը բնորոշ խոսքով: Պատահում են նաև դեպքեր, երբ բանասացը որևէ ավանդական մեղեդու հենքը հարմարեցնում է օրորելու ռիթմին, տեքստը կառուցում միայն փաղաքշական ու քնելու գործողություն արտահայտող բառերով:

Մեր դիտարկմամբ՝ որոշակի տարբերություն կա կին և տղամարդ բանասացների օրորներում: Եթե կանանց երգասացությանը հատկանշական է պարզ, քնարական և զգայական կերպը, ապա տղամարդկանց մոտ նկատելի է վիպական, պատմողական չունչը, աշուղական երգամտածողության, մուղամաթի ելևէջումների ու ոլքի տարրերի համեմատը (տե՛ս նոտային օրինակը): Կանանց օրորներում գերիշխում է մանկիկի նկատմամբ հոգածության, քնի անհրաժեշտությունը հաստատող խոսքը, ընտանիքի մասին տեղեկություններն ու դիպվածային հավելումները: Առավել բնորոշ են թափառող տողով կամ սյուժեով պատկերները: Տղամարդկանց երգած հանպատրաստից տեքստն ավելի խտացված ու խոհական է, չեզոը գրվում է մեղեդու վրա: Ցավոք, տղամարդկանց ձայնագրություններ սակավաթիվ են, քանզի գործընթացը և դրանից արտածվող ժանրը համարվում են կանանց բնորոշ[26]:

---

[26] Հարցը երաժշտագիտական մանրակրկիտ վերլուծության կարիք ունի, որի շնորհիվ կարելի է հստակ բնորոշել կին և տղամարդ բանասացների օրոր ասելու ընդհանրապատկեր կատարումների առանձնահատկությունները: Մեր դիտարկումն առայժմ խնդրի ձևակերպման միտում ունի միայն:

Տարածված տեսակներից է թունոցին, որի նպատակն է տակավին չքայլող, փոքրիկին թոցնելով (պարացնելով)՝ խաղացնելը: Ռիթմը ներդաշնակ է մանկանը վեր-վեր բարձրացնելու գործողության ընթացքում ձեռքի շարժմանը (հմմտ. երաժշտության ծագումը գործողությունից, շարժումից վարկածի հետ): Դեպի վեր շարժումն ազգաբանները կապում են նաև մանկան աճի գաղափարին՝ համեմատելով բույսի ծլարձակմանը: Բնորոշ օրինակներից է՝

Հա, թռի, թռի, թոցընեմ,
Մև հավի միս կերցընեմ,
կարմիր գինի խըմցընեմ,
Հով ծառի տակ քընցընեմ,
կարմիր սոլեր հագցընեմ,
կանաչ գոտի կապցընեմ,
Հա, թռի, թռի, թոցընեմ,
Եղ ու մեղր կերցընեմ,
Պաղ-պաղ ջրեր խմցընեմ,
Հորըդ գլխին (կամ բեղին) չըդցնեմ...
[Լոռի, ԴԱՆ, 1992]

Բերված հարացույց-տեքստն[27] անընդհատ կրկնվում է՝ ընդմիջվելով «Հա, թռի, թռի, թոցընեմ» կրկնակով, որի շնորհիվ ընդգծվում է ասերգի ռիթմիկ պատկերը: Բանասացների վկայությամբ գլխավորը տեքստի այս հատվածն է, որը կարելի է չարունակել մինչև ձանձրանալը: Տեքստը կարելի է հավելել ընտանիքի անդամներից յուրաքանչյուրի հետ մանկան կապը նկարագրող դրվագով, պատգամով և քնքշանքի արտահայտություններով: Որոշակիորեն փոխվում է տղա և աղջիկ երեխաներին նվիրված երգերի տեքստը: Ինչպես օրորներում, այնպես էլ մանկական այլ ժանրերում ընդգծված գորովանքով ու մեծարանքով առանձնանում են արու ժառանգները՝ իբրև գերդաստանի չարունակություն ապահովող, իսկ աղջիկների հանդեպ վերաբերմունքը բացահայտ հանդուրժողական է: Շեշտվում է նաև յուրաքանչյուր սեռի զավակի ճակատագրական առաքելությունը. տղաներին՝ տան սյուն ու ճրագ, հայրենիքի պաշտպան ու մարդամիջի մարդ, իսկ աղջիկներին՝ խոնարհ հարս, չեն օջախի տիրուհի ու մայր քնքշորեն համեմատելով ծաղիկների, երկնային լուսատուների հետ: Ըստ էության, դեռևս օրորոցից մանուկները երգերի միջոցով ասես հաղորդակցվում են գերդաստանի պատմությանն ու ան-

[27] Այս երգի տարբերակները, ինչպես նաև մանկական բանահյուսության տարբեր ժանրերի մասին ավելի մանրամասն տե՛ս [Գրիգորյան, անդ, 161-167]:

դամներին, իբենցից ակնկալվող վարքին ու վիճակված ճակատագրին: Ավածը բնորոշ է օրորներին և մանկախաղաց երգերին: Թռնոցու տեքստը և եղանակավորման սկզբունքները համեմատելի են անձրևաբերությանն ծեսին բնորոշ Նուրի-Նուրիներին: Թռնոցու տարբերակներից են նաև «Դա՛ն-դա՛ն», «Դընգո»-ները, որոնց կարելի է հանդիպել գրեթե ամենուր, որտեղ մանկիկ և նրան խնամող կին կա: Իբրև հարացուցային օրինակ դիտարկենք Լոռիում մեր գրանցած օրինակներից մեկը.

Դան, դան, դա՛ն բալա,
Ուզողներդ գա՛ն, բալա,
Երբ բարըշեն, գա՛ն, բալա,
Դան, դան, դընգոց ա,
Մեղրով լիքը քթոց ա,
Սառն ախալըրի չըվաքը
Թուխ ոչխարի դըմակը,
Դան, դան, դա՛ն, բալա,
Ուզողներդ գա՛ն, բալա,
Ճամփին իրար տա՛ն, բալա,
Երբ բարըշեն, գա՛ն, բալա,
Ի՛մ բալա, չան, ի՛մ բալա չան,
Երբ բարըշեն, գա՛ն, բալա,
Ճամփին իրար տա՛ն, բալա,
Մընդրա տերև փափկոց է,
Լենա տերև ծածկոց է,
Դան, դան, դընգոց ա,
Մեղրով լիքը քթոց ա,
Դան, դան, դա՛ն, բալա,
Ուզողներդ գա՛ն, բալա,
Ճամփին իրար տա՛ն, բալա
Երբ բարըշեն, գա՛ն, բալա,
Ի՛մ բալա, չան, ի՛մ բալա չան,
չա՛ն բալա...

Ասերգն ունի կայուն, պարբերական կշռույթ՝ հիմնված գործողության ընթացքի վրա: Տեքստում նկատելի է մանկական բանահյուսությանը բնորոշ իդեալական տարածքի ու հեքիաթային սյուժեի անդրադարձը: Պարբերական կրկնություններն այս տարածության մեջ ավելի են ընդգծում՝ ստեղծելով անդրադարձի էֆեկտ: Տեքստը բերակում ևս անվերջության պատրանք են երևակում: Տեքստը կառուցված է մանկախաղաց երգերին բնորոշ հարացույցով, որի կրկնությունն անընդհատ չարժման՝ մոտորայնության նմանակումն է: Այս երգերը սովորաբար չարադրվում են ոչ մեծ ձայնածավալում (մինչև կվինտա): Բերված օրինակում տերցիայի սահմաններում է: Կրկներգի ու կրկնակային տողերի չափակշռությունները հնարավորություն է ընձեռում հանպատրաստից երգի տրամաբանության շրջանակներում թվարկել գերդաստանի բոլոր անդամներին՝ այդ համակարգում ներկայացնելով յուրաքանչյուրին: Նույն կերպ հորինվում են նաև մանկանը լողացնելու, մերսելու ընթացքում կատարվող հնչյունային տեքստերը (տե՛ս նոտային օրինակը): Գործողությունը կատարող կինը նախ խոսք-գովքով դիմում է երեխային, նախապատրաստելով «ջուրը վտաք ու հով անել», տաշտակը, թարմ սպիտակեղենն ու ցամքոցը պատրաստել: Հընթացս ասերգի ձևով պատմում է այդ ամենը ձենով ասելով՝ շարունակելով երեխային տրամադրել փաղաքշա-

կան խոսքով: Ապա տեքստն աստիճանաբար մեղեդային երանգներ է ստանում երդ ասելու ձիրքով օժտված բանասացների մոտ: Հակառակ պարագայում ամբողջ ընթացքը ծավալվում է առոգանացված (դեկլամացիա) խոսքի մտածողության ծիրում՝ համեմատաբար երկարաշունչ վանկերի հավելումով: Մեղեդու կառույցի առումով սրանք ևս մանկան զուգերին բնորոշ երաժշտախոսքային բարձրակետային հնչյունից վարընթաց դարձվածքներով, պարբերական կրկնություններով, նույն չափակշռությային հենքով ասերգեր են գործողության ընթացքին ներդաշնակ: Խոսքում ներկայացվում է լողանալ-մաքրվելու և մերսելու արարողությունը, հիմնավորվում մարմնի յուրաքանչյուր մասի նկատմամբ առանձնահատուկ խնամքն ու վերաբերմունքը: Յուրահատուկ է հատկապես արու զավակների կազմախոսությունն (անատոմիա) իբրև օջախի ու տոհմի շարունակությունն ապահովող պայման ներկայացնելու միտումը, որ առանձնակի սիրով գովաբանում են տատիկները: Օրորների ու թռնոցիների նման այստեղ ևս տարբերակվում են աղջիկ և տղա երեխաներին ուղղվածները թե՛ բանաստեղծական տեքստով, թե՛ դրանից բխող եղանակավորմամբ: Կառույցը հիմնականում եռամաս է, նման գործողությանը կան արմատ ունեցող այլ հանպատրաստից ժանրերին՝ նախապատրաստում, բուն ընթացք և եզրափակում, որոնց ծավալը կախված է ասացողի տրամադրությունից և իրադրությունից: Նախորդների նման տեքստը միջամտվում է դիպվածային արտահայտություններով, խոհերով և ձայնարկություններով, որոնք երևույթի զգայական չերտն են:

ԾԻՍԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԵՐԻՄ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՄԲ ՀՆԶՈՂ ԵՐԱԺՇՏԱԽՈՍՔԱՅԻՆ ՏԵՔՍՏԵՐ

Առանձնահատուկ ուշադրության են արժանի մանկական ծիսական երաժշտական բանահյուսության նշխարները, որոնցից շատերը ժամանակի ընթացքում մոռացության են տրվել կամ իմաստազրկվել՝ ավանդական կենսընթացի վերափոխման պատճառով: Դրանց մի մասը գոյատևում է վերապրուկային ձևով կամ նորովի մեկնաբանությամբ, մյուսը նոր ձևավորվող կենսոլորտի բերումով փոխակերպվել է մանկական խաղերի: Հինության առնելով այս տեքստերը կարելի է եզրահանգել, որ ժողովրդական տոների և ծեսերի ընթացքում որոշարկված էր մանկան մասնակցային գործառույթը: Այն գերազանցապես երաժշտախոսքային, խաղարկային կերպ ուներ և համընկնում էր սահմանային-անցումային իրավիճակներին՝ Արարչին ու հանրությանն ձոնված օրհնանք-բարեմաղթանքներին, բնությանն ուղղված նմանակում-

համայնքներին: Ավանդույթի համաձայն՝այդ երգերն անմեղություն խորհրդանշող մանկան (հրեչտակի փոխակերպում) միջոցով խնդրանք-նպատակը բարձրյալին լսելի ու ընդունելի դարձնելու միտում ունեին: Բազմաթիվ օրինակներից կարելի է նշել Նոր տարվա և Քրիստոսի ծննդյան տոներին[28] (մոմերով, դդմի ճրագներով, ջահերով, զանգակների ու ծնծղաների հնչյուններով) համայնքի բոլոր ընտանիքներին բարի լուր ավետող ու բարեկեցություն մաղթող երեխաների խմբերի երգած ավետիսները[29]: Տիեզերաստեղծ այլաբանությամբ կյանքի հավերժությանն են միտված նաև Բարեկենդանի հարց ու պատասխանային երգաշարերը («Աս տարի, տարի», «Գացեք, տեսեք»), Մաղկազարդին՝ աղմկային նվագարանների միատարր ձայնի ուղեկցությամբ տնետուն շրջող, հատիկ ու հավկիթ հավաքող խմբերի տեքստասերգերը («Անակ, անակ ճոճանակ», «Ճեռ, ճեռ, ճոճանակ», «Կարկաչա-կարին կաչա»), կավե սուլիչներով թռչնի ձայների նմանակումները: Նույն շարքում են նաև Համբարձման տոնին, Վարդավառին, Անձրևաբերության ծեսերին տնետուն այցելող, ծաղկեփնջեր նվիրող ու նվիրատվության դիմաց բարեմաղթող մանկական խմբերի ասերգերն ու խաղիկները («Ջանգյուլում», «Գովեմ-գովեմ», «Նուրի-նուրի», «Բուկլեբարան անձրև պի»): Երգամատածողության առումով վերջիններս ընորոշվում են մեղեդուն և տեքստի պարզ կառուցվածքով, հարուստ կրկնություններով, հստակ ու պարբերական չափակշռությամբ և մեծ մասամբ հնչում են ավանդական երաժշտական մշակույթի ռիթմա-ելևէջային ոլորտում[30]: Մանկական ծիսական հիշյալ նմուշների

---

[28] Նոր տարվա և Սուրբ ծննդյան տոների երաժշտության ծիսապաշտամունքային ակունքների մասին տե՛ս Լ.Սիմոնյան, Տոմարային ծիսաշար. Տոմար, Նոր տարի, Սուրբ Ծնունդ, հ. 1, Եր., 2006,էջ 61-179:

[29] Ռ.Աթայանը նշում է, որ դրանք հոգևոր երաժշտությունից են թափանցել ժողովրդականի մեջ, բայց ըստ Կոմիտասի՝ «...ոճը խիստ փոփոխված է՝ ժողովրդի միջի բերնեն բերան անցնելով»: «Ավետիսներում պարզագույն չարականների կամ սաղմոսների վանկաչափական ռիթմը հաճախ ընդունել է ժողովրդական պարային մոտիվների կերպավորքի բնորոշ գծեր», [Կոմիտաս 2000, 171]: Հոգևոր թեմատիկայով երգերի այս ժանրին է նվիրված Մ.Մանուկյանի [1995] ժողովածուն: Ըստ հեղինակի՝ «Ավետման երգերը բոլորովին էլ քարացած, նուրբ ծ

տեքստերը կայուն են, թեև աչքի են ընկնում չարունակականության սկզբունքով կազմված թվացյալ անավարտ հենքով, որը յուրաքանչյուր դեպքի համար սյուժեի մեջ փոփոխություններ անելու և երեխային հանպատրաստից հորինելու հնարավորություն էր ստեղծում: Կառույցի պարտադիր հենքը տվյալ տոնի, ծեսի բուն նպատակի հակիրճ ներկայացումն էր՝ դրանք հովանավորող գերբնական ուժերին միտված զոհաբերության ակնկալիքպահանջով, տվյալ ընտանիքին համայնքի ընդհանուր ծիսական մթնոլորտ ներգրավելու և տոնի հրաշքին հաղորդակցվելու առաջարկով: Սովորաբար ավարտվում են զոհաբերությունների-նվիրատվությունն անողներին ուղղված մաղթանքով և հրաժարվողներին ուղղված պատժի ակնարկներով: Համայնքի բոլոր անդամները նախապես պատրաստվում և մասնակցում էին մանուկների իրավասությանը հանձնված արարողություններին թե՛ ծիսական պահվածքով, թե՛ հնչյունախոսքային տեքստով, որի շնորհիվ վերանում էր կատարող-հանդիսատես սահմանը՝ ապահովելով հանրույթի բոլոր չերտերի մասնակցությունը, որը տոնածիսական մթնոլորտի հենքն էր[31]:

Երգվող տեքստերի կրկնություններ ևս անվերջության, հավերժության յուրօրինակ նմանակումներ են: Կատարվում են մենակատար և խումբ կամ փոխեփոխ ասվող հարց ու պատասխանային եղանակներով[32]: Հայտ կարելի է եղրակացնել, որ մանկան

տարբերում է ժողովրդական հորինումներից: Ընդգծում է կառույցի և բովանդակային նմանությունները: Ավետիսների ծանոթագրություններում Մ.Թումանյանը [1972, 206] նկատում է *եկեղեցուց ներս և դուրս* կատարվող ծիսական երգերում հեթանոսական և քրիստոնեական պաշտամունքների ներհյուսումը կենաց ծառի, Քրիստոսի և Վահագնի ծննդյան ցնծալից գովքերում՝ իբրև *կյանքի սկզբնավորման խորհուրդ*, որ համեմատելի է հարսանեկան գովքերին:

[31] Հիշյալ տեքստերը, վարքագծային պահվածքով հանդերձ, երեխաները սովորում էին տատից, մորից, որ փոխանցվում էին ժառանգաբար: Եթե մանուկ-մշակույթի կապը հիմնականում իրականացվում էր մոր և տատի միջոցով, ապա մշակույթ-քաղաքակրթության կապը՝ ազգի ծագման ու վիպական անցյալի հետ առաջին ծանոթությունը, առնչվում է պապի կամ տղամարդկանց միությունների (Срб.Лисицын. Старинные пляски и театральные представления армянского народа, т. 1. Ереван, 1958. Л.Варданян. Традиции мужских возрастных групп у армян. - Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 12, եր., 1981, էջ 94-97) հետ: Պապը կամ հայրն է օգնում թոռներին՝ պատրաստելու առաջին պարզունակ նվագարանները ու հնչյուններ արտաբերող հարմարանքները, համեմատություններ փոխանցում արհեստների, նվագարանների ստեղծման և կատարման գաղտնիքների մասին:

[32] Ծրանախյում Մննդյան տոնի երգերի քրիստոնեական (նոել) և նախաքրիստոնեական ժողովրդական (ազիլանյոֆ) կատարումներում հարց ու պատասխա-

ծննդից մինչև հասունություն մշակութային ժառանգության փոխանցումն ընթանում է ավանդական երաժշտաբանահյուսական ծիրում: Այն նպատակ ունի ձևավորել երեխայի ազգային նկարագիրը, դաստիարակել իրբև համայնքի լիարժեք անդամ՝ ապահովելով նախնիների հետ կապի շարունակականությունը:

ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ ԿԱՄ ԹՌՉՈՒՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԴԻՄԵԼԱՁԵՎԱՍԵՐԳԵՐ

Դաշտային աշխատանքի ընթացքում փորձել ենք ձայնագրել ու նկարագրել նաև ընտանի կենդանիների ու թռչունների կերակրման և խնամքի ընթացքում հնչող երաժշտաբանահօուսական հանպատրաստից ժանրերը: Դրանք միտված էին կենդանիներին ու թռչուններին չուրջը հավաքելուն կամ քշել-հեռացնելուն: Հայսմ, հիմնական չեշտադրությունը ձայնարտաբերման կերպի և հնչյունների բարձր-ցածր անցումների ու խաղերի ոլորտում էր կատարվում: Ի տարբերություն տարեց բանասացների, որոնց տեքստերում ձայնարկությունները բուն նպատակից (կանչել կամ քշել) բացի արտահայտում էին ասողի տրամադրությունն ու հոգեվիճակը, իսկ բառային մակարդակում՝ ընթացիկ հոգսերի մասին տեղեկատվություն, երիտասարդների կատարումներն առավելապես ձայնարկություններից էին կազմված՝ առանց անձնավորման: Անգամ միայնակ լինելիս անձնական կյանքի որևէ դրվագ կամ հոգեվիճակը բացահայտող «վրիպում» չէր նկատվում, ընդհակառակը, կարծեք կերպափոխվելով «ցուցադրում» էին իրենց ձայնային-կատարողական հնարքները: Գրանցված նմուշներից մի քանիսը կենցաղային գործընթացն ուղեկցող մեներգ էին՝ նախասոսկություն էին հիշեցնում, որը թե՛ կատարողի մտորումների նկարագիրն է, թե՛ հավերին կերակրելու մեղեդայնացված պատկերը: Մեր գրանցած նմուշներից մեկում ասերգի սկիզբը հնչում էր բնական ձայնով, ապա գերիչ[33] ալիտերացիաները, որը փոքր-ինչ ֆալցետային երանգավորում էր ստանում: Ավարտվում էր հայտնի երգի նմանակմամբ՝ «Ալա՛յ-բալա՛յ ջուլյաները»: Նկատելի էր թռչունների ձայների ու ելևէջակարգի, արձակած հնչյունների բարձրության, կերը կտցահարելու ռիթմի նմանակման միտումը, որ բնությանը կրկնօրինակելու միջոցով երաժշտության ծագման ձևերից

նային մտածողության մասին տե՛ս Ж.Тьерсо. История народной песни во Франции. М., 1975, с.172-176, 215-232:

[33] Իտալերեն՝ falsetto-ով բնական, չատ բարձր (ճչան) ձայն, որ վոկալ արվեստի որոշակի կատարման ոճ ու հմտություններ է պահանջում: Ավելի ընդունված է տղամարդկանց երգեցողության մեջ:

է (համմտ. Զ.Դարվինի տեսության հետ): Աստերգի հաջորդ հատվածը խիստ նմանվում էր ծանոթ ժողովրդական երգի: Հաճախ հնչյունավորված խոսքը համեմվում է տրամադրությանը և գործընթացի բնույթին հոգեհարազատ որևէ սիրված երգով («Ես մի ծառ եմ ծիրանի», «Սարերի հովին մեռնեմ», «Ադեն մածուն մերել ա», «Տանում են, ադե ջան» և տարածված այլ երգերի մոտիվներով)[34]: Դիտելի է, որ կին բանասացները ձեռնով ասելիս հակված են ավանդական ժողովրդական մտածողության ծիրում ծավալելու իրենց հորինումները, իսկ տղամարդիկ գերակայորեն ստեղծագործում են աշուղական երաժշտախոսքային ոլորտում: Ամենայն հավանականությամբ, առկա է աշուղական արվեստն իբրև բարձրակետային չափանիշ ընկալելու գործոնը: Համեմատաբար երիտասարդ սերնդի բանասացների շրջանում ուրվագծվում է մեր օրերում որոշակի վարկանիշ ձեռք բերած ռաբիս երաժշտությանը նախապատվություն տալու միտումը: Մի հետաքրքիր դիտարկում ևս, այսօր մեծ տարածում գտած աղանդավորական շարժման ինքնատիպ դրսևորումներից են գովքի, թոնոցու և օրորի հանպատրաստից հորինումներին հոգևոր թեմաներով նորագույն, պարզունակ երգերի խոսքի ու մեղեդու դարձվածքների «ցիտատային» կցորդումը կամ դրանց երաժշտախոսքային ոլորտում ամփոփվելը: Երկու տարբերակում էլ հիմնական կառույցն ստացվում է կոնկրետ ժանրի մտածողությանը: Թեև տեքստ ներթափանցող բանասացի հոգսերն ու մտորումները[35] ներգործում են մեղեդու կառույցի վրա, սակայն ժանրը չի փոխվում, այլ տեքստային և մեղեդային[36] հավելույթներ է ստանում:

---

[34] Յուրաքանչյուր ազգագրական գոտի իր նախընտրելի երգացանկն ունի, բնորոշ կատարողական ոճը, որն ուղղակիորեն ներմուծվում է հանպատրաստից հորինվող երգի մեջ:

[35] Բուն ժանրի հետ կապ չունեցող փաստերի, դիպվածի թափանցումը բանահյուսական տեքստ բնորոշ է առանին կենցաղի բաղադրիչ դարձած բոլոր հանպատրաստից կառույցներին: Այսպես, կով կթելու ժամանակ ներս է գալիս հարևանն ու ինչ-որ բան խնդրում, որն իր անմիջական արտացոլումն է ստանում երգվող տեքստում՝ վերջինիս անձին առնչվող մի դրվագով: Մեկ այլ տարբերակում երեխային օրորելիս տատը հանկարծ հիշում է վաղամեռիկ հարազատներից մեկին, ու երգի մեջ հայտնվում է ցավը, որ քնած ձագուկը միայն պատմածներով պիտի ճանաչի իր հարազատին: Կամ՝ պապացողը ողբ ասելիս հիշում է հեռավոր երկրում գտնվող ազգականներից մեկին, որը հնարավորություն չունի վերջին հրաժեշտը տալու հանգուցյալին, և այդ փաստն արտահայտվում է ողբ-գովքի տեքստում:

[36] Լինում են դեպքեր, երբ մեղեդու փոփոխությամբ փոխվում է նաև ժանրը. օրինակ՝ «Զարթնիր, լաո...» հայտնի երգն օրորոցային է՝ քայլերգի վերածված ռիթմով: «Արի՛, իմ սոխակ»-ը ևս օրորոցային է՝ վերափոխված մարտական եր-

Նույն եղանակով դիտարկենք նաև փողոցում (թափառիկ) և չուկայում առևտրի ժամանակ հնչող ասերգները[37]*: Նյութի քննությունը ցույց է տալիս, որ հատկապես սննդամթերքի գովք-գովազդի տեքստի առանցքը վաճառվող ապրանքի բուժիչ հատկությունն է: Այն ընդգծվում է մթերքի բնականությամբ, սրբավայրի տարածքից բերված լինելու բացառիկությամբ, հավաքողի կամ վաճառողի մաքրությամբ (հիգիենա): Ասերգների այս տիպին բնորոշ են պարզ, հակիրճ, հանգավորված, մեղեդայնացված խոսքը և հաստատուն ռիթմը: Գրանցված մի քանի նմուշներն առանձնանում են գործողության բնական ռիթմի (ձեռքի շարժում) ազդեցությամբ, քանզի վաճառողը միաժամանակ բովում է արևածաղկի սերմերն ու գովում (հմմտ. երաժշտության ծագումն աշխատանքի ռիթմից՝ Կ.Բյուխերի տեսակետի հետ):*

Ամփոփենք: Թեև ներկայացված ձենով ասվող օրինակները տարբեր ժանրային-թեմատիկ խմբերի են պատկանում, սակայն բոլորն էլ հանկարծաբանությունները են[38]*: Որոշարկենք դրանց օրինաչափությունները.*

1.Ունեն սյուժե և կառուցվածք, որոնք համընկնում են հատասահման հայտնի երգային ժանրերին: 2.Բանաստեղծական տեքստերը, թեև ազատ մտածողությամբ ու հանպատրաստից են ծնվում, սակայն ներքին հանգավորում ունեն: 3.Կշռույթը (ռիթմ) կախված է գործողության ռիթմից և կատարողի տրամադրությունից, որ համընկնում է համանման կայուն ժանրերին: 4.Կատարման ժամանակը չի սահմանափակվում երգի կառույցի չրջանակում, այլ կախված է ընթացիկ գործողության ժամանակից: Ներում, այլ կախված է ընթացիկ գործողության ժամանակից: 5.Հիմնականում ծառայում են իբրև հնչյունային՝ ասերգային, հաղորդակցություն և օժտված են գովքին բնորոշ արտահայտչա-

---

գի: Կ.Զալիկյանի երգչախմբի կատարմամբ հնչող «Օրոր»-ում չեչտվում է ծիսական-մոգական հենքը, որը զարգացնելով՝ խմբավարը նոր մեկնաբանության է հասնում՝ փիսակցաբար փոխելով ռիթմիկ պատկերն ու կատարման կերպը: Հաճախ մեղեդու ձևափոխությունը նկատելն անհնար է, երբ բանաստը մտքում կարծրացած մեղեդային հարացույցով տարբեր ժանրի տեքստեր է երգում: Տեքստից վերանալուց պարապայում մեղեդու վերլուծությունը կփաստի մեկ հիմնական կառույցի առկայություն:

[37] Ցավոք, հոդվածի ծավալը հնարավորություն չի տալիս մանրամասն անդրադառնալու բոլոր տեսակներին:

[38] Երաժշտական ստեղծագործությունների՝ հանպատրաստից հորինման երևույթին նվիրված հոդվածում Ա.Բատաշևը [Феномен импровизации, - Светская музыка, февраль, 1987, с. 46-51] նշում է, որ այն երաժշտարվեստի հնագույն, մինչև օրս ամենաբնական և ամենաչուսումնասիրված ճյուղն է:

ձևերով: 6.Կոնկրետ գործողությունից սերվող ասերգերը կարող են ընդմիջվել ներկաներին ուղղված դիմելաձևով, խորհուրդ-հորդորով, զայրույթ արտահայտող խոսքով, որոնք համահունչ են տեքստի ու մեղեդու հենքին: Ներկայացվող բոլոր տիպերին բնորոշ են առանին կենցաղի այս կամ այն դրվագի պատկերավոր նկարագրությունը, կատարված կամ ընթացիկ դեպքի պատմությունը, հնչյունային ոլորտում բարձրաձայն խորհրդածելը կամ ներկա արարածի (մարդ, կենդանի, թռչուն) հետ հաղորդակցվելը: Հաճախ հնչյունային խոսքից սահուն անցում է կատարվում դեպի իր գիտակցության մեջ անթեղված, պահի տրամաբանությանը հարազատ որևէ ժողովրդական երգ կամ մեղեդային դարձվածք (հանպատրաստից փոփոխություններ կատարելով և հարմարեցնելով սեփական ասելիքին) և ավարտվում խնդրի լուծումն ուրվագծող, հաստատող կամ ժխտող խոհական մտքով: Քիչ չեն օրինակները, երբ կատարողը, փոխելով զբաղմունքի ձևը կամ պահի տրամադրության ազդեցությամբ՝ փոխում է և ասերգի մեղեդային հենքն ու անցնում մեկ այլ ժանրի: Ասվածին սերտորեն առնչվում է նաև բանաստեղծական տեքստի ու մեղեդու կառույցի թվացյալ անկանոնությունը, որն, անշուշտ, հանպատրաստից ստեղծագործությունների բնորոշ հատկանիշ է: Ի տարբերություն հայտնի ժանրերի՝ հիշյալ լծորդումների երաժշտագիտական քննությունը դեռևս կատարված չէ գրանցված նյութի սակավության պատճառով[39]:

Որքան էլ առաջին հայացքից գրանք ազատ ոճով են կերտված և կանոնից դուրս են, այնուամենայնիվ օժտված են որոշակի ներքին օրինաչափություններով.

ա)Խոսքային տեքստերի գերակշիռ մասն ազատ չարադրանք

---

[39] Հայում՝ կարևորում ենք Հասիճի վանքում Կոմիտասի գրանցած պարերգերի նկարագրությունն ու քննությունը և գուբաններին նվիրված աշխատանքը [Կոմիտաս 1941, 68-105], որը մեզ հայտնի հանպատրաստից, հորինումների լավագույն հետազոտությունն է: Երաժշտագիտական առանձին դիտարկումներ կան նաև Ք.Քոչնարյանի Вопросы истории и теории армянской монодической музыки. Л., 1958, Մ.Բրուտյանի [1983], Մ.Մանուկյանի [1995] և այլոց աշխատանքներում, սակայն հեղինակները իրենց խնդրից դուրս են համարել մեզ հետաքրքրող հարցադրումները և չեն վերլուծել: Երաժշտագիտական մանրակրկիտ ուսումնասիրություններից է կլիի ժամանակ «ձենով ասվող» հանպատրաստից հորինումներին նվիրված Զ.Թադևոսյանի աշխատանքը՝ կլիի երգերը Վ.այոց Ջորի դյուղական երգաստեղծության մեջ, Ակադեմիկոս Ռ.Զարյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի թեզերի ժողովածու, Եր., 1999, էջ 17-23, որի հիմքը գիտարշավներում մեր համատեղ կատարած նպատակային ձայնագրություններն են:


ունի՝ բարբառին հարազատ առոգանութեամբ: բ)Առավել երաժշտական են կամ մեղեդայնացվելու միտում ունեն փաղաքշանք, հորդոր, երազանք արտահայտող դարձվածքները: Դրանցում նկատելի է պարբերական չափակարգը, որ գործընթացի չարժման արտացոլումն է: գ)Խոսքային տեքստում գերակշռում են կրկնակային տողերն ու կրկնակները, որ հագեցած են քաջալերանքի, հորդորի, փաղաքշանքի, երբեմն՝ հանդիմանանքի ձևերով: դ)Հիմնատողի թեմատիկ առանցքը բնութեան պատկերն է, գեղջկական կյանքի և երկրագործի ներաշխարհի հետ կապված մտորումը: ե)Հիմնատող, կրկնակային տող, կրկնակ փոխհարաբերութիւնը միակերպ չէ՝ պայմանավորված հանպատրաստից հորինման սկզբունքներով: Աներգերի կառույցը սխեմատիկորեն կարելի է պատկերել հետևյալ կերպ. ա)գովք, բ)դիմում-հորդոր, գ)գործի նկարագրութիւն, դ)գործողութեան նպատակ, ե)ակնկալվող արդյունքը, զ)կատարողի ընտանիքի պատմութիւնը: Հիշյալ սխեմայի կետերը և դրանց ծավալը հավասարաչափ չեն բաշխվում. կարող են տեղաշարժվել, ընդմիջվել: Հաճախ ստեղծագործութիւնը վերածվում է մենախոսութեան, որն ըստ էութեան կատարողի ներքին կամ իրական երկխոսութիւնն է: Ի պետս նշված առանցքը հարստացվում է հուզական վիճակը խտացնող ձայնարկութիւնների, ելևէջների, դարձվածքների շերտով: Հատկանշական է կատարողի ձայնային և ելևէջման օժտվածութիւնը, որ կերպափոխվում է գործողութեանն ու տրամադրութեանը համապատասխան՝ թատերայնացված պատկերի վերածվելով: Հընթացս կարող է փոխվել տաղաչափական հենքը՝ ուղղակի խոսքի կամ ազատ բանաստեղծութեան: Ուշագրավ է, որ որոշ ժամանակ անց նույն բանասացից նույն նյութը գրանցելիս փոխվում են թե՛ տեքստի բովանդակութիւնն ու տրամադրութիւնը, թե՛ ելևէջակարգն ու ձայնածավալը, սակայն ռիթմիկ պատկերը զերծ է ակնհայտ փոփոխութիւններից: Անփոփոխ է կառույցի առանցքը, որ ըստ ամենայնի՝ հարացուցային անդրադարձման արդյունք է: Քննութիւնը ցույց է տալիս, որ մինչև օրս հրապարակված և հայտնի նույնանուն երգային ժանրերը վերոհիշյալ հորինվածքներից առանձնացված հատվածներ են, որ «մաքրվել» են կենցաղային մանրամասներից, կանոնակարգվել ու մշակվել կոնկրետ ժանրերին բնորոշ բանաստեղծական ու մեղեդային կառույցի օրենքներով՝ ձեռք բերելով կենցաղից անկախ՝ ինքնուրույն կիրառութիւն:

ԼԱՅ, ԼԱՅ

Չայնագրությունը Հ.Պիկիչյանի
Վերծանությունը Դ.Դանիելյանի

Վայոց ձոր, 1997, գ.Մալիշկա
Բաճասաց՝ Շահրազան Հայրիկ





23 ԳԼՈՒԽԴ ՄԱԺԻԵՄ

/ երեխա լողացնելու երգ /

Չայնագրությունը Հ. Պիկիչյանի
Վերծանությունը Ջ. Թագակչյանի

ԱԻՉ,Վայոց ձոր, 1998, գ.Կարագլուխ
Բանասաց՝ Արմիկ Ասատրյան





Չի - մա - ցար մա - ժիեմ, բա - լա ջաճ,
Խե - լաք Գե - վառթ-ղեզ, օյ, օյ, օյ, օյ:
Էս ի՞նչ սի - բառց Գե - վառթզ տըղ - ասաց,
Շատ սի - բառց ա իմ Գե - վառթ - զը,
Ոս - կե - ծաձ ա ի - մ Գե - վառ - իր - զը,
Քաղ-ցըր բա-լա յա իմ Գե - վառթ-զը, խաա...
Տը - դա - յիս ո - ւտե - իր մա-ժիեմ, որ լավ իլ - ճի,
Բա-ցակ է - բա-լուց ծառ չէլ - ճի ո - ւտե-իր, որ աս - պո - կը մըտա-ճի,
Ճու-ճըղ մա - ժիեմ, որ հեր - կեճ իլ - ճի,
Բա - լա ջա - ճը, ճու-ճըղ մա - ժիեմ, որ ճա - չու - ճա, բա-լաա,
Բա - լաա, բա - լաա, բա - լաա...

ԹՌԻ, ԹՌԻ, ԹՌՑՆԵՄ

Չայնագրությունը և վերծանությունը
Ջ. Թագակչյանի


Վայոց ձոր, 1998, գ.Հորբատեղ
Բանասաց՝ Վերգինե Պողոսյան



Հին շոր, հին կոշիկ հավաքողի կանչ

Չայնագրությունը Հ. Պիկիչյանի
Վերծանությունը Մ. Սարգսյանի

Բանասաց՝ Արմիկ Ստեփանյան
Երևան 2006



Կանչողը տղամարդ է

ՃՈՒ, ՃՈՒ, ՃՈՒ, ՃՈՒ

Հավերին կուտ տալու կանչ

Չայնագրությունը Հ.Պիկիչյանի
Վերծանությունը Զ.Թագակչյանի

Վայոց ձոր, 1998, գ.Եղեգիս
Բանասաց՝ Էլիզ Հովսեփյան



Ըշրկը, հա, յելավ էն սև խավը, հարի, ժուռ ի տալը ճուրը ջուջայի:

Մածուն վաճառողի կանչ

Չայնագրությունը Հ. Պկիկիչյանի
Վերծանությունը Մ. Սարգսյանի

Բանասաց Կարինե Խուդաբաշյան
Երևան 2006



Արևածաղկի սերմեր վաճառողի կանչ

Չայնագրությունը Հ.Պիկիչյանի
Վերծանությունը Զ.Թագակչյանի

Երևան 1976
Բաճասացը կիճ է



Դաճակ -մկրատ սրողի կանչ

Չայնագրությունը և վարծանությունը
Զ.Թագակչյանի

Երևան 1995
Բաճասացը տղամարդ է



Խաչիկ ՍԱՄՎԵԼՅԱՆ

ԿՈՄԻՏԱՍԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«... Ոչ է պատմութիւնը ճշմարիտ առանց ժամանակագրութեան...»:
Մովսես Խորենացի

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Մեծ է ու առանձնակի Կոմիտաս վարդապետի գրաված տեղը մեր երկրի մշակութային կյանքի պատմության մեջ: Կոմիտասն այն մեծությունն է, որի անունն ու հեղինակությունը դուրս է եկել հայության սահմաններից և տարածում է գտել քաղաքակիրթ աշխարհի լայն շրջանակներում:

Թե՛ երկրում և թե՛ արտերկրում անչափ շատ է գրվել Կոմիտասի մեծության ու արժանիքների մասին: Այդ իրողության առհավատչյան այն ստվարածավալ ամբարումն է, որ կոմիտասագիտությունը ձեռք է բերել անցած հարյուրամյակի ընթացքում...

Տպագրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ ու մենագրություններ, գրվել են շատ ու շատ հետազոտություններ, հրատարակվել են մեծ թվով հոդվածներ ու վավերագրեր թե՛ հայերեն և թե՛ օտար լեզուներով: Արդեն ավարտվել է նրա «Երկերի ժողովածուի» ակադեմիական հրատարակության տպագրությունը և այլն:

Անուրանալի է, որ կատարվել է պատկառելի քանակի ծանրակշիռ աշխատանք... Այս ամենով հանդերձ այսօր դժվար թե որևէ մեկը կարողանա պնդել, թե կոմիտասագիտությունը այլևս անելիքներ չունի:

Անառարկելի իրողություն է, որ նրա ստեղծագործական ժառանգության Ջարեհցի անվան գրականության և արվեստի թանգարանում հանգրվանած 3675 միավոր վավերագրերի մի զգալի մասը տակավին չի արժանացել հրապարակման:

Անհայտության մեջ է նրա ձեռագիր ժառանգության մի ստվար ու ծանրակշիռ հատվածը: Դեռևս պարզաբանված չեն բանասիրական բնույթի մի շարք հարցեր, հրապարակում չկա նրա տարուբերումներով լի և մաքառումներով ու դեգերումներով հարուստ կյանքի գիտական կենսագրությունը: Թեև, ինչպես վերը նշեցինք, մեծ են կոմիտասագիտության բնագավառում եղած ձեռքբերումներն ու նվաճումները, սակայն մեծ են նաև անելիք-

նները, բացթողումները, թերացումներն ու տարընթերցումները: Անհրաժեշտության թելադրանքով պետք է ոչ միայն հետևողականորեն չարունակվի, այլև գիտական կայուն ու ամուր հիմքի վրա դրվի կոմիտասագիտության զարգացումը, պետք է բարձրացվի հրապարակվող նյութերի հավաստիության մակարդակը, և փակվի բանաքաղության ճանապարհը, ինչը զգալի ծավալ է ընդունել վերջին տասնամյակների ընթացքում:

Այս առումով զգալիորեն կարևորվում և ընդգծվում են Կոմիտասի կյանքի, տարընթերցումներով հարուստ գործունեության տարեգրության իրականացման նշանակությունն ու բերելիք նպաստը:

Մովսես Խորենացու կողմից վաղնջական ժամանակներում արած վերապահումը նշանակալից է դառնում և նորովի է իմաստավորվում նաև Կոմիտասի պարագայում: Այո՛, ո՛չ է պատմությունը ճշմարիտ առանց ժամանակագրության...

Տարեգրությունը, լայն առումով իբրև ժամանակագրություն, ուսումնասիրողին մեծ հնարավորություն է տալիս վավերական հիմքի վրա դնել կոմիտասագիտության զարգացումը, կանխում է եղած տարընթերցումները, անճշտություններն ու աղավաղումները և նախադրյալներ է ստեղծում այդ մեծ անհատականության գիտական կենսագրության իրականացման համար, որի անհրաժեշտությունն այսօր դառնում է ավելի քան հրամայական:

ԿՈՄԻՏԱՍԸ Ա.ՔՍՈՐԻՄ. 1915 ԹՎԱԿԱՆ[1]

Հունվար 1/14 Կ.Պոլիս, - Ուսանող Աղավնի Մեսրոպյանը իր ընկերուհիների հետ այցելում է Կոմիտաս վարդապետին՝ չնորհավորելու նրա Ամանորի տոնը:

«Այդ օրը, - գրում է Ա.Մեսրոպյանը իր հուշերում, - Կոմիտասի չեն տունը փոխված էր... երգ ու երաժշտություն լուել էին: Երաժիշտը շրջապատված էր իր մտերիմ ընկերներով, որոնցմէ Սիամանթոն կխոսեր զորավորի նորանոր իրատեներու (հրամաններու) մասին:

«Թանկագին բարեկամ, - ասում է Սիամանթոն Կոմիտասին, - ես թուրքին զինվոր չեմ երթար... կյանքիս կտակը քեզ...

- Ոչ, - պատասխանում է Կոմիտասը, - Ես քեզ թուրք բռնակալներուն զինվոր տվող չեմ, ոչ ալ խորամանկ թուրք կառավարությունը մեզպես նները ճակատ քշողն է»:

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», Երևան, 1960, էջ 303:

---

[1] Մի հատված «Կոմիտասի կյանքի և գործունեության տարեգրությունը» վերնագրով աշխատությունից:

Հունվար 2/15, ուրբաթ, Կ.Պոլիս, - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը իր նորակազմ երգչախմբի անդամների մասնակցությամբ անց է կացնում իր հեղինակած «Պատարագի» մշակման հերթական փորձը:

Մ.Թումաճան, «Պատարագի պատմությունը», տե՛ս «Կոմիտասական», դիրք 1, Երևան, 1969, էջ 246:

Հունվար 3/16, Կ.Պոլիս, - Կոմիտասը դոկտոր Սիոսյանի ալբոմում գրառում է «Տողիկ» խորագրով ստեղծագործության նոտագրության երկտողը:

Մարգարիտ Բաբայանը վերջինիս ալբոմից արտատպում է այս «Տողիկը» և 1932 թվականին «Անտիպ մեղեդի մը Կոմիտաս վարդապետեն» մակագրությամբ հրապարակում է Կ.Պոլսի «Ընդարձակ տարեցույց» ս.Փրկչի հիվանդանոցի» պարբերականում իր «Հուշեր Կոմիտաս վարդապետին շուրջը» խորագրով հոդվածում:

Ժամանակին նա «Տողիկը» ներկայացնում է «արվեստագետ պ.Հարություն Սինանյանին» և ցանկանում է իմանալ նրա կարծիքը: «Երաժշտական այս պատառիկը, - ասել է Սինանյանը, - կարճ՝ բայց տխուր ու մելամաղձոտ մեղեդի մըն է, որ եթե երկու անգամ նվագվի ազգային եղերկության մը ոգին կարտահայտե, վայրկյան մը թախծության հուզումով թաթավուն»:

«Ընդարձակ տարեցույց ս.Փրկչի հիվանդանոցի», Կ.Պոլիս, 1932, էջ 134:

Հունվար 9/22, ուրբաթ, Կ.Պոլիս, - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը իր նորակազմ երգչախմբի (25-30 անձ) մասնակցությամբ անց է կացնում իր հեղինակած «Պատարագի» մշակման հերթական փորձը:

Թումաճան, «Պատարագի պատմությունը», տե՛ս, «Կոմիտասական», դիրք 1, Երևան, 1969, էջ 246:

Հունվար առաջին կես, Կ.Պոլիս, - Թուրքական բանակի գերմանացի մարզիչ Ֆոն դեր Զանդերսը սպարապետ Էնվերի հետ որոշում է Օսմանյան բանակի թիկունքն ապահովելու անվան տակ թուրք-ռուսական սահմանագլխի քրիստոնյա ազգաբնակչությանը (հայությանը) տեղահան անելով փոխադրել պատերազմական գոտուց հեռու, հարավային մարզերը:

Գրիգորիս Ծ.վ.Պալաքյան, «Հայ գողգոթան», Երևան, 1991, էջ 68:

Հունվար 16/29, ուրբաթ, Կ.Պոլիս, - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը իր նորակազմ երգչախմբի մաս-

նակցությամբ անց է կացնում իր հեղինակած «Պատարագի» մշակման հերթական փորձը:

Մ.Թումաճան, «Պատարագի պատմությունը», տե՛ս «Կոմիտասական», հիրք 1, Երևան, 1969, էջ 246:

Հունվար 20/2 փետրվարի, Կ.Պոլիս, - Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթը այցելում է Գերմանիայի դեսպան Վանկենհայմին: Նրան տեղյակ է պահում հայերի դեմ ձեռք առնելիք միջոցառումների մասին և խնդրում է, որ «Գերմանիան չմիջամտի կամ արգելք չըլլա այդ ծրագիրներուն»:

Լևոն Վարդանյան, «Ժամանակագրություն հայկական տասնհինգի 1915-1923», Պեյրութ, 1975, էջ 29:

Հունվար 23/5 փետրվարի, ուրբաթ, Կ.Պոլիս, - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը իր նորակազմ երգչախմբի մասնակցությամբ վարում է իր հեղինակած «Պատարագի» մշակման հերթական փորձը:

Մ.Թումաճան, «Պատարագի պատմությունը», տե՛ս «Կոմիտասական», հիրք 1, Երևան, 1969, էջ 246:

Հունվար 29/11 փետրվարի, Կ.Պոլիս, - Վարդանանց տոնի առիթով Ազգային ժողովասրահի մեջ կենտրոնական վարժարանի կողմից տրված հանդեսին մասնակցում է Կոմիտաս վարդապետը և «իր գրած «Նորահրաշով» և ուրիշ երգերով հմայում է ունկնդիրներին»:

«Օրացույց», Ս.Էջմիածին 1915, 29 հունվարի:
«Ցաճար», Կ.Պոլիս, 1915, N 21, էջ 455:

Հունվար 30/12 փետրվարի, ուրբաթ, Կ.Պոլիս, - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը նորակազմ երգչախմբի մասնակցությամբ վարում է իր հեղինակած «Պատարագի» մշակման հերթական փորձը:

Մ.Թումաճան, «Պատարագի պատմությունը», տե՛ս, «Կոմիտասական», հիրք 1, Երևան, 1969, էջ 246:

Փետրվար սկիզբ, Ադանա, - Թուրք բարձրաստիճան մի պաշտոնյա իր մոտ է հրավիրում քաղաքի հարուստ հայերից մեկին և ասում է նրան. «Հայոցդ գլխուն նոր փոթորիկ պիտի պայթի»:

Գրիգորիս Ծ.վ.Պալաքյան, «Հայ գողգոթան», Երևան, 1991, էջ 74:

Փետրվար 6/19, ուրբաթ, Կ.Պոլիս, - Ղալաթիո եկեղեցուն կից սրահի մեջ Կոմիտաս վարդապետը նորակազմ երգչախմբի անդամ-

Ներքի մասնակցությամբ իրականացնում է իր հեղինակած «Պատարագի» մշակման հերթական փորձը:

Մ.Թումաճան, «Պատարագի պատմությունը», տե՛ս «Կոմիտասական», գիրք 1, 1969, էջ 246:

Փետրվար 7-20, Կ.Պոլիս, - Կ.Պոլսի պատրիարք Զավեն Տերեղյանը այցելում է Թուրքիայում Գերմանիայի դեսպան պր.Վանկենհայմին: Տեսակցության ընթացքում պատրիարքը իր չնորհակալությունն է հայտնում Բեռլինում դոկտոր Լեյբսուսի գլխավորած գերմանահայ միության կողմից հայերուս հանդեպ համակրական արտահայտությունները ցույց տալու համար:

«Ճաճար», կիսամյա հանդես, Կ.Պոլիս, 1915, 14 փետրվարի, N 21, էջ 455:

Փետրվար [12-13], Կ.Պոլիս, - Իթթիհատի կենտրոնում Թալեաթի նախագահությամբ գումարվում է նիստ: Գլխավոր քարտուղար Նազըմ բեյը իր զեկուցման մեջ պահանջում է. «Պետք է հայ ազգը արմատախիլ ըլլա, մեր հողին վրա անհատ մը անգամ չմնա, հայ անունը մոռացվի... Հայերեն անհատ մը չմնալու պայմանով բնաջնջումը անհրաժեշտ է»: Ջարդը կազմակերպելու նպատակով ստեղծվում է «Եռյակ գործադիր հանձնախումբ» (Բեհաեդդին Շաքիր, Նազըմ բեյ Սեյանիկլի, Շյաքրի բեյ): Հանձնախմբի որոշմամբ բանտից ազատվում ու հավաքագրվում են «Թեշքիաթը մահսուսեի» (Հատուկ կազմակերպություն) կոչվող խմբերը, որոնք պետք է իրականացնեին բռնագաղթն ու ջարդը:

Մելիան Ջաոե Րիֆաթ, «Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը...», Երևան, 1990, էջ 98: «Ազդակ», Բեյրութ, 1964, N 40:

Փետրվար 13/26, ուրբաթ, Կ.Պոլիս, - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը նորակազմ երգչախմբի մասնակցությամբ իրականացնում է իր հեղինակած «Պատարագի» մշակման հերթական փորձը:

Մ.Թումաճան, «Պատարագի պատմությունը», տե՛ս «Կոմիտասական», գիրք 1, Երևան, 1969, էջ 246:

Փետրվար, Կ.Պոլիս, - Թուրք կառավարության կողմից ընթացք է տրվում հայ ժողովրդի հանդեպ ցեղասպանությունը կիրառելու մասին նախօրոք մշակված և այժմ իրականացվող ծրագրին:

Փետրվար 14/27 մարտի, Կ.Պոլիս, - «Տաճար» պարբերականի հերթական համարում տրվում է հաղորդագրություն «Կենտրոնական վարժարանի կողմէ, ազգային ժողովարանում» վարդանաց

տոնի առիթով տրված հանդեսի մասին, որտեղ մասնակցել է «տ. Կոմիտաս վարդապետը, իր երգած «Նորահրաշով» և ուրիշ երգերով հմայելով ունկնդիրներին:

«Ծաճառ», Կ.Պոլիս, 1915, N 21, էջ 455:

Փետրվար 18, Կ.Պոլիս, - Իթթիհատական կենտրոնը («Ջեմիեթ») գաղտնի հրահանգով հանձնարարում է. «Ջպիտի թուլլատրվի, որ հայ մը օգնության և պաշտպանության արժանանա»:

Անտոնյան Ա, «Մեծ ոճիրը», Բոստոն, 1921, էջ 130-133:
«Հայկական սովետական հանրագիտարան», հ. 7, էջ 425:

Փետրվար 25/10 մարտի, Կ.Պոլիս, - Պեհլէտտին Շաքիեն նամակով հայտնում է. «Զինվորական հրամանատարությանը հարկ եղած հրահանգները տրված են սպանության գործելու կարգադրությանց համար»:

«Ազդակ», Բեյրութ, 1964, N 40:

Փետրվար 27/12 մարտի, ուրբաթ, Կ.Պոլիս, - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը նորակազմ երգչախմբի մասնակցությամբ իրականացնում է իր մշակած «Պատարագի» մշակման հերթական փորձը:

Մ.Թումաճան, «Պատարագի պատմությունը», տե՛ս «Կոմիտասական», գիրք 1, Երևան, 1969, էջ 246:

Մարտ 2, Ադանա, - Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ-ն, գաղտնի ճանապարհով լուր ստանալով հայության հանդեպ Թուրքիայի կառավարության կողմից նախապատրաստվող տեղահանության մասին, շտապով այցելում է Սիրիայում և Պաղեստինում բանակի հրամանատար Ճեմալ պեյին և խնդրում է լրացուցիչ տեղեկություններ իր ստացած լուրերի մասին:

Գրիգորիս Ծ.վ.Պալաքյան, «Հայ գողգոթան», Երևան, 1991, էջ 75-77:

Մարտ [3-4], Ադանա, - Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ-ն խորհում է իր ստացած լուրերի մասին տեղյակ պահել Զավեն պատրիարքին: Գիշերը իր մոտ է կանչում հույժ վստահելի վաճառական Վարդան Փրեյանին և հանձնարարում է նրան տեղյակ պահել կ.Պոլսո պատրիարք Զավեն Տեր-Եղյանին Թուրքիայում նախապատրաստվող հայերի տեղահանության ու կոտորածի մասին:

Նույն տեղում:

Մարտ [2-6], Կ.Պոլիս, - «Հովակիմյան տուն» նորաբաց տպարանում լույս է տեսնում Թեոդիկի «Ամենուն տարեցույց» տարեգրքի հերթական ութերորդ հատորը, որտեղ «Հայ արվեստը երեկ և այսօր» ընդհանուր խորագրի տակ զետեղված է «Կոմիտաս վ. ի Բարիզ» հաղորդագրությունը նվիրված 1914 թվականի հունիսի 1-ին Փարիզում երաժշտական միջազգային գիտաժողովում Կոմիտաս վարդապետի կարդացած բանախոսություններին:

Տարեգրքում հրապարակված է նաև Կոմիտասի «Բժշկություն երաժշտությամբ» (մեկ էջ Մայր աթոռի ս.Էջմիածնի 2359 համարի ձեռագրեն) վերնագրով հոդվածը՝ գրված 1914 թվականին:

Հատորում տեղ են գտել նաև Կոմիտասի մշակած «Ով մեծաքանչ դու լեզու» և «Երի, երի, երի Ջան» ժողովրդական երգերի նոտագրությունները:

Թեոդիկ, «Ամենուն տարեցույց», Կ.Պոլիս, 1915, էջ 141-151:

Փետրվար-մարտ, Կ.Պոլիս, - Կոմիտասը լուսանկարվում է Թերլեմեզյանի արվեստանոցում.

Ալ ձեռքը հենած աթոռի կռնակին...

Զվարթնոց, 1925, N 6-7, էջ 255:

Մարտ 6/19, Կ.Պոլիս, - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը նորակազմ երգչախմբի անդամների մասնակցությամբ անց է կացնում իր հեղինակած «Պատարագի» մշակման հերթական փորձը:

Մ.Թումաճան, «Պատարագի պատմությունը», տե՛ս «Կոմիտասական», գիրք 1, Երևան, 1969, էջ 246:

Մարտ 8/21, Կ.Պոլիս, - Կիլիկիո Սահակ Բ կաթողիկոսի հանձնակատար Վարդան Փրեյանը, հաղթահարելով մի շարք արգելքներ, հասնում է Պոլիս և տեղահանության տագնապալի լուրը հայտնում է պատրիարք Զավեն Տեր-Եղյանին:

Գրիգորիս Ծ.վ.Պալաքյան, «Հայ գողգոթան», Երևան, 1991, էջ 76:

Հունվար, մարտի սկիզբ, Կ.Պոլիս, - Զինվորագրության հետևանքով երգչախումբը ցրվելուց հետո ստեղծված կացության թելադրանքով Կոմիտասի մեջ նոր միտք է հղանում, և նա սկսում է «Պատարագի երգեցողությունները նոր ի նորո չարադրել» և իր նոր կազմած երգչախմբի կարողությունը նկատի ունենալով «Ձերբակը գիշերին խառնելով փոքրիկ օրգանի առջև գլուխը հակած մոմիցը պլպլացող լույսով ան գրեց ու ջնջեց, ջնջեց ու գրեց, մին-

չև որ լսեց հինավուրց այս երգուն մինչև իր որոնած հնավանդ ձայները...

Իր աշակերտները նույնքան խանդավառ ամեն ուրբաթ հևիհև կաճապարեին հասնել Ղալաթիո եկեղեցին, հարակից մեկ սենյակ և լսել ջանալու այս պարզ եղանակներուն թագնված այնքան հուզող ներդաշնակությունները»:

«Կոմիտասական», գիրք 1, Երևան, 1969, էջ 246:

Մարտ [9-10], Կ.Պոլիս, - Կիլիկիայից ստացված տագնապ հարուցող, հայության տեղահանմանը վերաբերող լուրի առթիվ Պոլսո պատրիարք Զավեն Տեր-Եղյանն այցելում է Կ.Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմին: Վերջինս հանգստացնում է պատրիարքին՝ հավաստելով ստացված լուրի սնանկ լինելը:

Պատրիարքը իր ստացած տեղեկությունը հայտնում է Սսի կաթողիկոս Սահակ Բ-ին:

Գ.Պալաքյան, «Հայ գողգոթան», Երևան, 1991, էջ 76:

Մարտի սկիզբ, Կ.Պոլիս, - «Երկու-երեք ամիսների ընթացքում, - գրում է Մխիթար Թումաճանը, - Պատարագի խմբական մասը ամբողջովին վերծանվում է Կոմիտաս վարդապետի կողմից... Մնում էր սարկավագի և քահանայի բաժինները միացնելու ընդհանուր փորձը, որը պետք է իրականացվեր Ծաղկազարդի կիրակի օրը»:

Մ.Թումաճան, «Պատարագի պատմությունը». տե՛ս «Կոմիտասական», գիրք 1, Երևան, 1969, էջ 247:

Մարտ 13/26-20, Կ.Պոլիս, - Սիամանթոն այցելում է Կոմիտասին: Զրույցի հիմնական թեման թուրք ոստիկանության կողմից «Ամենուն տարեցույցի» խմբագիր Թեոդիկի ձերբակալությունն է: «Կարծես թե անոնք, - գրում է զրույցին ներկա, հուշագիր Աղավնի Մեսրոպյանը, - կխոհային ահավոր տեսլապատկերի առջև... Տարիներ ի վեր առաջին անգամ ըլլալով Կոմիտասը կտեսնեինք այդ աստիճան ընկճված»:

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», Երևան, 1960, էջ 304:

Հունվար մինչև 14 մարտի, Կ.Պոլիս, - Կոմիտասի աշակերտները ու սանները «ամեն ուրբաթ հևիհև, - գրում է խմբի մասնակից Մխիթար Թումաճանը, - կաճապարեին հասնել Ղալաթիո եկեղեցին հարակից մեկ սենյակը, սերտելու և լսել ջանալու այդ պարզ եղանակներու մեջ թագնված այնքան հուզող ներդաշնակությունները: Երբեմն չաբաթու մեջ ալ սանները ու աշակերտները ոմանք կհավաքվեին վարդապետի տանը և նույն օրը կամ գի-

չերը շարադրված սևագրությունները։ Վրա երգի փորձեր կընեին»։

Այսպես երկու կամ երեք ամսվա ընթացքին պատարագի խմբական մասը ամբողջովին վերծանված էր արդեն։ Կմնար սարկավագներու և մեներգիչ բաժինները, որ առանձին սերտված էին, միացնելու ընդհանուր փորձը։

«Կոմիտասական», գիրք 1, Երևան, 1969, էջ 247։

Մարտ [14/27], Կ.Պոլիս, – Թուրք պետական գործիչներ թալեաթ պեյի, Թագաժառանգ Մեհմետ իշխանի և բարձրաստիճան այլ անձանց ներկայությամբ տեղի է ունենում «Թուրք օջախի» հերթական գրական-երաժշտական հանդեսը։

Բացման խոսքով հանդես է գալիս «Թուրք օջախի» նախագահ Համտուլլահ Սուպհի պեյը։ Ներկայացնելով իր հետ բեմահարթակ եկած Կոմիտաս վարդապետին, բանախոսը անդրադառնում է Կոմիտասի մեծությանը, բարձր է գնահատում նրա գործածրած ջանքերը և ցուցաբերած եռանդը գեղջուկ երգերի մշակման գործում։ Արժեքավորելով նրա վաստակը բանախոսը կոչ է անում թուրք հոգևորականությանը հետևել նրա օրինակին։ Այֆուհետև խոսելով թուրքիայի մշակութային կյանքում հայ մտավորականության ունեցած դերի մասին, ըստ ամենայնի բարձր է գնահատում ներդրված ավանդը։

Նախագահի բացման խոսքից հետո դաշնամուրի նվագակցությամբ ելույթ է ունենում Կոմիտասը և կատարում է «Կռունկ», «Հով արեք, սարեր ջան» և «Կալի երգ» մշակումները։ «Մաշալլա՜հ, աստված չար աչքից հեռու պահի...», – լսվում են դահլիճից թուրքերեն բացականչությունները։

Ըստ հուշագրողի հավաստիացման Կոմիտասը կարդացել է բանախոսություն և կատարել է իր մշակած թուրքական ժողովրդական երգերից մի քանիսը։

«Էջմիածին», 1968, N 3, էջ 46-48, «Արածանի», Փարիզ, 1943, էջ 66։

Մարտ 15/28, Ծաղկազարդի կիրակի, Կ.Պոլիս, – Կոմիտասի ղեկավարած երգչախումբը հավաքվում է կենտրոնական վարժարանի ամֆիթատրոնում, կատարվում է պատարագի վերջին միացյալ փորձը։ «Այդ օրը, – պատմում է փորձի մասնակիցը, – պատարագի ամբողջական փորձը սկսավ հեշտորեն ընթանալ։ Հասած էինք վերջալորության գոհանամք ըզքեն տեր-ին։ Սկզբնական երկու մասերը մեջընդմեջ, մեներգ և խմբերգ, զմայլելիորեն շաղաղված կերգվեին»։

«Կոմիտասական», գիրք 1, Երևան, 1969, էջ 247։

Մարտ սկզբից մինչև 20, Կ.Պոլիս, - Զարուհի Գալեմքեր յանը Դանիել Վարուժանին երկյուղ է հայտնում իթթիհատականների «ներքին զգացումներուն և հայատյաց բնազդներուն» վերաբերյալ: Վարուժանը նրան հանգստացնում է: «Ցավալին նախորդ երեկո, - ասում է նա, - Զոհրապը Թալեաթին հետ ծունկ-ծունկի բոքեր խաղացեր են, լավ են իթթիհատական տրամադրություններըը» մեր վերաբերյալ:

Գալեմքերյան Զարուհի, «Կյանքիս ճամբեն», Անթիլիաս, 1952, էջ 98-100:

Մարտ 21/3 (հ.տ.) ճրագալույց Զատիկ, Կ.Պոլիս, - Ղալաթիո եկեղեցու կամարների տակ առաջին անգամ Կոմիտասի դեկավարած 25-30 հոգուց բաղկացած երգչախումբը հնչեցնում է «Հինավուրց երգերու պատարագը», - գրում է Կոմիտասի սան, պատարագի մասնակից Միհրան Թումաճանը:

«Էջմիածին», 1968, N 3, էջ 44, 45:
«Կոմիտասական», գիրք 1, Երևան, 1969, էջ 248, 249:

Մարտ 22/4 (հտ) ապրիլի (կիրակի) Կ.Պոլիս, - Առաքելական եկեղեցու չուրջը համախմբված հայության խուռն բազմության ներկայությամբ Կոմիտաս վարդապետի գլխավորած երգչախումբը Ղալաթիո եկեղեցու կամարների տակ իրականացնում է Քրիստոսի հարության տոնը՝ Զատկվա պաշտոնակարգը:

«...Վարդապետի հրաշափառ չունչով օժտված հինավուրց երգերու պատարագը, - գրում է պատարագի ունկնդիր Ճ.Հ.Սիրունին, - մատուցվեցավ Ղալաթիո եկեղեցիի հնաբույր կամարներուն տակ...»:

«Էջմիածին», 1969, N 3, էջ 45:

Մարտ 23/5 ապրիլ, Կ.Պոլիս, - Զատկի երկրորդ օրը Իտալական Թեվտոնիա սրահի մեջ տեղի է ունենում Կոմիտաս վարդապետի համերգը, ուր ներկաների հոգին գինովանում էր Կոմիտասի անուշ երգերով:

«Էջմիածին», 1968, N 3, էջ 44:

Մարտ 15-30, Կ.Պոլիս, - Արաբատառ «Սապահ» թուրքական լրագրի մեջ թուրք մտավորական Համտուլլահ Սուլհին դրվատական հոդված է հրատարակում մարտի 14/27-ին «Թուրք օջախում» Կոմիտաս վարդապետի կարդացած բանախոսության մասին:

«Էջմիածին», 1968, N 3, էջ 47-49:

Ապրիլ 2/15, Կ.Պոլիս, - Թուրք պետական գործիչներ Թալեաթի, Էնվերի և Նազըմ բեյի ստորագրությամբ հրաման է ուղարկ-

վում տեղական իշխանություններին հայերին բնաջնջելու և արաբական անապատները քշելու վերաբերյալ:

«Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1981, հ. 6, էջ 553:

Ապրիլ 4/17, Կ.Պոլիս, - Ճրագալույցի ավագ շաբաթ երեկոյան Կ.Պոլսի Ղալաթիո եկեղեցում առաջին անգամ կատարվում է Կոմիտաս վարդապետի նոր մշակած «Պատարագի» արարողությունը:

Կոմիտաս, «Պատարագ», Երևան, 1997, հ. 7, էջ 123, 124:

Ապրիլ 7/20, Էջմիածին, - Տաճկաց Հայաստանում կիրառվող դաժան կոտորածները և կաթողիկոսի հասցեով տեղ հասած վշտախառն դիմումները հիմք են դառնում և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե հեռագրով պաշտոնական դիմումներ է հղում Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով Դաշկովին, Ռուսաց Արտաքին գործոց նախարար Սազանովին, Իտալիայի թագավոր Վիկտոր Էմանուիլ Երրորդին, Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վիլսոնին, Անգլիայի թագավոր Գևորգ Ջորջորդին, Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Պուենկարեին:

«Արարատ», Էջմիածին, 1915, N բ.գ., էջ 170-175:

Ապրիլ 7/20, երեքշաբթի, Կ.Պոլիս, - Նկատի ունենալով, որ քաղաքական իրադրության հետևանքով Կ.Պոլսում դրությունը լարված է, Էսայան սանուց միությունը նպատակահարմար է գտնում թուրք վիրավոր զինվորների օգտին Կոմիտասի մասնակցությամբ տրվելիք ցերեկույթը հետաձգել:

«Գացի Կոմիտասին ալ իմացնել այդ օրը, - գրում է Սիրունին, - թե հետաձգած ենք հանդեսը: Լավ եք ըրեր մրմնջեց, ու այլ ուրիշ խոսք չըսավ»:

«Էջմիածին», 1968, N 1, էջ 17:

Ապրիլ 11/24, Կ.Պոլիս, - Վաղ առավոտ Սիրունին վստահելի աղբյուրներից լուր առնելով, որ այդ օրը «պիտի բացվեն ոստիկանատներուն զրկված գոց պահարաններ», չտապում է Կոմիտասի մոտ: «Գնչ երազ եմ տեսած Սիրունի, - ասում է նրան Կոմիտասը, - այսօր անպատճառ բան մը պիտի պատահի... Թող պատահի, ասում է Կոմիտասը, իրմէ բաժանված պահուն»:

«Հոգեկան իր անդորրությունը, - չարունակում է Սիրունին, - կապչեցնե զիս: Քիչ անգամ մարդը կրնա այդքան քալ ըլլալ փոթորիկը մոտեցած ատեն»:

«Էջմիածին», 1968, N 1, էջ 48:

Ապրիլ 11/24, Կ.Պոլիս, - Հ.Սիրունու բերած տագնապալից լուրը ստանալուց հետո, օրվա երկրորդ կեսին, Կոմիտասը երգչախմբի փորձը ղեկավարելու համար մեկնում է Ղալաթիո եկեղեցի:

Կոմիտասը երգչախումբը նախապատրաստում էր կարմիր կիրակի օրվա, ապրիլի 12-ին, Ղալաթիո եկեղեցում տրվելիք հանդիսավոր պատարագի համար:

«Մուրթը իջած էր և ամեն ոք կաճապարեր իր տեղ հասնիլը, պատմում է Միհրան Թումաճանը... Իսկ անոնք, որ Բերայի կողմերը կբնակեին, վարդապետի շուրջը բոլորված, խոսալով ու խնդալով կբարձրանային Ղալաթիո զառիվերեն, դեպի Բերա և Բանկլթի»:

Թեոդիկ, «Ամենուն տարեցույց», 1926, էջ 445:
«Էջմիածին», 1968, N 4, էջ 28:

Ապրիլ 11/24, Կ.Պոլիս, - Զավեն Եղիազարյան պատրիարքին այցելում է գերմանական դեսպանատան պաշտոնյա դոկտոր Մորթմանը, որը ի պաշտոնե պետք է կապ պահպաներ պատրիարքարանի հետ: Վերջինս առաջարկում է պատրիարքին հայ, թուրք և գերմանացի հանձնաժողովներ ուղարկել գավառները, համերաշխության կապերը ամրապնդելու համար:

«Էջմիածին», 1968, N 4, էջ 29:

Ապրիլ 11/24, Կ.Պոլիս, - Գիշերը ոստիկանները ձերբակալում են Կոմիտաս վարդապետին, տանում են կենտրոնական բանտ և նետում են «Սյուլեյմանիյեի խուցը»:

Կոմիտասը հուսադրում է հուսալքված բանտարկյալներին, ամբողջ գիշեր մխիթարում է լացող դոկտոր Թորգոմյանին:

«Էջմիածին», 1968, N 4, էջ 32-34:
«Արևմուտք», Փարիզ, 1946, N 5-6:
«Հառաջ», 1935, հոկտ. 27, N 2946:

Ապրիլ 11/24, գիշերը, Կ.Պոլիս, - Զինվորական ավտոբուսները քաղաքի հեռավոր ու մոտակա արվարձաններից և թաղերից խումբ-խումբ մտավորական կալանավորներին փոխադրում են կենտրոնական բանտ:

«Էջմիածին», 1968, N 4, էջ 32-34:

Ապրիլ 11/24, Կ.Պոլիս, - Ոստիկանության նախապես կազմած ցուցակով Կ.Պոլսում ձերբակալում են 235 մտավորականի, որոնց թվում Կոմիտասին, Վարուժանին, Սիամանթոյին, Ռուբեն Զարդարյանին և այլոց:

Ձերբակալությունները շարունակվում են նաև հաջորդ օրերի ընթացքում: Ձերբակալվածների թիվը հասնում է 800-ի, որոնց

ուղարկում են մի մասին՝ Զանդրի, մյուսներին՝ Այաչ:
«Հայ ժողովրդի պատմություն», հ. 6, Երևան, 1981, էջ 553, 554:

Ապրիլ 12-25, Կ.Պոլիս, առավոտ, - Կոմիտասի վանեցի սպասավոր կարապետ վարդապետը ամբողջ գիշերը սպասում է Կոմիտասի վերադարձին: «Առտու կանուխ տեսնելով, որ Կոմիտասը դեռ չի դարձած, կփութա դոկտ. Նագաշյանի տունը, գրեթե հևալով և այնքան հուզված», որ չի կարողանում մի բառ արտասանել: Վերջապես նրան հաջողվում է խոսել և կարողանում է ողբագին շեշտով ասել.

«Տարա՜ն, տոքթոր տարա՜ն...
Տո՛, ի՞նչ տարան:
Հայր սուրբը տարան
Տո ա՛յ տղա ո՞վ տարավ
Բոլիսները տարան գիշերը տարան...»

«Էջմիածին», 1968, N 4, էջ 32:

Ապրիլ 12/25, Կ.Պոլիս, - Կոմիտասի մերձավոր բարեկամ Կարո Ուշագլյանը առավոտյան մտնում է Բանկլաթի ծանոթ դեղատունը իր բարեկամի մոտ: «Ներս մտավ բժ. Ա.Նագաշյանը, - պատմում է Ուշագլյանը, - գլխաբաց և չփոթ: - Տղաք, Կոմիտաս վարդապետը տարած են այս գիշեր... Շշմած իրարու նայեցանք, ո՛չ մեկ նշանակություն կրցանք տալ եղածին: Քիչ վերջ ուրիշներ եկան և սկսան թվել ուրիշ կալանավորներու անուններ, բոլորն ալ հանրածանոթ մտավորականների: Մեր զարմանքը վախի փոխվեցավ»:

«Արագած», 1943, էջ 66, 67:

Ապրիլ 12/25, կարմիր կիրակի, Կ.Պոլիս, - Ղալաթիո եկեղեցում առավոտյան հոգևոր արարողությունը ավարտելուց հետո Կոմիտասի աշակերտները ըստ սովորության այցելում են իրենց սիրելի վարդապետին: «Դեռ չէինք մոտեցել Կոմիտասին, - պատմում է Թումաճանը, - երբ դիմացեն կելլե իրենց ընկերներեն մինը, որ առանց կանգ առնելու կխոսիա...

- Շուտով տուններդ գացեք... հեռացեք... իրարմե զատվեցեք...

Չհասկացանք թե ինչու:

Հասնելով վարդապետի տունը, սեղմում են զանգակը: Վարդապետի ծառան բացավ դուռը:

Այլայլված կմկմաց. - Հայր սուրբին տարան...»

«Կոմիտասական», գիրք 1, Երևան, 1969, էջ 249, 250:
«Էջմիածին», 1968, N 4, էջ 31:

Ապրիլ 12/25, առավոտ, Կ.Պոլիս, - Բանտի դռները բացվում են, և հրապարակ է գալիս Կոմիտասը. «Երբ մեզ մոտ եկավ Կոմիտասը, - գրում է Ա.Անտոնյանը, - իր վիճակի վրա չէր խորհեր կամ գոնե ներքին վրդովմունք մը մատնող բառ մը չարտասանեց... Հույս ուներ թե այդ կատակը երկար չի տևեր...»:

«Արևմուտք», 1947, N 6, էջ 2:

Ապրիլ 12/25, կիրակի, - Զորանոցային կյանքի առաջին օրը... «Մեկեն մեր խմբին մեջ ներշնչումի պես կը ծնի հավաքական որոշումը պահպանելու սրտի ջերմությունը սահմանված սրահը... Մեկ քանի մոմերու վախկոտ լուրերուն տակ... Քահանան Ավետարան կը կարդա, պատվելին փառաբանությունը կընե, աշխարհականը շարական կերգե և Կոմիտաս վարդապետը «Տեր ողորմեան» կաղերսե. «Տուր աշխարհիս խաղաղություն, ազգիս հայոց ազատություն»:

Շամտաճյան Մ., «Հայ մտքին հարկը եղեռնին», Հալեպ, 1947, էջ 54:

Ապրիլ 12/25, Կ.Պոլիս, - Կոմիտասին 192 ձերբակալվածների հետ ոստիկանատնից տեղափոխում են Կ.Պոլսի կենտրոնական բանտ: Ձերբակալվածներին արտոնվում է դուրս գալ բանտի բակը և «բաց քարտերու վրա» միայն թուրքերենով նամակ գրել ընտանիքին՝ խնդրելով անկողին, դրամ, սպիտակեղեն և ուտելիք:

«Արևմուտք», 1946, N 6, 1947, N 7-8:

Նույն օրը՝ երեկոյան, - Ոստիկանության տնօրեն Պեդրի բեյի և բանտի տնօրեն Իբրահիմ էֆենդիի կարգադրությամբ բակ են կանչվում ձերբակալվածները: Հանձնարարական ցուցակով առանձնացնում են 71 մարդ, որոնց թվում Սիամանթոյին, Ռուբեն Զարդարյանին, Գեղամ Բարսեղյանին, Տիգրան Զոհրյուբյանին:

Տեղավորելով կառքերում՝ տանում են անհայտ ուղիով: Մնացած ձերբակալվածներին՝ Կոմիտասին, Վարուժանին, Տաղավարյանին, Ճանկյուլյանին, Շահրիկյանին, բոլորին շարք են կանգնեցնում և սվինավոր զինվորների հսկողությամբ գիշերը, Գյուլհոնեի ծառուղիով սուլթան Ահմեդի, Այա Սոֆիայի հրապարակներով տանում են Սարա Պուրնոյի նավամատույցը:

«Արևմուտք», 1946, N 4, 6, 7-8, 12:

Երբ թուլլատրում են, որ աքսորականները կարող են նամակ գրել, ըստ ենովք Շահի վկայության ասել է, թե Կոմիտասից ստացվել է երկու քարթ: Մեկը իր տան հասցեով ապահովաբար Կարապետ վարդապետին, իսկ մյուսը՝ Ամերիկյան դեսպանատան թարգման պր.Արշակ Շամավոնյանին: «Վարդապետը, - գրում է հոդվածագիրը, - ծանոթ դեմք մըն էր Ամերիկյան դեսպանատան

մեջ, ուր չատ կսիրեին զինքը: Տիկին Մորկը Թոուն հաճախ կը հրավիրեր զայն իր երեկուլթներուն և Կոմիտասը կերգեր ու կնվագեր ընդունելութեան ընթացքին»:

«Արևմուտք», Կ.Պոլիս, 1947, N 7, էջ 9:
«Էջմիածին», 1968, N 4, էջ 35:

Ապրիլ 12/25, Կ.Պոլիս, գիշեր, բանտ, - Կարդացվում է աքսոր գնացողների երկրորդ ցուցակը՝ Տիրան Քելեկյանից հետո կարդում են երեք վարդապետների՝ Պալագյանի, Հովհաննես Կարապետյանի և ապա չորրորդը՝ Կոմիտաս վարդապետի անունները:

Բակում հավաքված խումբը հրամանի համաձայն Կյուլհանների ծառախիտ ուղիով ուղևորվում է Սարա Պուրնոյի նավամատույցը:

Կալանավորները տեղավորվում են Շիրքեթը խայրիյեի թիվ 42 չոգենավի մեջ:

«Արևմուտք», 1947, N 13, 16 փետրվարի, էջ 7:

Ապրիլ 12/25, - N 42 չոգենավով տանում են բանտարկյալներին: Տիրան Քելեկյանը, դոկտոր Թորգոմյանը, Հայկ Խոճասարյանը և Կոմիտաս վարդապետը տեղավորված էին առաջին կարգի սալոնում, այստեղ է գալիս նաև Բյուզանդ Քեչյանը:

Կոմիտասը նստած էր դոկտոր Տաղավարյանի և բժիշկ Թորգոմյանի միջև. «Երկու բժիշկները կուլային, - գրում է «Արևմուտքի» հոդվածագիրը, - Կոմիտասը մեյ մը մեկուն, մեյ մը մյուսին կուղղեր չատ անհանգիստ արտահայտութեամբ մը վառված աչքերը: Երբեմն Տաղավարյանի կամ Թորգոմյանի կողմը հակվելով, բաներ մը կը մրմնջար, թերևս մխիթարութեան կամ քաջալերութեան խոսքեր...»:

«Արևմուտք», 1947, մարտ 2, N 15, էջ 7:

Ապրիլ 12/25, Կ.Պոլիս, - Գիշերը Շիրքեթի 67 թիվ չոգենավով Կյուլհանեի բարաքից վերցնում են կալանավորներին ու Սարա Պուրնոեն անցնելով բռնում են անծանոթ ուղղութիւն: Նավն ուղևորվում է դեպի Հայդար-Բաշայի նավահանգիստը, ուր սպասում են չոգեկառքին:

Կալանավորների մեջ էր նաև Կոմիտաս վարդապետը:

Նույն տեղում:

Ապրիլ 13/26, առավոտյան, - Սարա Պուրնոյի ձերբակալվածներին տեղավորում են Շիրքեթի թիվ 67 չոգենավում, սրանց են միացնում նաև կառքով այստեղ հասած մյուս 71 ձերբակալվածներ:

ներին և բոլորը միասին ճանապարհ են ընկնում դեպի Հայդար փաշայի երկաթուղային կայարանը:

«Արևմուտք», 1946, N 6, 1947, N 7-8:

Ապրիլ 13/26, Հայդար Փաշա, - Տեղավորվելով գնացքում՝ Նիկոմեդիայի ու Պիլեճիկի վրայով ձերբակալվածների կարավանը (որոնց մեջ էր նաև Կոմիտաս վարդապետը) գիշերը հասնում է Էսկիշեհրի:

«Արևմուտք», 1947, N 18:

Ապրիլ 13/26, կեսգիշեր, - Կալանավորները հասնում են Էսկիշեհրի: Երկու ժամ մնալուց հետո այստեղ կազմվում է կալանավորների ցանկը՝ պատրիարքարան ուղարկելու համար: Կեսգիշերին գնացքը Էսկիշեհրիից ուղևորվում է Անկարա:

«Արևմուտք», 1947, N 18:

Ապրիլ 13/26, երեկո, - Աքսորականների կարավանը (որոնց մեջ էր նաև Կոմիտասը) հասնում է առաջին հանգրվանին՝ Ռավլիի խան:

«Էջմիածին», 1968, N 7, էջ 5:

Ապրիլ 13/26, լուսաբաց, - կալանավորների գնացքը հասնում է Նիկոմեդիա:

Կոմիտասը մյուս հոգևորականների հետ գտնվում էր Բ կարգի վագոնում, այստեղ էին նաև Քելեկյանը, Նագաշյանը, Քեչյանը, Թորգոմյանը, Տաղավարյանը և այլք:

Նիկոմեդիայում Կոմիտասը, Հովհաննես և Պալագյան վարդապետները աղերսագիր են ներկայացնում կառավարությանը, որ իրենց աքսորավայրը որոշվի Արմաշի վանքը:

«Արևմուտք», 1947, N 17 (մարտի 16), էջ 8:

Ապրիլ 13/26, առավոտ, - Գնացքը կանգ է առնում Անկարայի չհասած Սընճան Քեոր փոքր կայարանում:

Յուցակով 71 հոգու առանձնացնում և տանում են Այաշ:

«Արևմուտք», 1947, N 18, էջ 8:

Նույն օրը, երկու ժամ անց, - Գնացքը կալանավորներին հասցնում է Էնկյուրա Անկարա: Այստեղ կալանավորներին գնացքից իջեցնում և տեղավորում են ձիակառքերի մեջ: Յուրաքանչյուր կառքում տեղավորում են երեքական անձ և հայտնում են, որ կառքերը ուղևորվում են Չանղերը:

«Արևմուտք», 1947, N 20 (ապրիլ 6), էջ 7:

Ապրիլ 13/26, երեկո, - Կալանավորների քարավանը ձիակառքերով հանգրվանում է Ռավլի խան բնակավայրում:

Նույն տեղում:

Ապրիլ 14/27, Ռավլի խան, - Խիստ ծարաված, կալանավորների և կառապանների խմելու ջրից օգտվելու ժամանակ տեղի է ունենում միջադեպ: Պարզվում է, որ կառապանն ու ժանդարմները դուլլերի պակասի հետևանքով ծանր վիճակի մեջ են ջրհորից ձիերին ջուր տալու համար: Այդ ժամանակ ծարաված կալանավորները նույնպես մոտենում են ջրհորին իրենց ծարավը հագեցնելու համար: «Իրենցմեն ամենեն անհամբերը, - գրում է Արամ Անտոնյանը, - Կոմիտասն էր»: Դուլլով մատուցում են ջրհորի ջուրը, սակայն գավաթ կամ որևէ հնարավորություն չկար ջրից օգտվելու համար:

Ճիշտ այն պահին, երբ Կոմիտաս վարդապետը «չրթունքը ցցած» ձեռքը մեկնում է ջրով լիքը դուլլին, ձիավոր ժանդարմներից մեկը բիրտ հարվածով Կոմիտասի ձեռքից կոպտորեն խլելով լեցուն ջրամանը՝ ջուրը չուփում է Կոմիտասի երեսին, որն սկսում է կաթկթել մորուքից: Վախեցած Կոմիտասը կրում է ընդհարման վտանգ և երկու քայլ նետվում է ետ: Միջադեպն ուշնենում է ցնցող վախճան Կոմիտասի համար:

«Արածանի», 1947, մայիս 4, N 24, էջ 8:

Ապրիլ 14/27, երեկո, Ռավլի, - Ժանդարմի գործադրած բռնությունից հետո Կոմիտասի մոտ սկսվում է ղաձգության բռնկում:

«Արածանի», 1947, ապրիլ 27, N 3, էջ 7:

Ապրիլ 15/28, - Աքսորականները հասնում են Գելենջիկ և 150 հոգով տեղավորվում են ղորանոցում:

«Քահանան, - գրում է աքսորական Մ.Շամտաճյանը, - Ավետարան կը կարդա, պատվելին փառաբանություններ կընե, աշխարհականը չարական կերգե և Կոմիտաս վարդապետը «Տեր ողորմեան» կաղերսե՝ «տուր աչխարհիս խաղաղություն, ազգիս հայոց ազատություն»:

Շամտաճյան Մ.Իքայել, «Հայ մտքին հարկը եղեռնին», Կ.Պոլիս, 1919, էջ 46:

Նույն օրը, Գելենջիկ, - Կոմիտաս վարդապետի մոտ նորից տեղի է ունենում ղաձգության բռնկում:

«Արածանի», 1947, ապրիլ 27, N 23, էջ 7:

Նույն օրը, գիշերը, - Կոմիտաս վարդապետի մոտ ղրաճգուելությունը կրկնվում է:

Նույն տեղում:

Ապրիլ 15/28, արշալույսին, - Աքսորականները Գելենջիկից մեկնում են Զանղլի:

«Արածանի», 1947, ապրիլ 27, N 23, էջ 7:

Ապրիլ 16/29, - Զանղլիի զորանոցի մեջ մնում են յոթ օր: Զորբորդ օրը եկեղեցուց բերել են տալիս մի ժամագիրք և երեկոյան կատարում են ժամասացություն: Կոմիտասի ղրաճգուելությունը դադարում է: Ութերորդ օրը տրվում է զորանոցից դուրս գալու, քաղաքի մեջ ապրելու իրավունք:

«Էջմիածին», 1968, N 8-9, էջ 99:

Ապրիլ 16-26, - Աքսորականները 11 օր ապրում են Զանղլիի մեջ...

«Էջմիածին», 1968, N 7, էջ 6:

Ապրիլ 19/2 մայիսի, Զանղլի, - Կոմիտաս վարդապետը մատուցում է պատարագ եկեղեցու մեջ: Ավետարանը համբուրելու պահին Բյուզանդ Քեչյանը և դպետը Թորգոմյանը մոտենալով Կոմիտասին, նրան հայտնում են, որ ստացվել է հեռագիր նրան աքսորից ազատելու մասին: «Պատվական պատարագիչի դեմքը հանկարծ պայծառությամբ մը չողաց: Իր ուրախությունը չէր կրընա ծածկել, նույնիսկ խուռն բազմության առջև, ինչը որ կցուցներ, թե մեր վիճակը որչափ երկյուղ պատճառած էր իրեն»: Այդ նույն երեկոյան հեռագիրը է ստացվում նաև Քելեկյանի ազատության մասին:

Թեոդիկ, «Ամենուն տարեցույց», 1922, էջ 40:

Ապրիլ 22/5 մայիսի, Զանղլի, - Զորանոցային կյանքից հետո, առաջին կիրակի օրը, բոլորը մեկնում են փայտաշեն մատուռը՝ «Զորանոցի հսկաները, - գրում է Շամտանճյանը, - առանց խնկարկության էին: Կոմիտաս վարդապետը և յուրայիններըփչչող փոշկումի մխիթարող խոսք կուտան մեր հոգիներուն»: Քաղաք ելնելես տասը օր վերջը մեզմե ութը հոգինոց խումբ մը եկած հրամանի վրա Պոլիս կվերադառնա: Նոր ակնկալություններ ու ասպարեզ մըն է, որ կը բացվի ամենուս համար»:

Շամտանճյան, «Հայ մտքին հարկը եղեռնին», Հալեպ, 1947, էջ 62:

Ապրիլ 24/7 մայիսի, - Բանտից Կոմիտասը նամակ է գրում Կարապետ վարդապետին:

Նույն օրը, - Կոմիտաս վարդապետը նամակ է գրում նաև Ամերիկյան դեսպանատան թարգմանիչ, Հայազգի Արշակ Շամվոնյանին:

Նույն օրը՝ երեկոյան, - Մեհտերհանի բանտից երեկոյան Պազիլ խանին ազատում են և նրա անկողինը հատկացնում են Կոմիտաս վարդապետին:

«Էջմիածին», 1968, N 4, էջ 34:

Ապրիլ 26/9 մայիս, առավոտ, - Ստացվում է ազատման հրաման և Կոմիտաս վարդապետի հետ միասին (Բյուզանդ Քեչյան, Վահրամ Թորգոմյան և այլոց) յոթը անձնավորության ազատում են բանտից:

«Էջմիածին», 1968, N 5, էջ 6:
«Ամենայն տարեցույց», 1922, էջ 40:
Շամտաճյան Շանթ, 1918, N 5, էջ 7:

Ապրիլ 27/10 մայիսի, երկուշաբթի, - Ազատվածները Զանղլիից մեկնում են Կ.Պոլիս:

«Էջմիածին», 1968, N 7, էջ 6:

Ապրիլ 28/11 մայիսի, Գալենջիք, - Աքսորից վերադարձող Կոմիտասը և իր ընկերները երեկոյան հասնում են այս գյուղաքաղաքը. «Թեև ուշ հասանք, - պատմում է Բյուզանդ Քեչյանը, - հայ ընտանիք մը չէ՞ողուց, որ աղտոտ խանը գիշերենք և տաք կերակուրներով հյուրասիրեց մեզ կես գիշերվան մոտ»:

Թեոդիկ, «Ամենուն տարեցույց», 1922, էջ 42, 43:

Ապրիլ 29/12 մայիսի, Գալենջիք, - Աքսորականների խումբը իր ժամանակը անցկացնում է այս գյուղաքաղաքում:

Նույն տեղում:

Ապրիլ 30/13 մայիսի, Անկարա, - Ազատված աքսորականները 16 օր հետո, Համբարձման տոնի օրը, կրկին հայտնվում են Էնկյուրիում (Անկարա):

Կոմիտասը հրավիրված էր մասնակցելու տեղի եկեղեցական արարողությանը:

«Համբարձման տոնը, - գրում է Բյուզանդ Քեչյանը, - վայելեցինք Էնկյուրիի եկեղեցին մեջ: Թաղ. խորհուրդը մեզի նախաճաշով մը հյուրասիրելէ ետքը առաջարկեց ս.Աստվածածնի վանք»:

Թեոդիկ, «Ամենուն տարեցույց», 1922, էջ 43:
«Էջմիածին», 1968, N 10, էջ 52:

Ապրիլ 30/13 մայիսի, Անկարա, - Աքսորից վերադարձող Կոմիտասը իր յոթը աքսորականների հետ Էնկյուրիի եկեղեցում տոնում է Համբարձման տոնը: Թաղական խորհուրդը նրանց տալիս է նախաճաշ, այնուհետև նրանք մեկնում են ս.Աստվածածնի վանքը, որտեղ մեծ բազմություն էր հավաքված Կոմիտասին լսելու համար: Հանդեսից հետո 60 հոգու համար բացվում է ճոխ սեղան, մի դեռատի աղջիկ երգում է, որին Կոմիտասը տալիս է խորհուրդներ:

Թեոդիկ, «Ամենուն տարեցույց», 1922, էջ 43:

Մայիս 2/15, Կ.Պոլիս, - Շաբաթ օրը երեկոյան Կոմիտաս վարդապետը հասնում է Կ.Պոլիս:

«Էջմիածին», 1968, N 7, էջ 6:

Մարգարիտ ՍԱՐԳՍՅԱՆ

«ԹԱՄԶԱՐԱ». ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեր օրերում հաճախակի հնչող ավանդական «Թամզարա» պարը կամ դրա պարերգային կատարման Ինգա և Անուշ Արշակյանների յուրօրինակ մեկնաբանությունը առիթ դարձավ մասնագիտորեն ուսումնասիրելու այս հնագույն պարատեսակը, որի էությանն ու ժանրային առանձնահատկությունների երաժշտագիտական քննությանն է նվիրված ներկա աշխատանքը:

«Թամզարա» պարի խորհուրդը, երաժշտական լեզվի առանձնահատկությունները պարզաբանելու, մեղեդու և պարի փոխհարաբերությունները բացահայտելու նպատակով հրատարակված և անտիպ ժողովածուներից, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի և Ազգային ռադիոյի ձայնադարաններից և մասնագետների անձնական հավաքածուներից առանձնացրինք և ի մի բերեցինք այդ անունը կրող պարերգի և պարեղանակի 17 նմուշ: Անշուշտ, նշված քանակով չի սահմանափակվում այս պարերգի տարբերակների թիվը: Մեր հեռահար նպատակն է հետագայում ավելի հանգամանորեն ուսումնասիրել և ամբողջական ժողովածուի տեսքով ներկայացնել սույն ուշագրավ պարատեսակը:

Քննության առնված նմուշներից մի քանիսը հրատարակված են առանց խոսքային տեքստի որպես նվագարանային տարբերակ, ցավոք, դրանց գերակշիռ մասը գրանցվել է առանց պարային շարժումների նկարագրության[1]: Այս աշխատանքի վերջում ներկայացրել ենք բոլոր նմուշների մեղեդիները, միայն մեկը՝ նաև պարային շարժումների նկարագրությամբ: Օրինակները դասավորել ենք ըստ ձայնակարգային պատկանելության:

Ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել Սրբ.Լիսիցյանի «Հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները»[2] հիմնարար աշխատության երկու հատորներում տեղ գտած 5 նմուշներն ու տեղեկությունները: Երաժշտական վերլուծությունը խարսխվել է Կոմիտասի (3 նմուշ)[3], Սպ.Մելիք-յանի (2 նմուշ)[4], Հ.Հարությունյանի (1 նմուշ)[5], Ք.Քուչնարյանի

---

[1] Այնուամենայնիվ, այն նմուշները, որոնք ունեն բանաստեղծական և պարային տեքստեր, նախատեսված ժողովածուում կներկայացվեն ամբողջությամբ:

[2] С.Лисициан. Старинные арм. театральные представления и пляски. Ереван, т. 1, 1958, т. 2, 1972.

[3] Կոմիտաս, Երկերի ժողովածու, այսուհետ՝ ԵԺ, հ. X, Երևան, 2000, թ.86, էջ 79, հ. XII, Երևան, 2003, թ.157, էջ 76, հ. XIV, Երևան, 2006, թ.141, էջ 89:

[4] Սպ.Մելիքյան, Հայ ժողովրդական երգեր և պարեր, հ. 1, թ.172, էջ 135, թ. 239,

(2 նմուշ)[6], Ա.Քոչարյանի (2 նմուշ)[7], Մ.Թումաճանի (1 նմուշ)[8], Ա.Սահակյանի[9] (1 նմուշ՝ պարային չարժումներով) և ՀՀ Ռադիոյի ֆոնդի (1 նմուշ)[10] ձայնագրված կամ գրառված պարեղանակների կամ պարերգերի տարբերակների վրա:

Նախ փորձենք անդրադառնալ **Թամզարա** բառի ստուգաբանությանը և տարբեր մեկնաբանություններին. ըստ Մ.Թումաճանի՝ «Թամզառա պարերգը հին և ինքնատիպ պարերգ է, տարածված Հայաստանի գրեթե բոլոր կողմերում: Ենթադրվում է, որ Թամզառա է կոչվել Սեբաստիայի և Շապին-Գարահիսարի միջև գտնվող հայոնի Զառա, Զըմառա կամ Թամզառա հայաբնակ գյուղի անունով, որը, հավանաբար, նույն այս Ակնա չրջանի մեջ գտնվող Թամզառա գյուղն է»[11]:

Գրեթե նույն տեղեկությունն է հաղորդում նաև Սրբ.Լիսիցյանը. «Թամզարա անունը հանդիպում է որպես հայաբնակ մի վայր, Ցեզարեն քաղաքից դեպի արևելք 8-ժամյա ճանապարհի տարածությամբ: Այս բնակավայրը, բացի Թամզարայից, կոչվում է նաև Թամարզա, Թումարզա: Թամզարա անվանումը ծագել է Թովմա Արծրունու անվան աղավաղումից, որն իբր հիմնադրել է սուլն բնակավայրը: Հնարավոր է, որ պարի անվանումը կապված է այս գյուղի անվան հետ, ինչպես հավաստում է Հր.Աճառյանն իր «Գավառական բառարանում»[12]: Ալաչկերտի գրառված տարբերակի կրկնակից ելնելով՝ Սրբ.Լիսիցյանի[13] մեկ այլ մեկնաբանությամբ՝ Թանզարան հնչում է որպես աղջկա կամ տղայի անուն.

Դեյ, Թանզարա, դեյ, Թանզարա,
Դեյ, Թանզարա, oyna, bala!

Իսկ նույն աշխատության երկրորդ հատորում Արթիկի տարբերակը ներկայացնող բանասաց Հ.Հարթենյանը նշում է. «Ոմանք ասում են, որ այն կազմված է Թամուր և Զարե հոր և

էջ 186 (որոնցից մեկը տեղ է գտել նաև Սրբ.Լիսիցյանի վերոհիշյալ աշխատությունում):

[5] Հ.Հարությունյան, Մանյակ, ժողովածու հայ ժողովրդական երգերի, Երևան, 1958, էջ 84:

[6] ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ձայնաղարան, այսուհետ՝ ԱԻՋ, Ք.Քուչնարյանի ֆոնդ (1927-1929թթ.):

[7] ԱԻՋ, Ա.Քոչարյանի ֆոնդ, տ. 77, թ. 12, տ. 92ա, թ. 4:

[8] Մ.Թումաճան, Հայրենի երգ ու բան, հ. 2, Երևան, 1983, էջ 179:

[9] Բանագետ Ա.Սահակյանի անձնական ֆոնդ:

[10] ՀՀ Ռադիոյի ֆոնդ, Ձուքասզյան համույթ, ձայնագրված 1997թ.:

[11] Մ.Թումաճան, Հայրենի երգ ու բան, հ. 2, էջ 256:

[12] С.Лисицян. Старинные арм. театральные представления и пляски. т. 1, стр. 371.

[13] Նույն տեղում:

որդու անուններից, մյուսները՝ թե, դա բեկի անուն է»[14]:

Այս պարը Հայաստանի և սփյուռքի տարբեր վայրերում կոչվում է՝ Թամզարա, Թանզարա, Թանճարա, Թանճարամ, Թամզառռա կամ՝ Համզարա, Հանճարա, որտեղ առաջին տառի Թ-Հ հնչյունափոխումը ընդամենը համահունչ բառախաղ է, ինչպես Սրբ.Լիսիցյանի նշված աշխատության առաջին հատորի խաստուբի տարբերակում[15] կամ պարզապես հնչյունափոխություն է, ինչպես՝ Ք.Քուչնարյանի գրառած Գեղարքունիքի տարբերակում[16]:

Պարի գործառութային ավանդույթը դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ «Թամզարան» թե՛ երգի, թե՛ նվագարանի ուղեկցությամբ լայն տարածում է ունեցել Արևելյան և Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում, ինչպես նաև Համշենում: Այն այսօր էլ կենցաղավարում է որոշ հայաբնակ վայրերում[17]: Հնագույն ծիսական պար է, որ կատարել են հարսանիքների, հետագայում՝ նաև այլ խնջույքների ժամանակ: Կոմիտասն իր գրառած Թամզարաների երեք տարբերակներից մեկը հինգ այլ պարեղանակների հետ միասին տեղադրել է «Հարսանեկան նվագներ» բաժնում՝ հետևյալ ծանոթագրությամբ. «...սովորական պարերգերից ու պարեղանակներից տարբերվում են իրենց առանձնահատուկ ծիսական հնչողությամբ, որ բխում է դրանց՝ հին-հին օրերից եկող ծրագրայնությունից»[18]: Ըստ Ս.Լիսիցյանի Սևանում գրառած նյութերի (բանասաց՝ Ս.Վարդանյան) «Թամզարան» կատարել են միայն հարսանիքի ժամանակ՝ երեկոյան, զուռնայի և դհոլի ուղեկցությամբ: Պարին մասնակցել է նաև նորահարսը: Պարագլուխը (գովընդբաշի) պետք է լիներ տագրը կամ սկեսրայրը, որի կողքը կանգնում էր քավորը[19]: Նույն հատորում տեղ գտած մեկ այլ Ալաշկերտի տարբերակը կատարող Ա.Սարգսյանը բացատրում է, որ այս պարում չորորելու չարժումները կատարում էին միայն պարագլուխը և նրա օգնականը, մնացած պարողները չորորելու իրավունք չունեին: Ս.Լիսիցյանի մեկնաբանությամբ, առհասարակ, թեքումները մեր շուրջպարերում կրում էին մեծարող, փառաբանող բնույթ կամ իմաստ, և այդ մեծարումը կարող

[14] **С.Лисициан.** Старинные арм. театральные представления и пляски. Ереван, т. 2, с. 198.
[15] Նույն տեղում, էջ 576:
[16] Ա.Ի.Ջ., Ք.Քուչնարյանի ֆոնդ (1927-29թթ.):
[17] 2007թ. Հալեպից ժամանած մի քանի հայ ուսուցիչներ վկայեցին, որ իրենց մոտ հայկական խնջույքների և հարսանիքների ժամանակ տարեցները (ծագումով Տիգրանակերտից և Խարբերդից) երգում և պարում են «Թամզարա»:
[18] **Կոմիտաս,** ԵԺ, հ. X, թ.86, էջ 179:
[19] **С.Лисициан.** Старинные арм. театральные представления и пляски. т. 1, с. 329.

էր լինել ինչպես մաժորային՝ ուրախ իրադարձության դեպքում, այնպես էլ մինորային՝ ողբերգականների դեպքում: Իսկ պարագլուխը և նրա օգնականը հանդես էին գալիս որպես միջնորդ պարողների և չար ու բարի ոգիների, նախնիների, տոտեմների, բնության ուժերի, աստվածությունների միջև: «Այստեղից էլ հասկանալի է գովընդբաշու և նրա օգնականի ակտիվությունը Ա.Սարգսյանի «Թանգարայում», որոնք իրենց թեքումներով (մնացած պարողների համար արգելված) պետք է պահպանեին պարողներին՝ փառաբանելով հերոսներին և բարի ոգիներին, կամ անիծելով թշնամիներին, որը «իրականացնում էին» բոլոր կողմերը թեքվելով»[20]:

Այսպիսով՝ ի բնե ծիսական-հարսանեկան պատկանելություն ունեցող «Թամզարան» մինչ օրս էլ կատարվում է հարսանեկան խնջույքներում և տարաբնույթ հավաքույթներում՝ առանց բուն խորհրդի գիտակցման:

Ներկայացված տարբերակների մեղեդիների երաժշտագիտական վերլուծությունը փաստում է երաժշտական լեզվի կառուցում տեղ գտած մի շարք առանձնահատկությունների առկայությունը:

1. Խառը մետր ունեցող չուրջպարերից է, սակայն դիտարկվող բոլոր նմուշներում կանոնավոր ներտակտային բաժանման արդյունքում մետրը ստացվում է.

ա. մեջընդմիջվող. 9/8 (4/8+ 5/8) չափով 7 նմուշ: Հարկ է նշել, որ Մ.Թումաճանի գրառած Ակնա տարբերակն (օրինակ 6) ըստ նոտային տեքստի ունի 6/8 + 3/8 բաժանումը, սակայն ծանոթագրության մեջ նա նշում է, որ գրի է առել դեռևս մանկությունից հիշած այս օրինակը՝ չափը նշանակելով 9/8, որ բաժանվում է՝ 2+2+2+3[21]: Եթե խոսքերը հիշեր և տեղադրեր, ապա, անկասկած, ներտակտային բաժանումը կկատարեր այլ կերպ՝ 4/8 + 5/8, բանաստեղծական տողերին համապատասխան):

բ. 9/4 (4/4 + 5/4) չափով 5 նմուշ,

գ. 5/4 (2/4 + 3/4) չափով 2 նմուշ:


դ. 10/8 (4/8 + 6/8) 1 նմուշ:

ե. 1 նմուշ (օրինակ 17) նոտագրված է փոփոխական մետրով՝ 7/8 – 6/8 չափերի կանոնավոր հաջորդականությամբ (2 տակտ 7/8, 1 տակտ՝ 6/8), որտեղ, սակայն, տակտաբաժանումը խմբագրման կարիք ունի.

---

[20] Նույն տեղում, էջ 370:

[21] Մ.Թումաճան, նշվ. աշխ., հ. 2, էջ 257:




Ջա-յիր-նե- րը ը̀ղ –րո -վի, թամ- զա-րա, թամ-զա-րա

Ճիշտ կլիներ տակտաբաժանումը կատարել բանաստեղծական տողերին համապատասխան, այսինքն՝ վերը նշված նմուշներին բնորոշ մետրական նույն օրինաչափությամբ՝ մեջընդմիջվող 4/8 + 6/8:




Ջա-յիր-նե-րը ը̀ղ -րո-վի, թամ- զա-րա, թամ-զա-րա

գ. Վերջապես՝ 4/4, 3/4 չափերի անկանոն հաջորդականությամբ 1 նմուշ (օրինակ 16), որտեղ, սակայն, երկրորդ տակտում հնարավոր է ավելորդ 2/4 տևողությամբ դադար, ինչը բանասացի սխալ կատարման արդյունք կարող է լինել:



Հաճախ երգը սկսելիս կատարողները ճիշտ տոնայնությունը կամ մետրը գտնում են մեկ-երկու տակտ «խարխափելով աղավաղելուց» հետո: Այս պարագայում, մեր կարծիքով, նշված վերջին տարբերակը պետք է սկսվի ոչ թե 4/4, այլ՝ 3/4 չափում՝ տակտի սկզբում ունենալով 1/4 դադար, իսկ երկրորդ տակտի դադարը (պաուզան) հանելուց հետո տեղի կունենա մեղեդու տեղաշարժ դեպի առաջ:



Այսպիսով, մետրը կդառնա մեջընդմիջվող՝ 3/4 + 4/4 կամ խառը՝ 7/4 (3/4 + 4/4): Այսինքն՝ այս պարատեսակին բնորոշ մետր:

2. Երաժշտական լեզվի առանձնահատկություններն ընդհանրություն ունեն նաև ձայնակարգաելէջային ոլորտում: Դիտարկած նմուշների մեծ մասը միևնույն մեղեդու տարբերակներն են տարբեր ձայնակարգային դրսևորումներում.

ա. չորս նմուշ ծավալվում է դորիական ձայնակարգում: Դրանցից

. երկուսը (օրինակ 1 և 2) ծավալվում են հիմնաձայնից մինչև VIII աստիճանի սահմաններում: Մեկը (օր. 1)՝ տերցիային և կվինտային հիմքով, ընդ որում՝ երկրորդ նախադասության սկզբում չե-

ղում ունի դեպի III աստիճանի ոլորտ, իսկ մյուսը (օր. 2)՝ տերցիային հիմքով, երկրորդ նախադասությունում չեղում ունի դեպի VII աստիճանի ոլորտ: Վերջինիս ինքնուրույնությունը նպաստում է ներքևի ձգտող հնչյունի դեր կատարող VI աստիճանի ակտիվությունը, իսկ VII աստիճանն իր հերթին, կարծես, վերախմաստավորվում է մեդիանտայի V աստիճանի համար, որն էլ երրորդ նախադասության սկզբում կայունացնում է իր ոլորտը և հնչում որպես մեդիանտա III աստիճանի համար, և միայն վերջին նախադասությունում մեղեդին կրկին վերադառնում է հիմնաձայն:

. մյուս երկուսը (օրինակներ 3 և 4) զարգանում են ներքևի ձգտող տոնից մինչև վերևի VII աստիճան, այսինքն՝ հիպոդորիական-դորիական ձայնակարգում, ընդ որում մեկը (օր. 3)՝ տերցիային հիմքով, իսկ մյուսը (օր. 4)՝ տերցիային և կվինտային հիմքով: Այս տարբերակում երկրորդ նախադասության սկզբում չեղում կա դեպի V աստիճանի ոլորտ, որը հնչում է որպես մեդիանտա III աստիճանի համար: III աստիճանը ինքնուրույնություն է ձեռք բերում նաև ներքևի VIII աստիճանի չնորհիվ, որը կարող է ընկալվել երկակի՝ որպես ձգտող տոն հիմնաձայնի համար, և որպես ներքևի դոմինանտա III աստիճանի համար:

բ. տասնմեկ նմուշ ծավալվում է էոլական ձայնակարգում: Դրանցից՝

- մեկը (օրինակ 1) դուրս չի գալիս ձայնակարգի առաջնային կառուցվածքի՝ հիմնաձայնից (T) մինչև V աստիճանի սահմանները, այսինքն՝ տերցիային հիմքով էոլական պենտախորդ է:

- մեկը (օրինակ 2) գրեթե կրկնում է նախորդ օրինակի հնչյունաշարը ավելացված միայն ներքևի ձգտող տոնը, այսինքն՝ ծավալվում է տերցիային հիմքով հիպոդորիական-էոլական ձայնակարգում:

- չորսը զարգանում են տերցիային և կվինտային հիմքով հիպոդորիական-էոլական ձայնակարգում, ներքևի ձգտող տոնից մինչև վերևի VII աստիճան, ընդ որում երկրորդ նախադասության սկզբում չեղում ունեն III աստիճանի ոլորտ (օրինակներ 7, 8, 9, 10): Սրանցից երկուսում (օր. 7, 8) ավարտը հստակ չէ, քանզի մեղեդին ունի օղակային ձև, և հիմնաձայնից հետո հնչող ներքևի ձգտող տոնը կարող է ընկալվել որպես դոմինանտա III աստիճանի համար:

- Մեկ նմուշը (օրինակ 11) կառուցվածքի երկրորդ մասում ծավալվում է VII աստիճանի ոլորտում, որտեղ բարձրացած VI աստիճանը ավելի է ընդգծում VII աստիճանի ինքնուրույնությունն ու այն վերախմաստավորում որպես վերևի դոմինանտա III աստիճա-

նի համար, իսկ ամբողջի մեջ ստեղծում դորիական երանգ: Օժանդակ հենակետ հանդիսացող III աստիճանը բավական ինքնուրույն է նաև կառուցվածքի վերջին՝ երրորդ մասում:

Այսպիսով՝ III աստիճանի ինքնուրույնությունն ու ակտիվությունը ակնհայտ են թվարկած դրեթե բոլոր օրինակներում: Այսուհանդերձ այն մնում է որպես օժանդակ հենակետ: Իսկ հաջորդ չորս նմուշներում, եթե դրանք դիտարկենք այս համակարգից դուրս, անկախ նմուշներ, ապա կարող է թվալ, թե այն (III աստիճանը) չափազանց ակտիվ հանդես գալու պատճառով վերածվում է հիմնաձայնի : Այս տեսանկյունից

գ. չորս նմուշ ծավալվում են հիպոֆոնական-միքսոլիդիական ձայնակարգում (օրինակներ 12, 13, 14, 15):
- մեկը՝ հիմնաձայնից ցած գտնվող քառաչարի սահմաններում՝ ներքևի դոմինանտայից մինչև հիմնաձայն (օրինակ 15),
- մնացած երեքը՝ ներքևի դոմինանտայից մինչև III աստիճան, որը սակայն օժանդակ հենակետի գործառույթ չունի: Սակայն այս բոլոր նմուշները ևս իրականում ծավալվում են տերցիային հիմքով հիպոդորիական-էոլական ձայնակարգում, մանավանդ որ երեքը (օր. 13, 14, 15) ունեն օղակային ձև, ինչպես 7 և 8 օրինակները, և պայմանական վերջնաձայն հանդիսացող հնչյունը ավելի շատ կրում է ձգտող VII աստիճանի, այլ ոչ թե ներքևի դոմինանտայի գործառույթ:

Հարկ ենք համարում առանձին կանգ առնել վերջին երկու նմուշի վրա, որոնք կատարել են սևանցի Ս.Վարդանյանը և արթիկցի Հ.Հարթենյանը :

դ. Մեկ նմուշը (օրինակ 16) չունի հստակ ավարտ, բայց եթե ընդունենք, որ այն ավարտվում է II աստիճանով, ապա ձայնակարգը փոփոխական է՝ տերցիային հիմքով իոնական-դորիական: Միևնույն հիմնաձայնի պարագայում III աստիճանի երկակի հանդես գալը առաջ է բերում ձայնակարգի փոփոխականություն, սակայն III աստիճանը ավելի հաճախ կիրառվում է բարձր տարբերակով, ուստի իոնական երանգը գերակշռում է:

ե. Հաջորդ նմուշը (օրինակ 17) ծավալվում է պենտախորդի սահմաններում, որտեղ հիմնաձայնն ու օժանդակ հենակետը հստակ են (V աստիճան), սակայն III աստիճանի բացակայության պատճառով ձայնակարգը հստակ չէ, այն ավելի շուտ նման է *մինոր պենտատոնիկայի*, առանց վերջին՝ V աստիճանի:

Հարկ է նշել, որ Հ.Հարթենյանի մեկնաբանումներն, առհասարակ, խիստ ինքնատիպ են և կրում են բանաստեղծ ստեղծագործ անհատականության դրոշմը՝ հաճախ դուրս գալով տվյալ երգի

կամ պարի ժանրային առանձնահատկությունների սահմաններից: Հիշենք, որ վերջին երկու նմուշները դուրս են մնում «Թամզարա-յին» բնորոշ չափակշռութային օրինաչափություններից, հիմնա-կանում՝ 9/8 կամ 9/4-ի փոխարեն 4/4,3/4 և 7/8,6/8: Սա ևս հաստա-տում է բանասացների, հատկապես Հ.Հարթենյանի մեկնաբանու-թյուններում ստեղծագործ մոտեցման (երբեմն՝ բնօրինակի աղա-վաղման), ինչպես նաև ավանդույթի աստիճանական նահանջի, մոռացման փաստը:

«Թամզարա» պարատեսակին բնորոշ օրինաչափություն-ներից մեկն էլ այն է, որ երաժշտական և պարային ֆրազների միջև անհամապատասխանություն չկա, մի բան, որ չի կարելի ասել ժողովրդական շատ այլ չուրջպարերի դեպքում: Հայկական ժողովրդական պարերում երաժշտական և պարային տեքստերի փոխհարաբերությունը գրեթե ուսումնասիրված չէ, որը դեռևս 1958թ. իրապես մտահոգել է մեծ գիտնական-բանահավաք Սրբուհի Լիսիցյանին: Ալաշկերտցի Մխիթար Թամոյանի ներկայացրած «Թամզարա» պարերգը վերլուծելիս անվանի պարագետը կասկա-ծանքով է վերաբերվում բանասացի ներկայացրած տարբերակին՝ ենթադրելով, որ նա սխալմամբ այլ պար է ցուցադրել: Ըստ գիտ-նականի՝ մինչև իսկականը վերհիշելը հաճախ պարողները միև-նույն մեղեդու տակ տարբեր չարժումներ են ցուցադրում: «Սա ցույց է տալիս հետընթացի պրոցեսը՝ մեղեդու և չարժումների միջև կապի անկումը, մատնանշելով այն, որ միևնույն մեղեդին սկսել են կիրառել տարբեր պարային ֆիգուրների համար: Հար-ցումները բանասացներից ոմանց օգնում են վերհիշելու ճիշտ տարբերակը, մյուսներին խանգարում: Կարելի է ենթադրել, որ Մ.Թամոյանից գրանցված տարբերակում սխալմունք է տեղի ունեցել»[22]: Ս.Լիսիցյանը ցավով նշում է, որ հայկական հինա-վուրց պարերի կատարումներում սկսել է նկատվել ձևի և բովան-դակության, շարժումների և մեղեդու միջև աններդաշնակության ու տարանջատման միտումը: Սակայն դիտարկվող պարատեսա-կում, ինչպես արդեն նշվեց, շարժումների և մեղեդու միջև ան-ներդաշնակություն չկա:

«Թամզարա» պարը հետաքրքիր և ինքնատիպ է դարձնում պարագայլերի 5-րդ և 10-րդ հաշիվներին փոքր դադարը կոտրե-լով անընդհատ պարբերական շարժումը, ինչը կապված է խառը կամ մեջընդմիջվող մետրի հետ: «Մեղեդու կենտ կամ խառը չափի դեպքում, այսինքն՝ մեղեդու տարբեր չափ ունեցող տակտերի հա-

[22] С.Лисициан. Старинные арм. театральные представления и пляски. т. 1, с. 365.

մաղրման դեպքում, շատ հաճախ խաղացող ոտքի շարժումից հետո կամ քայլերից հետո պահվում է դադար»[23]: Որոշ վայրերում, ինչպես օրինակ Վասպուրականում քայլերից հետո կատարվում է ամբողջ ներբանով կրկնակի հարված՝ 4, 5 և 9, 10 հաշիվների: Նման տարբերակը շատ մոտ է խառը մետր ունեցող մեկ այլ «Բատոլա» պարին (օրինակ՝ Շիրակում «Բատոլան» պարում են այնպես, ինչպես Վասպուրականում «Թամզարան»): Իսկ Ա.Սահակյանի ցուցադրած Մշո տարբերակում պարային տեքստը բաղկացած է ոչ թե տասը, այլ քսան հաշվից: 5-րդ և 10-րդ հաշիվներին փոքր դադարը՝ քայլերից հետո, իսկ 15 և 20 հաշիվներին՝ կրկնակի հարվածներից հետո: Այս տարբերակը մեր օրերում տարածված է հայկական սփյուռքում և հայտնի է որպես Տիգրանակերտի, Բալուի, Խարբերդի տարբերակ (տե՛ս տողատակի 288 ծանոթագրությունը): Ստորև ներկայացնում ենք պարի այս տարբերակի մանրամասն նկարագիրը, որի մեղեդին նոտային օրինակներում թ.1-ն է: Պարառոքի քայլերը գրված են թվերով՝ նոտաների և բանաստեղծական տեքստի տակ, պարտիտուրայի ձևով: Պարողները կանգնում են երկու շարքով դեմ դիմաց, յուրաքանչյուր շարքում չորսից վեց հոգի: Ձեռքերը միացած են ճկուլթներով, հետևաբար, Թամզարան ճկուլթող է: Ա րմունկները ծալված են, դաստակները՝ կրծքի մակարդակում: Քայլերի ժամանակ ձեռքերը 45 աստիճանով թեքվում են աջ ոտքի հետ աջ, ձախ ոտքի հետ ձախ, իսկ տեղում կատարվող շարժումների և հարվածների ժամանակ ձեռքերը չեն շարժվում (մեկ այլ տարբերակում ոտքի հարվածների հետ զուգահեռ՝ 14 և 19 հաշիվներին ձեռքերը կրկնակի ծափ են տալիս):

1 հաշվին՝ աջ ոտքով քայլ դեպի աջ
2 հաշվին՝ ձախ ոտքով կից քայլ դեպի աջ
3 հաշվին՝ աջ ոտքով կրունկ պահել ձախ ոտքի կողքին, կես ոտնաչափ առաջ
4 հաշվին՝ աջ ոտքով թաթ պահել ձախ ոտքի կողքին, կես ոտնաչափ առաջ
5 հաշվին՝ աջ ոտքը 1/8-ով դադար է պահում նախկին դիրքով
6 հաշվին՝ աջ ոտքը ամբողջ ներբանով դրվում է ձախի կողքին
7 հաշվին՝ ձախ ոտքը սահուն բարձրանում է մեկ ոտնաչափ և հեծանվային պտույտով սահուն իջնում, միաժամանակ աջ ոտքը մի փոքր բարձրանում է թաթի վրա և իջնում

[23] Նույն տեղում, էջ 363:

8 Հաշվին՝ ձախ ոտքով կրունկ պահել աջի կողքին, կես ոտնաչափ առաջ
9 Հաշվին՝ ձախ ոտքով թաթ պահել աջ ոտքի կողքին, կես ոտնաչափ առաջ
10 Հաշվին՝ ձախ ոտքը 1/8-ով դադար է պահում նախկին դիրքով
11 Հաշվին՝ ձախ ոտքով քայլ առաջ
12 Հաշվին՝ աջ ոտքով քայլ- անցում առաջ
13 Հաշվին՝ ձախ ոտքով քայլ-անցում առաջ
14 Հաշվին՝ աջ ոտքը ամբողջ ներբանով կրկնակի հարվածում է ձախի կողքին, կես ոտնաչափ առաջ: Յուրաքանչյուր հարվածը համապատասխանում է 1/8-ի
15 Հաշվին՝ 1/8-ով դադար՝ աջը գետնից կես ոտնաչափ բարձր
16 Հաշվին՝ աջ ոտքով քայլ ետ
17 Հաշվին՝ ձախ ոտքով քայլ-անցում ետ
18 Հաշվին՝ աջ ոտքով քայլ-անցում ետ
19 Հաշվին՝ ձախ ոտքը ամբողջ ներբանով կրկնակի հարվածում է աջի կողքին
20 Հաշվին՝ 1/8-ով դադար՝ ձախը գետնից կես ոտնաչափ բարձր

Ամբողջ պարային տեքստը կրկնել 1 հաշվից մինչև վերջ, միայն սկսել ձախ ոտքից: Ստացվում է նույն պարային փիգուրը հայելանման:

Op. 1


Ա. Սահակյանի անձ. ֆոնդ

ԹԱՄԶԱՐԱ

(Բալու)

Բանաստեղծ՝ Մարո Նալբանդյան

Ձայնագր. 1997թ.; Հալեպ



Օր. 2
ԹԱՄՋԱՌԱ
(Ակն)

Միհրաև Թումաճան
Հայրենի երգ ու բան
հ.2, էջ 179




ԱԻՋ, Ք. Քուչնարյանի ֆոնդ
(1927-1929թթ.)

Օր. 3
ԹԱՄՋԱՐԱ

Երևան
Վերծ. Դ. Դերոյանի



և այլն


Զուռնա
Դհոլ

Ս. Լիսիցյան, հ.1,
էջ 576 (365)

Օր. 5
ԹԱՆՋԱՐԱ
(Ալաշկերտ)

Արշակ Սարգսյան
Չայնագր.՝ Մ. Աղայանի



Օր. 6
ՀԱՅԴԵ, ՀԱՅԴԵ, ԹԱՆՋԱՐԱՄ

Կոմիտաս
ԵԺ 12, թ. 157, էջ 76



Օր. 7
ԹԱՆՋԱՐԱՄ
(Ալաշկերտ)

Հ. Հարությունյան
ՄԱՆՅԱԿ ժող. երգերի
ժողովածու



ԱԻՋ, տ 77(նոր) N 12
Ա. Քոչարյանի ֆոնդ

Օր. 8
ԹԱՄԶԱՐԱ
(Բերկիր)

Երևան 1942թ.
Տեր-Հովհաննիսյան Մովսես



Օր. 9

ԹԱՄԶԱՐԱ

Կոմիտաս,
Եժ 14, թ.141, էջ 89



Օր.10

ԹԱՄԶԱՐԱ

Սպ. Մելիքյան
Հայ ժող. երգեր և պարեր
հ. 1 էջ 135, թ. 172



Օր. 11

ԹԱՍՋԱՐԱ

(Կարին, Խարբերդ, Սեբաստիա)

Չուքասզյան համույթ
ձայնագր. 1997թ.
Վերծ. Մ Սարգսյանի



ԱԻՋ, Ջ. Քուշնարյանի ֆոնդ
(1927-29թթ.)

Օր. 12
ՀԱՄԶԱՐԱ, ՀԱՄԶԱՐԱ

Գեղարքունիք
Վերծ.՝ Ջ. Թագակչյանի



Օր. 13
ԹԱՄԶԱՐԱ

Կոմիտաս
ԵԺ 10, թ 86, էջ 79



Սրբ. Լիսիցյան
հ.1, էջ 576 (363)

Օր. 14
ԹԱՄԶԱՐԱ - Ի՛ԱՄԶԱՐԱ
(Ալաշկերտ, գ. Խաստուր)

Վարդան Հովհաննիսյան
Ձայնագր.՝ Սպ. Մելիքյանի



Ս. Լիսիցյան
հ.2, էջ 470 (288)

Օր.15
ԱՄԱՋԱՐԱ, ԱՄԱՋԱՐԱ
(Արթիկ)

Հերիքնազ Հարթենյան
Վերծ. Լ. Աստվածատրյանի



Ս. Լիսիցյան
հ.1, էջ 562 (323)

Օր. 16
ԹԱՆԶԱՐԱ
(Սևանի շրջ.)

Սաթիկ Վարդանյան
Վերծանութ.՝ Ն. Դերոյանի



Ս. Լիսիցյան
հ.2, էջ 436 (198)

Օր. 17
ԹԱՄԶԱՐԱ
(Արթիկ)

Հերիքնազ Հարթենյան
Վերծ. Լ. Աստվածատրյանի



Գարեգին ՔՈՐԱՆՋՅԱՆ

ՊԼԵՆԵՐԻ ԴԵՐԸ ԳԵՎՈՐԳ ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆԻ ԳԵՂԱՆԿԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ կերպարվեստի դասական Գևորգ Բաշինջաղյանի ստեղծագործությունը նոր ժամանակների ազգային գեղանկարչական դպրոցի ակունքներում է: Նրա գեղանկարչության մեջ բնանկարը առաջնահերթ տեղ է զբաղեցնում, և հայրենի բնությունը առաջին անգամ նա է պատկերում նոր ժամանակների գեղարվեստական համակարգի միջոցներով, անմիջական ու կենդանի դիտողականությամբ, ինչպես նաև բնության մեջ երկարատև դիտարկումներից հետո՝ հիշողությամբ: Ինչպես գիտենք, բնության մեջ աշխատելու եղանակը ծնեց բացօթյա կամ այլ կերպ պլեներային գեղանկարչությունը: Այն իր համակողմանի և ավարտուն ձևակերպումը ստացավ նախանցյալ դարի երկրորդ կեսին իմպրեսիոնիստ նկարիչների ստեղծագործություններում: Մեզ հետաքրքրում է այն դերը, որ ունեցան պլեներային գեղանկարչության առանձնահատկությունները մեր գեղանկարչի բնանկարներում: Այս խնդրի լուծումը ինքնանպատակ չէ: Այն պետք է նպաստի ճշգրտելու Գ.Բաշինջաղյանի ստեղծագործությունների տեղը հայ կերպարվեստի պատմության համատեքստում:

Բաշինջաղյանի արվեստը հաճախ համարվել և համարվում է որոշակի անախրոնիզմ, ժամանակավրեպ երևույթ, մանավանդ, երբ նրան դիտարկում ենք մյուս հայ վարպետների՝ Թադևոսյանի, Սարյանի, Գայֆեջյանի, Առաքելյանի կամ այլոց համայնապատկերում: Իհարկե, այս քննադատությունն անհիմն չէ: Այնուամենայնիվ, Բաշինջաղյանը ոչ միայն իր շնորհալի հայրենակիցների շարքում առաջիններից ու քչերից էր, որը պրոֆեսիոնալ կրթություն էր ստացել, այլև նրա գեղարվեստական չափազանց հարուստ ժառանգության գերակշիռ մասը հայրենիքի առաջին բնանկարչական մոտիվներն էին, որոնք կատարված են բնության նկատմամբ հեղինակի գրեթե պաշտամունքային պանթեիզմով: Այս վերջին հանգամանքը, թերևս, այսօր էլ նրա կտավների լայն հանրայնության գլխավոր պատճառներից է: Սակայն կա ևս մի կարևոր պարագա, որը կանխորոշել է նրա նկարների հաջողությունը (նաև ոչ միայն հայ) հանդիսատեսի մոտ: Դա նրա լավագույն գործերի գեղարվեստական բարձր հատկանիշներն են:

Ցանկացած արվեստագետի գեղագիտական ըմբռնումները և ստեղծագործական անհատականության բնույթը հասկանալու

համար շատ կարևոր է քննել այն գեղարվեստական մթնոլորտը, որում կայացել է նրա ստեղծագործական հասունացումը:

Գևորգ Բաշինջաղյանը ավարտել է Սանկտ Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիան 1883թ.: Հակիրճ անդրադառնանք այդ ժամանակաշրջանի գեղարվեստական մթնոլորտին: XIXդ. երկրորդ կեսը ռուս արվեստի համար հատկանշական է ռեալիստական միտումների առավել ակտիվացումով: Արդեն իսկ շրջիկների ընկերության ձևավորման փաստն իր ականավոր ներկայացուցիչներով այդ նոր միտումների վկայությունն է:

Հասկանալի է, որ ռուս արվեստի զարգացման վրա չէին կարող չազդել նաև արևմտյան արվեստում կատարվող երևույթները, մասնավորապես դրանցից ամենաարմատականները՝ օրինակ, ֆրանսիական իմպրեսիոնիստների գեղարվեստական նվաճումները: Ռուս վարպետներից յուրաքանչյուրն իր ձևով էր յուրացնում ֆրանսիացի իմպրեսիոնիստների հայտնագործությունները և հատկապես գունային ներկապնակը թարմացնող պլեներային գեղանկարչության դասերը: Առանձնակի թարմությամբ էր իմպրեսիոնիստական մոտեցումը արտահայտվում Վ.Պոլենովի 70-80-ականների աշխատանքներում, ավելի ուշ Սերովի, Կորովինի, իսկ հետագայում էլ՝ Լևիտանի և Արխիպովի գործերում: Նկարիչների այս խումբն ավելի համարձակ ու ակտիվորեն էր օգտագործում իմպրեսիոնիստների պլեներային նվաճումները:

Միևնույն ժամանակ նոր հովերն անտարբեր չթողեցին նաև այն վարպետներին, որոնք հակված էին ստեղծագործել ավանդական սկզբունքների եղանակով: Շրջիկների ընկերության անդամ այս վարպետները ևս օգտագործեցին իմպրեսիոնիստների գեղարվեստական նվաճումները իրենց ներկապնակը թարմացնելու, լուսաօդային միջավայրի պատկերման հնարավորությունները ընդլայնելու համար: Նկարիչների այս երկրորդ խմբին էլ համարում էր երիտասարդ Բաշինջաղյանը, որի ուսուցիչը՝ հայտնի նկարիչ Միխայիլ Կոդոտը, նույնպես շրջիկների ընկերության անդամ էր: Այս երկրորդ խմբի մեջ էին մտնում Կ.Մակովսկին, Սեմիրադսկին, Բաշինջաղյանի ուսուցիչ Մ.Կոդոտը, Ա.Կուինջիին: Հատկապես այս վերջին վարպետի նկարներն էին մոտ երիտասարդ Բաշինջաղյանի գեղարվեստական խառնվածքին, որի համար իրական աշխարհի տեսողական ընկալումը իր նյութական հավաստիությամբ կարող էր ստեղծագործական գործընթացի հիմք ծառայել:

Ուսումնական պրոցեսը եզրափակող երիտասարդ Բաշինջաղյանի առաջին նկարը՝ Կեչիների պուրակը (1883), ստեղծա-

գործական սկզբունքների յուրացման վառ ապացույց է: Կտավն աչքի է ընկնում պատկերային տարրերի հմուտ տեղաբաշխման ունակությամբ: Կեչիների բների ուղղահայաց դասավորվածության ռիթմը աչքի է ընկնում մտածված փոխկապակցվածությամբ: Ծառերի խումբը միավորում է առաջին պլանում գտնվող բունը՝ այդպիսով ողջ կառուցվածքին արխիտեկտոնիկություն հաղորդելով: Համամասնորեն են հարաբերակցվում նաև գետնի ու երկնքի բաժանումները, որոնք կայունությունն են հաղորդում պատկերային հարթությանը: Հարկ է նշել նաև պատկերային զանազան բաղկացուցիչների տոնային մշակման բարձր վարպետությունը: Լուսավորությունը մի կողմից նուրբ և տեսանելի արծարծում է ձևերի ծավալային կառուցվածքը, մյուս կողմից մասնակցում է պատկերային հարթության կազմակերպմանը: Առարկայական ձևերի մանրամասն պատկերումը հիմնականում չի խաթարում բնանկարի ընդհանուր ամբողջականությունը: Այսպես՝ առաջին պլանի մուգ տոնայնությունը կարծես քողարկում է գետնի ֆակտուրայի, խոտի, թափված տերևների և այլնի մանրամասն կերպավորումը: Հմտորեն է լուծված նաև տարածական հորինվածքը, որը կառուցված է տոնային հեռանկարի աստիճանական թուլացման սկզբունքով: Տակտի մեծ զգացումով երկնքի հատվածում դրված ծառերի տերևները ասես համաչափորեն «ցրում» են դիտողի հայացքը տեսողական դաշտի մակերեսով: Ընդհանուր առմամբ ողջ պատկերային հարթությունը աչքի է ընկնում կառուցվածքի ներդաշնակությամբ, և դիտողը ազատ ու դյուրին է ընկալում բնանկարը:

Ասվածը վկայում է ոչ միայն երիտասարդ նկարչի օժտվածությունը, այլև այն վարպետությունը, որին նա հասել էր սովորելու տարիներին, ի դեպ որի համար նրա այդ աշխատանքը արժանացել էր Ակադեմիայի արծաթե մեդալին: Սակայն այս դրական կողմերի հետ մեկտեղ հարկ է նշել նաև մի շարք թերություններ, որոնք պայմանավորված են ոչ թե Բաշինջաղյանի պրոֆեսիոնալ հնարավորություններով, այլ ավելի շուտ Ակադեմիայի ուսումնական ծրագրի պահպանողական ուղղվածությամբ: Այս վաղ բնանկարի հիմնական թերությունն է այսպես կոչված «թմանգարանային կոլորիտը», որը դեռևս հաղթահարված չէր Ակադեմիայի չատ դասախոսների, այդ թվում Բաշինջաղյանի ուսուցիչ Մ.Կլոդտի ուսումնական համակարգում: Բնանկարում գերիշխում են օխրագույն, չագանակագույն և դարչնականանչավուն երանգները: Երկնքի գույնը հագեցած է չեզոք մոխրագույն երանգներով: Օդային հեռանկարի վերարտադրման համար բացակայում է

գունային տարրը: Կեչիների պուրակի կոլորիտի նշված թերությունները հատկանշական էին Ակադեմիայի այդ տարիների գրեթե բոլոր շրջանավարտների աշխատանքներին և դասախոսների մեծամասնությանը, որոնց արվեստի վրա չէին անդրադարձել եվրոպական արվեստում կատարվող առաջադիմական գեղարվեստական երևույթները:

Կեչիների պուրակի վերլուծությունն իր առավելություններով ու թերություններով կարող է ելակետ ծառայել Գ.Բաշինջաղյանի արվեստում տեղի ունեցող այն զարգացումների համար, որոնք վերջնականորեն ձևավորում են նրա արտահայտչալեզվի գեղարվեստական սկզբունքները և մասնավորապես պլեների պլոբլեմները, որոնք արդիական էին այդ տարիների համար, բնականաբար, առավել ևս կարևոր բնանկարչության ժանրում:

Իրավացիորեն համարվում է, որ բնանկարչությունը որպես իր ստեղծագործության հիմնական ժանր ընտրելու գործում որոշիչ դեր է խաղացել նրա հայրենի Սղնախ քաղաքի զարմանահրաշ բնությունը իր շրջակայքով: Հենց բնության նկատմամբ հիացմունքը ամենավաղ հասակից դարձավ նրա ստեղծագործական «սխրանքների» անսպառ աղբյուրը:

Սրանով կարելի է բացատրել Բաշինջաղյանի չտապ վերադարձը հայրենիք ինքնուրույն ստեղծագործական կյանք սկսելու նպատակով:

Այդ վաղ ժամանակաշրջանում ստեղծված գործերում դեռևս զգացվում են նրա վաղ շրջանի գեղարվեստական տեսողության բնորոշ կողմերը մուգ կոլորիտը, գունային լուծումների պայմանականությունը, կոմպոզիցիայի սխեմատիկությունը: Սակայն զուգահեռ արտահայտվում է միանգամայն նոր միտում՝ լույսի ու լուսավորության նկատմամբ ընդգծված հետաքրքրությունը (Կեչիներ, Սևան. Գիշեր, Աբովյանի տունը): Եվ այդ հետաքրքրությունը պատահական չէր: Նկարիչը սկսում է գիտակցել լույսի նշանակությունը, բնությունը վերափոխելու նրա հնարավորությունը, որը շրջապատող աշխարհին կարող է տալ բոլորովին այլ, գրեթե կախարդական հնչեղություն: Ջոռջանանք նաև Կուինջիի արվեստը, որի հնարավոր ազդեցությունը երիտասարդ նկարչի ուսման տարիներին կասկածից վեր է: Լույսի արտահայտչական հնարավորությունների օգտագործման այդ վաղ քայլերը դեռևս կատարյալ չեն, դրանց դեռ հատուկ է որոշակի երկչոտություն, բայց հետագայում հասուն շրջանի մի շարք գործերում մենք կտեսնենք լույսի «դերակատարման» հրաշալի օրինակներ:

Լույսի խնդիրը Գ.Բաշինջաղյանի գործերում մենք պատահաբար չչոշափեցինք: Այս խնդիրը իմպրեսիոնիստների գեղարվեստական համակարգում կենտրոնականներից է և անմիջականորեն կապված է պլեների խնդիրների հետ: Հենց լույսի նկատմամբ հետաքրքրությունը չատերին հուշեց և հանգեցրեց պլեների ընկալմանը: (Հիշենք իմպրեսիոնիստների արած արտահայտությունները լույսի վերաբաժանմներով հրապուրվելու կապակցությամբ): Հիշենք նաև Կուինջիի, Լևիտանի ստեղծագործությունների էվոլյուցիայի բնույթը:

Սակայն ամենակարևոր փոփոխությունը Բաշինջաղյանի գեղանկարչության մեջ պլեներային խնդիրների յուրացման առումով ներկապնակի փոփոխությունն էր: Սրա ցայտուն օրինակն է Աձրևային օր Սևանում կտավը (1899): Կտավի առջև կանգնած այն չեք ընկալում որպես ինչ-որ մի լճի տեսարան, այլ կարծես ջրի ու երկնքի անծայրածիր տարածք: Հնչեղությունը գրեթե տիեզերական վիթխարիություն ունի: Իսկ կղզու մուգ բիծն ընկալվում է որպես ջրի մակերևույթով սահող նավ: Պարզ է, որ նման կերպար կարող էր ստեղծել միայն մեզ շրջապատող բնության խորհրդավոր էությունը խորը ընկալող մարդը: Միևնույն ժամանակ եթե չլիներ այս զարմանալի նկարի հրաշալի գունային կառուցվածքը, այն չատ կտուժեր իր էմոցիոնալ արտահայտչականության և ազդեցության ուժի մեջ: Բաշինջաղյանին հաջողվել է զարմանալիորեն հաղորդել եղանակը, ամպրոպաբեր ամպերի տպավորությունը, օդի խոնավ թանձրությունը և հեռացող ամպերի լույսի նուրբ վարդագույն երանգը՝ արտացոլված լճի զմրուխտականաչ հարթության վրա:

Որքան էլ տարօրինակ է, այս բնանկարը հիշեցնում է իմպրեսիոնիստների արվեստը փոփոխական բնության էֆեկտները ամենայն ճշմարտացիությամբ արտահայտելու ձգտումով: Եվ պետք է ընդունել, որ Բաշինջաղյանին հաջողվել է լուծել այդ բարդ գեղանկարչական խնդիրը, սակայն մի տարբերությամբ այս բնանկարային կերպարը մեր վարպետը ստեղծել է արվեստասոցի պատերի ներսում, իհարկե պլեներում արված էյուդների հիման վրա: Բաշինջաղյանի այս նկարը դիտարկելիս երևում է, թե որքան է ժամանակի ընթացքում հարստացել նրա գեղարվեստական տեսողունակությունը պլեներային գեղանկարչության սկզբունքները յուրացնելու ճանապարհին:

Պլեներային գեղանկարչության մեկ այլ, առավել վառ օրինակ է Ալազանի հովտի պատկերների շարքը: Նրանցում հրաշալի է լուծված տարածական հեռանկարի խնդիրը գունային մի-

ջոցներով: Այս շարքի մոտիվների համայնապատկերային բնույթը դեպի խորքը գնացող մի ամբողջ շարք պլաններով Բաշինջաղյանը լուծել է բացառիկ վարպետությամբ: Հարուստ գունային երբեմն գնդերանգները պարզորոշ ու հստակ վերարտադրում են հորիզոնում պլանների խորությունը: Վարպետը հմտորեն օգտագործել է օդային հեռանկարի եղանակը՝ համոզիչ ճշմարտացիությամբ արտացոլելով այս հրաշալի բնապատկերային մոտիվների տարածական բնույթը, որոնց մեջ զգացվում է վհշաունչ անդորրի ոգին: Սրանք Բաշինջաղյանի պանթեիզմի հրաշալի մարմնավորում են: Ընդհանուր առմամբ միմյանց նման այս մոտիվները, այնուամենայնիվ, տարբերվում են, նույնիսկ երբ պատկերում են օրվա միևնույն ժամը միևնույն լուսավորության դեպքում: Պատկերաշարում առավել հաջողվածները տեղում նկարվածներն են՝ բնության մեջ, էսյուդի ձևով և, հավանաբար, արվեստանոցում միայն ավարտված: Այն գործերում, որտեղ զգացվում է բնության կենդանի շնչառությունը, պլեների խնդիրները լուծված են առավել արմատականորեն, և այս առումով խոշոր կտավները գունային լուծումների որակով ակնհայտորեն զիջում են ավելի փոքր ֆորմատի գործերին: Տարբեր աշխատանքների միջև որակական բավական արտահայտված անհավասարությունը բնորոշ է Բաշինջաղյանի ստեղծագործությանը և առավել ու պակաս հաջողված կտավների միջև զգալի է: Բացի այդ ևս մի առանձնահատկություն է բնորոշ մեր վարպետի արվեստին: Պարբերաբար վերադարձ իր նախկին աշխատելաեղանակին՝ ակադեմիական մուգ կոլորիտին, որը ժամանակ առ ժամանակ երևան է գալիս նրա ողջ ստեղծագործական ուղու ընթացքում:

Բնության կենդանի շնչառությունը կրող թերևս ամենավառ օրինակն է Վաղ գարուն բնանկարը, որտեղ Բաշինջաղյանի ներկապնակի գունային հնչեղությունը հասնում է մինչ այդ չգերազանցված բարձունքի: Այդ հնչեղությունը կառուցված է մի կողմից լրացուցիչ գույների հակադրմամբ՝ վառ վարդագույնը հագեցած կանաչին, մյուս կողմից՝ սպիտակ ծաղկած կեռասի հակադրմամբ խոտերի և ծառերի հագեցած կանաչներին: Ցանկապատի և քարերի չափանակագույն-վարդագույն տոների հակադրումները նույնպես, կարծես, շեշտում են այդ վառ գույները: Բնանկարի նշված քրոմատիկ բոլոր տարրերը կրում են հարուստ կիսատոներ: Առանձնակիորեն են մշակված կանաչների երանգները՝ սկսած նուրբ տաք երանգներից մինչև ամենահագեցածները: Անհրաժեշտ է հատուկ նշել երկնքի գունային մշակումը նրբին կիսատոներով, որոնք շատ համոզիչ վերարտադրում են գարնան լուսաօդային

միջավայրի խոնավ մթնոլորտը: Այս ոչ մեծ քնանկարը, անշուշտ, արվել էր բնությունից, և այս տեսակի աշխատանքները ոչ միայն քնապատկերի գունային կերպարի ընկալման վառ ապացույց են, այլև հաստատումն այն բանի, թե որքան կարևոր էր Բաշինջաղյանի համար բնությունից ստացված էյոլդները հետագայում մեծ կտավների վերածման գործում:

Կարելի է նաև մատնանշել վարպետի շատ փոքր չափերի էյոլդները, որոնք ևս զարմանալի ճշմարտացիությամբ են վերարտադրում բնական կերպարը և նախապատրաստական նյութ են արվեստանոցային աշխատանքի համար: Ահա սրանցից մի քանիսը: Մանրանկարչի վարպետությամբ արված մամռապատ բնով ծառի էյոլդը, արևի շեղ լույսի ընկած ցոլքով (Կեչի), կամ էլ մոտիվով սրան մոտ, անտառի եզրին կանգնած ծառը լուսաօդային միջավայրով պարուրված (Ծառի բուն), կամ էլ վառ մանուշակագույն և կապտավուն լեռնաշղթայի փոքր էյոլդը (Բնանկար. էյոլդ):

Փարիզ կատարած երկու ուղևորությունները պլեներային խնդիրները հասկանալու տեսակետից, հավանաբար, առավել օգտակարն էին, որի մասին է խոսում Փարիզի չրջակայքը. Մեդոն քնանկարը (1900): 1900թ. Ֆրանսիայի մայրաքաղաքում անց էր կացվում համաշխարհային ցուցահանդես, որտեղ ցուցադրվում էին նաև ռուս նկարիչների աշխատանքները, որոնց չարքում իր կտավներով հանդիսատեսին էր ներկայացել Գ.Բաշինջաղյանը: Նկարիչների համար առանձնահատուկ հետաքրքրություն էին ներկայացնում իմպրեսիոնիզմի վարպետների կտավները, որոնք այդ ժամանակ արդեն համընդհանուր ընդունվել էին: Ի դեպ հիշեցնենք, որ այդ ցուցահանդեսին ծանոթանալու էր գնացել նաև Ե.Թադևոսյանը: Սակայն կարելի է ենթադրել, որ երկու հայ նկարիչների համար էլ իմպրեսիոնիզմի ցուցադրությունը խորթ էր և նրանց պետք է, որ դուր գային ֆրանսիացի ավելի մեղմ ու հավասարակշռված նկարիչների՝ Կորոյի, Միլլեի, Դոբինյիի, նույնպես և բարբիզոնցիների կտավները, որոնցից էլ երիտասարդ նկարիչները կքաղեին օգտակար դասեր:

Գ.Բաշինջաղյանի լավագույն ստեղծագործությունները անգնահատելի ներդրում են նոր և նորագույն ժամանակների հայ արվեստի գանձարանում: Բաշինջաղյանը հայ գեղանկարչության այն ականավոր վարպետներից է, որի օգնությամբ սկսեց ձևավորվել և համաեվրոպական գեղարվեստական ընթացքի մաս դառնալ ազգային գեղանկարչական դպրոցը: Նրան պետք է դասել այն հայ վարպետների չարքին, որոնք իրենց արվեստով հավատարիմ

մնացին ավանդական եվրոպական ռեալիստական գեղանկարչության։

Համոզված ենք, որ գեղանկարչության մեր ականավոր դասական Գ.Բաշինջաղյանի լավագույն ստեղծագործությունները նորովի կդիտարկվեն և կուսումնասիրվեն մասնագետների գալիք սերունդների կողմից, իսկ մեր վարպետի ստեղծագործությունների բարձր որակը կպահպանի իր գեղագիտական արդիականությունը և է՛լ ավելի կհետաքրքրի ապագայի արվեստասերներին։

ԿՐԿԵՍԸ ՈՐՊԵՍ ԱՐՎԵՍՏԻ ԵՐԵՎՈՒՅԹ

Կրկեսի տեղն ու նշանակությունը տարածաժամանակային[1] մյուս արվեստների համակարգում առ այսօր ճևաբանորեն հստակ սահմանված չէ: Առաջին անգամ այս խնդրի վրա ուշադրություն է հրավիրել դեռևս Ե.Կուզնեցովը՝ հակադրվելով լայն տարածում գտած այն տեսությանը, որի համաձայն, կրկեսը, իբրև թատերարվեստի մի տարատեսակ, չունի ամբողջական ու միատարր կառուցվածք, այլ ներկայացնում է «զուտ մեքենաբար միավորված» ("соединившиеся чисто механически") տարասեռ (հետերոգեն) երևույթների համակցում (կոնգլոմերատ)[2]: Ըստ էության, Ե.Կուզնեցովի հարցադրումները երեքն են.

ա) արդյո՞ք կրկեսն արվեստի երևույթ է,

բ) արդյո՞ք կրկեսը թատերարվեստի մի տարատեսակ է,

գ) որո՞նք են կրկեսի հիմնորոշ առանձնահատկությունները[3]:

Կրկեսի բուն էությանը, ասել է թե՝ գեղարվեստական կառուցվածքին վերաբերող այս խնդիրները, անշուշտ, առանցքային նշանակություն ունեն կրկեսագիտության համար, սակայն, բնավ չնսեմացնելով անվանի գիտնականի մեծ վաստակը՝ կարծում ենք նրա տեսական դրույթները բավարար հիմնավորված չեն, քանի որ կրկեսային արվեստի կառուցվածքային առանձնահատկությունները, այնուամենայնիվ, նա չի դարձրել հատուկ քննության առարկա: Նրա ուշադրության կենտրոնում գերազանցապես եվրոպական նորագույն կրկեսի ճևավորման պատմական ընթացքն է,

---

[1] Այս հասկացությունն օգտագործում ենք իբրև ճևաբանական կատեգորիա, որ վերաբերում է գեղարվեստական երևույթների փիլիսոփայական դասակարգման սկզբունքին: Արվեստի ստեղծագործությունները եռախումբ դասակարգելու սկզբունքը՝ ժամանակային, տարածական և տարածաժամանակային, կիրառվում է դեռևս 19-րդ դարի սկզբից (մանրամասն տե՛ս W.Krug, Versuch einer Systematischen Enzyklopedie der schönen Künste, Leipzig, 1802, S. 12-27), և թեպետ հետագայում Վ.Կրուգի և նրա հետևորդների հայացքները բազմիցս վիճարկվել են, այնուամենայնիվ մենք առավել հիմնավոր ենք համարում Վ.Գուսևի կոնցեպտուալ մոտեցումն այս խնդրին (տե՛ս В.Гусев. Эстетика фольклора. Л., 1967, с. 82), որ «տարածաժամանակային արվեստներ» հասկացության տակ ենթադրում է դինամիկ արվեստների ամբողջ համալիրը:

[2] Տե՛ս Е.Кузнецов. Цирк. Происхождение. Развитие. Перспективы, 2-е изд. М., 1971, с. 379-380.

[3] Նույն տեղում, էջ 380-384:

որի նախատիպն է համարվում XVIII դարավերջին Ֆիլիպ Ասթլեի հիմնած «Զիամարզական դպրոցը», իսկ կրկեսի ձևաբանությանը վերաբերող մի շարք հիմնարար հարցեր, ինչպես ասենք՝ ծագումնաբանական հատկանիշները, տեսակներն ու տարատեսակները, ժանրային համակարգը, ուսումնասիրության շրջանակներում չեն էլ ընդգրկվել: Հետագայում էլ այդ հարցերը գրեթե չեն հետաքրքրել արվեստի ձևաբանությամբ զբաղվող տեսաբաններին[4], ինչու և կրկեսն իր ակներև առանձնահատկություններով հանդերձ, այսօր էլ դեռ բավարար լուսաբանված չէ:

Անընդունելի է նաև Ե.Կուզնեցովի մեթոդաբանական սկզբունքը, որի հիման վրա նա, ի վերջո, հանգել է այսպիսի հետևության. «Կրկեսն արվեստի երևույթ է, որպես գաղափարախոսության առանձնահատուկ մի ձև» ("особая форма идеологии")[5]: Սա ժամանակին սոցիոլոգիական եղրակացության դասական օրինակ կարող էր ծառայել, բայց ոչ մի կապ չունի արվեստագիտության հետ, քանի որ հեռանում է խնդրի բուն առարկայից նրա կերպաձևից: «Սոցիոլոգիական դպրոցը, - իրավացի նկատում է Հ.Հովհաննիսյանը, - իհարկե, գիտական է, ոչ մի կասկած, և արվեստագիտական չէ: Գրականության ու արվեստի երևույթները կարող են մոտքեր տալ հասարակագետին, և սահմանափակ է այն հասարակագետի մտածողությունը, ով հեռու է գեղարվեստական գրականությունից: Բայց սա չի նշանակում, թե պետք է արվեստագիտության ասպարեզը մտնել հասարակագիտական հասկացություններով»[6]: Ուստի, բնական է, որ Ե.Կուզնեցովի վերոնշյալ հարցադրումներն էլ, վերջին հաշվով, մնացել են թեական:

Ահա թե ինչու, Վ.Վսևոլոդսկի-Գենգրոսի հակառակ տեսակետը, կարծես, ավելի համոզիչ է: Նրա կարծիքով, կրկեսը միայն պայմանական կարող ենք ճանաչել թատրոնի տարատեսակ, քանի որ այն «թատերական ինչ-որ մի հնագույն ձևի տարբրալուծման արդյունքը կամ էլ դրա բազադրամասերից մեկի զարգացած տեսակը չէ»[7]: Եթե հաշվի առնենք, թե ինչ չափով է այս խնդիրն

---

[4] Արվեստի ձևաբանությանը նվիրված իր ուսումնասիրություններում Մ.Կագանը նույնպես կրկեսը համարում է տարատեսակ (հետերոգեն) երևույթների խառնուրդ (կոնգլոմերատ), սակայն վկայակոչելով Ե.Կուզնեցովին՝ այնուամենայնիվ համարում է այն ինքնուրույն արվեստ, որը համեմատաբար իր կուռ կանիվ համարում է այն ինքնուրույն արվեստ, որը համեմատաբար իր կուռ կանոնով ուղեցույցով տարբերվում է էստրադայից կամ էլ այլ համերգային հանդիսություններից (տե՛ս **М.Каган**. Морфология искусства, Л., 1927, с. 235-236):

[5] Տե՛ս **Е.Кузнецов**, նշվ. աշխ., էջ 384:

[6] Հ.Հովհաննիսյան, Թատրոն և թատերախոսություն, Երևան, 2004, էջ 186, 187:

[7] **В.Всеволодский-Генгросс**. Начало цирка в России. "О театре" (Временник отдела

ընդհանրապես ուսումնասիրված, ապա թատերագետի զգուշությունը միանգամայն հասկանալի կդառնա. չճանաչելով կրկեսի ծագումնաբանությունը՝ նա, բնականաբար, չի տեսնում նաև այդ արվեստի բնածին տարրերը, ուստի և համարում է այն ընդամենը տարասեռ երևույթների հանրագումար:

Հիրավի, առաջին հայացքից էլ տպավորությունն այնպիսին է, թե կրկեսային ամեն մի հանդիսանք կառուցվում է բազմազան և տարաբնույթ համարներից, որոնք տվյալ պահին կապակցվում են իրար հետ, սակայն չեն միահյուսվում կամ համադրվում և չեն գառնում այնպիսի մի ամբողջություն, ինչպիսին, ասենք, հատուկ է դրամատիկական արվեստին: Բնականաբար, հարց է ծագում. այդ դեպքում ի՞նչ սկզբունքով են ընդհանրապես միավորվում կրկեսային ժանրերը:

«Կրկեսի փոքր հանրագիտարանի» առաջաբանում Յու. Դմիտրիևը գրել է. «Կրկեսային արվեստն առաջացել է ժողովրդական հրապարակային հանդիսություններից և թատերականացված մարզական մրցախաղերից: Կրկեսի գլխավոր հերոսն այն արտիստն է, որը հաղթահարում է անհաղթահարելի թվացող արգելքներ, բանաստեղծականացնում է մարդու ֆիզիկական աշխատանքը, քաջությունը, հնարամտությունը, ստեղծում է որոշակի ընդհանրացված գեղարվեստական կերպար: Այդ կերպարն առավելապես բացահայտվում է առանձնահատուկ կրկեսային վարժությունների՝ հնարանքների ("трюк") միջոցով»[8]: Սա կրկեսային արվեստի ամենահակիրճ բնորոշումն է, որն ամփոփ բնութագրում է առարկան իր հիմնական առանձնահատկություններով: Ծագումնաբանական պատկերն էլ, կարծես, հատակ է. կրկեսի արմատները մի ծայրով սկիզբ են առնում հրապարակային ժողովրդական հանդիսանքներից, մյուսով՝ թատերականացված մարզական մրցախաղերից: Ինչպես տեսնում ենք, այստեղ էլ, կրկեսային արվեստը չի ներկայանում միատարր, թեև առանձնանում է և գիտակցվում որպես գեղարվեստական խաղի այնպիսի տեսակ, որտեղ գործողությունը հիմնականում կազմված է հնարանքներից: Հենց դրանք էլ կրկեսային արվեստի միավորներն են, նրա ծագումնաբանական գլխավոր հատկանիշները, որոնք, ըստ մեկնության, նույնպես երկատվում են սպորտի և արվեստի միջև:

Ե.Կուզնեցովի բացատրությունն էլ, փաստորեն, այդ է վկայում. «Պատմության ողջ ընթացքում կրկեսի առանձնահատկու-

---

истории и теории Государственного института истории искусств), Л., 1927, с. 69.

[8] "Цирк. Малая энциклопедия", նշվ. հրատ., էջ 9:

թյունը դրսևորվել է մարդու և կենդանու ֆիզիկական գործողությունների (մկանային շարժիչների) միջոցով, որոնք դրսևորվել են ոչ թե պայմանական եղանակով, այլ բնական պայմաններում, եռաչափ իրականության մեջ: Ֆիզիկական արգելքների իրական հաղթահարումը կրկեսի... առաջնային տարրն է: Հետևաբար, կրկեսի... հիմնական առանձնահատկությունը կարելի է սահմանել հնարանք հասկացությամբ»[9]: Այս ձևակերպումն, անշուշտ, փունդամենտալ նշանակություն ունի կրկեսի համար, բայց մի էական վերապահություն. հնարանքը, որպես ֆիզիկական արգելքի հաղթահարում, ընդամենը ուժի և ճարպկության փորձություն է (Kunststück)[10], բայց չէ՞ որ մեզ այն հետաքրքրում է որպես գեղարվեստական երևույթ:

Հ.Հովհաննիսյանի կարծիքով, «...կրկեսն ունի դրամատիկական և թատերային մտածողության բոլոր գծերը մեկ սկզբունքային տարբերությամբ. դրաման ենթադրվող պայմանների իրականություն է, կրկեսը՝ առաջադրվող իրային պայմանների»[11]: Թատերագետի ուշադրության կենտրոնում արտիստն է և նրա ստեղծագործական միջավայրը (ֆիզիկական արգելք հաղթահարելու ներքին խնդիր, կենտրոնացում, չփում), ասել է թե՝ նրա «ընտրած դրաման, ապրելու իր կերպը»[12]: Եվ այստեղից էլ, ի վերջո, նա հանդում է հետևյալ եզրակացության. «Կրկեսը դրամա է իր և՛ առարկայականությամբ, և՛ պայմանականությամբ, ունի իր իմաստաբանությունը, մարտահրավեր է ու հեգնանք կենցաղի իրականության ու առօրյա բանականության հանդեպ, ստեղծում է լարում ու հանգստություն, երկյուղ և հիացմունք»[13]:

Այդպիսով, Հ.Հովհաննիսյանը սահմանազատում է դրաման և կրկեսը՝ ըստ իրային պայմանների: Դրամայի գործողությունը հորինված իրականություն է, որը բեմական պայմաններում դառնում է ենթադրվող իրողություն: Մինչդեռ կրկեսային հորինվածքի հիմքում արտասովոր գործողության ֆիզիկական առարկայացումն է՝ առաջադրված իրեղեն պայմաններում: Տարբերությունը, իհարկե, ակներև է: Իսկ արդյո՞ք այդ երկու հարթությունների վրա նմանապես տարբեր գեղարվեստական սկզբունքներով չի կա-

---

[9] Е.Кузнецов, նշվ. աշխ., էջ 284 (ընդգծումը մերն է – Գ.Ծ.):

[10] Համմտ. Յոհան Հայզինգա, Homo Ludens, Մշակույթի խաղային տարրի սահմանման փորձ, թարգ. Ս.Ղրաֆյան, խմբ.՝ Հ.Հովհաննիսյան, Երևան, 2007, էջ 242:

[11] Հ.Հովհաննիսյան, Դերասանի արվեստի բնույթը. էսթետիկական քննություն, Երևան, 2002, էջ 117, 118:

[12] Նույն տեղում, էջ 125:

[13] Նույն տեղում:

ռուցվում նաև խաղը: Չէ՞ որ մի դեպքում՝ դրամայում, արտիստը գործ ունի երևակայական իրականության հետ, մյուս դեպքում՝ կրկեսում, երևակայության իրագործման: Բացի այդ, դրաման մարդկային չահերի անհաշտ բախում է, երբ պայքարի մեջ մտած կողմերից յուրաքանչյուրը ձգտում է հաղթանակի, ինչն էլ անխուսափելիորեն, ի վերջո, հանգեցնում է իրավիճակի կտրուկ փոփոխության: Կրկեսում հաղթանակն ի սկզբանե կանխորոշված է հօգուտ «հերոսի», որի հնարավոր պարտությունն ուղղակի բացառվում է: այլապես այն չի կարող դեղարվեստական արժեք ներկայացնել: Ահա թե ինչու այստեղ հմտորեն քողարկվում է անգամ այն ներքին դրաման, որ կարող է ապրել փիղիկական արգելքի առջև կանգնած արտիստը: Սա հենց այն «գաղտնիքն է», որի բացահայտմամբ կվերանա կրկեսային հնարանքի գեղագիտական հետաքրքրությունն ընդհանրապես: Թատրոնում պատկերը բոլորովին ուրիշ է. դրամատիկական վիճակներն այստեղ ոչ միայն չեն քողարկվում, այլ ընդհակառակը, կերպարի հոգեբանական ապրումներն ի ցույց են դրվում՝ որպես գեղարվեստական արտահայտության նշաններ:

Ուստի, կրկեսային խաղի գեղարվեստական արժեքը ոչ թե արգելքը (մեկնումն է փիզիկական, թե հոգեբանական) հաղթահարելու դրաման է և դրանից բխող մարդկային ապրումները՝ մի բան, որ թատերական արվեստի բուն առարկան է, այլ «հերոսի» ցուցադրած հնարանքներն են իրենց արտասովոր գեղարվեստական կերպաճևով: Կրկեսային խաղը որպես արվեստի երևույթ, իհարկե թատերային է, սակայն իր ձևակերտվածքով բնավ թատերական չէ[14], քանի որ բեմում հանդես եկող դերասանը և կրկեսային խաղահրապարակում ելույթ ունեցող արտիստը ոչ միայն տարբեր նպատակներ են հետապնդում, այլև նրանց գեղարվեստական խնդիրներն են տարբեր: Երկու դեպքում էլ «անձի գեղարվեստական ներկայության արվեստն է»[15], սակայն դերասանը ներկայանում է «ինչ-որ մեկի» անունից, նա գեղարվեստորեն մարմնավորում է տվյալ գործող անձի վարքագիծն ու կերպարային նկարագիրը, և որքան այն արտահայտիչ է, այնքան տպավորիչ է նրա խաղը, իսկ կրկեսային արտիստի վարքագիծը սկզբից մինչև վերջ ստույգ հաշվարկված է և գծագրված. նա ասպարեզ չի բերում անձնավորված կերպար, կամ էլ հոգեվիճակ, այլ ներկայացնում է

---

[14] *Թատերայնություն և թատրոն հասկացությունների տարբերության վերաբերյալ տե՛ս Հ.Հովհաննիսյան, Թատրոնը միջնադարյան Հայաստանում, էջ 23,24:*

[15] *Հ.Հովհաննիսյան, Թատրոն և թատերախոսություն, էջ 190:*

միայն ֆիզիկական հնարանքներից կառուցված գործողություն, որը որքան արտասովոր է և գեղարվեստորեն արտահայտիչ, այնքան տպավորիչ է՝ որպես արվեստի երևույթ:

Այստեղ մոտենում ենք կրկեսային արվեստի մյուս առանձնահատկությանը՝ հնարանքների կառուցման կենտրոնազանց էքսցենտրիկ ձևին, առանց որի նույնպես չկա կրկես: Ինչպես նշում է Յու.Դմիտրիևը. «...կրկեսը բազմաժանր է, բայց հիմքում միշտ էքսցենտրիկան է, որը փաստորեն կրկեսի ձևն է, և առանց դրա, նույնն է թե բանաստեղծությունն առանց հանգի, թատրոնն առանց երկխոսության, գեղանկարչությունն առանց ներկերի»[16]: *Այս մեկնությունը Յու.Բորևի կարծիքով ճիշտ չէ, քանի որ «...ոչ ոք չի բավարարվի պոեզիայի առանձնահատկության այսպիսի բնորոշմամբ՝ բանաստեղծությունները հանգավորված տողեր են: Միշտ չէ, որ հանգը պոեզիայի հատկանիշ է: Ճիշտ այդպես էլ, էքսցենտրիկությունը չի կարող կրկեսի գլխավոր հատկանիշը լինել»*[17]: *Կարծում ենք, Յու.Բորևի առարկության մեջ էական վրիպում կա, այն է՝ ասելով «ձև», նա նկատի ունի առարկայի արտաքին նկարագիրը, տեխնիկական կառուցվածքը, մինչդեռ, ըստ էության, խոսքը վերաբերում է երևույթի գեղարվեստական արտահայտությանը:*

Էքսցենտրիկա հասկացությունն օգտագործելիս սովորաբար ենթադրում են կրկեսային զավեշտախաղերի այն սուր ընդգծված պահերը, որոնք արտասովոր են, կենտրոնազանց իրենց ծայրահեղ անհեթեթությամբ: Հանրագիտարանային բացատրություններն էլ հիմնականում հենվում են այնպիսի օրինակների վրա, որոնք, ըստ էության, ծաղրածուական հնարանքներ են և ուրիշ ոչինչ[18]: *Իհարկե, միաժամանակ նշվում է, որ էքսցենտրիկ հնարանքներ «կարող են օգտագործվել կրկեսային արվեստի բոլոր ժանրերում՝ ակրոբատիկայում, մարմնամարզության մեջ, երաժշտական համարներում, կենդանաբարժության մեջ և այլն»*[19], *թեև այստեղ էլ, հասկանալի է, խոսքը վերաբերում է այնպիսի հնարանքներին, որոնք զավեշտային շեշտավորումներ ունեն: Բայց, արդյոք դա թո՞ւյլ է տալիս եզրակացնելու, որ կենտրոնազանց խաղն առկա է կրկեսային արվեստի բոլոր ժանրերում: Եթե կենտրոնազանց աս-*

---

[16] Ю.Дмитриев. В чем же все-таки специфика цирка? - Советский цирк, 1960, N8, с. 11.

[17] Յու.Բորև, Գեղագիտություն, ռուս. թարգմ. Մ.Տ.Խոցանյան, Երևան, 1982, էջ 345, 346:

[18] "Цирк. Малая энциклопедия", նշվ. հրատ., էջ 381:

[19] "Театральная энциклопедия", т. 5, М., 1967, с. 982.

լով՝ չհասկանանք միայն ծիծաղելին ու զավեշտականը, ապա այո՛: Զէ՞ որ յուրաքանչյուր կրկեսային խաղաձև, ի վերջո, հենց կենտրոնազանց է՝ որպես գեղարվեստական արտահայտություն: Այստեղ խախտվում են բոլոր առօրեական ըմբռնումները՝ հնարավորի ու անհնարինի սահմանները, և ստեղծվում է գեղեցիկը բնորոշող հատկանիշների՝ համաչափության և հավասարակշռության սպեցիֆիկ կրկեսային բնօրինակը: «Այս խաղի ներքին ելակետը տիեզերքի գերագույն օրենքն է՝ հավասարակշռությունը: Մարդը խախտում է օրենքը ու վերադառնում օրենքին»[20]: Կրկեսի գմբեթի տակ սավառնող օդամարզիկը, կամ էլ պարանի վրա քայլող լարախաղացը, իհարկե, ծիծաղելի չեն, սակայն նրանց էքսցենտրիկ վարքագծում որոշակի հեգնանք կա[21]: Նրանք հեգնաբար են նայում արտաքին աշխարհին՝ կյանքի սովորական առողջ տրամաբանությանը և իրենց խաղով փաստացի գլխիվայր են շրջում իրականն ու անիրականը: Դա հենց այն է, ինչի շնորհիվ կրկեսային հնարանքը փիզիկական գործողությունից վերածվում է գեղարվեստական արտահայտության:

Ասլետիկ, մարմնամարզական, ակրոբատիկ և այս կարգի զանազան այլ վարժություններից կազմված կրկեսային հնարանքները ակնհայտորեն գալիս են մարզական խաղերից, և բնականաբար հարց է ծագում. ի՞նչ տարբերություն կա կրկեսում և սպորտում փիզիկական արգելք հաղթահարելու մեջև: Այս կապակցությամբ Հ.Հովհաննիսյանը գրում է. «...վիճակի նշանները արտիստի կամ մարզիկի դեմքին են, դիրքում ու կեցվածքում, երբեմն էլ թաքնված են, չեն երևում, մարդը հանգիստ ժպտում է: Հավասարակշռության ու տարերքի միասնությունը, մարդուս ներքին ինքնահաղթահարման դրաման առավել տեսանելի է հեռուստաէկրանում, կամային նշաններով, որոնք ենթագիտակցական են, ոչ ցուցադրական և դրանով էլ դրամատիկորեն հետաքրքիր, ոչ պակաս արտիստի բեմական նշաններից»[22]: Փիզիկական արգելքի առջև կանգնած մարզիկի ներքին «դրաման» (մի՛ևնույն է, բացահայտ՝ արտաքինապես տեսանելի, թե՛ քողարկված) և «արտիստի բեմական վիճակի նշանները», իհարկե, կարող ենք համեմատել՝ որպես հոգեբանական գործողության արտահայտման ձևեր, բայց այլ է կրկեսային խաղահրապարակում: Այստեղ արտիստը ոչ թե չանում է հաղթահարել այդ դրամատիկական վիճակը, այլ բացահայտ հեգնորեն է վերաբերվում դրան, քանի որ ֆիզիկական

---

[20] Հ.Հովհաննիսյան, Խաղը՝ բեմական ներկայության ձևային հիմք, էջ 343:
[21] Համմ. Հ.Հովհաննիսյան, Դերասանի արվեստի բնույթը, էջ 190:
[22] Նույն տեղում, էջ 115, 116:

արգելք հաղթահարելը նրա համար ոչ թե նպատակ է, ինչպես սպորտում մարզիկի համար, այլ գեղարվեստական արտահայտության միջոց՝ «չինանյութ», որն օգտագործվում է կրկեսային ներկայացում կառուցելիս: Ինչպես պոեզիայում խոսքը գեղարվեստական իմաստ է ձեռք բերում, երբ հաղթահարվում է նրա սովորական, առօրեական նշանակությունը, և բացահայտվում է «վերիմաստային» էությունը ("сверхсмысловая" сущность")[23], այնպես էլ կրկեսում, հեգնորեն հաղթահարելով արգելքները, արտիստը մի նոր՝ «վերիմաստային», ասել է թե՝ վերանցական (Transcendental) արտահայտություն է հաղորդում իր ֆիզիկական գործողությանը, որն էլ հենց կրկեսային խաղի գեղարվեստական առանձնահատկությունն է: Դրանով կրկեսային խաղը սկզբունքորեն տարբերվում է թատերական արվեստին հատուկ կերպավորված խաղից:

Ս.Ալեքսանդերը նկատում է, որ գրականության երկվությունը (դիխոտոմիա) արձակի և պոեզիայի միջև հատուկ է բոլոր արվեստներին. մի դեպքում գեղարվեստական ձևը ստանում է պատկերային արտահայտություն, մյուս դեպքում՝ մտահայեցողական, մաքուր գեղարվեստական ձև[24]: Ժամանակին Ն.Հարտմանն ընդհանրապես արվեստները բաժանել է ըստ նրանց ձևակերտման երկու սկզբունքների. մի դեպքում, երբ ստեղծագործությունը կերպավորված է իրական երևույթներին համապատասխան (պլաստիկա, գեղանկարչություն, գրականություն), մյուս դեպքում՝ ստեղծագործության առարկան իրականության մեջ գոյություն չունեցող, բայց մտահայեցողաբար «տեսանելի» մաքուր ձևն է (երաժշտություն, ճարտարապետություն, զարգանախշ)[25]: Եվ իրոք, գեղանկարչության, քանդակագործության, գրականության մեջ և թատրոնում գեղարվեստական ստեղծագործությունը ձեռք է բերում կյանքից եկող պատկերային և զգացական նշաններ (նույնիսկ, երբ գրողը կամ նկարիչը դիմում է անիրական, ֆանտաստիկ պատկերների, միևնույն է, հաղորդում է դրանց առարկայորեն ճանաչելի ձևեր), իսկ ահա պարարվեստում, երաժշտության և ճարտարապետության մեջ գեղարվեստական ստեղծագործության արտահայտությունը հեռանում է պատկերային այն ձևերից, որոնք կարող են հանդիպել առօրյա կյանքում, քանի որ երաժշտական հնչյունները իրականության մեջ գոյություն չունեն, ինչպես և պարի կամ ճարտարապետական կառույցի նման պատկերներ

---

[23] Տե՛ս С.Лихачев. Поэтика древнерусской литературы. М., 1979, с. 113.

[24] Տե՛ս S.Alexander, Beauty and other Forms of Value, London, 1933, p. 84.

[25] Տե՛ս Н.Гартман. Эстетика. М., 1958, с. 141.

բնության մեջ չեն հանդիպում:

Ուշագրավ է, որ պատկերային և ոչ պատկերային, այսինքն՝ մաքուր ձևի արվեստները սկսել են սկզբունքորեն տարբերակել դեռևս ռոմանտիզմի շրջանում՝ օբյեկտիվ իրականությունը պատկերող ստեղծագործությունների հակադրելով արտաքին երևույթների սուբյեկտիվ ներաշխարհն արտահայտող ձևերը՝ իբրև պոեզիայի բարձրագույն աստիճան[26]: Պատահական չէ, որ այս գեղագիտական ուղղության ջատագովներն էլ առաջ քաշեցին «բանատեղծական հեգնանքի» սկզբունքը, որ ռոմանտիկական պոեզիայի հիմնաքարը դարձավ: Թե ինչպես են նրանք տեսականորեն մեկնաբանել իրենց այդ հայացքները, բավականաչափ ուսումնասիրված խնդիր է[27], ուստի բավարարվենք միայն Ֆրիդրիխ Շլեգելի հետևյալ դիպուկ բնորոշմամբ. «Այստեղ (խոսքը հեգնական պոեզիայի մասին է -Գ.Ծ.) ապրում է իսկական տրանսցենդենտալ բուֆոնադայի ոգին: Այստեղ իշխում է այնպիսի տրամադրություն, որը բարձունքից է նայում բոլոր երևույթներին՝ անընդհատ վեր կանգնելով իրականությունից, անգամ սեփական արվեստից... Իր ձևով և ստեղծագործելու եղանակով սա իսկ և իսկ քաջածանոթ իտալացի վարպետ բուֆոնի միմոսությունն է»[28]: Շլեգելն ուշադրակի ակնարկում է իտալացի հրապարակային կոմեդիանտների այն էքսցենտրիկ վարքագիծը, որը հատուկ է բոլոր կրկեսային խաղերին և նույն գործառույթն է կրում, ինչ որ հեգնանքը ռոմանտիկական պոեզիայում:

Անշուշտ, այսօրինակ համեմատությունները վերաբերում են ոչ թե գեղարվեստական երևույթի արտաքին նկարագրին կամ էլ ֆիզիկական հատկանիշներին, այլ միայն նրա կերպաձևին: Եվ իհարկե, իրավացի է Յու.Բորևը, երբ նշում է, որ հանգը պոեզիայի հիմնական հատկանիշը չէ, սակայն չենք կարող համաձայնվել գեղագետի հետ, երբ նա եզրակացնում է, թե «...ճիշտ այդպես էլ էքսցենտրիկությունը չի կարող կրկեսի գլխավոր հատկանիշը լինել»: Խաղի կենտրոնացանց բնույթն այստեղ զուտ ֆիզիկական հնարանք չէ, այլ ծագումնաբանական առանձնահատկություն: Կրկեսին բնորոշ այդ գեղարվեստական լեզուն ձևավորվել է դեռ վաղնջական ժամանակներում: Առաջին «հրաշագործ» աճպարարներից սկսած՝ հեգնանքն այն գեղարվեստական միջոցն էր, որն

---

[26] Տե՛ս. В.Ванслов. Эстетика романтизма. М., 1966, с. 239.

[27] Վ.Վանսլովի նշված աշխատությունից բացի տե՛ս Н.Я.Берковский, Романтизм в Германии. Л., 1973, с. 73-83.

[28] Литературная теория немецкого романтизма, под ред. Н.Я.Берковского. Л., 1934, с. 177.

օգնում էր նախապաշարված մարդուն հաղթահարել «խորհրդապաշտական վախը»: Ինչպես ժամանակին դիպուկ նկատել է Ա.Լոսևը, արդեն Հոմերոսյան պոեմներում դիցաբանական մի շարք պատումներ սոսկ կախարդական զվարճալի հեքիաթներ են հիշեցնում[29], որտեղ Հեգինանքը նույնպես վճռորոշ դերակատարում է ունեցել[30]: Այստեղից էլ, կարծում ենք, տրամաբանական է, որ կրկեոն ու հեքիաթը իրենց գեղարվեստական առանձնահատկություններով համեմատելի են և անգամ կարող են «հարազատ» համարվել[31]: Չէ՞ որ կրկեսում նույնպես «ամեն ինչ հակառակ է կեցուցության ըմբռնելի ճշմարտությանը»[32]:

Մի֊ևնույն ժամանակ կրկեսային արվեստն առանձնանում է խաղի իր ոչ պատկերային արտահայտչաեղվով և ավելի մոտ է պարարվեստին, քան թատերարվեստին: Ակներև է, որ թե՛ մեկին, թե՛ մյուսին հատուկ է գործողության ճարտարակերտ հորինվածքը, ինչպես այդ դիտում ենք նաև երաժշտության մեջ: Պատահական չէ, որ պարարվեստում Ժ.֊Ժ.Նովեռն ընդգծել է ոչ միայն երաժշտությանն ու գեղանկարչությանը հատուկ գծեր, այլև ձիավարժությանը[33]: Եվ իրոք, խորեոգրաֆիային բնորոշ տարրեր առկա են գրեթե բոլոր կրկեսային խաղերում՝ ակրոբատիկայում և էկվիլիբրիստիկայում, մարմնավարժության և կենդանավարժության մեջ, աճպարարական և ձեռնածուական արվեստներում: Բոլոր դեպքերում խաղի հիմնորոշ հատկանիշը գործողության ոչ պատկերային ձևակերտումն է: Սյուզաննա Լանգերի այն միտքը, թե երաժշտությունը՝ որպես գեղարվեստական ձև, թեև զուգորդվում է կյանքից եկող ապրումներով, սակայն դրա ենթադրվող իմաստը երբեք հնարավոր չէ սահմանափակել պատկերային շրջանակների մեջ[34], հավասարապես կարելի է վերագրել նաև կրկեսային արվեստին: Այլ կերպ ասած, թե՛ պարարվեստում, թե՛ կրկեսում, դիմինանտը խաղի բանաստեղծականությունն է: պարզապես առաջինը, թերևս, համարենք քնարերգական պոեզիայի զուգահե-

---

[29] А.Ф.Лосев. Гомер. М., 1996, с. 217-219.

[30] Կարծում ենք՝ պատահական չէ, որ Կ. Զուլգերը հեգնանքի տեսության իր դրույթները հիմնավորելիս հաճախ օրինակներ է բերում հոմերոսյան պոեմներից (տե՛ս К.Гилберт, Г.Кун, История эстетики. М., 1960, с. 481):

[31] Տե՛ս В.Назаренко. Родной брат сказки. - "Советская эстрада и цирк", 1971, N 7, с. 8-10.

[32] Հ.Հովհաննիսյան, Խաղը՝ բեմական ներկայության ձևային հիմք, էջ 344:

[33] Ж.-Ж. Новерр. Письма о танце и балетах. Л.-М., 1965, с. 89.

[34] Suzanna K.Langer, Philosophi in a New Key, Cambridge, The Harvard University Press, 1942, p. 240.

ռը, երկրորդը՝ էպիկական պոեզիայում առկա հեքիաթային մոտիվների: Դե, իսկ թատրոնն էլ ուղղակի դրամայի խաղային արտահայտումն է:

Այդուհանդերձ, կա մի գոյաբանական չափանիշ, որն ընդհանրացնում է այս արվեստները. դա գործողությունն ի ցույց հանդիսատեսին ներկայացնելու հանգամանքն է, որը գալիս է դեռևս հնագույն սինկրետիկ հանդիսությունների և դրսևորվում է հանճինս պարոդի, դերասանի և կրկեսային արտիստի: Հենց այդ հնագույն ծիսական խաղերի ընդերքում էլ ի սկզբանե ծնունդ է առել միմական խաղը՝ իբրև միաժույռ արարողակարգ, որից հետագայում առանձնացել են պարային, դրամատիկական և ակրոբատիկ կամ կրկեսային ձևերը[35]:

Ինչպես տեսնում ենք, պարզորոշ գծագրվում է եռաստեղ մի պատկեր, որի կենտրոնում հնագույն միմական խաղն է հետևյալ ճյուղավորումներով՝ պար-թատրոն-կրկես: Հանդիսանքային արվեստների այս ձևաբանական համակարգը, անշուշտ, դինամիկ կառույց է, որի ընդհ դուրս եկող երեք ճյուղերի միջև մշտապես առկա է փոխներթափանցման և փոխազդեցության դաշտը: Պարարվեստում կիրառվում են և՛ թատերական, և՛ կրկեսային արվեստին հատուկ բազմաթիվ տարրեր, ինչպես և թատրոնում են առատորեն օգտագործվում և՛ պարային, և՛ կրկեսային խաղաձևերը: Ինչ վերաբերում է կրկեսին, ապա այստեղ էլ նկատելի է միևնույն միտումը: Պարարվեստին և թատերարվեստին բնորոշ մի շարք գծեր հաճախ առկա են կրկեսային ներկայացումներում, ուստի լրացուցիչ դժվարություն են ստեղծում նրա բուն լեզուն ճանաչելու համար:

Արդեն ասվեց, որ պարն ու կրկեսային խաղը մի շարք հատկանիշներով համեմատելի են միմյանց հետ, այդ իսկ պատճառով էլ նրանք շատ ավելի հաճախ են զուգորդվում: Այդուհանդերձ, գործողություն կառուցելու առումով նրանց միջև սկզբունքային տարբերություն կա: Ամենից առաջ դա կրկեսային խաղին բնորոշ կենտրոնազանց ձևն է, որ պարարվեստին հատուկ չէ: Հետո, պարային շարժումը մեղեդային է, իսկ կրկեսին հատուկ են շեշտակի ռիթմերը: Առաջինը կառուցվում է գեղանկարչական հարթության վրա, երկրորդը պլաստիկ ծավալների կառույց է: Իհարկե, այս համեմատությունները խիստ պայմանական են և արվում են մի նպատակով՝ մտահայեցողաբար տեսանելի դարձնելու նրանց գեղարվեստական առանձնահատկությունները:

---

[35] Համմ. А.Румнев. О пантомиме. Театр. Кино. М., 1964, с. 11.

թատրոնի հետ համեմատելիս խնդիրը բարդանում է՝ հաշվի առնելով դերասանական արվեստին հատուկ նուրբ նյութի մի ձևաբանական երկվություն (դիխոտոմիա), որը հատուկ է գրականությանը (արձակ և պոեզիա): Խոսքը վերաբերում է այսպես կոչված «վերապրումի»՝ պատկերային, և «ցուցադրման»՝ ոչ պատկերային խաղարվեստի տեսակներին: Եթե մի դեպքում դերասանը ստեղծում է «մարդկային ոգու իրական կյանքը և արտացոլում է այն գեղարվեստական բեմական ձևի մեջ»[36], ապա մյուս դեպքում նրա ձևակերտման նյութը միմիայն մարդու ոգեղեն կյանքն է, որը կարող է ոչ մի առնչություն չունենալ իրական կյանքի հետ: Գեղարվեստական այսպիսի արտահայտության ամենահակիրճ և ամփոփ մեկնությունը պատկանում է Կոկլեն-ավագին: «Արվեստը, – ասել է նա, – կյանքը չէ, և նույնիսկ նրա արտացոլումն էլ չէ: Արվեստն ինքն է իր արարիչը: Նա ստեղծում է իր սեփական կյանքը՝ ժամանակից ու տարածությունից դուրս, աքանչելի իր վերացականությամբ»[37]: «Ցուցադրման», ոչ պատկերային արտահայտություն ունեցող թատերախաղը, ի վերջո, բնականորեն վերադառնում է իր ակունքներին, երբ նրա լեզուն ընդամենը միմական ժեստն էր՝ խաղի մեջ մարդկային ոգու ամենաարտահայտիչ դրսևորումը: Ինչպես դիպուկ նկատել է Ա.Տաիրովը. «Մենջախաղը խուլ ու համրերի համար նախատեսված ներկայացում չէ, մենջախաղն այնպիսի մասնտաբի ներկայացում է, ոգու այնպիսի բացահայտում, երբ խոսքերը մեռնում են, և փոխարենը ծնվում է խոսկան բեմական գործողություն»[38]: Այստեղ, թվում է, թե մենջախաղն ուղղակի մերձենում է կրկեսային արվեստին իր «վերիմաստային» նշանակությամբ՝ իբրև բանաստեղծականացված գործողություն: Սակայն որքան էլ ոչ պատկերային բեմարվեստի լեզուն ձեռք բերի վերացական կերպաձև, զուտ մտահայեցողական արտահայտություն, այնուամենայնիվ, կա մի եզր, որն անհնար է խախտել. դա անհատականացված գործողության դոմինանտն է, երբ ամեն մի արարք՝ պլեղիկատ, տվյալ գործող անձի՝ սուբյեկտի բնութագիրն է դառնում, լինի այն բնավորություն, տիպ, թե խորհրդանիշ:

Կրկեսում այդպես չէ. այստեղ «հերոսը» երբեք հանդես չի գալիս իբրև անհատականություն, ուստի և պլեղիկատն այստեղ չունի անձնավորված սուբյեկտ. ինչպես լեզվաբանության մեջ է

---

[36] **К.Станиславский.** Собрание сочинений в 8-ми томах, т. 6. М., 1959, с. 73.
[37] Նույն տեղում, հ. 2, էջ 33:
[38] **А.Таиров.** Записки режиссера. М., 1921, с. 31.

